

ՊԼԱՏՈՆ

ԵՐԿԵՐ
ՉՈՐԻՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ II

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՆՆՑ - ՓՐԻՆՏՈՒՆԵՐ

1915.info

ՊԼԱՏՈՆ

ԵՐԿԵՐ ՉՈՐՄ ՀԱՏՈՐՈՎ Հատոր II

Հին հունարենից թարգմանեց և
ծանոթագրությունները գրեց՝
ՍԵՐԳԵՅ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2009
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՑ • ՓՐԻՆԹԻՆՅՈՒՆ

Խմբագիր՝ Սարգիս Լևոնյան

Գիրքը լույս է տեսել
ՀՀ Ազգային ժողովի նախագահ
պրն. ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ
հովանավորությամբ

Հրատարակչությունը
երախտագիտություն է հայտնում
արգո մեկենասին

ISBN 978-99930-59-70-7

© Սերգեյ Ստեփանյան, 2008

© Սարգիս Խաչենց & ՓՐԻՆԹԻՆՖՈ, 2008, 'Իմացություն' գրադարան



ԹԵՆՏԵՏՈՍ

Էվկլիդես. Նո՞ր ես գալիս գյուղից, Տերփսիոն, թե՞ արդեն վաղուց ես եկել:

Տերփսիոն. Վաղուց: Ագորայում քեզ փնտրեցի, բայց ի գարմանս ինձ չգտա:

Էվկլիդես. Ես քաղաքում չէի:

Տերփսիոն. Եվ որտե՞ղ էիր:

Էվկլիդես. Նավահանգիստ իջնելիս հանդիպեցի Թենտետոսին, որին Աթենք էին բերել Կորնթոսի ճամբարից¹:

Տերփսիոն. Ո՞ղջ, թե՞ մեռած:

Էվկլիդես. Մահամերձ, քանի որ նրա վիճակը բազում վերքերի պատճառով շատ ծանր է և բացի այդ՝ նրան մեծապես վնասել է գորքին համակած վարակը: b

Տերփսիոն. Մի՞թե թանջը:

Էվկլիդես. Այո:

Տերփսիոն. Այդ ի՞նչ ես ասում: Ինչպիսի՞ մարդու կյանք է վտանգված:

Էվկլիդես. Հրաշալի առաքինի մարդու, ո՛վ Տերփսիոն: Քիչ առաջ էլ լսեցի, թե ինչպես են ոմանք գովաբանում նրա պահվածքը ռազմի դաշտում:

Տերփսիոն. Ջարմանալի ոչինչ չկա, շատ ավելի տարօրինակ կլիներ, եթե նա չլիներ այդպիսին: Բայց ինչու՞ չիջևանեց այստեղ, Մեգարայում: c

Էվկլիդես. Տուն էր շտապում: Ես, իհարկե, ամեն կերպ խնդրեցի ու պաղատեցի նրան, բայց չուզեց: Նրան ճանա-

պարհ ղնելուց հետո, երբ տուն էի վերադառնում, հիշեցի Սոկրատեսին և զարմացա, թե ի թիվս այլ բաների որքան մարգարեաբար էր արտահայտվել նաև այս մարդու մասին: Եթե չեմ սխալվում, նա հանդիպեց Թետետոսին իր մահից ոչ շատ առաջ, երբ սա դեռ պատանի էր, և շփման ու գրույցի ընթացքում շատ էր տպավորվել վերջինիս օժտվածությամբ:

d Երբ ես Աթենքում էի, Սոկրատեսը պատմեց ինձ նրա հետ ունեցած գրույցը, որն արժեր լսել, և ասաց, որ առնական տարիքի հասնելու դեպքում Թետետոսն անպայման նշանավոր մարդ կդառնա:

Տերփսիոն. Ինչպես երևում է, նա իրավացի էր: Իսկ ինչի՞ մասին էր գրույցը, կարո՞ղ ես պատմել:

Էվկլիդես. Ոչ, Ձևսը վկա, անգիր չեմ կարող: Տուն վերադառնալով՝ ես իսկույն գրի առա հիշողությամբ, իսկ հետագայում, ազատ ժամանակ նորից ինչ-որ բան հիշելիս, լրացնում էի: Բացի այդ, ամեն անգամ Աթենքում լինելիս հարցնում էի Սոկրատեսին մոռացածս բաների մասին և գալով տուն՝ ուղղումներ էի անում: Այնպես որ հիմա գրեթե ողջ այդ գրույցն ինձ մոտ գրի է առնված:

Տերփսիոն. Ճիշտ որ, ես արդեն լսել եմ քեզնից դրա մասին և ամեն անգամ այստեղ գալով ուզում էի խնդրել, որ ինձ ցույց տաս գրառումներդ: Իսկ ի՞նչն է խանգարում, որ հիմա ընթերցենք: Ես գյուղից եմ գալիս և կարող եմ մի-փոքր շունչ առնել:

b **Էվկլիդես.** Իսկ ես ուղեկցեցի Թետետոսին մինչև Էրինենո², այնպես որ ինքս էլ հաճույքով կհանգստանայի: Գմանք, և մինչ մենք կհանգստանանք, այս տղան կընթերցի մեզ համար:

Տերփսիոն. Ճիշտ է:

Էվկլիդես. Ահա՛ գիրքը, Տերփսիոն: Ես գրի առա գրույցը ոչ այնպես, իբրև թե Սոկրատեսը վերապատմում է ինձ, այլ այնպես, ինչպես խոսել է գրուցակիցների հետ: Նրա **c** ասելով, դրանք էին երկրաչափ Թեոդորոսը և Թետետոսը:

Գրառումների մեջ այնպիսի բացատրական բառերը, ինչպիսիք են, օրինակ, «և ես ասացի», «և ես նկատեցի»,— երբ Սուկրատեսն է խոսում, կամ՝ «նա հաստատեց», «նա չհամաձայնեց», — երբ գրուցակիցն է խոսում, ես բաց թողեցի և գրեցի այնպես, ինչպես իրենք են խոսել:

Տերփսիոն. Եվ դա շատ ճիշտ է, եվկլիդես:

Եվկլիդես. Դե, տղա, վերցրու գիրքը և կարդա՛:

Սուկրատես. Եթե ինձ իսկապես մտահոգեր Կիրենեն³, d
Թեոդորոս, հարցուփորձ կանեի քեզ այդ քաղաքի և նրա բնակիչների մասին, կհարցնեի՝ կա՞ն արդյոք այնտեղի երիտասարդների մեջ այնպիսիք, ովքեր տենչում են զբաղվել երկրաչափությամբ կամ փիլիսոփայության մեկ այլ տեսակով: Բայց ես պակաս եմ սիրում նրանց այստեղի երիտասարդներից, այնպես որ ավելի շատ կուզեի իմանալ, թե ովքեր են մեծ հույսեր ներշնչում մերոնցից: Ես ինքս ուժերիս ներածին չափով փորձում եմ պարզել դա՝ հարցուփորձ անելով նրանց, ում հետ սիրում եմ շփվել երիտասարդները: Երիտասարդներից շատերը գալիս են քեզ մոտ, և դա արդար է: Ի թիվս այլ e
արժանիքների դրա պատճառն է նաև երկրաչափությունը: Եվ եթե քեզ պատահել է հիշատակման արժանի մեկը, ապա հաճույքով կլսեի նրա մասին:

Թեոդորոս. Այո, Սուկրատես, տեղին կլինի, որ ես պատմեմ, իսկ դու լսես մի պատանու մասին, որին հանդիպեցի ձեր քաղաքացիների մեջ: Եթե նա գեղեցիկ լիներ, ես կվախենայի շատ բան ասել, քանի որ այդ դեպքում կարող էր կարծիք ստեղծվել, իբր տենչում եմ նրան: Իրականում,— չբարկանաս խոսքերիս վրա,— նա գեղեցիկ չէ և արտաքինից, հատկապես իր կճատ քթով ու դուրս պրծած աչքերով, ավելի շուտ հիշեցնում է քեզ: Պարզապես քո դիմագծերը առավել ցցուն են (տե՛ս, ասում եմ դա բոլորովին աներկյուղ): Լավ իմացիր, որ բոլոր նրանց մեջ, ում երբևէ հանդիպել եմ,— իսկ ինձ մոտ շատերն են գալիս,— երբեք չեմ տեսել նրա չափ երանելիորեն օժտված մեկին: Նա հեշտությամբ յուրացնում է

այն, ինչ ուրիշի համար դժվար է, աչքի է ընկնում համեստությամբ և շատ ավելի արի է մյուսներից. ես չեի կարծում, թե նման բան հնարավոր է, և չգիտեմ՝ կա՞ն հիմա այդպիսի մարդիկ, թե՞ ոչ: Նրանք, ովքեր նրա պես սուր միտք, ընկալողություն և հիշողություն ունեն, սովորաբար բնավորությամբ

b անկայուն են, այս ու այն կողմ են տարուբերվում, ինչպես դատարկ նավերը, և իրենց բնությամբ ավելի շուտ խենթ են, բայց ոչ արի: Մինչդեռ ավելի ծանրակշիռները, ովքեր ծույլ են ուսման մեջ, տառապում են մոռացկոտությամբ: Իսկ սա մոտենում է ուսմանն ու ուսումնասիրությանը թեթև, վստահ և հանդարտ, ինչպես անաղմուկ հոսող յուղը, և հիրավի զարմանալի է, թե ինչպես է հաջողում այդ տարիքում:

Սոկրատես. Լավ լուր է: Եվ ո՞վ է մեր քաղաքացիներից, որ այդպիսի որդի ունի:

Թեոդորոս. Լսել եմ նրա անունը, բայց չեմ հիշում:

c Ահավասիկ և ինքը տղան, մեզ մոտեցողներից մեջտեղինը: Քիչ առաջ նախասրահում նա և իր ընկերները յուղ էին քսում մարմիններին, իսկ այժմ, կարծում եմ, վերջացրել են և այստեղ են գալիս: Տե՛ս, գուցե ճանաչես նրան:

Սոկրատես. Ճանաչեցի: Դա սունիոնցի⁴ էվփրոնիոսի որդին է, մի մարդու, բարեկամս, որն ինքը ճիշտ այնպիսին էր, ինչպես որ նկարագրեցիր այդ պատանուն: Շատ պատվական մարդ էր և իրենից հետո մեծ կարողություն բողեց: Բայց տղայի անունը ես չգիտեմ:

d **Թեոդորոս.** Նրա անունը Թեետետոս է, Սոկրատես: Իսկ կարողությունը, կարծում եմ, մսխել են խնամակալները: Ամեն դեպքում դրամի հարցում այս պատանին զարմանալիորեն առատաձեռն է:

Սոկրատես. Քո խոսքից երևում է, որ նա ազնվագույն մարդ է: Կարգադրիր, որ այստեղ գա և նստի մեզ հետ:

Թեոդորոս. Թող այդպես լինի: Թեետետոս, մոտեցի՛ր Սոկրատեսին:

Սոկրատես. Այո, Թեետետոս, որպեսզի ես կարողանամ

դիտել ինքս ինձ և տեսնեմ, թե այդ ինչ դեմք ունեմ: Թեո- e
դորոսն ասում է, որ ես քեզ նման եմ: Մինչդեռ, եթե մեզնից
յուրաքանչյուրը ձեռքին քնար բռնած լիներ, իսկ նա ասեր, որ
դրանք միանման են լարված, մի՞թե իսկույն կհավատայինք
նրան, թե՞ կփորձեինք պարզել՝ արդյո՞ք երաժշտությունից
գլուխ հանում է, թե՞ ոչ:

Թեետետոս. Կփորձեինք պարզել:

Սոկրատես. Եվ եթե պարզեինք, որ հասկանում է, կհա-
վատայինք, իսկ եթե պարզեինք, որ հեռու է երաժշտությունից,
չէ՞ինք հավատա:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Եվ ուրեմն, եթե դեմքերի նմանությունը մեզ
ինչ-որ չափով հետաքրքրում է, ապա հարկավոր է տեսնել՝ 145
նկարի՞չ է արդյոք այդ բանն ասողը, թե՞ ոչ:

Թեետետոս. Կարծում եմ, այո:

Սոկրատես. Իսկ Թեոդորոսը նկարի՞չ է:

Թեետետոս. Որքան գիտեմ, ոչ:

Սոկրատես. Եվ ոչ էլ երկրաչափ:

Թեետետոս. Հենց երկրաչափ է, ո՛վ Սոկրատես:

Սոկրատես. Եվ գիտի աստղագիտություն, թվաբանու-
թյուն, երաժշտություն և այն ամենը, ինչ հարկավոր է կիրթ
լինելու համա՞ր:

Թեետետոս. Կարծում եմ, այո:

Սոկրատես. Ուրեմն, երբ ասում է, որ մենք արտաքին
նմանություն ունենք, անկախ նրանից՝ գովում է, թե կշտամ-
բում, պետք չէ բանի տեղ դնել:

Թեետետոս. Գուցե պետք չէ:

Սոկրատես. Իսկ եթե նա գովի մեզնից որևէ մեկի հոգու b
առաքինությունն ու իմաստությունը: Չարժե՞ արդյոք, որ ուն-
կնդիրն ուշադիր քննի նրան, ում գովել է, իսկ վերջինս ար-
ժանիորեն դրսևորի իրեն:

Թեետետոս. Իհարկե, Սոկրատես:

Սոկրատես. Այդ դեպքում, սիրելի Թեետետոս, ժամն է,

որ դու դրսևորես քեզ, իսկ ես քննեմ, քանզի լավ իմացիր, որ թեոդորոսը շատերին է գովել ինձ մոտ՝ և՛ օտարերկրացիներից, և՛ մեր քաղաքացիներից, բայց ոչ ոքի չի գովել այնպես, ինչպես քիչ առաջ քեզ:

Թեետետոս. Այ թե լավ կլիներ, Սոկրատես: Բայց տես, **c** չի՞ կատակում արդյոք:

Սոկրատես. Դա մման չէ թեոդորոսին: Ամեն դեպքում ետ մի կանգնիր տվածդ խոստումից, անգամ եթե կարծում ես, թե կատակում է, որպեսզի հանկարծ չստիպես նրան երդում տալ. չէ՞ որ նրա ասածներին կասկածելու հիմք չունենք: Այնպես որ դու հավատարիմ մնա քո որոշմանը:

Թեետետոս. Դե, ուրեմն պիտի այդպես անեմ, եթե պնդում ես:

Սոկրատես. Ասա ինձ, դու երկրաչափություն՞ն ես սովորում թեոդորոսի մոտ:

Թեետետոս. Այո:

d **Սոկրատես.** Իսկ աստղագիտություն, հարմոնիա և բվաբանություն՞ն:

Թեետետոս. Փորձում եմ:

Սոկրատես. Ես նույնպես, տղաս, փորձում եմ սովորել և՛ նրանից, և՛ ուրիշներից, որոնց այդպիսի հարցերի գիտակ եմ համարում: Բայց թեպետ որոշ բաներ ես արդեն բավականաչափ գիտեմ, կա մի փոքրիկ հարց, որի մեջ դժվարանում եմ. հենց այդ հարցն էլ կուզեի քննել քո և մյուս ներկաների օգնությամբ: Մի՞թե սովորել չի նշանակում առավել իմաստուն դառնալ նրանում, ինչ սովորում ես:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Եվ իմաստությամբ է, որ իմաստունը իմաստուն է:

Թեետետոս. Այո:

e **Սոկրատես.** Իսկ դա ինչ-որ բանով տարբերվու՞մ է իմացությունից:

Թեետետոս. Ի՞նչը:

Սուկրատես. Իմաստությունը: Մի՞թե իմաստունները ինչ-որ բան իմացողները չեն:

Թեեւտոսս. Իհարկե:

Սուկրատես. Ուրեմն իմացությունը և իմաստությունը նույն բանն են:

Թեեւտոսս. Այո:

Սուկրատես. Հենց սա է այն հարցը, որում դժվարանում եմ և որը չեմ կարողանում ամբողջությամբ լուծել ինքնուրույն. ի՞նչ է իմացությունը: Չե՞ք ուզի խոսել այդ մասին: Դե, ի՞նչ կասեք: Մեզնից ո՞վ կխոսի առաջինը: Եթե նա սխալվի,– և առհասարակ ով էլ սխալվի,– թող նստի էջի վրա, ինչպես ասում են երեխաները, երբ գնդակ են խաղում: Իսկ նա ով չի սխալվի, կլինի մեր թագավորը և կտա ցանկացած հարց, որի պատասխանը կուզեր ստանալ մեզնից: Ինչու՞ եք լռում: Թե՞ իմ գրուցասիրությամբ ինձ բռի են պահում, թեողորոս: Պարզապես շատ կուզեի, որ գրույցը ընկերացներ ու բարեկամացներ մեզ:

Թեողորոս. Բռի ոչինչ չեմ տեսնում, Սուկրատես: Ինքը կարգադիր տղաներից մեկին, որ պատասխանի քեզ: Չէ՞ որ ես սովոր չեմ նման գրույցների և տարիքս չի ներում, որ նոր սովորեմ: Իսկ ահա նրանց համար դա անչափ օգտակար կլինի, քանզի երիտասարդներին իրոք որ ամեն բան հեշտ է տրվում: Եվ քանի որ սկսել ես թեեւտոսսից, թող նա էլ շարունակի պատասխանել քո հարցերին:

Սուկրատես. Լսու՞մ ես, թեեւտոսս, թե ինչ է ասում թեողորոսը: Կարծում եմ, չես ուզի հակառակվել նրան, և ոչ էլ վայել է երիտասարդին հակառակվել իմաստուն այրի հորդորներին: Ուստի պատասխանիր արժանապատվորեն ու ազնվորեն՝ ի՞նչ է քո կարծիքով իմացությունը:

Թեեւտոսս. Ո՛վ Սուկրատես, եթե կարգադրում եք, ուրեմն պարտավոր եմ պատասխանել: Բայց եթե սխալվեմ, ուղղեք ինձ:

Սուկրատես. Իհարկե, եթե կարողանանք:

Թեետետոս. Ինձ թվում է, որ այն ամենը, ինչ կարելի է սովորել Թեոդորոսից՝ երկրաչափությունը և մնացած գիտությունները, որ դու թվարկեցիր, իմացություններ են, մմանապես ման կոշկակարությունն ու բոլոր մյուս արհեստները միասին և յուրաքանչյուրն առանձին այլ բան չեն, քան իմացություն:

Սոկրատես. Որքան ազնիվ ու շռայլ ես, բարեկամս: Մեկ պարզ հարցին տալիս ես այդքան հարուստ ու խոր պատասխան:

Թեետետոս. Ի՞նչ նկատի ունես, Սոկրատես:

Սոկրատես. Գուցես ոչինչ: Ամեն դեպքում փորձեն ասել, թե ինչ են մտածում: Երբ նշում ես կոշկակարությունը, նկատի ունես կոշիկ կարելու արհեստը:

Թեետետոս. Ուրիշ ոչինչ:

Սոկրատես. Իսկ երբ նշում ես ատաղձագործությունը՝ ոչ այլ բան, քան փայտյա իրեր պատրաստելու արհեստը, այնպես չէ՞:

Թեետետոս. Հենց դա:

Սոկրատես. Երկու դեպքում էլ դու սահմանում ես այն, ինչին վերաբերում է յուրաքանչյուր իմացությունը:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Բայց հարցը, Թեետետոս, իմացության վերաբերության մասին չէր և ոչ էլ այն մասին, թե որքան են իմացությունները: Չէ՞ որ մենք ցանկանում են ոչ թե հաշվել դրանք, այլ պարզել, թե ինչ է ինքը իմացությունը: Գուցե սասած դատա՞րկ բան է:

Թեետետոս. Ոչ, դու ճիշտ ես:

147 Սոկրատես. Նկատի առ մաս հետևյալը: Եթե ինչ-որ մեկը հարցներ մեզ, թե ինչ է իրենից ներկայացնում այնպիսի հասարակ ու առօրեական մի բան, ինչպիսին է, ասենք, կավը, իսկ մենք պատասխանեինք, որ կավը բրուտագործների և վառարանագործների կավն է, մի՞թե դա չէր լինի զավեշտական:

Թեետետոս. Գուցե:

Սոկրատես. Եվ առաջին հերթին որովհետև կկարծեինք, թե հարցնողը ինչ-որ բան կհասկանա մեր պատասխանից, երբ ասում ենք՝ «կավը կավ է», անկախ այն բանից, թե ինչ կավելացնենք հետո. օրինակ՝ «կավը տիկնիկագործների կամ ուրիշ արհեստավորների կավ է»: Թե՞ կարծում ես, որ ինչ-որ մեկը կարող է հասկանալ մի բանի անունը, չիմանալով, թե ինչ է դա:

b

Թեւտետոս. Ոչ մի դեպքում:

Սոկրատես. Ուրեմն նա չի հասկանա կոշիկների իմացությունը, չգիտենալով [հենց] իմացությունը:

Թեւտետոս. Ոչ:

Սոկրատես. Հետևաբար նա, ում հայտնի չէ իմացությունը, չի հասկանա ո՛չ կոշկակարություն, ո՛չ էլ որևէ այլ արհեստ:

Թեւտետոս. Այդպես է:

Սոկրատես. Ուրեմն ծիծաղելի է «ի՞նչ է իմացությունը» հարցին պատասխանելով որևէ արհեստի անուն տալը: Քանի որ հարցն այն չէր, թե ինչի մասին է իմացությունը:

c

Թեւտետոս. Կարծես թե այդպես է:

Սոկրատես. Եվ բացի այդ, այնտեղ, ուր կարելի է պատասխանել պարզ և հակիրճ, մենք մի անվերջանալի ճանապարհ ենք անցնում: Օրինակ, կավի մասին հարցին կարելի է պարզ և հստակ պատասխանել, որ դա ջրով բացված հող է, իսկ թե ով է այն օգտագործում, անտեսել:

Թեւտետոս. Այժմ դա հեշտ է թվում, Սոկրատես: Եվ դու թերևս հարցնում ես այն մասին, ինչին քիչ առաջ հանգեցինք ես և այս Սոկրատեսը՝ քո անվանակիցը⁵:

d

Սոկրատես. Ինչի՞ն, Թեւտետոս:

Թեւտետոս. Թեոդորոսը գծել էր մեզ համար ֆիզուրների և քառակուսու կողմերի⁶ վրա ցույց էր տալիս, որ երեք ոտնաչափ և հինգ ոտնաչափ երկարություն ունեցող հատվածները համաչափ չեն մեկ ոտնաչափ երկարություն ունեցող հատվածին, և այդպես հերթով փորձելով յուրաքանչյուրը՝ նա հասավ տասնյոթ ոտնաչափ երկարություն ունեցող հատվա-

e ծին: Այստեղ նա կանգ առավ: Քանի որ այդ հատվածների քանակն անսահման էր, մեր մտքով անցավ գտնել մի բան, որը կբնորոշեր բոլոր այդ կողմերը:

Սուկրատես. եվ ի՞նչ, գտա՞ք այդպիսի բան:

Թեետետոս. Կարծում եմ, գտանք: Տե՛ս ինքդ:

Սուկրատես. Խոսի՛ր:

Թեետետոս. Բոլոր թվերը մենք բաժանեցինք երկու [դասի]․ մի մասը կարելի է ստանալ՝ բազմապատկելով որևէ թիվ իրեն հավասար անգամ: Մենք ներկայացրինք դրանք հավասարակողմ քառանկյան ձևով և կոչեցինք այդպիսի թվերը քառանկյուն և հավասարակողմ:

Սուկրատես. Շատ լավ:

148 Թեետետոս. Մյուս թվերը գտնվում են սրանց միջև, ինչպես օրինակ երեքը կամ հինգը և յուրաքանչյուր թիվ, որ չի կարելի ստանալ նման ձևով, այլ միշտ բազմապատկելով մեծ թիվը փոքր թվով և փոքր թիվը մեծ թվով: Մենք կոչեցինք դրանք երկարավուն՝ ներկայացնելով որպես երկարավուն քառանկյան կողմեր:

Սուկրատես. Հրաշալի է: Իսկ այնուհետև՞:

b Թեետետոս. Բոլոր հատվածները, որոնք կազմում են քառանկյուն, որի մակերեսը արտահայտվում է հավասարակողմ թվով, մենք կոչեցինք երկարություն, իսկ յուրաքանչյուր հատված, որ տալիս է երկարավուն թիվ, մենք կոչեցինք քառակուսու կողմ, քանի որ դրանք համաչափ չեն առաջիններից ոչ թե երկարությամբ, այլ իրենց կազմած մակերեսներով: Նույնն է ծավալ ունեցող մարմինների դեպքում:

Սուկրատես. Պարզապես հրաշալի է, զավակներ՛ս: Կարծում եմ, Թեոդորոսին անհնար է մեղադրել սուտ վկայություն տալու մեջ:

Թեետետոս. Բայց իմացության մասին քո հարցին, Սուկրատես, ես չէի կարողանա պատասխանել այնպես, ինչպես քառակուսու կողմի երկարությանը վերաբերող հարցին, թեև ինձ թվում է, որ փնտրածդ հենց այդպիսի մի բան է: Այնպես

որ Թեոդորոսը կարծես դարձյալ ստախոս դուրս եկավ:

Սոկրատես. Այդ ինչպե՞ս: Եթե որևէ մեկը գովեր քո արագավազությունը և ասեր, որ ավելի արագավազ երիտասարդի չի հանդիպել, իսկ դու մրցավազքի ժամանակ զիջեիր առավել արագավազին, մի՞թե գովեստի ճշմարտությունը դրանից կպակասեր:

Թեոտեոս. Չեմ կարծում:

Սոկրատես. Իսկ ի՞նչ է, կարծում ես, թե իմացության հետազոտությունը, ինչպես քիչ առաջ ասացի, չնչին բան է և չի՞ առնչվում բարձրին:

Թեոտեոս. Բարձրագույնին է առնչվում, Ձևսը վկա:

Սոկրատես. Այդ դեպքում վստահիր ինքդ քեզ ու Թեոդորոսի ասածին և ամեն կերպ ջանա հասկանալ իմացության էությունը, նրա ինչ լինելը:

Թեոտեոս. Եթե հարցը վերաբերում է միայն ջանալուն, ո՛վ Սոկրատես, ապա [ամեն բան] պարզ կդառնա:

Սոկրատես. Ուրեմն առաջ,— չէ՞ որ դու հենց նոր հրաշալիորեն առաջնորդեցիր մեզ,— փորձիր ներկայացնել բազում իմացությունները մեկ սահմանումով, ինչպես քառակուսու կողմերի մասին հարցին պատասխանելով՝ ներառեցիր դրանք բոլորը մեկ տեսակի մեջ:

Թեոտեոս. Բայց լավ իմացիր, Սոկրատես, հաճախ է պատահել, որ լսեմ ու փորձեմ քննել այն հարցերը, որ տալիս ես, սակայն ո՛չ կարողացել եմ բավարար չափով համոզել ինքս ինձ, ո՛չ էլ ուրիշներից եմ լսել բացատրությունը, որ պահանջում ես: Ամեն դեպքում հույսս չեմ կտրել:

Սոկրատես. Քո ցավերը նրանից են, որ դու անպտուղ չես, այլ հղի ես, սիրելի Թեոտեոս:

Թեոտեոս. Չգիտեմ, Սոկրատես: Ինչևէ, պատմում եմ զգացածս:

Սոկրատես. Ուրեմն չե՞ս լսել դու, զարմանալի՜ տղա, որ ես հարգարժան ու խստաբարո տատմոր՝ Փեմարետեի ուրդին եմ⁷:

Թեոտետոս. Անշուշտ, լսել եմ:

Սոկրատես. Իսկ չե՞ս լսել արդյոք, որ ես էլ եմ զբաղվում այդ արվեստով:

Թեոտետոս. Երբեք:

Սոկրատես. Ուրեմն լավ իմացիր, որ այդպես է, միայն թե չմատնես ինձ ուրիշներին, որովհետև ես թաքցնում եմ իմ արվեստը: Նրանք, ովքեր չգիտեն դա, ասում են, իբր խեղկատակի մեկն եմ և շփոթության մեջ եմ գցում մարդկանց: Լսե՞լ ես դրա մասին:

b **Թեոտետոս.** Լսել եմ:

Սոկրատես. Ասե՞մ պատճառը:

Թեոտետոս. Իհարկե:

Սոկրատես. Ապա մտածիր, ի՞նչ է իրենից ներկայացնում տատմոր արվեստը: Ինքդ հեշտությամբ կհասկանաս, թե ինչ նկատի ունեմ: Քեզ հայտնի՞ է, որ նրանցից և ոչ մեկը ծնունդ չի ընդունում, քանի դեռ ինքը կարող է հղիանալ և ծնունդ տալ, այլ սկսում է զբաղվել դրանով լուկ այն ժամանակ, երբ այլևս ընդունակ չէ ծննդաբերելու:

Թեոտետոս. Այո, իհարկե:

Սոկրատես. Ասում են, որ դրա պատճառը Արտեմիսն⁸ է, քանզի ինքը անզավակ լինելով՝ դարձավ ծննդաբերության օգնական: Սակայն կույսերին թույլ չտվեց ծնունդ ընդունել, որովհետև մարդկային բնությանը հասու չէ արվեստը, որին ինքը չի առնչվել: Ահա ինչու այդ արվեստը նա շնորհեց տարիքի պատճառով անպտղացածներին՝ պատվելով նրանց իր հետ ունեցած նմանության համար:

Թեոտետոս. Կարծես թե այդպես է:

Սոկրատես. Այդպես է անհրաժեշտաբար մաս այն, որ հղիներին ոչ հղիներից պիտի ամենից լավ տարբերի տատմերը:

Թեոտետոս. Իհարկե:

d **Սոկրատես.** Եվ նրանք կարող են բալասանով ու հմայախոսությամբ գրգռել կամ, ըստ ցանկության, մեղմել եր-

կունքի ցավերը: Դժվարությամբ ծննդաբերողին նրանք կարող են ստիպել ծննդաբերել կամ, եթե ճիշտ կհամարեն, վիժել:

Թեոտեոս. Այդպես է:

Սուկրատես. Իսկ չե՞ս նկատել արդյոք, որ նրանք նաև խնամախոսության մեծ վարպետներ են, քանզի անչափ իմաստուն են և գիտեն, թե ո՞ր կինը ո՞ր տղամարդու հետ պիտի կենակցի, որպեսզի ծնի լավագույն զավակներին:

Թեոտեոս. Ոչ, այդ մասին ոչինչ չգիտեի:

Սուկրատես. Ուրեմն իմացիր, որ դրանով ավելի շատ են հպարտանում, քան պորտալար կտրելով: Տե՛ս, մի՞թե միևնույն արվեստը չես համարում բերք աճեցնելն ու խնամելը և, մյուս կողմից, ինչ հողի մեջ ինչ սերմ ցանել և ինչ բույս տնկել իմանալը:

Թեոտեոս. Անկասկած, միևնույն արվեստն է:

Սուկրատես. Իսկ կնոջ դեպքում, բարեկամս, արդյո՞ք նույնն է տատմոր և խնամախոսի արհեստը:

Թեոտեոս. Կարծես թե ոչ:

Սուկրատես. Ուրեմն ոչ: Սակայն տղամարդու և կնոջ սխալ և անշնորհք խնամախոսությունը կավատություն է կոչվում, ահա ինչու տատմերերը, լինելով սրբազան, խուսափում են խնամախոսությունից, վախենալով կավատության մեջ մեղադրվելուց: Մինչդեռ խնամախոսելն իրականում բնորոշ է և վիճակված հենց տատմորը:

Թեոտեոս. Անշուշտ:

Սուկրատես. Այդպիսին է տատմոր արվեստը, բայց այն զիջում է իմ արվեստին: Չէ՞ որ կանայք չեն ծնում մերթ տեսիլներ, մերթ իսկական երեխա,– մի բան, որ հեշտ չէր լինի տարբերել: Քանզի եթե դա պատահեր, իսկական երեխային տեսիլից տարբերելը մեծ ու հրաշալի գործ կլիներ: Չե՞ս կարծում:

Թեոտեոս. Կարծում եմ:

Սուկրատես. Իմ արվեստը ամեն ինչում նման է նրանց արվեստին և տարբերվում է միայն նրանով, որ ես ծնունդ եմ

- ընդունում ոչ թե կանանցից, այլ տղամարդկանցից, և ընդունում են հոգու, այլ ոչ մարմնի ծնունդ: Իսկ մեծագույնը մեր արվեստում այն է, որ մենք կարող ենք բոլոր եղանակներով ստուգել, թե ինչ է ծնունդ երիտասարդի միտքը՝ կեղծ տեսի՞լ, թե՞ ճշմարիտ պտուղ: Դրանից բացի, իմ և տատմոր միջև ընդհանուրն այն է, որ իմաստության մեջ ես արդեն անպտուղ եմ, և շատերի նախատինքը, թե ուրիշներին հարցուփործ անելով ինքս երբեք ոչ մի պատասխան չեմ տալիս, որովհետև զուրկ եմ իմաստությունից, ճշմարիտ է: Ահա թե որն է դրա պատճառը: Աստված ստիպում է ինձ ծնունդ ընդունել, իսկ ծնել արգելում է: Ուստի ես ընդհանրապես իմաստուն չեմ և չեմ ունեցել սեփական հոգուս հղացած պտուղը սերելու բարեբախտությունը: Ինչ վերաբերում է ինձ հետ շփվողներին, սկզբում նրանք ինձ թվում են բոլորովին տգետ, բայց հետագայում աստծո օգնությամբ զարմանալիորեն առաջադիմում են. այդպես է թե՛ իրենց, թե՛ այլոց կարծիքը: Պարզ է, որ ինձնից նրանք ոչինչ չեն կարող սովորել, այլ իրենց մեջ են գտնում և ապա ծնունդ բազում գեղեցիկ բաներ, իսկ ծննդաբերության դրդիչը ես եմ և աստված: Սա ապացուցվում է նրանով, որ շատերը չիմացությունից իրենց առաջադիմության պատճառը համարեցին իրենք իրենց և արհամարհանքով հեռացան ինձնից՝ հարկ եղածից շուտ դիմելով այդ քայլին կա՛ն ինքնուրույն, կա՛ն տեղի տալով ուրիշների համոզումներին: Յեռանալուց հետո նրանք վիժեցին իրենց մեջ մնացածը՝ մտնելով վնասաբեր կապերի մեջ, իսկ այն, ինչը ես էի ընդունել նրանցից, կործանեցին վատ դաստիարակությամբ: Սուտը և տեսիլը նրանք գերադասեցին ճշմարտությամբ, այնպես որ ի վերջո և՛ իրենց, և՛ ուրիշներին պարզ դարձավ, որ տգետ են: Նրանցից մեկը Արիստիդեսն է՝ Լիսիմաքոսի որդին⁹, կան նաև շատ ուրիշներ: Երբ հետագայում այդպիսիք վերադառնում էին և զարմանալի կրքոտությամբ խնդրում, որ նորից ընդունեն իրենց, ոմանց իմ դեմոնն արգելում էր միանալ ինձ, ոմանց էլ թույլ էր տալիս, և նրանք դարձյալ առաջադիմում

էին: Ծննդաբերող կանանց հետ ընդհանուր է նաև այն, որ գիշեր ու ցերեկ նրանք տառապում են երկունքի ցավերից, և նույնիսկ կանանցից առավել, իսկ իմ արվեստը կարողանում է գրգռել կամ դադարեցնել այդ ցավերը: Եվ ամեն բան հենց այդպես էլ լինում է: Բայց երբեմն, Թեոտետոս, նկատելով, որ նրանք հղի չեն, և հասկանալով, որ չունեն կարիքս, ես բարի հոգածությունից դրդված զբաղվում եմ խնամախոսությամբ և աստծո օգնությամբ բավական հաջող գուշակում նրան, ում հետ շփվելն օգտակար կլինի նրանց համար: Նրանցից շատերին ես ուղարկեցի Պրոդիկոսի¹⁰ մոտ, շատերին էլ՝ ուրիշ իմաստուն և աստվածաշնորհ այրերի:

b

Եվ այս երկար պատմությանս պատճառն այն է, որ դու, ազնիվ տղա, ինչպես ենթադրում եմ և ինչպես կարծում է այնա, ինչ որ բան ես կրում քո ներսում: Վստահիր ուրեմն ինձ որպես տատմոր որդու, որն ինքն էլ գլուխ է հանում այդ արվեստից, և կարեցածիդ չափով պատասխանիր իմ հարցերին: Եվ եթե քո պատասխաններում տեսլային ու ոչ ճշմարիտ ինչ-որ բան նկատելով ես դուրս բերեմ ու դեն նետեմ այն, չմոլեզմես, ինչպես ծննդաբերողներն իրենց առաջնեկների համար: Քանզի, թանկագինս, շատերն արդեն այնպես էին գազազել, որ անգամ պատրաստ էին կծել ինձ, երբ նրանցից խլում էի որևէ անհեթեթություն: Նրանք չեն հասկացել, որ ես դա անում եմ բարի նպատակներով, ինչպես չեն հասկանում, որ ոչ մի աստված չարիք չի գործում մարդկանց: Ես նույնպես ոչինչ չեմ գործում չարակամությունից, պարզապես ինձ համար անընդունելի է տեղի տալ սոի առաջ և թաքցնել ճշմարիտը: Այնպես որ, Թեոտետոս, փորձենք դարձյալ սահմանել, թե ինչ է իմացությունը: Իսկ այն, ինչ չես կարող ասել, երբեք մի ասա, քանզի եթե աստված կամենա և քեզ արիություն տա, կկարողանաս անել դա:

c

d

Թեոտետոս. Լավ, Սոկրատես, եթե պնդում ես, ամոք կլինի չգործադրել բոլոր ջանքերը և չասել ով ինչ մտածում է: Ինձ թվում է, որ ինչ-որ բան իմացողը զգայում է այն, ինչ

e

գիտի, և ինչպես հիմա կարծում եմ՝ իմացությունը ոչ այլ ինչ է, քան զգայություն:

Սոկրատես. Հրաշալի ու ազնիվ պատասխան, տղաս: Քանզի հարկ է ասել այն, ինչ մտածում ես: Բայց արի միասին քննենք, իրական ինչ-որ բան է ծնվել, թե՞ տեսիլ: Ուրեմն ասում ես, որ զգայությունն է իմացություն:

Թենտետոս. Այո:

152 Սոկրատես. Կարծես թե իմացության վատ բնորոշում չես գտել: Սակայն այդպես էր ասում նաև Պրոտագորասը, ճիշտ է՝ նա հանգել էր դրան ուրիշ եղանակով¹¹: Նա ասում է. «Մարդն է բոլոր իրերի չափը՝ գոյություն ունեցողների, որ կան, և գոյություն չունեցողների, որ չկան¹²»: Կարդացե՞լ ես երբևէ:

Թենտետոս. Հաճախ եմ կարդացել:

Սոկրատես. Նա նկատի ունի, որ յուրաքանչյուր իր ինձ համար այնպիսին է, ինչպիսին երևում է ինձ, և քեզ համար այնպիսին է, ինչպիսին երևում է քեզ: Չէ՞ որ մարդը ես եմ և դու ես:

Թենտետոս. Այո, նա այդպես է ասում:

b Սոկրատես. Մեր իմաստուն այրը կարծես թե չի ցնդաբանում: Փորձենք հետևել նրան: Չի՞ լինում երբեմն, որ փչում է նույն քամին, բայց ոմանք մրսում են, իսկ ոմանք՝ ոչ, և մեկը քիչ է մրսում, իսկ մյուսը՝ շատ:

Թենտետոս. Այն էլ ինչպես:

Սոկրատես. Ինչ ասենք ուրեմն, որ քամին ինքն ըստ ինքյան սառն է կամ սառը չէ՞, թե՞ հավատանք Պրոտագորասին, ըստ որի մրսողի համար այն սառն է, իսկ նրա համար, ով չի մրսում՝ ոչ:

Թենտետոս. Կարծես թե:

Սոկրատես. Չէ՞ որ յուրաքանչյուրին տարբեր է թվում:

Թենտետոս. Այո:

Սոկրատես. Իսկ «թվում է»-ն նշանակում է զգայե՞լ:

Թենտետոս. Այդպես է:

Սոկրատես. Ուրեմն թվացածը և զգայությունը նույն **c**
բանն են՝ թե՛ տաքի և թե՛ նման այլ դեպքերում: Ինչպես որ
յուրաքանչյուր ոք զգայի որևէ իր, այնպիսին էլ այն կլինի իր
համար:

Թեոտոոս. Ըստ երևույթին:

Սոկրատես. Հետևաբար զգայությունը միշտ կեցության
զգայություն է և որպես իմացություն անսխալ է:

Թեոտոոս. Ակնհայտորեն:

Սոկրատես. Այդ դեպքում, Քարիսները¹³ վկա, իմաստնա-
գույն այր է եղել Պրոտագորասը, և այդ աղոտ խոսքերն ասել
է մեզ նման ռամիկների ամբոխին, իսկ աշակերտներին
գաղտնի պատմել է ճշմարտությունը:

Թեոտոոս. Ինչպե՞ս հասկանամ քեզ, Սոկրատես, ի՞նչ **d**
նկատի ունես:

Սոկրատես. Հիմա կասեմ, և սա կարևոր դիտողություն
է. [Պրոտագորասը պնդում է], որ ոչ մի բան ինքն ըստ
ինքյան մեկը չէ, քանզի չես ասի ո՛չ այն, թե ինչ է, ո՛չ էլ, թե
ինչպիսին է: Չէ՞ որ եթե ասես, որ այն մեծ է, վերջինս կարող
է նաև փոքր թվալ, իսկ եթե ասես, որ ծանր է, կարող է թվալ
թեթև, և այդպես շարունակ, որովհետև ոչ մի բան ո՛չ ինչ է,
ո՛չ էլ ինչպիսին է: Բոլոր իրերը գոյանում են մղումից, շար-
ժումից և միախառնվելուց, և մենք սխալմամբ ենք ասում, թե
դրանք գոյություն ունեն, քանի որ ոչինչ էլ երբեք գոյություն
չունի, այլ մշտապես կայացման մեջ է: Այս հարցում, բացա- **e**
ռությամբ Պարմենիդեսի, համերաշխ են Պրոտագորասը,
Հերակլիտոսը և Էմպեդոկլեսը, իսկ պոետներից բանաստեղծա-
կան երկու ոճերը ներկայացնող ամենարերևելի այրերը՝
կատակերգության մեջ Էպիքարմոսը, ողբերգության մեջ Հոմե-
րոսը, որը հիշելով «Աստվածահայր Օվկիանոսին և դիցամայր
վեհ Տեթիսին»՝ ասում է, որ ամենայն ինչ հոսանքի և շարժ-
ման ծնունդ է¹⁴: Քեզ չի՞ թվում, որ դա նկատի ունի:

Թեոտոոս. Թվում է:

Սոկրատես. Իսկ ո՞վ մարտի դուրս կգա մի բանակի

153 դեմ, որի զորավարն ինքը Հոմերոսն է, և չի դառնա զավեշտի առարկա:

Թեետետոս. Այո, դա հեշտ բան չէ, Սոկրատես:

Սոկրատես. Հեշտ բան չէ, Թեետետոս: Բացի այդ, հիշյալ ուսմունքն ապացուցվում է նաև նրանով, որ գոյության և կայացման տպավորությունը տալիս է շարժումը, մինչդեռ դադարը արգելում և կործանում է գոյությունը: Չէ՞ որ ջերմությունն ու հուրը, որ ծնում և կարգավորում է մյուս բաները, ինքը ծնվում է պոռթկումից և շփումից, իսկ սրանք վերաբերում են շարժմանը: Թե՞ կրակի ծագումը այդպիսին չէ:

b **Թեետետոս.** Այդպիսին է:

Սոկրատես. Իսկ կենդանիները նու՞յնպես ծնվում են շարժումից:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Իսկ մեր մարմինները, մի՞թե չեն տկարանում պարապությունից ու անշարժությունից և մի՞թե չեն ամրանում մարզանքի ու շարժման արդյունքում:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Իսկ մի՞թե հոգին չի ամրանում և կատարելագործվում գիտելիք կուտակելով ջանադիր ուսման ընթացքում, որն այլ բան չէ, քան շարժում, մինչդեռ դադարի, անհոգության և անփութության վիճակում ո՛չ ինչ-որ բան սովորում է, ո՛չ էլ սովորածն է հիշում:

c **Թեետետոս.** Իհարկե:

Սոկրատես. Ուրեմն շարժումը, հոգևոր թե մարմնավոր, բարիք է, իսկ դադարն՝ ընդհակառակը:

Թեետետոս. Կարծես թե այդպես է:

Սոկրատես. Այդ դեպքում ես կավելացնեմ նաև անհոգությունը, անդորրը և նման այլ բաները, այսինքն՝ այն, ինչը փտում ու կործանվում է դադարի և պահպանվում է շարժման մեջ: Եվ ի լրումն սրա ես կնշեմ նաև ոսկե շղթան, որն, ըստ

d Հոմերոսի, այլ բան չէ, քան Արեգակ, հետևաբար նա նկատի ունի, որ քանի դեռ կա շրջաբերական շարժումը և Արեգակը,

ամենայն ինչ գոյում և պահպանվում է թե՛ աստվածների, թե՛ մարդկանց մոտ¹⁵: Իսկ եթե հանկարծ այդ շարժումն ասես քար կտրելով կանգ առներ, բոլոր իրերը կկործանվեին և ամեն բան գլխիվայր շուռ կգար:

Թեոտեոս. Այո, Սոկրատես, ինձ թվում է, որ Յոմերոսը նկատի ունի հենց այն, ինչ ասում ես:

Սոկրատես. Ուրեմն, ազնիվ տղա, շարունակիր հետևել ինձ: Նախ, տեսողության վերաբերյալ. այն, ինչ կոչում ես սպիտակ գույն, քո աչքերից դուրս գտնվող տարասեռ ինչ-որ բան չէ, սակայն նաև աչքերի մեջ չէ, և դու չես կարող նշել նրա գոյության որևէ տեղ: Չէ՞ որ այդ դեպքում այսպես ասած շարք կանգնելով և գտնվելով դադարի մեջ՝ նա չէր լինի կայացման մեջ:

e

Թեոտեոս. Այդ ինչպե՞ս:

Սոկրատես. Վերադառնանք քիչ առաջ ասվածին, ըստ որի ոչինչ ինքնին չի գոյում որպես մեկ: Այդ դեպքում մեզ պարզ կդառնա, որ սևը, սպիտակը և ցանկացած ուրիշ գույն գոյանում է, երբ աչքն արձագանքում է մոտեցող շարժմանը, իսկ այն ամենը, ինչ գույն ենք կոչում, ո՛չ արձագանքողն է, ո՛չ էլ այն, ինչին արձագանքում են, այլ առանձին մի բան է, որ գոյանում է երկուսի արանքում: Թե՞ դու կանդես, որ քեզ այսպիսին թվացող գույնը, այդպիսին է թվում նաև շանը կամ ուրիշ որևէ կենդանու:

154

Թեոտեոս. Ոչ, Ձևսը վկա, չեմ պնդի:

Սոկրատես. Շատ լավ: Իսկ ուրիշ որևէ մարդու դա թվու՞մ է այնպես, ինչպես քեզ: Կպնդե՞ս դա, թե՞ ավելի շուտ կընդունես, որ նույնիսկ քեզ համար դա երբեք նույնը չի լինի, քանի որ դու ինքդ միշտ նույնը չես:

Թեոտեոս. Կարծում եմ, ավելի շուտ երկրորդը:

Սոկրատես. Արդ, եթե մենք չափեինք մի բան կամ դիպչեինք դրան և այն լիներ մեծ կամ սպիտակ կամ տաք, ապա, ընկնելով ուրիշի ձեռքը, այն չէր դառնա ուրիշ՝ իհարկե ինքնին անփոփոխ մնալու դեպքում: Եվ եթե այն, ինչ մենք

b

չափեցինք և ինչին դիպանք, իսկապես լիներ այդպիսին, չէր փոփոխվի մեկ ուրիշ իրի մոտենալու կամ մեկ այլ բան կրելու արդյունքում, քանի որ ինքնին ոչ մի փոփոխություն չի կրել: Մինչդեռ մենք, բարեկամս, ստիպված ենք զարմանալի ու զավեշտական պնդումներ անել, հետևելով Պրոտագորասին և բոլոր նրանց, ովքեր համաձայն են նրան:

Թեետետոս. Այդ ինչպե՞ս, ի՞նչ նկատի ունես:

- c **Սոկրատես.** Վերցրու փոքրիկ օրինակ, և քեզ լիովին հասկանալի կդառնա, թե ինչ եմ ուզում ասել: Դիցուք, մենք ունենք վեց խաղազառ. ավելացնելով դրանց ևս չորսը, մենք կասենք, որ եղածները մեկ և կես անգամ շատ էին նրանցից, որոնք ավելացրինք, և եթե ավելացնենք տասներկու զառ, ապա կասենք, որ եղածները կիսով պակաս էին: Այլ կերպ ասել չենք կարող: Թե՞ դու ընդունում ես այլ պատասխան:

Թեետետոս. Ես՝ ոչ:

Սոկրատես. Այդ դեպքում, եթե Պրոտագորասը կամ մեկ ուրիշը հարցնի քեզ. «Ո՛վ Թեետետոս, կարո՞ղ է արդյոք որևէ բան ավելի մեծ կամ ավելի շատ դառնալ այլ կերպ, քան ավելացման միջոցով»,– ի՞նչ կպատասխանես:

- d **Թեետետոս.** Եթե, Սոկրատես, ասեի այն, ինչ մտածում եմ հարցի առնչությամբ, կպատասխանեի, որ չի կարող: Իսկ եթե պատասխանեի, ելնելով նախորդ հարցադրումից, հակասությունից խուսափելու համար կասեի, որ կարող է:

Սոկրատես. Հրաշալի է, բարեկամս, Հերան վկա: Սակայն եթե դու ասես, որ կարող է, պատասխանդ կլինի Եվրիպիդեսի ոգով. նախատելի չէ մեր լեզուն, բայց ոչ՝ միտքը¹⁶:

Թեետետոս. Ճշմարիտ է:

- e **Սոկրատես.** Եթե ես ու դու լինեինք խելացի և իմաստուն, հետազոտեինք մտքի հետ կապված ամեն բան և մեզ մնար սոսկ միմյանց սխալների բացահայտումը, ապա բախվելով սոփեստական մենամարտում՝ մենք կկարողանայինք մի փաստարկով պատասխանել մյուսին: Բայց քանի որ մենք

հասարակ մարդիկ ենք, նախ փորձենք քննել ինքը հարցը և պարզել՝ չկա՞ արդյոք մեր մեջ համաձայնություն:

Թեետետոս. Շատ կուզեի պարզել դա:

Սոկրատես. Ես նույնպես: Այդ դեպքում փորձենք հանգիստ, — քանզի բավականաչափ ազատ ժամանակ ունենք, — և առանց կրքերի քննել ինքներս մեզ և այն, թե ինչպես ենք տեսնում այս ամենը: Կարծում են, մենք կսկսենք մեր քննությունը պնդումից, ըստ որի ոչինչ չի դառնում ավելի մեծ ո՛չ իր ծավալով, ո՛չ էլ թվով, քանի դեռ հավասար է ինքն իրեն: Այդպես չէ՞:

155

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Այնուհետև այն, ինչին ոչինչ չեն գումարել և ինչից ոչինչ չեն հանել, երբեք ո՛չ ավելանում է, ո՛չ էլ պակասում, այլ մշտապես հավասար է [ինքն իրեն]:

Թեետետոս. Միանգամայն ճիշտ է:

Սոկրատես. Այդ դեպքում երրորդ պնդումը, որ մենք կընդունենք, կլինի հետևյալը. նախապես չեղածը և [միայն] հետագայում առաջացածը չի կարող գոյություն ունենալ առանց առաջացման և կայացման:

b

Թեետետոս. Ինձ այդպես է թվում:

Սոկրատես. Այս երեք պնդումներն են բախվում իրար մեր հոգում, երբ խոսում ենք խաղազառերի մասին կամ ասում, որ ես իմ տարիքում, երբ ո՛չ աճում են, ո՛չ էլ նվազում, միննույն տարվա ընթացքում նախ բարձրահասակ էի քեզնից, իսկ հետո ցածրահասակ, ընդ որում իմ հասակը չպակասեց, այլ դու աճեցիր: Չէ՞ որ ավելի ուշ ես, կայացումից անկախ, կարծես թե դարձա այն, ինչ չէի նախկինում: Իսկ քանի որ անհնար է դառնալ առանց կայացման, հասակիցս ոչինչ չկորցնելով ես չէի կարող ավելի կարճահասակ դառնալ: Եվ բյուրավոր նման դեպքերում բանն այսպես է, եթե ընդունենք ասածս: Դու հետևում ես ինձ, Թեետետոս: Ես գիտեմ, որ դու անփորձ չես նման հարցերում:

c

Թեետետոս. Աստվածները վկա, Սոկրատես, այդ բանե-

րի մասին մտածելիս մեծագույն զարմանք են ապրում, և երբեմն ուշադիր ներհայեցողությունը բերում է նրան, որ ուղեղս մթազնում է:

- d Սուկրատես. Թեոդորոսը կարծես վատ չի կռահել քո բնությունը: Քանզի հենց փիլիսոփային է հատուկ այդպիսի զարմանքը: Փիլիսոփայությունը զարմանքից բացի այլ սկիզբ չունի, և նա, ով ասել է, թե Իրիսը Թավմասի զավակն է, գլուխ է հանում տոհմաբանությունից¹⁷: Սակայն դու արդեն հասկացա՞ր, ինչպես է այս ամենը վերաբերում Պրոտագորասի ուսմունքին, թե՞ ոչ:

Թեետետոս. Կարծես, ոչ:

- e Սուկրատես. Իսկ ինձ շնորհակալ կլինե՞ս, եթե օգնեմ բացահայտել այդ այրի, ինչպես նաև ուրիշ անվանի այրերի խորհրդածություններում թաքնված ճշմարտությունը:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ, շատ շնորհակալ կլինեմ:

Սուկրատես. Այդ դեպքում ուշադիր դիտիր շուրջդ և տես, որ անհաղորդներից ոչ ոք հանկարծ չլսի մեզ: Կան այնպիսիք, ովքեր կարծում են, իբր գոյություն ունի լոկ այն, ինչ կարելի է ամուր բռնել ձեռքերով, իսկ գործերի և կայացումների, ինչպես և անտեսանելի ամեն բանի գոյությունը չեն ընդունում¹⁸:

- 156 Թեետետոս. Բայց դու խոսում ես բթամիտ ու համառ մարդկանց մասին:

Սուկրատես. Այո, տղաս, նրանք բավական անկիրթ են: Սակայն կան նաև առավել խելացիները, որոնց գաղտնիքները կուզեի քեզ հաղորդել: Սկիզբը, որից կախված է ամեն բան և որի մասին խոսեցինք, նրանց համար այսպիսին է. ամենայն ինչ շարժում է, և շարժումից բացի չկա ոչինչ: Այն երկու տեսակ է՝ յուրաքանչյուրը քանակապես անվերջ, մեկը գործում է, մյուսը՝ կրում: Դրանց բախումից ու շփումից գոյանում են անթիվ-անհամար երկվորյակներ՝ մի կողմից զգայելին, իսկ մյուս կողմից զգայությունը, որը միշտ առաջ է գալիս զգայելիի հետ: Այդ զգայությունները մենք կոչել ենք տեսողություն, լսողու-

թյուն, հոտառություն, ցրտի ու տաքի, հաճույքի ու ցավի, տեն-
 չանքի ու վախի և շատ ուրիշ բաների զգացումներ: Սրանք
 բազմաթիվ են, իսկ նրանք, որ անուն չունեն՝ անթիվ: Զգայելի
 իրերը ցեղակից են այս զգայություններից յուրաքանչյուրին.
 այսպես, բազմորակ տեսողությամը՝ բազմապիսի գույները,
 լսողությամը՝ համապատասխանաբար հնչյունները, և այլ զգա-
 յություններին՝ այլ զգայելիները, որոնք գոյանում են նրանց
 հետ միասին: Դե ի՞նչ, Թեւտետոս, ի՞նչ է տալիս այս շեղումը
 մեր նախորդ խորհրդածություններին: Գլխի ընկնու՞մ ես:

Թեւտետոս. Դեռ ոչ, Սոկրատես:

Սոկրատես. Շարունակիր հետևել, գուցե մեզ հաջողվի
 ավարտին հասցնել մեր շեղումը: Ասվածը նկատի ունի, որ
 բոլոր իրերը, ինչպես արդեն նշեցինք, շարժվում են, և այդ
 շարժումը լինում է արագ կամ դանդաղ: Դանդաղը շարժվում
 է նույն տեղում և ուղղված է մոտակա իրերին, իսկ այն, ինչ
 գոյանում է դրանից, լինում է դանդաղ: Մինչդեռ այն, ինչ
 շարժվում է արագ, գնում է դեպի հեռավոր իրերը, և այստե-
 դից գոյացողը ավելի արագաշարժ է, քանզի նրա բնությունը
 հենց այդ ընթացքն է: Եվ երբ այքը, մոտենալով համապա-
 տասխան ինչ-որ բանի, ծնում է սպիտակություն և դրան ազ-
 գակից զգայություն,— ինչը երբեք չէր լինի, եթե դրանցից յու-
 րաքանչյուրը հանդիպեր նրան, ինչն իրեն չի համապատաս-
 խանում,— տեսողությունը անմիջապես միտվում է դեպի աչ-
 քերը, իսկ սպիտակությունը՝ դեպի այն, ինչ օգնում է գույնին
 առաջանալ: Աչքը լցվում է տեսողությամբ և սկսում է տեսնել,
 իսկ համածնողը լցվում է սպիտակությամբ և դառնում ոչ թե
 սպիտակություն, այլ սպիտակ, լինի դա փայտ, քար կամ
 ուրիշ ինչ-որ բան: Նման ձևով մաս կարծրը, տաքը և այդպես
 դիտված բոլոր մյուս բաները չեն կարող գոյել ըստ ինքյան,
 ինչն արդեն ասացինք, այլ իրերի բոլոր տեսակները գոյանում
 են շփումից ու շարժումից, և, ինչպես ասում են, անհնար է
 հստակ տարբերել, թե որն է գործում և որն է կրում: Քանզի
 չկա գործող, քանի դեռ չի հանդիպել կրողին, և չկա կրող,

c

d

e

157

- քանի դեռ չի հանդիպել գործողին: Իսկ երբ հանդիպում են, մեկը դառնում է գործող, մյուսը՝ կրող: Այնպես որ այն ամենից, ինչի մասին խոսել ենք սկզբից, ոչ մի բան չի գոյում ինքն ըստ ինքյան, այլ առաջանում է ինչ-որ բանի հարաբերությամբ, իսկ «գոյությունը» հարկավոր է վերացնել, չնայած որ բազմիցս և քիչ առաջ էլ օգտվել ենք դրանից ըստ սովորության և տգիտորեն: Հիշյալ այրերի ուսմունքն ասում է, որ չպետք է ընդունել այնպիսի արտահայտություններ, ինչպես «ինչ-որ բան», «ինչ-որ մեկի», «իմ», «այս», «այն» և բոլոր մյուս այն անունները, որ նշանակում են դադար: Պետք է համաձայն բնության իրերը կոչել «կայացող», «ստեղծվող», «կործանվող» և «փոփոխվող»: Ահա ինչու խոսքով իրերը կանգնեցնել ցանկացողը հեշտությամբ բացահայտվում է: Հարկավոր է այսպես դիտել և՛ մասը, և՛ բազում մասերի բաղադրությունը, որպիսին է նրանց կարծիքով մարդը, սովորական քարը և ցանկացած կենդանի ու տեսակ: Դե ի՞նչ, թե՛ տեսոս, գոհացնում ու բավարարու՞մ է քեզ այս ուսմունքը:

Թեթետետոս. Չգիտեմ, Սոկրատես: Ես անգամ չեմ կարողանում հասկանալ, քո կարծիքն ես արտահայտում, թե ինձ ես փորձում:

- Սոկրատես.** Բարեկամս, դու մոռացար, որ ես ոչինչ չգիտեմ և այդ կարծիքներից ոչ մեկը իմը չեմ համարում: Ես անպտուղ եմ և միայն ծնունդ եմ ընդունում քեզնից, ահա ինչու փորձում եմ հմայել քեզ և առաջարկում եմ, որ համտեսես բոլոր իմաստունների ուսմունքներից, քանի դեռ լույս աշխարհի չես բերել սեփականը: Իսկ երբ բերես, ես կստուգեմ՝ տկար է արդյոք, թե առողջ: Այժմ եղիր քաջ ու տոկուն և արժանապատվությամբ ու ազնվությամբ պատասխանիր՝ քեզ ինչ է թվում, ի՞նչ եմ պատրաստվում հարցնել:

Թեթետետոս. Տուր հարցդ:

Սոկրատես. Մեկ անգամ էլ ասա, բավարարու՞մ է արդյոք քեզ ուսմունքը, որ ոչինչ գոյություն չունի այլ կերպ, քան կայացման մեջ՝ դառնալով բարի, գեղեցիկ և այլն:

Թեոտեոսոս. Երբ լսում եմ դատողությունդ, այն թվում է ինձ միանգամայն իմաստալից և այդ տեսքով շատ ընդունելի:

Սուկրատես. Այդ դեպքում զանց չառնենք նաև մնացյալը: Մեզ դեռ մնում են երազներն ու հիվանդությունները, նաև ցնորվածությունները, որոնք, ինչպես ասում են, առաջ են գալիս տեսողության, լսողության կամ մեկ այլ զգայության խանգարումից: Չէ՞ որ դու գիտես, որ սրանց բոլորի դեպքում հիշյալ ուսմունքը հերքվում է, քանզի այդպերպ գոյացած զգայությունները միանգամայն կեղծ են, և այն, ինչ յուրաքանչյուրին թվում է այդպիսին, իրականում հակառակն է: Թվացող բոլոր այդ բաներից և ոչ մեկը գոյություն չունի:

Թեոտեոսոս. Շատ ճշմարիտ ես ասում, Սուկրատես:

Սուկրատես. Այդ դեպքում, տղաս, ի՞նչ փաստարկ է մնում նրան, ով համարում է, թե իմացությունը զգայություն է և յուրաքանչյուրի համար թվացող իրն այնպիսին է, ինչպիսին երևում է:

Թեոտեոսոս. Սուկրատես, այն բանից հետո, երբ նախատեսցիր քիչ առաջ ասածիս համար, ես վարանում եմ խոստովանել, որ ասելու բան չունեմ: Բայց, ծիշտն ասած, ես անզոր կլինեի վիճել և պնդել, թե ցնորվածության կամ զառանցանքի մեջ մարդիկ չեն ընկնում կեղծիքի գիրկը, երբ մեկն իրեն աստված է կարծում, իսկ մյուսը՝ ճախրող թռչուն:

Սուկրատես. Նկատի չունե՞ս արդյոք երազի և արթնության մասին հայտնի վեճը:

Թեոտեոսոս. Այդ ի՞նչ վեճ է:

Սուկրատես. Կարծում եմ, դու հաճախ ես լսել դրա մասին: Հարցը հետևյալն է. կարելի՞ է արդյոք ապացուցել, որ ներկա պահին մենք քնած ենք և մեր բոլոր մտքերը երազ են կամ որ արթուն ենք և արթուն ենք զրուցում:

Թեոտեոսոս. Իրոք, Սուկրատես, այստեղ դժվար է ապացույց գտնել: Քանզի ամեն բան արծագանքում է, ինչպես ստրոֆեն և անտիստրոֆեն: Ոչինչ չի խանգարում երազ համարել նաև մեր այժմյան զրույցը, իսկ երբ երազում մեզ

թվում է, թե երազները հաջորդում են իրար, դա անհեթեթ նմանություն ունի արթուն վիճակի հետ:

Սոկրատես. Ուրեմն դու տեսնում ես, որ վիճելն այնքան էլ դժվար չէ, քանզի վիճելի է արդեն այն, թե ինչ վիճակում ենք՝ արթուն, թե քնած: Եվ քանզի մենք արթուն և քնած ենք լինում հավասար ժամանակ, մեր հոգու մեջ միշտ պայքար է ընթանում, թե վիճակներից որ մեկի կարծիքն է ավելի ճշմարիտ, այնպես որ հավասար ժամանակի ընթացքում մենք մերթ ասում ենք, որ ճշմարիտ է սա, մերթ էլ՝ մյուսը, և երկու դեպքում էլ մեր վստահությունը նույնն է:

Թեետետոս. Միանգամայն ճիշտ է:

Սոկրատես. Ուրեմն հիվանդությունների և ցնորվածությունների համար էլ կարող ենք ասել նույնը, բացի այն, որ ժամանակը սրանց դեպքում հավասար չէ:

Թեետետոս. Ճիշտ է:

Սոկրատես. Հետևաբար ժամանակի երկարությամբ կամ կարճությամբ չէ որոշվում ճշմարիտը:

Թեետետոս. Դա մաքուր զավեշտ կլիներ:

Սոկրատես. Իսկ այս երկու կարծիքներից որևէ մեկի համար ուրիշ հստակ ապացույց կարո՞ղ ես բերել:

Թեետետոս. Կարծում եմ, ոչ:

Սոկրատես. Ուրեմն ինձնից լսիր, թե ինչ կասեին նրանք, ովքեր ճշմարիտը սահմանում են որպես այն, ինչ թվում է նրան, ում դա թվում է: Որքան գիտեմ, նրանք ասում են այսպես. «Ո՛վ Թեետետոս, կարո՞ղ է արդյոք այն, ինչն ընդհանրապես այլ է, ինչ-որ առումով նույնը լինել իրենից տարբեր իրի հետ: Եվ մենք չպիտի ընդունենք, որ խնդրո առարկան ինչ-որ առումով տարբեր է սրանից, իսկ մեկ այլ առումով՝ ոչ: Ես հարցնում եմ ամբողջապես այլի մասին»:

Թեետետոս. Անհնար է, որ դա լինի նույնը ինչ-որ հատկությամբ կամ որևէ առումով, եթե ամբողջապես այլ է:

Սոկրատես. Եվ անհրաժեշտ չէ՞ արդյոք նաև համաձայնել, որ դա չի լինի նման այդ իրին:

Թեոտեոս. Կարծում եմ, այո:

Սոկրատես. Չէ՞ որ եթե ինչ-որ բան դառնում է նման,— իրեն կամ ուրիշին,— մենք կասենք, որ դառնալով նման՝ այն նույնն է դառնում և երբ դառնում է ոչ նման, դառնում է այլ:

Թեոտեոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Բայց մենք արդեն ասել ենք, որ գործողը նույնքան շատ է և անսահման, որքան կրողը:

Թեոտեոս. Այո:

Սոկրատես. Եվ որ մեկի և մյուսի միացումից կծնվի այլը, բայց ոչ նույնը:

Թեոտեոս. Իհարկե:

b

Սոկրատես. Հավատարիմ մնալով այդ սկզբունքին՝ խոսենք իմ, քո և ուրիշ բաների մասին, օրինակ՝ առողջ Սոկրատեսի և հիվանդ Սոկրատեսի: Կասե՞նք արդյոք, որ առաջինը նման է երկրորդին:

Թեոտեոս. Նկատի ունես, արդյո՞ք ամբողջությամբ վերցված հիվանդ Սոկրատեսը նման է ամբողջությամբ վերցված առողջ Սոկրատեսին:

Սոկրատես. Ճիշտ հասկացար, հենց դա նկատի ունեի:

Թեոտեոս. Ըստ իս՝ նման չէ:

Սոկրատես. Ուրեմն դա ուրիշ Սոկրատես է, եթե նման չէ:

Թեոտեոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Հետևաբար քնած Սոկրատեսի և բոլոր այն բաների դեպքում, որ քիչ առաջ քննեցինք, տեղի ունի նույնը: Ի՞նչ կասես:

c

Թեոտեոս. Իհարկե:

Սոկրատես. Նշանակում է, ցանկացած իր, որն ի բնե այնպիսին է, որ հանդիպելով մեկ ուրիշ իրի, սկսում է գործել, բախվելով առողջ Սոկրատեսին, կհարաբերվի ինձ որպես մի մարդու, իսկ բախվելով հիվանդ Սոկրատեսին, կհարաբերվի որպես մեկ ուրիշ մարդու:

Թեոտեոս. Իսկ ինչու՞ ոչ:

Սուկրատես. Եվ երկու դեպքում էլ ես, որ կրողն եմ, և այն, որ գործողն է, առաջ կբերենք տարբեր բաներ:

Թենտետոս. Ի՞նչ:

Սուկրատես. Երբ ես առողջ եմ և գինի եմ խմում, այն ինձ թվում է հաճելի և քաղցր:

Թենտետոս. Այո:

Սուկրատես. Քանզի, ինչպես արդեն համաձայնեցինք, **d** գործողը և կրողը առաջ բերեցին քաղցրություն և զգայություն, որոնք միաժամանակ միտվում են տարբեր կողմեր, և զգայությունը, որ գալիս է կրողից, զգայող է դարձնում լեզուն, իսկ քաղցրությունը շարժվելով դեպի գինին, անում է այնպես, որ այն և՛ լինի քաղցր, և՛ այդպիսին թվա լեզվին:

Թենտետոս. Իհարկե, մենք արդեն համաձայնեցինք, որ այդպես է:

Սուկրատես. Իսկ երբ ես հիվանդ եմ, գինին համտեսողն ըստ էության նույն մարդը չէ: Չէ՞ որ այդժամ գինին մոտենում է ոչ նմանին:

Թենտետոս. Այո:

Սուկրատես. Այդ ուրիշ Սուկրատեսը և համտեսված գինին առաջ կբերեն այլ զգայություն. լեզուն կզգա դառնություն, և գինու մեջ գոյացած և տարածված դառնության հետևանքով այն կլինի արդեն ոչ թե դառնություն, այլ դառը, իսկ ես կլինեմ ոչ թե զգայություն, այլ զգայող: **e**

Թենտետոս. Շատ ճիշտ է:

Սուկրատես. Եվ այդպես զգայելով՝ ես երբեք ուրիշ չեմ դառնա, քանզի ուրիշ իրերից եկող զգայությունն էլ ուրիշ է և զգայողին դարձնում է ուրիշ և այլ: Այդպես էլ ինձ վրա ներգործողը, միանալով ուրիշի հետ և առաջ բերելով ուրիշը, երբեք չի կարող նույնը մնալ, քանի որ ուրիշից առաջ բերելով ուրիշ՝ ինքն էլ ուրիշ կդառնա: **160**

Թենտետոս. Այդպես է:

Սուկրատես. Ես ինքս էլ նույնը չեմ մնա, և գինին նույնպես չի մնա:

Թեոտեոս. Այո:

Սուրառես. Չէ՞ որ եթե ես ինչ-որ բան եմ զգայում, պիտի զգայող դառնամ, քանզի ոչինչ չզգայելով՝ հնարավոր չէ զգայող դառնալ: Նմանապես այն, ինչը դառնում է քաղցր կամ դառը կամ մեկ այլ բան, այդպիսին է դառնում ինչ-որ մեկի համար, որովհետև չի կարող քաղցր լինել ոչ մեկի համար:

Թեոտեոս. Միանգամայն ճիշտ է:

Սուրառես. Եվ մեզ, կարծում եմ, մնում է, եթե գոյում ենք, գոյել կամ, եթե կայանում ենք, կայանալ միմյանց համար, որքանով որ անհրաժեշտությունը կապում է մեր գոյությունը, բայց չի կապում ո՛չ ուրիշների, ո՛չ էլ հենց մեզ հետ: Ահա ինչու մեզ մնում է կապված լինել միմյանց: Այնպես որ, եթե ինչ-որ մեկն ասի, թե «ինչ-որ բան գոյություն ունի», պիտի ասի, թե ինչի համար, ինչից և ինչի նկատմամբ «գոյություն ունի», և նույնը, եթե ասում է «կայանում է»: Նա չպիտի ասի, որ դա ինքն ըստ ինքյան գոյություն ունեցող կամ կայացող բան է, ոչ էլ ուրիշին թույլ տա անել դա: Այդ է պահանջում ուսմունքը, որ քննեցինք:

Թեոտեոս. Միանգամայն ճիշտ է:

Սուրառես. Յետևաբար, եթե ինձ վրա ներգործողը գոյություն ունի ինձ համար, և ոչ ուրիշի, ապա ես այն զգայում եմ, իսկ ուրիշը՝ ո՞չ:

Թեոտեոս. Ինչպե՞ս չէ:

Սուրառես. Նշանակում է, իմ զգայությունը ճշմարիտ է ինձ համար, քանի որ վերաբերում է իմ էությանը: Եվ համաձայն Պրոտագորասի՝ ես ինձ համար գոյություն ունեցող իրերի դատավորն եմ՝ նրանց, որ գոյություն ունեն, և նրանց, որ գոյություն չունեն:

Թեոտեոս. Կարծես թե:

Սուրառես. Եթե ես անթերի դատավոր եմ և գոյություն ունեցող կամ կայացող բաների մասին իմ մտքերի մեջ չեմ սխալվում, ինչպե՞ս կարող եմ չիմանալ այն, ինչ զգայում եմ:

Թեոտետոս. Իհարկե չես կարող:

Սոկրատես. Ուրեմն դու շատ ճիշտ ասացիր, որ իմացությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ զգայություն, և դա համահունչ է Յոմերոսի, Յերակլիտոսի և նրանց բոլոր հետևորդների այն ասույթին, ըստ որի ամեն բան հոսում է, ինչպես գետը, Պրոտագորասի՝ իմաստուններից ամենաիմաստունի համոզմունքին, որ ամեն բանի չափը մարդն է, և կամ e էլ Թեոտետոսի այն ուսմունքին, որ եթե այդ ամենը ճշմարիտ է, իմացությունը զգայություն է: Դե, Թեոտետոս, չասե՞նք, որ սա է քո նորածին մանուկը, որի ծնունդը ես ընդունեցի: Ի՞նչ կասես:

Թեոտետոս. Անհրաժեշտաբար այդպես է, Սոկրատես:

Սոկրատես. Ինչպիսին էլ լինի, թերևս դժվարությամբ, բայց դուրս բերեցինք նրան: Իսկ հիմա, երբ արդեն ծնվել է, հարկավոր է պտտեցնել նրան օջախի շուրջը¹⁹ և պարզել, թե չենք խաբվում արդյոք դաստիարակությանն անարժան ու 161 կեղծ վիժվածքով: Ինչ ես կարծում, նրան հարկավոր է ամեն դեպքում պահել և խնամե՞լ, թե՞ մտադիր ես համբերատար հետևել, թե ինչպես են քննում նրան, և շատ չես վշտանա, եթե ձեռքիցդ խլեն առաջնեկիդ:

Թեոդորոս. Թեոտետոսը կհամբերի, Սոկրատես, քանզի բնավ խստաբարո չէ: Սակայն հանուն աստվածների ասա, ի՞նչն այնպես չէ:

Սոկրատես. Դու իրոք զրույցի մեծ սիրահար ես, Թեոդորոս, եթե ինձ համարում ես փաստարկներով լեցուն պարկ և կարծում, որ հեշտությամբ դուրս հանելով այդ փաստարկներից մեկը՝ կարող եմ ասել, որ ամեն բան այնպես չէ: Դու b չես հասկանում, թե ինչ է տեղի ունենում: Փաստարկներից և ոչ մեկը չի ելնում ինձնից, այլ՝ մշտապես իմ զրուցակիցներից: Անձամբ ես ոչինչ չգիտեմ, բացառությամբ չնչին մի բանի, այն է՝ թե այս կամ այն իմաստունի որ փաստարկն է հարկավոր վերցնել և ուշադիր քննել: Հիմա էլ նույնն եմ փորձում անել, բայց ինքս ասելու ոչինչ չունեմ:

Թեոդորոս. Շատ լավ ասացիր, Սուկրատես: Այդպես էլ վարվիր:

Սուկրատես. Գիտե՞ս, Թեոդորոս, թե ինչն է զարմացնում ինձ քո բարեկամի՝ Պրոտագորասի մեջ:

Թեոդորոս. Ի՞նչը:

Սուկրատես. Ինձ շատ է դուր գալիս նրա այն ասույթը, թե ամեն բան այնպիսին է, ինչպիսին որ երևում է յուրաքանչ-յուրին: Բայց ահա դատողության սկիզբն ինձ զարմացնում է, քանի որ իր «ճշմարտության»²⁰ սկզբում նա չի ասում, թե բոլոր իրերի ճշմարտության չափը խոզն է կամ կինոկեփալոսը²¹ և կամ էլ կարծիքներ ունեցող մեկ ուրիշ բան: Այդ դեպքում նրա խոսքը ավելի դժվարամարս ու ճոռոն սկիզբ կունենար և կապացուցեր, որ մենք զարմանում ենք նրա իմաստության վրա, ինչպես մի աստծո, մինչդեռ բանականությամբ նա դույզն իսկ չի գերազանցում շերեփուկին, էլ ուր մնաց մարդկանց: Ի՞նչ կասես, Թեոդորոս: Քանզի եթե յուրաքանչյուրի համար ճշմարիտ է այն, ինչ երևում է իրեն զգայության միջոցով, և մարդը չի կարող դատել մյուս մարդու վիճակի մասին ավելի լավ, քան նա ինքը, մեկն անզոր է տեսնել՝ ճշմարիտ են արդյոք մյուսի կարծիքները, թե սխալ, բայց,– ինչպես բազմիցս ասացիմք,– ամեն ոք ինքն է կազմում իր կարծիքները, և դրանք բոլորը ճիշտ են և ճշմարիտ, ապա, բարեկամս, Պրոտագորասն իմաստուն է, և դա իրավունք է տալիս նրան բարձր վճարի դիմաց ուսուցանել ուրիշներին, իսկ մենք տգետ ենք և պետք է սովորենք նրանից, յուրաքանչ-յուրս լինելով մեր իմաստության չափը: Ինչպես չասենք, որ իր այդ խոսքերով Պրոտագորասը փորձում է սիրաշահել ժողովրդին: Իմ անձի և տատմոր իմ արվեստի մասին ես լռում եմ, քանզի դա պարզապես զավեշտական է, այլ նկատի ունեն մեր ողջ զբաղմունքը՝ դիալեկտիկան: Չէ՞ որ եթե ամեն կարծիք ճիշտ է, եթե ճշմարիտ է Պրոտագորասի «ճշմարտությունը» և կատակ չէ այն, ինչ մեզ հասնում է նրա գրքի խորքերից, ապա միմյանց տեսիլների ու կարծիքների քննությամբ

c

d

e

162

ու բացահայտումով զբաղվելը փուչ և անհիմաստ գործ է:

Թեոդորոս. Ինչպես ասացիր քիչ առաջ, այդ մարդն իմ բարեկամն է, Սոկրատես: Այնպես որ չէի ցանկանա համաձայնելով քեզ՝ հերքել Պրոտագորասին, թեպետ չէի ցանկանա նաև հակառակվել կարծիքիդ: Ուստի դարձյալ վերցրու Թեետետոսին: Նա հիմա էլ սիրով լսում է քեզ:

Սոկրատես. Ո՛վ Թեոդորոս, եթե գալով Լակեդեմոն՝
b մտնեիր պալատտրա և տեսնեիր, որ ուրիշները, նույնիսկ մարմնով վտիտները, քայլում են մերկ, մի՞թե չէիր ամաչի այդպես նայել նրանց՝ ինքդ թաքցնելով տեսքդ և չմերկանալով:

Թեոդորոս. Բայց ինչու՞ ես կարծում, որ եթե նրանք փորձեին համոզել ինձ, դա նրանց կհաջողվեր: Ես կհամոզեի նրանց, ինչպես և ձեզ այժմ, որ ինձ թույլ տան պարզապես դիտել և չմտնել գիմնասիոն, քանի որ արդեն ծեր եմ երիտասարդ և ճկուն մեկի հետ մրցելու համար:

Սոկրատես. Այդ դեպքում, Թեոդորոս, եթե քեզ դա
c *հաճելի է*, ապա, ըստ ասացվածքի, ինձ համար էլ *ընդունելի է*: Ես կրկին պիտի դիմեմ իմաստուն Թեետետոսին: Նախ ասա ինձ, Թեետետոս, ի՞նչ էինք քննում քիչ առաջ: Մի՞թե քեզ չի զարմացնում, որ հանկարծ այնպես եղավ, որ քո իմաստությունը դու ո՛չ մարդկանցից, ո՛չ էլ աստվածներից որևէ մեկին չես զիջում: Թե՞ կարծում ես, որ պրոտագորյան չափը աստվածներին պակաս է վերաբերում, քան մարդկանց:

Թեետետոս. Ոչ, Ձևսը վկա: Եվ շատ եմ զարմանում, որ հարցնում ես: Երբ քննում էինք, թե ինչպես են նրանք
d պնդում, իբր ամեն բան այնպիսին է, ինչպիսին որ երևում է նրան, ում երևում է, ես դա միանգամայն ճիշտ համարեցի: Բայց հիմա հանկարծ ճիշտ դուրս եկավ հակառակը:

Սոկրատես. Որովհետև դու երիտասարդ ես, տղաս, և սուր ես ընկալում ու տանում ճամարտակությունը: Պրոտագորասը կամ մեկ ուրիշը նրա փոխարեն կպատասխաներ. «Ո՛վ ազնիվ պատանիներ ու ծերեր, այդ դուք եք միասին

նստած ճամարտակում ու ներքաշում նաև աստվածներին, որոնց գոյությունը կամ չգոյությունը ես թե՛ ճառերիս, թե՛ գրվածքներիս մեջ բացառում եմ²²: Իսկ դուք ասում եք բաներ, որոնք հաճելի են բազմությանը, իբր սարսափելի է, որ իմաստության մեջ ոչ մի մարդ չի գերազանցում ամասունին: Դուք ոչ մի անհերքելի ապացույց չեք ներկայացնում, այլ օգտվում եք հավանականությունից, որի կիրառումը երկրաչափության մեջ, աներ դա Թեոդորոսը կամ մեկ ուրիշ երկրաչափ, ոչ մի արժեք չէր ունենա»: Իսկ հիմա դու և Թեոդորոսը որոշեք՝ կընդունե՞ք արդյոք ճշմարտանմանությունն ու հավանականությունը այսպիսի կարևոր քննության մեջ:

e

163

Թեոտեոս. Բայց Սոկրատես, ո՛չ դու, ո՛չ էլ մենք դա ճիշտ չէինք համարի:

Սոկրատես. Այդ դեպքում պետք է քննել այլ կերպ՝ հետևելով քո և Թեոդորոսի խոսքին:

Թեոտեոս. Իհարկե այլ կերպ:

Սոկրատես. Արդ, տեսնենք, արդյոք իմացությունն ու զգայությունը նույն բանն են, թե տարբեր են: Չե՞ որ մեր ամբողջ զրույցը նվիրված էր դրան և հանուն դրա մենք իրար խառնեցինք բազմաթիվ այս անհեթեթությունները:

Թեոտեոս. Իհարկե:

Սոկրատես. Համաձայնենք, որ այն, ինչ զգայում ենք տեսողությամբ կամ լսողությամբ, միաժամանակ նաև ճանաչում ենք: Եթե, օրինակ, մենք լսենք բարբարոսների խոսքը նախքան նրանց լեզուն սովորելը, մի՞թե կասենք, որ չենք լսում նրանց արտասանածը, թե՞ կասենք, որ և՛ լսում ենք, և՛ գիտենք, թե ինչ են ասում: Նմանապես չիմանալով նրանց գրերը, մի՞թե հայացք նետելով դրանց վրա՝ կասենք, որ չենք տեսնում դրանք, թե՞ կասենք, որ գիտենք դրանք, որովհետև տեսնում ենք:

b

Թեոտեոս. Մենք կասեինք, որ գիտենք այն, ինչ տեսնում ու լսում ենք դրանց մեջ, Սոկրատես. գրերի դեպքում գրության ձևն ու գույնը մենք տեսնում ենք և գիտենք, իսկ

c բարբարոսների խոսքի դեպքում մենք լսում ենք և միաժամանակ գիտենք ձայնի բարձրությունն ու ցածրությունը: Իսկ այն, ինչ սովորեցնում են քերականներն ու մեկնիչները, մենք չենք զգայում ո՛չ տեսողությամբ, ո՛չ լսողությամբ:

Սոկրատես. Հրաշալի է, Թենտետոս: Չարժե վիճել քեզ հետ այդ մասին, որ չգողոզանաս: Բայց նկատի առ նաև իմ մյուս մտահոգությունը և մտածիր, թե ինչպես հաղթահարենք այն:

Թենտետոս. Ի՞նչ մտահոգություն:

Սոկրատես. Ահա թե ինչ. եթե մեկը հարցնի. «հնարավո՞ր է արդյոք, որ որևէ մարդ իմանա մի բան և մտապահելով դա չիմանա իր հիշածը հենց այն պահին, երբ մտապահում է»: Կարծես թե շատախոսում եմ, իսկ ուզում էի հարցնել հետևյալը. արդյո՞ք որևէ մեկը ինչ-որ բան սովորելուց հետո չի իմանում իր մտապահածը:

Թենտետոս. Այդ ինչպե՞ս, Սոկրատես: Ասածդ անհեթեթություն է:

Սոկրատես. Ուրեմն ցնդաբանու՞մ եմ: Սակայն մտածիր, մի՞թե ինքդ չէիր պնդում, որ տեսնելը նույն զգայելն է և որ տեսողությունը զգայություն է:

Թենտետոս. Այո:

Սոկրատես. Այդ դեպքում քիչ առաջ ասվածի համաձայն մի՞թե ինչ-որ բան տեսնողը չի դառնում այդ բանն իմացող:

Թենտետոս. Այո:

Սոկրատես. Եվ ինչ, կասե՞ս արդյոք, որ կա հիշողություն կոչվածը:

Թենտետոս. Այո:

Սոկրատես. Ոչնչի՞ հիշողություն, թե՞ ինչ-որ բանի:

Թենտետոս. Իհարկե ինչ-որ բանի:

Սոկրատես. Եվ մի՞թե ոչ այն բաների, որոնք նա սովորել և զգայել է:

Թենտետոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Երբ որևէ մարդ ինչ-որ բան է տեսնում, չի՞ հիշում երբեմն իր տեսածը:

Թեոտեոս. Հիշում է:

Սուկրատես. Անգամ աչքերը փա՞կ: Թե՞ այդ դեպքում իսկույն մոռանում է:

Թեոտեոս. Նման պնդումը սարսափելի կլիներ, Սուկրատես:

Սուկրատես. Այդուհանդերձ մենք ստիպված ենք պնդելու դա, եթե ուզում ենք պահպանել նախորդ փաստարկը: 164

Թեոտեոս. Ձևը վկա, ինձ էլ է թվում, որ այստեղ կասկածելի ինչ-որ բան կա, սակայն լավ չեմ պատկերացնում, թե ինչ: Ասա ինձ:

Սուկրատես. Բանն այսպես է: Մենք ասում ենք, որ նա, ով տեսնում է, դառնում է իր տեսածի իմացող: Չե՞ որ մենք համաձայնեցինք, որ տեսողությունը, զգայությունը և իմացությունը նույն բանն են:

Թեոտեոս. Իհարկե:

Սուկրատես. Բայց նա, ով տեսնում և իմանում է, հիշում է իր տեսածը նաև այն ժամանակ, երբ փակում է աչքերը: Այդպես չե՞:

Թեոտեոս. Այո:

Սուկրատես. Իսկ «չի տեսնում»-ը նշանակում է «չի իմանում», քանզի տեսնելը իմանա՞լն է: b

Թեոտեոս. Ճշմարիտ է:

Սուկրատես. Հետևաբար, երբ նա ինչ-որ բան գիտի և դեռ հիշում է դա, նա չգիտի դա, քանի որ չի տեսնում: Մենք արդեն ասացինք, որ նման դեպքը անհեթեթ կլիներ:

Թեոտեոս. Շատ ճիշտ ես ասում:

Սուկրատես. Անհնար ինչ-որ բան է դուրս գալիս, երբ ասում ենք, թե իմացությունը և զգայությունը նույն բանն են:

Թեոտեոս. Կարծես:

Սուկրատես. Ուրեմն պիտի ասենք, որ դրանք տարբեր են:

Թեետետոս. Վախենամ, այդպես է:

- c **Սոկրատես.** Ի՞նչ է ուրեմն իմացությունը: Թերևս ստիպված ենք սկզբից սկսել մեր քննությունը: Ինչպե՞ս վարվենք, Թեետետոս:

Թեետետոս. Ինչի՞ վերաբերյալ:

Սոկրատես. Ինձ թվում է, վախկոտ աքլորների պես հետցատկելով մեր ապացույցից՝ հաղթական ճիչ ենք արձակում նախքան հաղթելը:

Թեետետոս. Այդ ինչպե՞ս:

- Սոկրատես.** Մենք նման ենք վիճաբանների: Առանց բաները համաձայնեցնելու, ուզում ենք դրանց իմաստները փոխելով լավ ապացույց գտնել, ասելով, որ ոչ թե հակառակորդներ ենք, այլ փիլիսոփաներ, բայց չնկատելով, որ անում ենք այն, ինչ անում են այդ մոլեգնած այրերը²³:

Թեետետոս. Դեռ չեմ հասկանում, թե ինչ նկատի ունես:

Սոկրատես. Փորձեմ բացատրել միտքս: Չե՞ որ մենք հարցրեցինք՝ կարո՞ղ է արդյոք որևէ մարդ չիմանալ իր սովորածն ու հիշածը, և մատնանշեցինք նրան, ով ինչ-որ բան է տեսել և փակ աչքերով հիշում է դա, թեև էլ չի տեսնում: Դրանով ցույց տվեցինք, որ հիշելով հանդերձ նա միաժամանակ այդ չգիտի, ինչն անհնար է: Այդպիսով պրոտագորայան և քո առասպելն այն մասին, թե իմացությունն ու զգայությունը նույնն են, տապալվում է:

- e **Թեետետոս.** Ակնհայտ է:

Սոկրատես. Իսկ ես կարծում եմ՝ ոչ: Եթե ողջ լիներ առաջին առասպելի հայրը, ամեն զնով կպաշտպաներ այն: Մի տե՛ս, ինչ նեղն ենք զցել որբուկին: Անգամ Պրոտագորասի թողած խնամակալները, որոնցից մեկը ահա այս Թեոդորոսն է, չեն ուզում օգնության գալ: Թվում է, հանուն արդարության մենք ինքներս պիտի օգնության հասնենք նրան:

- 165 **Թեոդորոս.** Ոչ թե ես, Սոկրատես; այլ Հիպպոնիկոսի որդի Կալլիասն է նրա խնամակալը²⁴: Ես ավելի շուտ նրանցից եմ, ովքեր վերացական խորհրդածություններից հեռանալով՝

դիմեցին երկրաչափությանը: Ամեն դեպքում շնորհակալ կլինենք, եթե օգնես նրան:

Սուկրատես. Լավ ես ասում, Թեոդորոս: Իսկ հիմա տես, թե ինչպես եմ պատրաստվում պաշտպանել: Չէ՞ որ կարելի է խճճվել շատ ավելի սարսափելի բաների մեջ, եթե ուշադրություն չդարձնենք բառերին, որոնք սովորաբար պնդել կամ հերքել ենք: Ու՞մ ուղղեն խոսքս, քե՞զ, թե՞ Թեոտետոսին:

Թեոդորոս. Երկուսիս, բայց թող պատասխանի երիտասարդը, քանզի նա պակաս չափով կամաչի սխալվելուց:

Սուկրատես. Ես կքննեն ամենադժվար հարցը: Կարծում եմ, դա հետևյալն է: Կարո՞ղ է արդյոք միևնույն մարդը իմանալով ինչ-որ բան, չիմանալ այն, ինչ գիտի:

Թեոդորոս. Ի՞նչ պատասխանենք, Թեոտետոս:

Թեոտետոս. Կարծում եմ, դա անհնար է:

Սուկրատես. Բնավ, եթե համարես, որ տեսնել նշանակում է իմանալ: Ի՞նչ կասես, եթե որևէ մեկը խորամանկ հարցով նեղը գցի քեզ և, ձեռքով փակելով մի աչքդ, ուզենա պարզել՝ տեսնու՞մ ես արդյոք այս հիմատիոնը²⁵ փակ աչքով:

Թեոտետոս. Կարծում եմ, կասեմ, որ այդ մեկով չեմ տեսնում, բայց տեսնում եմ մյուսով:

Սուկրատես. Հետևաբար միևնույն բանը դու և՛ տեսնում ես, և՛ չես տեսնում:

Թեոտետոս. Կարծես թե այդպես է:

Սուկրատես. Բայց նա կասի. «Ես չեմ հարցնում, թե ինչպես, ես հարցնում եմ՝ կարո՞ղ ես դու չիմանալ այն, ինչ գիտես: Արդ, պարզվում է, որ տեսնելով հանդերձ դու չես տեսնում: Դու համաձայնեցիր, որ տեսնելը իմանալն է, իսկ չտեսնելը՝ չիմանալը: Ինքդ եզրակացրու, թե ինչ է բխում այս ամենից:

Թեոտետոս. Եզրակացությունս հակառակ է ենթադրության:

Սուկրատես. Հավանաբար, սիրելիս, դու ավելի շատ կխճճվես, եթե հարցնեն՝ կարելի՞ է արդյոք միևնույն բանը

ճանաչել հստակ և աղոտ, ի մոտո ճանաչել, իսկ հեռվից՝ ոչ, իմանալ խորապես և մակերեսորեն: Նման և ուրիշ բյուրավոր հարցեր իսկույն կուղղի քեզ որևէ զրուցասեր վարձու պելտաստ²⁶, հենց որ ասես, թե իմացությունը և զգայությունը նույն բանն են: Խորանալով լսողության, հոտոտելիքի և մյուս զգայությունների էության մեջ, նա կհակառակվի քեզ, կհետապնդի և բաց չի թողնի այնքան ժամանակ, մինչև որ դու, նրա մեծ իմաստությամբ հիացած, ձեռքերդ ու ոտքերդ կապկպված, չկամենաս ազատվել նրանից դրամով, որի չափը ինքներդ կորոշեք: Բայց գուցե դու հարցնես. «Իսկ ի՞նչ կասի ի պաշտպանություն իր պնդումների ինքը Պրոտագորասը»: Փորձե՞մ ասել:

Թեետետոս. Իհարկե:

Սոկրատես. Ըստ իս, նա ի մի կերպի այն ամենը, ինչ
 166 մենք պնդեցինք նրա օգտին, և կասի. «Այս հրաշալի Սոկրատեսը, երբ մի երեխա, վախեցած այն հարցից, թե կարող է արդյոք միևնույն մարդը հիշել և միաժամանակ չիմանալ միևնույն բանը, վախից պատասխանեց՝ ոչ, քանզի չէր կարող կանխատեսել, թե ինչ կլինի, – այս Սոկրատեսն ինձ ծաղրի ենթարկեց իր խոսքում: Մինչդեռ, ո՛վ թեթևամիտ Սոկրատես, բանն այսպես է: Երբ դու հարցերի միջոցով քննում ես իմ դրույթները և հարցվողը պատասխանում է այնպես, ինչպես ինքս կպատասխանեի, և սխալվում է, հերքվում եմ ես, իսկ
 b եթե պատասխանում է այլ կերպ, ապա հերքվում է նա ինքը: Եվ դու կարծում ես, թե ինչ-որ մեկը կհամաձայնի՞ քեզ, իբր ինչ-որ բան կրածի ներկա հիշողությունը, հիմա երբ նա արդեն չի կրում դա, նույնական է անցյալում իր կրածին: Բնավ այդպես չէ: Թե՞ որևէ մեկը կհամաձայնի, որ միևնույն բանը կարելի է և՛ իմանալ, և՛ չիմանալ: Կամ, եթե նա վախենա համաձայնել, կարծում ես, կընդունի՞, որ փոխված մարդը և նախքան փոխվելը եղած մարդը նույն մարդն է: Ավելին. որ դա նույն մարդն է, և ոչ այն մյուս անսահման [քանակությամբ] գոյացողները, – քանզի փոփոխությունները շարունակ-
 c վում են, – եթե փորձենք խուսափել բառային որոգայթներից,

որ լարում ենք մեկս մյուսին: Ոչ, սիրելիս, կասի նա, ազնվորեն դուրս արի իմ ուսմունքի դեմ և, եթե կարող ես, բացահայտիր, որ մեզնից յուրաքանչյուրի զգայությունները յուրահատուկ չեն, կամ եթե յուրահատուկ են, ապա դրանից չի բխում, թե ինչ-որ մեկին թվացողը գոյանում է միայն նրա համար, իսկ եթե ինչ-որ բանի մասին պետք է ասել «կա», դա պիտի լինի նրա համար, ում թվում է:

Իսկ եթե դու խոսում ես խոզերի և կինոկեփալոսների մասին, ոչ միայն ինքդ ես վարվում խոզի պես, այլև ունկնդիրներիդ դրդում այդպես վարվել իմ գրվածքների հետ, իսկ դա լավ չէ: Չէ՞ որ ես ասում եմ, որ ճշմարտությունն այնպիսին է, ինչպես գրի եմ առել. գոյություն ունեցող և չունեցող բաների չափը մեզնից յուրաքանչյուրն է: Ամեն ոք անչափ տարբեր է մյուսից, որովհետև մեկի համար գոյություն ունի մի բան և նրան այդպես է թվում, իսկ մյուսի համար մեկ այլ բան և նրան այլ կերպ է թվում: Ես բոլորովին չեմ պնդում, թե չկա իմաստություն կամ չկան իմաստուն այրեր, ոչ, ես ասում եմ, որ իմաստուն է նա, ով մեզնից որևէ մեկին թվացող և այդ մեկի համար գոյություն ունեցող չարիքը փոխակերպում է այնպես, որ նրան թվա բարիք և բարիք լինի նրա համար: Սխալ մի՛ փնտրիր իմ բառերի մեջ, այլ ավելի լավ է հասկացիր դրանք: Դա կարելի է անել՝ հիշելով քիչ առաջ ասածդ այն մասին, որ հիվանդին կերակուրը թվում է դառը և այդպիսին է նրա համար, իսկ առողջին՝ հակառակը: Նրանցից ոչ մեկին պետք չէ ավելի իմաստուն համարել, — դա անհնար է, — և ոչ էլ մեղադրել, թե հիվանդը տգետ է, որ այդպես է կարծում, իսկ առողջը իմաստուն է, եթե կարծում է հակառակը: Հարկավոր է փոխակերպել վատագույնը, չէ՞ որ մյուսը ավելի լավն է: Այդպես է նաև դաստիարակության հարցում՝ վատագույնը հարկավոր է փոխակերպել լավագույնի: Սակայն բժիշկն անում է դա դեղերի միջոցով, իսկ սոփեստը՝ խոսքի: Եվ այնուամենայնիվ, ոչ ոքի չի հաջողվել հետագայում ճիշտ դարձնել որևէ մեկի սխալ կարծիքը, քանի որ

d

e

167

անկարելի է կարծիք ունենալ գոյություն չունեցողի կամ զգացածից տարբեր մի բանի մասին: Սա մշտապես ճշմարիտ է:

- b** Սակայն ես կարծում եմ, որ նա, ում կարծիքը պայմանավորված է հոգու վատ տրամադրությամբ, հակառակ տրամադրության օգնությամբ փոխում է լավի, և ոմանք ճշմարտություն են կոչում այդ պատրանքը, իսկ ես կասեմ, որ մեկը մյուսից առավել լավն է, բայց ոչ ճշմարիտ: Ոչ, սիրելի Սոկրատես, ես հեռու եմ իմաստուններին գորտեր անվանելու մտքից: Ես կոչում եմ նրանց բժիշկներ, եթե հարցը վերաբերում է մարմիններին, և հողագործեր, եթե հարցը վերաբերում է բույսերին: Քանզի կարծում եմ, սրանք էլ, երբ բույսերից մեկը հիվանդանում է, բույսի վատ զգայությունները փոխում են լավ, առողջ և ճշմարիտ զգայությունների, իսկ իմաստուն և առաքինի հռետորները անում են այնպես, որ քաղաքացիներին արդար թվա ոչ թե չարիքը, այլ արժանին:

Չէ՞ որ յուրաքանչյուր քաղաքին արդար և գեղեցիկ թվացողն է, որ գոյություն ունի նրա համար, քանի դեռ նա այդպես է համարում: Սակայն իմաստունն անում է այնպես, որ քաղաքներում ամեն վատ բանի փոխարեն արժանին թվա և լինի արդար: Միննույն հիմունքով սոփեստը, որը կարող է

- d** դաստիարակել իր աշակերտներին, իմաստուն է և բարձր վարձատրության արժանի: Այնպես որ ոմանք ավելի իմաստուն են մյուսներից, և միննույն ժամանակ ոչ ոքի կարծիքը սխալ չէ, և դու, ուզես-չուզես, պիտի ընդունես, որ դու ես չափը: Չէ՞ որ հիշյալի նկատառումով իմ ուսմունքը մնում է անսասան: Եթե ուզում ես վիճարկել այն սկզբից, վիճարկիր հակառակ ուսմունքով, իսկ եթե նախընտրում ես հարցեր տալ, տուր: Քանզի բանական մարդուն հարկ է ոչ թե խուսափել դրանից, այլ ամեն կերպ հետամուտ լինել դրան: Միայն
- e** թե այնպես արա, որ հարցերդ չլինեն վիրավորական, քանզի շատ անհեթեթ կլիներ ասել, թե ձգտում ես առաքինության, իսկ սեփական խոսքում լինել անարդար: Իսկ անարդարությունը լինում է այն ժամանակ, երբ տարբերություն չի

դրվում վեճի և խորհրդածության միջև, քանզի մի դեպքում կարելի է կատակել և որքան հնարավոր է խճճել, իսկ մյուս դեպքում պետք է խոսել լուրջ և ուղղել զրուցակցին՝ ցույց տալով նրան միայն այն սխալները, որոնք նա թույլ է տվել իր կամ ուսուցիչների մեղքով:

Եթե այդպես վարվես, իրենց տարակուսանքների և բարոթյունների համար քո զրուցակիցները կմեղադրեն ոչ թե քեզ, այլ իրենք իրենց և կփնտրեն քո ընկերակցությունը՝ ատելով իրենց և փախչելով իրենցից դեպի փիլիսոփայություն, որպեսզի դառնան ուրիշ մարդ և վերջ տան նրան, ինչ էին նախկինում: Իսկ եթե վարվես հակառակ կերպով, այնպես, ինչպես վարվում է բազմությունը, կստանաս հակառակը՝ և՛ դու, և՛ զրուցակիցներդ. երբ նրանք հասակ առնեն, փիլիսոփաներ լինելու փոխարեն կդառնան այդ զբաղմունքն ատողներ: Եթե ընդունես այն, ինչ ասացի քիչ առաջ, ապա առանց դժգոհության, բռնկվելու և հնարավորինս բարեհաճ քննիր այն, ինչ իսկապես նկատի ունեինք՝ ասելով, որ ամեն բան շարժվում է և որ յուրաքանչյուրին՝ թե՛ առանձին մարդուն, թե՛ քաղաքին թվացածը հենց այդպիսին է: Սրանից ելնելով էլ որոշիր, նու՞յն են արդյոք իմացությունն ու զգայությունը, և ոչ ինչպես այժմ՝ ելնելով ընդունված արտահայտություններից ու բառերից, որոնք շատերը վերցնելով ինչպես պատահի, ամեն տեսակ բարոթյուններ են ստեղծում միմյանց համար»:

168

b

c

Ահա այսպես են, ո՛վ Թեոդորոս, իմ համեստ ուժերով օգնության գալիս բարեկամիդ: Եթե նա ողջ լիներ, ավելի լավ կպաշտպաներ ինքն իրեն:

Թեոդորոս. Կատակում ես, Սոկրատես: Իրականում դա բավականին մեծ օգնություն էր այդ մարդուն:

Սոկրատես. Շատ լավ, բարեկամս: Ասա ինձ, չնկատեցի՞ր հենց նոր Պրոտագորասի ճառի ընթացքում, երբ նախատում էր մեզ այն բանի համար, որ երեխաների հետ զրուցելով՝ նրա դեմ վեճի մեջ օգտագործում ենք մանկական վախը, նա սրամտություն համարելով մեր արածը, դարձյալ

d

կարևորեց «բոլոր իրերի չափը» և կարգադրեց մեզ լրջորեն մոտենալ իր ուսմունքին:

Թեոդորոս. Ինչպե՞ս չնկատեցի, ո՛վ Սոկրատես:

Սոկրատես. Ուրեմն ինչ, կիրամայես լսե՞լ նրան:

Թեոդորոս. Անպայման:

Սոկրատես. Տեսնում ես, բացի քեզնից բոլորն այստեղ երեխաներ են: Այնպես որ այդ մարդուն լսելու դեպքում ես և դու պիտի հարց ու պատասխան փոխանակենք, որպեսզի չմեղադրի մեզ, թե մանկական խաղի ենք վերածել նրա ուսմունքի քննությունը:

Թեոդորոս. Բայց մի՞թե Թեետետոսը երկարամորուս այրերից շատ ավելի լավ չի հետևի այդ քննությանը:

Սոկրատես. Ամեն դեպքում, Թեոդորոս, քեզնից ոչ լավ: Եվ մի կարծիր, թե ես բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանելու եմ ընկերոջդ, իսկ դու ոչինչ չես անելու: Ոչ, սիրելիս, մի փոքր էլ դու հետևիր մեր քննարկմանը, մինչև որ պարզենք՝ դու՞ ես արդյոք գծագրերի չափը, թե՞ բոլոր մարդիկ քեզ նման վստահ են իրենց վրա աստղագիտության և ուրիշ գիտությունների մեջ, որոնցում դու իրավամբ աչքի ես ընկնում:

Թեոդորոս. Քո ներկայությամբ, Սոկրատես, դժվար է խուսափել պատասխանից, իսկ ես միամտաբար կարծում էի, թե լակեդեմոնացիների նման չես ստիպի ինձ մերկանալ: Բայց դու նմանվում ես Սկիրոնիս²⁷: Չէ՞ որ լակեդեմոնացիները հրամայում են կա՛մ հեռանալ, կա՛մ մերկանալ, իսկ դու, կարծում եմ, վարվում ես Անտեոսի²⁸ պես. բաց չես թողնում եկվորին, մինչև որ չստիպես նրան մերկանալ և մրցել քեզ հետ խորհրդածության մեջ:

Սոկրատես. Հրաշալիորեն նկարագրեցիր հիվանդությունս, Թեոդորոս: Բայց ես քո հիշատակած այրերից առավել զորեղ եմ, քանզի ինձ պատահել են ճարտարախոս բյուր Հերակլեսներ ու Թեսևսներ, և նրանց հաջողվել է նեղել ինձ, սակայն ես երբեք չեմ նահանջել, այնքան որ ուժեղ էր սերս

այս զբաղմունքի նկատմամբ: Դու նույնպես մի հրաժարվիր մրցել ինձ հետ, դա օգտակար կլինի և՛ քեզ, և՛ ինձ:

Թեոդորոս. Այլևս չեմ հակառակվում, առաջնորդի ռու ռուգում ես: Ամեն դեպքում, հետևելով բախտին, որ կսահմանես ինձ, ես պետք է դիմագրավեմ քո առարկությունները: Սակայն հանձնում եմ ինձ քեզ միայն սահմանածո շրջանակներում:

Սուրատես. Այսքանը ինձ բավական է: Միայն թե հետևիր, որ մեր զրույցը չընդունի մանկական երանգ, և մեզ դարձյալ չնախատեն դրա համար:

Թեոդորոս. Կփորձեմ անել հնարավորը:

Սուրատես. Ուրեմն կրկին սկսեմք քիչ առաջ նշված հարցից և տեսնենք՝ ճի՞շտ էինք արդյոք, երբ կրքոտ դժգոհում էինք այդ ուսմունքից, որը յուրաքանչյուրին դարձնում է ինքնաբավ բանականության կրող, թե՞ ոչ: Չէ՞ որ Պրոտագորասը համաձայնեց մեզ, որ ոմանք առանձնանում են լավագույնը և վատագույնը տարբերելու ունակությամբ և որ հենց դրանք են իմաստունները: Այդպես չէ՞:

Թեոդորոս. Այո:

Սուրատես. Սակայն, եթե նա ինքը այստեղ ներկա լինելով համաձայներ դրան, այլ ոչ մենք՝ նրան օգնելու համար, հարկ չէր լինի վերադառնալ սկզբին հանուն նրա փաստարկի ամրապնդման: Իսկ հիմա որևէ մեկը կարող է մեղադրել մեզ, թե մենք համաձայնություն ենք տվել նրա փոխարեն: Շատ ավելի ճիշտ կլինի հնարավորինս հստակ պայմանավորվել սրա վերաբերյալ. որովհետև շատ բան կախված է նրանից, թե ինչ կորոշենք:

Թեոդորոս. Ճիշտ ես ասում:

Սուրատես. Այդ դեպքում անենք ամենահեշտը և համաձայնություն ստանանք ոչ թե ուրիշներից, այլ նրա ուսմունքից:

Թեոդորոս. Ինչպե՞ս:

Սուրատես. Ահա այսպես. նա ասու՞մ է, որ այն, ինչ թվում է, գոյություն ունի նրա համար, ում թվում է:

Թեոդորոս. Այո, ասում է:

Սոկրատես. Մենք էլ, ո՛վ Պրոտագորաս, խոսում ենք մարդու, ավելի ճիշտ բոլոր մարդկանց կարծիքների մասին և ասում, որ չկա այնպիսի մեկը, ով ինչ-որ հարցերում համարում է իրեն ուրիշներից իմաստուն, իսկ ինչ-որ հարցերում ուրիշներին իրենից իմաստուն: Եվ մեծագույն վտանգի պահերին, երբ մարդիկ զրկանքներ են կրում պատերազմներում, հիվանդություններից կամ ծովում, վերաբերվում են իրենց առաջնորդներին ինչպես աստվածների՝ համարելով նրանց փրկիչներ, որոնք առանձնանում են ոչ այլ բանով, քան իրենց իմացությամբ: Եվ ողջ մարդկային աշխարհը լի է նրանով, որ ոմանք փնտրում են ուսուցիչներ և առաջնորդներ իրենց, այլոց, ինչպես նաև իրենց գործերի համար, ոմանք էլ ունակ են համարում իրենց սովորեցնելու և առաջնորդելու: Եվ ուրիշ ի՞նչ կարող ենք ասել, եթե ոչ այն, որ այս բոլոր դեպքերում մարդիկ համարում են, որ իրենց մեջ գոյություն ունի իմաստություն և տգիտություն:

Թեոդորոս. Ուրիշ ոչինչ:

Սոկրատես. Մի՞թե նրանք չեն համարում իմաստությունը ճշմարիտ մտածողություն, իսկ տգիտությունը՝ կեղծ կարծիք:

c **Թեոդորոս.** Իհարկե:

Սոկրատես. Այդ դեպքում, Պրոտագորաս, ինչպե՞ս վարվենք քո ուսմունքի հետ. ասենք, որ մարդկանց կարծիքները մշտապես ճշմարիտ են, թե՞ ընդունենք, որ երբեմն ճշմարիտ են, իսկ երբեմն՝ կեղծ: Չէ՞ որ երկու դեպքում էլ դուրս է գալիս, որ նրանց կարծիքները միշտ չեն ճշմարիտ, այլ լինում են և՛ կեղծ, և՛ ճշմարիտ: Այժմ մտածիր, Թեոդորոս, չէ՞ր ուզի արդյոք Պրոտագորասի կողմնակիցներից որևէ մեկը, կամ դու ինքդ, հաստատել, որ ոչ ոք չի համարում մյուսին տգետ, իսկ նրա կարծիքը՝ կեղծիք:

Թեոդորոս. Բայց դա անհավանական է, Սոկրատես:

d **Սոկրատես.** Եվ այդուհանդերձ դրան է անհրաժեշտ

տաբար հանգում ուսմունքը, ըստ որի բոլոր իրերի չափը մարդն է:

Թեոդորոս. Այդ ինչպե՞ս:

Սոկրատես. Եթե դու ինքդ քեզ համար դատողություն կազմես ինչ-որ բանի մասին և հայտնես քո կարծիքը դրա վերաբերյալ, ապա այդ կարծիքը համաձայն հիշյալ ուսմունքի ճշմարիտ կլինի քեզ համար, բայց մի՞թե մեզ և ուրիշներին չի կարելի դատել քո դատողության մասին կամ մի՞թե քո դատողությունները միշտ ճշմարիտ են: Արդյոք չե՞ն վիճում քեզ հետ հակառակ կարծիք ունեցող բյուրավոր մարդիկ, որոնք վստահ են, որ դու սխալ ես կարծում ու մտածում:

Թեոդորոս. Ձևը վկա, Սոկրատես, ինձ անհանգստացնողները բյուրից էլ շատ են, ինչպես ասում է Յոնեբոսը²⁹:

Սոկրատես. Ուրեմն ի՞նչ: Մի՞թե կուզեիր, որ մենք ասենք, թե ինքդ քեզ համար ճշմարիտ կարծիք ունես, իսկ բյուր մարդիկ՝ սխալ:

Թեոդորոս. Կարծես թե դա է անհրաժեշտաբար բխում հիշյալ ուսմունքից:

Սոկրատես. Իսկ ի՞նչ է բխում հենց Պրոտագորասի համար: Մի՞թե անխուսափելի չէ այն, որ եթե ո՛չ ինքն է համարում, թե մարդը իրերի չափն է, և ո՛չ էլ բազմությունը, որն այդպես չի էլ կարծում, ապա ճշմարտությունը, որ նա գրել է, ոչ ոքի համար է: Իսկ եթե այդպես է կարծում, սակայն բազմությունը համակարծիք չէ նրան, ապա իմացիր, որ ինչ-քան շատ են նրանք, ովքեր այդպես չեն կարծում կամ կարծում են, այնքան հիշյալ կարծիքը ավելի շուտ կեղծ է, քան ճշմարիտ:

171

Թեոդորոս. Անհրաժեշտաբար, եթե ճշմարիտ կամ կեղծ է՝ ելնելով յուրաքանչյուրի կարծիքից:

Սոկրատես. Եվ հետո, անչափ ուշագրավ է հետևյալը. չե՞ որ նա ճշմարիտ է համարում այն կարծիքը, որը հակառակ է իր սեփականին, եթե համաձայնում է, որ բոլոր մարդկանց կարծիքները ճշմարիտ են:

Թեոդորոս. Իհարկե:

- b** **Սուկրատես.** Չի՞ ընդունի ուրեմն, որ ինքը սխալվում է, եթե համաձայնի, որ իր կարծիքը սխալ համարողները ճիշտ են:

Թեոդորոս. Ակներևաբար:

Սուկրատես. Իսկ մյուսները կընդունե՞ն, որ իրենք սխալվում են:

Թեոդորոս. Իհարկե ոչ:

Սուկրատես. Իսկ նա չի՞ համաձայնի, որ նրանք ճիշտ են՝ ելնելով իր գրածից:

Թեոդորոս. Երևում է, կհամաձայնի:

- c** **Սուկրատես.** Հետևաբար բոլորը, սկսած Պրոտագորասից, կվիճեն, ավելին՝ նա ինքը կընդունի, որ հակառակ կարծիք ունեցողն իրավացի է, և ստիպված կլինի համաձայնել, որ ո՛չ շունը, ո՛չ էլ առաջին իսկ պատահած մարդը որևէ չճանաչված իրի չափը չեն: Այդպես չէ՞:

Թեոդորոս. Այդպես է:

Սուկրատես. Հետևաբար, քանի որ Պրոտագորասի «ճշմարտությունը» վիճարկվում է, ոչ ոքի համար ճշմարիտ չէ՝ ո՛չ ուրիշի, ո՛չ էլ հենց իր:

Թեոդորոս. Սուկրատես, ինձ թվում է, մենք շատ ենք նեղում բարեկամիս:

- d** **Սուկրատես.** Բայց, սիրելիս, գուցե մենք արդեն չափից շատ ենք նեղել հենց ճշմարտությունը: Լինելով մեզնից ավագ՝ Պրատագորասը պիտի որ նաև ավելի իմաստուն լինի: Գուցե նա հանկարծ ելնի գետնի տակից³⁰ և բացահայտի մեզ՝ ասելով, որ ես շաղակրատում եմ, իսկ դու՝ համաձայնում, հետո կրկին մտնի [գետից] և անհետանա: Ըստ իս, մենք պետք է բոլոր դեպքերում հավատարիմ մնանք ինքներս մեզ և միշտ ասենք այն, ինչ կարծում ենք: Այնպես որ հիմա էլ ուրիշ ինչ է մնում, եթե ոչ հաստատել, որ ամեն ոք կհամաձայնի, որ մարդիկ լինում են մեկը մյուսից ավելի իմաստուն և մեկը մյուսից տգետ:

Թեոդորոս. Անձամբ ես այդպես եմ կարծում:

Սուկրատես. Եվ մի՞թե Պրոտագորասի ուսմունքն ավելի հիմնավոր չէ այն ձևով, որով մենք, պաշտպանելով հեղինակին, սահմանեցինք՝ որ մեծ մասամբ իրերն այնպիսին են, ինչպիսին թվում են յուրաքանչյուրին՝ տաք, չոր, քաղցր և այլն: Բայց եթե նա պիտի ընդունի, որ մարդիկ տարբեր են մեկը մյուսից, ապա երբ խոսքը առողջության կամ հիվանդության մասին է, կհաստատի, որ ոչ մի կին, երեխա և գազան չի կարող բուժել իրեն, բավականաչափ իմանալով, թե ինչն է իր համար առողջարար, և որ հենց դրանում է մեկը գերազանցում մյուսին, եթե իհարկե առհասարակ ինչ-որ բանում գերազանցում է:

Թեոդորոս. Ես էլ եմ այդպես կարծում:

Սուկրատես. Պետական հարցերում նույնպես հրաշալին, անոթալին, անարդարն ու արդարը, սրբազանն ու ոչ սրբազանը ճշմարիտ են յուրաքանչյուր քաղաքի համար այնքանով, որքանով թվում են նրան այդպիսին և որքանով քաղաքը օրինականացնում է դրանք, այնպես որ դրանցում ոչ ոք չի լինի մյուսից ավելի իմաստուն՝ ո՛չ մարդը մարդուց, ո՛չ էլ քաղաքը քաղաքից: Իսկ ահա քաղաքի համար օգտակարը և ոչ օգտակարը սահմանելու հարցում Պրոտագորասը կհամաձայնի, որ մի խորհրդականը տարբերվում է մյուսից, ինչպես մի քաղաքի կարծիքը ճշմարտության վերաբերյալ տարբերվում է մյուս քաղաքի կարծիքից, և նա հազիվ թե համարձակվեր ասել, թե այն, ինչ քաղաքը օգտակար է համարում իրեն, միանգամայն համոզիչ է այդ քաղաքի համար, իսկ իմ հիշատակած արդարի և անարդարի, սրբազանի և ոչ սրբազանի մասին նրանք ցանկանում են պնդել, որ դրանցից ոչ մեկը ի բնե չունի էություն, այլ իրականում դառնում է այդպիսին միայն ընդհանուր կարծիքի միջոցով և գոյատևում է այնքան ժամանակ, քանի դեռ ուժի մեջ է այդ կարծիքը: Եվ բոլոր նրանք, ովքեր տարբեր կերպ կրկնել են Պրոտագորասի ուսմունքը, հանգել են հենց այս իմաստությանը: Սակայն տես-

նում ես, Թեոդորոս, թե մի բառը մյուսի ետևից ելնելով և
 c փոքրից դառնալով մեծ՝ ինչպես է կլանում մեզ:

Թեոդորոս. Բայց չէ՞ որ մենք ազատ ժամանակի պա-
 կաս չունենք:

Սոկրատես. Իհարկե: Նախկինում, սիրելիս, ինչպես նաև
 այժմ, ինձ հաճախ բնական է թվացել, որ երկար ժամանակ
 փիլիսոփայությամբ զբաղվող մարդիկ, դատարանում որպես
 հռետորներ հանդես գալով, ծիծաղ են շարժում:

Թեոդորոս. Ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Դատարաններում և նման ուրիշ վայրերում
 պտտվող երիտասարդներին փիլիսոփայությամբ և հետազո-
 տությամբ զբաղվող երիտասարդների հետ համեմատելու դեպ-
 d քում գուցե պարզվի, որ առաջինները հարաբերվում են երկ-
 րորդներին ինչպես ստրուկները ազատներին:

Թեոդորոս. Ինչու՞:

Սոկրատես. Որովհետև երկրորդները, ինչպես դու ես
 ասում, մշտապես ազատ ժամանակ ունեն և խորհրդածում են
 անդորրի ու ազատության մեջ: Ե՛հ շտ ինչպես մենք ենք այժմ
 անցնում երրորդ խորհրդածությանը, այնպես էլ նրանք հեր-
 թական որևէ խորհրդածության շուրջ նախորդից առավել հաս-
 տատուն համաձայնության չգալու դեպքում կարող են հոգ
 չտանել դրա երկարության կամ կարճության մասին, քանի որ
 նրանց մտահոգում է լուկ հարցի իսկությունը: Մինչդեռ առա-
 ջինները երբեք ազատ ժամանակ չունեն, — նրանց շտապեց-
 e նում է ջրային ժամացույցը³¹, — և չեն կարող զրուցել կամե-
 ցածի մասին, այլ միշտ ստիպված են բավարարել հակառա-
 կորդին և արձանագրված հայցը, որից դուրս ոչնչի մասին
 խոսելու իրավունք չունեն: Նրանց ճառերը մշտապես իրենց
 նման մի ստրուկի են վերաբերում՝ ուղղված տիրոջը, որը
 նստած է օրենքը ձեռքին, իսկ դատավեճը միշտ առնչվում է
 բացառապես քննվող գործին, որի ընթացքից հաճախ կախ-
 173 ված է պաշտպանյալի կյանքը: Այդ ամենից նրանք դառնում
 են բարկացկոտ ու խորամանկ, գիտեն խոսքով շողոքորթել և

գործով սիրաշահել տիրոջը, փոքրոգի են և ոչ շիտակ: Վեհությունը, ուղղամտությունը և ազատամտությունը մանկուց խլել է նրանցից ստրկությունը, որը ստիպել է դիմել խարդախության և անցնել սպառնալիքների ու վախի միջով, որոնք փոխում են դեռևս նուրբ հոգիները: Իսկ նրանք, ովքեր արդարամիտ և ճշմարտասեր լինելով չկարողացան դիմանալ դրան, տրվեցին ստին ու փոխադարձ վիրավորանքներին և վերջնականապես այլասերվեցին ու կոտորվեցին: Այնպես որ հիմա երեխաներից մեծահասակ դառնալով՝ նրանք, որ իսպառ **b**
գուրկ են բանականությունից, իրենց համարում են հասուն և իմաստուն: Սրանք ուրեմն այսպիսին են, Թեոդորոս: Ինչ վերաբերում է մեր երգչախմբի մարդկանց, ապա ցանկության դեպքում կարող ենք խոսել նաև նրանց մասին: Սակայն կարող ենք թողնել նրանց և վերադառնալ մեր խորհրդածությանը, որպեսզի չչարաշահենք խոսքի հենց նոր հիշատակված ազատությունը:

Թեոդորոս. Ոչ մի դեպքում, Սուկրատես, շարունակենք: Քանզի դու շատ լավ ասացիր, որ մենք՝ այդպիսի երգչախմբի **c**
մարդիկ, ոչ թե ինքներս ենք ենթարկվում խորհրդածություններին, այլ խորհրդածությունները՝ մեզ, ինչպես ծառաները, և դրանցից յուրաքանչյուրը սպասում է, մինչև որ մենք կորոշենք ավարտել այն: Չէ՞ որ չունենք դատավորներ և, ի տարբերություն բանաստեղծների, չունենք հանդիսատեսներ, որոնք հետևում և խրատում են մեզ:

Սուկրատես. Այդ դեպքում, եթե դեմ չես, խոսենք կորիֆեյների մասին, քանզի ուրիշ ինչ կարելի է ասել նրանց մասին, ովքեր փիլիսոփայությամբ զբաղվում են ծուլորեն: Երիտասարդ տարիքից չեն ճանաչում ո՛չ ազորա և ո՛չ դատարան, ո՛չ Խորհուրդ և ո՛չ էլ ուրիշ որևէ հասարակական վայր **d**
տանող ճանապարհը: Օրենք ու կարգ, լինի գրված թե բանավոր, նրանք ո՛չ տեսել են, ո՛չ լսել: Չեն շտապում ընկերությունների մեջ ներգրավվել պաշտոն ստանալու համար, իսկ հավաքույթներ, խնջույքներ ու ֆլեյտահարուհիների ուղեկցու-

թյամբ զբոսանքներ ի վիճակի չեն տեսնել անգամ երագուն: Առաքինի է արդյոք իր ծնունդով քաղաքացիներից որևէ մեկը, թե հոռի, ինչ նեղություն է կրում որևէ մեկը ծնողներից, ամուսնուց կամ կնոջից՝ այդպիսի մարդուն նույնքան անհայտ է, որքան ըստ ասացվածքի անհայտ է, թե քանի կաթիլ կա ծովում: Նա մինչև իսկ չի գիտակցում, որ անտեղյակ է դրան: Քանզի նա խուսափում է դրանից ոչ համուն փառքի, և իրականում նրա մարմինն է միայն գտնվում ու բնակվում քաղաքում, իսկ բանականությունն այդ ամենը համարելով փոքր ու չնչին, ճախրում է ամեն բանից վեր և, ինչպես ասում է Պինդարոսը, «իջնում է երկրի տակ»՝ չափելով երկիրը, և «բարձրանալով երկնքից վեր»³² ճանաչում է աստղերը, հետազոտում է յուրաքանչյուր իրի բնությունն ընդհանուր առմամբ և չի իջնում մոտավորի մակարդակի:

Թեոդորոս. Ու՞մ նկատի ունես, Սոկրատես:

Սոկրատես. Նկատի ունեմ Թալեսին³³, Թեոդորոս: Ասում են, երբ նա զբաղվելով աստղագիտությամբ և դիտելով երկինքը, ընկավ ջրհորը, ոմն թրակուհի՝ գեղեցիկ և հաճելի մի սպասուհի, ծիծաղեց նրա վրա, ասելով, թե ուզում է ճանաչել ինչ կա երկնքում, սակայն չի տեսնում իր առջևն ու ոտքերի տակ եղածը: Այս ծաղրը վերաբերում է բուլոբին, ովքեր իրենց կյանքն անցկացնում են փիլիսոփայության մեջ: Իրոք, այդպիսի մարդուց վրիպում է ոչ միայն մերձավորագույն հարևանի արածը, այլ նույնիսկ այն՝ մարդ է արդյոք սա, թե մեկ այլ արարած: Մինչդեռ նրա փնտրածն ու հետազոտելիքը հենց մարդու ինչ լինելն է, այն, ինչ մարդուն ի բնե հատուկ է գործել կամ կրել ի տարբերություն այլ արարածների: Հասկանու՞մ ես, Թեոդորոս, թե՞ ոչ:

Թեոդորոս. Այո, և դու ճիշտ ես ասում:

Սոկրատես. Այդպիսի մարդը, բարեկամս, հանդիպելով որևէ մեկին մասնավոր կերպով կամ հանրության մեջ, — օրինակ, ինչպես ասացինք սկզբում, երբ ստիպված է դատարանում կամ մեկ այլ տեղ խոսել ոտքերի տակ կամ աչքի առաջ

եղածի մասին, — շարժում է ոչ միայն թրակուհիների, այլև ամբոխի ծիծաղը, անփորձության պատճառով ընկնելով ջրհորների և ամեն կարգի դժվարությունների մեջ, և այդ սոսկալի խամոթյան հետևանքով հիմարի փառք վաստակում: Երբ բանը հասնում է հայիոյանքին, ոչ ոքի չի կարողանում անձնական վիրավորանք հասցնել, իր անհոգության պատճառով ոչ մեկի մեջ չարիք չի տեսնում: Իր շվարության մեջ նա ծիծաղելի է թվում: Իսկ երբ գովում կամ մեծարում են ուրիշներին, ոչ թե շինծու, այլ իսկական ուրախություն է ապրում՝ թվալով պարզմիտ ու հիմար: Բռնապետների և թագավորների փառաբանումները լսում է, ինչպես եթե դրանք ուղղված լինեին հովիվներին՝ նրանց, որ արածացնում են խոզերին, ոչխարներին ու կովերին և առատ կաթ ստանում իրենց կենդանիներից: Միայն թե նա համարում է, որ մարդկանց արածացնել ու կթել ավելի դժվար է, ընդ որում հովիվը, որի փարախը սարի վրա է, պարսպի ետևում, ազատ ժամանակի սակավությունից մյուս հովիվներից պակաս վայրի և անկիրթ չէ: Այսպես, երբ փիլիսոփան լսում է, որ ինչ-որ մեկը գնել է բյուր պլեթրոն հող կամ ավելի զարմանալի մի ունեցվածք է ձեռք բերել, դա նրա համար աննշան մի բան է, քանզի նա սովոր է հայել ողջ երկիրը: Եթե գովաբանում են որևէ տոհմ և ասում, որ սա ունեցել է հարուստ նախնիների յոթ սերունդ, դա համարում է կարճատես մարդկանց անհիմն գովեստ, որոնք տգիտությունից չեն կարող համաժամանակյա հայացք 175 նետել ամբողջին և հասկանալ, որ յուրաքանչյուր մարդ ունեցել է անթիվ պապեր ու նախնիներ, որոնց թվում եղել են և՛ հարուստներ ու աղքատներ, և՛ թագավորներ ու ստրուկներ, և՛ բարբարոսներ ու հելեններ: Այդուհանդերձ նրան անհեթեթ է թվում, երբ որևէ մեկը հպարտանում է քսանհինգ սերունդ նախնիների ցանկով և իր տոհմը հասցնում մինչև Ամփիտրիոնի որդի Չերակլեսը, որովհետև Ամփիտրիոնի քսանհինգերորդ նախնին եղել է այնպիսին, ինչպիսին եղել է նրան վիճակված բախտը, և նույնը վերաբերում է նաև հիսուներորդ նախնուն,

այնպես որ մեր փիլիսոփային զավեշտական է թվում կշռադատելու և հոգու այս ունայնությունից ազատվելու նրանց անկարողությունը: Բոլոր այս դեպքերում նման մարդը դառնում է բազմության ծիծաղի առարկա, քանզի բազմությանը թվում է, թե նա անչափ հավակնոտ է, թեպետ չի նկատում ուղքի տակինը և ամեն քայլափոխի դժվարությունների է բախվում:

Թեոդորոս. Հենց այդպես էլ լինում է, Սոկրատես:

- Սոկրատես.** Իսկ եթե, բարեկամս, նա վեր հաներ որևէ մեկին և եթե ինչ-որ մեկը ցանկանար «ի՞նչ անարդարություն եմ ես գործել քեզ կամ դու՝ ինձ» հարցից անցնել այն հարցի հետազոտությանը, թե ինչ է ինքը արդարությունը և ինքը անարդարությունը և ինչով են դրանք տարբերվում միմյանցից ու մնացյալ բոլոր բաներից, իսկ «երջանի՞կ է արդյոք թագավորը, չէ՞ որ նա մեծ ունեցվածքի տեր է» հարցից անցնել թագավորական և մարդկային երջանկության ու դժբախտության ուսումնասիրությանը և նրան, թե ինչպես պետք է մարդկային բնությունը մի բան ձեռք բերի, իսկ մեկ այլ բանից խուսափի, ապա բոլոր այս հարցերում իրեն հաշիվ տալու ստիպված
- d** այդ փոքրոգի, խորամանկ ու դատամուլ մարդը կներկայանար բոլորովին հակառակ կողմից: Գլխապտույտ բարձրության վրա առկախված վար նայելով, տառապելով ու ցնդաբանելով, նա ծիծաղի առարկա է դառնում ոչ թե թրակուհիների կամ մնացյալ տգետների աչքերում, քանզի նրանք դա չեն նկատում, այլ նրանց, ովքեր ստացել են ազատ մարդու, ոչ ստրուկի դաստիարակություն: Այդպիսին է նրանցից յուրաքանչյուրը, **Թեոդորոս:** Առաջինը դաստիարակվել է ազատության և պարապության մեջ,– դու կոչում ես նրան փիլիսոփա, որ չի վախենում հիմար երևալ,– և նրա համար մեծ ցավ չէ հայտնվելով ծառայության մեջ հայտնաբերել, որ չգիտի ինչպես հավաքել իրերը, ճաշ պատրաստել և հաճոյախոսել, իսկ երկրորդն այդ բոլորը կարող է անել շատ արագ և ճարպկորեն, սակայն չգիտի, թե ինչպես պետք է ազատ մարդն ուսերին
- e** 176 գցի թիկնոցը³⁴ և որսալով խոսքի ներդաշնակությունը՝ ճշմա-

րիտ կերպով գովերգի մարդկանց և աստվածների երջանիկ կյանքը:

Թեոդորոս. Եթե այն, ինչ ասում ես, համոզեր բոլորին այնպես, ինչպես ինձ, ո՛վ Սոկրատես, խաղաղությունը մարդկանց մեջ կլիներ ավելի շատ, իսկ չարիքը՝ պակաս:

Սոկրատես. Չարիքը հնարավոր չէ վերացնել, Թեոդորոս, քանզի միշտ պիտի գոյություն ունենա բարիքի հակադիրը: Աստվածների մեջ չարիքը տեղ չի գտել, սակայն անհրաժեշտաբար այցելում է մարդկային բնությունը և այս աշխարհը: Ահա ինչու պետք է փորձել հնարավորինս արագ

b

այստեղից փախչել այնտեղ: Փախուստը ուժերի ներածին չափով աստծուն նմանվելն է, իսկ նմանվել աստծուն նշանակում է դառնալ խոհեմորեն արդար և բարեպաշտ: Սակայն, բարեկամս, այնքան էլ հեշտ չէ համոզել բազմությանը, որ իրեն թվացող պատճառներով չէ, որ անհաժեշտ է խուսափել ստորությունից և ձգտել արդարությանը, երկրորդի մասին հոգ տանել, իսկ առաջինի մասին՝ ոչ, թվալ ոչ թե վատ, այլ լավ մարդ: Քանզի, ինչպես ասում են, սրանք տատի հեքիաթներ են: Ճշմարտությունը հետևյալն է. աստված ոչ մի կերպ և ոչ

c

մի դեպքում անարդար չի լինում, նա արդարագույնն է, և չկանրան առավել նման մի բան, քան մեզնից նա, ով մոտեցել է արդարագույնին: Այստեղ են իսկապես բացվում մարդու ուժերը, նաև նրա ոչնչությունն ու երկչոտությունը: Քանզի դրա իմացությունը իմաստություն և ճշմարիտ առաքինություն է, իսկ չիմացությունը՝ տգիտություն և բացահայտ չարիք: Մնացած թվացյալ ուժերն ու իմաստությունները պետական կառավարման մեջ վերածվում են կոպտության, իսկ արվեստներում՝ գռեհկության: Իրենց գործերում անարդարներին և խոսքի մեջ ամբարիշտներին լավ կլինի թույլ չտալ, որ խորամանկությամբ

d

վտանգավոր դառնան, քանզի նրանք պարծենում են դրանով և անընդունակ են հասկանալու, որ անարժան, երկրին բռն դարձած մարդիկ են, և բնավ ոչ առաքինի այրեր, որ պիտի ապահով ապրեն իրենց պետության մեջ: Ճիշտն ասած,

որքան քիչ են համարում իրենց այնպիսին, ինչպիսին որ կան, այնքան ավելի են դառնում այնպիսին, ինչպիսին որ չեն համարում: Չէ՞ որ նրանք չգիտեն անարդարության պատժի մասին, մինչդեռ հենց դա էր պետք ամենից լավ գիտենալ: Այդ պատիժը ո՛չ ծեծն է, ո՛չ էլ մահը, որից տառապում են նաև նրանք, ովքեր անարդարություն չեն

e գործել, այլ այն, որից անհնար է խուսափել:

Թեոդորոս. Ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Իրականում, բարեկամս, գոյություն ունի երկու օրինակ՝ աստվածային բարեպաշտություն և պատժված անաստվածություն: Չտեսնելով դա հիմարության կամ ծայրահեղ տկարամտության պատճառով՝ նրանք չեն նկատում, թե 177 ինչի են նմանվում իրենց անարդար գործողություններով և ինչից են հեռանում: Դրա համար էլ նրանք արդար պատիժ են կրում՝ հետազայում նայրելով այնպիսի կյանք, որին նման է եղել նրանց [ապրած] կյանքը: Իսկ եթե նրանց ասենք, որ իրենց «իմաստությունը» չթողնելու դեպքում մահից հետո էլ նրանց չի ընդունի չարիքից ազատ երկիրը, և նրանք այստեղ պիտի վարեն իրենց վայել կյանք՝ հոռիները հոռիների մեջ, բոլոր այդ իմաստուկներն ու խորամանկները կլսեն մեզ ասես խենթերի:

Թեոդորոս. Շատ ճիշտ է, Սոկրատես:

b **Սոկրատես.** Գիտեմ, բարեկամս: Ընդ որում, նրանց հետ տեղի է ունենում միևնույն բանը: Երբ մասնավոր գրույցի մեջ հարկ է լինում պնդել սեփական փաստարկն ընդդեմ հակառակ կարծիքի և եթե նրանք կամենում են արիաբար դիմակայել որոշ ժամանակ և վախկոտների պես չփախչել, այդժամ, սիրելիս, նրանք ի վերջո դժգոհ են մնում իրենցից, իրենց ասածներից, և նրանց հռետորությունը չքանում է, այնպես որ չեն տարբերվում երեխաներից: Այժմ թողնենք սա, քանզի

c շատ շեղվեցինք, հակառակ դեպքում այս գրույցը տեղատվության պես կծածկի մեր առաջին դատողությունը: Վերադառնանք նախորդ ասածներին, ի՞նչ կարծիքի ես:

Թեոդորոս. Նման շեղումները, Սոկրատես, ես լսում եմ ոչ պակաս հաճությամբ: Չէ՞ որ իմ տարիքում դա ավելի հեշտ է: Ամեն դեպքում վերադառնանք, եթե ուզում ես:

Սոկրատես. Դառնանք մեր այն պնդմանը, ըստ որի նրանք, ովքեր համարում են, թե գոյությունը շարժման մեջ է, և ասում, որ յուրաքանչյուրի կարծիքը միշտ այդպիսին է կարծողի համար, մնացյալի և ոչ պակաս նաև արդարության առնչությամբ հատկապես կպնդեին, որ քաղաքի սահմանածից այն, ինչը նրան արդար է թվում, արդար է նրա համար, քանի դեռ պահպանվում է: Իսկ ինչ վերաբերում է բարուն, ոչ ոք քաջություն չի ունենա հանդուգն կերպով վիճարկել, թե քաղաքին օգտակար թվացածը և նրա կողմից սահմանվածը օգտակար կլինի ամբողջ ժամանակ, քանի դեռ ուժի մեջ է, իհարկե բացի նրանից, ում համար վեճի առարկա է լույս «օգտակարություն» բառը: Սա մի ծաղր կլիներ մեր դատողության համար: Այդպես չէ՞:

Թեոդորոս. Իհարկե:

Սոկրատես. Այդ դեպքում ոչ թե խոսենք անվան մասին, այլ դիտարկենք այդ անունը կրող իրը:

Թեոդորոս. Այո:

Սոկրատես. Ինչ-որ բան սահմանելով՝ քաղաքը նկատի ունի օգտակարը, անկախ դրա անունից, և բոլոր օրենքները սահմանում է իր համար հնարավորինս օգտակար ձևով՝ ելնելով իր պատկերացումներից: Թե՞ օրենքներ սահմանելով ուրիշ ինչ-որ բան նկատի ունի:

Թեոդորոս. Ոչ մի դեպքում:

Սոկրատես. Եվ այդպես է մի՞շտ, թե՞ շատ հարցերում քաղաքը նաև սխալվում է:

Թեոդորոս. Կարծում եմ, նաև սխալվում է:

Սոկրատես. Առավել ևս դրան կարելի է համաձայնել, եթե որևէ մեկը հարցներ ամբողջ տեսակի մասին, որին պատկանում է օգտակարը, այսինքն՝ նկատի ունենալով նաև այն, ինչը վերաբերում է ապագա ժամանակին: Չէ՞ որ մենք օրենք-

ներ ենք սահմանում, որպեսզի դրանք օգտակար լինեն նաև հետագայում, որը մենք կոչում ենք ապագա:

b **Թեոդորոս.** Իհարկե:

Սոկրատես. Արդ, հարցնենք Պրոտագորասին կամ այդպես ասողներից ուրիշ որևէ մեկին. «Պրոտագորաս, դու ասում ես, որ մարդը ամեն բանի չափն է՝ սպիտակի, ծանրի, թեթևի և այդ կարգի բոլոր բաների առանց բացառության, քանզի ունենալով իր մեջ չափանիշը և համարելով դրանք այնպիսին, ինչպիսին որ ընկալում է, համարում է նաև, որ դրանք հիրավի այդպիսին են»: Այդպես չէ՞:

Թեոդորոս. Այդպես է:

Սոկրատես. «Չետևաբար, Պրոտագորաս, նա ունի չափանիշ նաև ապագայի համար և ինչպիսի կարծիք որ ունենա գալիքի վերաբերյալ, այնպիսին էլ այն կլինի: Դիցուք, ջերմությունը. եթե անտեղյակ մեկը կարծում է, որ տենդի մեջ է և ջերմություն կունենա, իսկ մեկ ուրիշը՝ բժիշկը, կարծում է հակառակը, որի՞ կարծիքի համաձայն կդասավորվի ապագան: Երկուսի՞: Թե՞ բժիշկի համար ո՛չ տենդ, ո՛չ ջերմություն չի լինի, իսկ նրա համար թե՛ մեկը, թե՛ մյուսը:

Թեոդորոս. Դա ծիծաղելի կլիներ:

Սոկրատես. Սակայն քաղցրության և տոտիպության հարցում, որոնք պիտի լինեն գինու մեջ, կիշխի հողագործի, և ոչ կիթառահարի կարծիքը:

Թեոդորոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Եվ ապագա աններդաշնակության և ներդաշնակության մասին մարմնամարզության ուսուցիչը չի կարող ավելի լավ դատել երաժշտից, անգամ եթե նրան ինչ-որ բան շատ ներդաշնակ թվա:

Թեոդորոս. Ոչ մի դեպքում:

Սոկրատես. Եվ խնջույքի հրավիրված որևէ մարդ, չլինելով խոհարարության գիտակ, ավելի ճիշտ կածիք չի կազմի գալիք հաճույքի մասին, քան խոհարարը: Քանզի մենք վիճում ենք ոչ այն մասին, թե ինչն արդեն հաճելի է կամ դեռ պիտի

հաճելի լինի ինչ-որ մեկին, այլ՝ թե ինչը պիտի հաճելի թվա յուրաքանչյուրին և լինի: Ո՞վ այդ հարցում կդատի ավելի ճիշտ՝ ամեն ոք իր փոխարե՞ն, թե՞ դու ինքդ, Պրատագորաս, սովորական մարդկանցից ավելի լավ կկարողանաս մեզնից յուրաքանչյուրին համոզել խոսքով, թե ինչն է մեզ համար լավագույնը դատարանում:

Թեոդորոս. Իհարկե, Սոկրատես, հենց դրանում էլ նա հույս ունի մեծապես տարբերվել բոլորից:

Սոկրատես. Ձևսը վկա, բարեկամս, հակառակ դեպքում, եթե նա չհամոզեր իրեն ճանաչողներին, որ ոչ մի գուշակ և ոչ էլ ուրիշ մեկը չի կարող իրենից լավ դատողություն անել այն մասին, թե ինչպիսին կլինի և կթվա գալիքը, նրա գրույցների դիմաց ոչ ոք դրան չէր վճարի:

179

Թեոդորոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Սակայն թե՛ օրենսդրությունը, թե՛ օգուտը ուղղված են ապագային, և բոլորը կհամաձայնեն, որ օրենքներ սահմանող քաղաքը հաճախ վրիպում է ամենաօգտավետի հարցում:

Թեոդորոս. Իհարկե:

Սոկրատես. Ուրեմն տեղին կլինի ասել քո ուսուցչին, որ նա ստիպված է մեկին մյուսից առավել իմաստուն համարել և որ հենց այդ մեկն է [իրերի] չափը, և որ ես՝ տգետս, բոլորովին էլ պարտավոր չեմ չափ դառնալ, ինչպես քիչ առաջ անկախ իմ ցանկությունից ստիպում էր անել նրա անունից բերված փաստարկը:

b

Թեոդորոս. Ինձ թվում է, Սոկրատես, դա փաստարկի ամենաթույլ պահն է, թույլ նաև այն պատճառով, որ իշխող է դարձնում ուրիշների կարծիքները, մինչդեռ, պարզվում է, որ սրանք բոլորովին էլ նրա կարծիքը ճշմարիտ չեն համարում:

Սոկրատես. Այս փաստարկը, Թեոդորոս, թույլ է նաև շատ ուրիշ առումներով: Մինչդեռ ամեն մարդու ընկալումը, լինի այն զգայությունների կամ ըստ դրանց կազմված կարծիքի հիման վրա, ավելի դժվար է բացահայտել որպես ոչ

c

d ճշմարիտ: Գուցե ասածս փուչ բան է, քանզի պատահում է, որ դրանք անհերքելի են, և գուցե իրավացի են նրանք, ովքեր ասում են, թե ընկալումները իմացություններ են, և մեր

Թեոդորոս. Բոլորովին աննշան չէ, այն տարածված էր ամենուր Յոնիայում, և Յերակլիտոսի բարեկամները միաձայն պաշտպանում էին այդ ուսմունքը:

e Սոկրատես. Ահա ինչու, սիրելի Թեոդորոս, հարկավոր է նախ քննել նրանց պնդումները:

180 Թեոդորոս. Բնականաբար: Քանզի, Սոկրատես, հերակլիտյանների կամ, ինչպես դու ես ասում, հոմերականների և հների ուսմունքների հարցում իրենց փորձառությանը պարծեցող եփեսոսցիների հետ խոսելը նույնքան դժվար է, որքան հիմարների: Նրանք մշտապես շարժման մեջ են, ճիշտ այնպես, ինչպես գրված է իրենց գրքերում, իսկ մեկ կետի վրա կանգ առնելը, հարցեր տալը և տրված հարցերին լրջորեն պատասխանելը նրանց բոլորովին էլ հատուկ չէ: Դադարն այդ այրերի համար, ավելի շուտ, ընդհանրապես անընդունելի է: Իսկ եթե որևէ մեկին ինչ-որ բան հարցնես, նա դրույթների մի ամբողջ տարափ կտեղա, դուրս բերելով դրանք իրար ետևից, ինչպես նետերը կապարճից: Եվ եթե կամենաս հասկանալ նրանց խոսքը, քեզ վրա կտեղա միևնույն խոսքի ձևափոխված տարբերակը, և դու նրանց հետ երբեք ոչ մի բանի չես հանգի: Դա այդպես է անգամ այն ժամանակ, երբ խոսում են մի-

b յանց հետ: Նրանք պաշտպանվում են ամեն ինչից, այնպես, որ չլինի, թե իրենց դատողություններում կամ հոգիներում հանկարծ ամուր մի բան գոյանա, քանզի, ինձ թվում է, թե դա համարում են լճացում: Իսկ լճացման դեմ այդ մարդիկ

կատաղի պայքար են մղում և հնարավորինս դուրս քշում բոլոր տեղերից:

Սուկրատես. Գուցե, Թեոդորոս, դու տեսել ես այդ այրերին վիճելիս և չես հանդիպել խաղաղ գրույցի պահին, չէ՞ որ նրանց մեջ բարեկամներ չունես: Սակայն, կարծում եմ, աշակերտներին, որոնց կցանկանային իրենց նման դարձնել, ազատ ժամանակ հենց այդպիսի բաներ են ասում:

Թեոդորոս. Ի՞նչ աշակերտներ, ո՛վ երանելի: Նրանցից ոչ ոք չի դառնում մյուսի աշակերտը, նրանք ինքնաբերաբար են հասնում դրան, ընդ որում միմյանց համարում են տգետ: Այնպես որ նրանցից, ինչպես ասացի, ո՛չ բռնությամբ, ո՛չ էլ կամովի ճիշտ խոսք չես ստանա: Մենք ինքներս պիտի քննենք խնդիրը:

Սուկրատես. Գիշտ ես ասում: Բայց մի՞թե մենք արդեն չգտանք այդ հարցը հների մոտ, որոնք պոեզիայի մեջ թաքցնում էին դա բազմությունից. օրինակ այն, որ ամեն բան ծնվում է Օվկիանոսից և Տեթիս գետից³⁶ և որ ոչ մի բան դադարի մեջ չէ. այնուհետև նորերի և ըստ այդմ ավելի իմաստունների մոտ, որոնք թաքնվածն այնպես են լուսաբանում, որ նույնիսկ կոշկակարները լսելով հասու դառնան նրանց իմաստությանը և վերջ դնեն իրենց սխալ համոզմունքին, թե որոշ իրեր դադարի մեջ են, որոշ իրեր էլ՝ շարժման, հասկանան, որ ամեն բան շարժվում է, և մեծարեն իրենց ուսուցիչներին: Եվ բացի այդ, — քիչ մնաց մոռանայի, — չէ՞ որ կան նաև ուրիշները, Թեոդորոս, որոնք պնդում են հակառակը, իբր

Անշարժությունն է, որ կա, և դրա անունն է՝ ամեն³⁷,

կամ բոլոր այն հակադիր ուսմունքները, որ տարածել են Մելիսսոսներն ու Պարմենիդեսները³⁸, իբր ամեն բան մեկ է, դադարի մեջ է և չունի շարժման համար տարածություն: Ինչպե՞ս վարվենք այս ամենի հետ, բարեկամս: Քանզի քիչ-քիչ

- 181 առաջ շարժվելով՝ մենք հայտնվեցինք երկուսի մեջտեղում, և եթե փրկվելու համար չդիմենք փախուստի, կհատուցենք ինչպես նրանք, որոնց պալեստրայում գծի վրա խաղալիս բռնում և ձգում են հակադիր երկու ուղղություններով: Ահա ինչու ինձ թվում է, թե մենք պետք է նախ քննենք նրանց, որոնցից սկսեցինք՝ «հոսողներին»: Եվ եթե նրանց ասածը մեզ լուրջ
- b թվա, կմիանանք նրանց և կփախչենք մյուսներից: Իսկ եթե մեզ թվա, որ ավելի իրավացի են «անշարժները», կվազենք նրանց մոտ և կպրծնենք անշարժը շարժողներից: Բայց եթե երկուսն էլ խելամիտ ոչինչ չեն ասում, մենք կհայտնվենք զավեշտական վիճակում, իրավացի համարելով մեզ՝ տկարներիս, և հերքելով հնագույն ու ամենաիմաստուն այրերի ուսմունքները: Տե՛ս ուրեմն, Թեոդորոս, արժե՞ արդյոք այդպիսի վտանգի ենթարկվել:

Թեոդորոս. Ամեն դեպքում, Սուկրատես, վայել չէ անուշադրության մատնել և չքննել յուրաքանչյուր կողմի պնդումները:

- Սուկրատես.** Եթե այդքան ուզում ես, ստիպված ենք քննել: Շարժման քննությունը իմ կարծիքով պետք է սկսել
- c հետևյալից. ի՞նչ նկատի ունեն, երբ ասում են, որ ամեն բան շարժվում է: Նկատի ունեն՝ շարժման մի՞ տեսակի մասին են ասում, թե՞, ինչպես ինձ է թվում, երկու: Սակայն դա այդպես պիտի թվա ոչ միայն ինձ, այլ նաև քեզ, եթե կիսես կարծիքս, որպեսզի հարկ եղած դեպքում տառապենք երկուսով: Ասա ինձ, արդյո՞ք շարժում ես կոչում [երևույթը], երբ որևէ բան մի տեղից տեղափոխվում է մեկ այլ տեղ կամ պտտվում միևնույն տեղում:

Թեոդորոս. Այո:

- Սուկրատես.** Թող ուրեմն դա լինի շարժման մի տեսակը: Իսկ երբ որևէ բան մնում է նույն տեղում, սակայն ծերանում է կամ սպիտակից վերածվում է սևի և փափուկից՝ կարծրի, կամ մեկ այլ փոփոխություն կրում, մի՞թե դա շարժման երկրորդ տեսակը չէ:

Թեոդորոս. Կարծում եմ, այո:

Սուկրատես. Անհրաժեշտաբար այդպես է: Ես պնդում եմ, որ շարժման տեսակները երկուսն են՝ փոփոխությունը և տեղափոխությունը:

Թեոդորոս. Ճիշտ ես ասում:

Սուկրատես. Այդ տարբերակումն անելով, դիմենք նրանց, ովքեր ասում են, թե ամեն բան շարժվում է, և հարցնենք. ամեն բան շարժվում է երկու՞ եղանակով, այսինքն՝ և՛ փոփոխվում է, և՛ տեղափոխվում, թե՞ մի բան՝ երկու եղանակով, իսկ մեկ այլ բան՝ միայն մի եղանակով:

Թեոդորոս. Սակայն, Ձևսը վկա, ասելու ոչինչ չունեն: Թերևս պատասխանեին, որ երկու եղանակով:

Սուկրատես. Հակառակ դեպքում, բարեկամս, նրանք կունենային և՛ շարժվող, և՛ դադարի մեջ գտնվող իրեր, և բնավ ավելի ճիշտ չէր լինի ասել, թե ամեն բան ավելի շուտ շարժվում է, քան գտնվում դադարի մեջ:

Թեոդորոս. Շատ ճիշտ ես ասում:

Սուկրատես. Արդ, եթե ամեն ինչ պիտի շարժվի, իսկ անշարժությունը ոչ մի բանի հատուկ չէ, ապա ամեն ինչ պիտի մշտապես շարժվի շարժման բոլոր եղանակներով:

Թեոդորոս. Անհրաժեշտաբար:

Սուկրատես. Քննենք նաև նրանց ուսմունքի հետևյալ դրույթը: Մի՞թե չենք ասել, որ ջերմության, սպիտակության կամ մեկ այլ բանի գոյացումը նրանք բացատրում են այնպես, թե դրանցից յուրաքանչյուրը զգայության հետ միաժամանակ շարժվում է ներգործողի և կրողի միջև, ընդ որում կրողը զգայողն է, և ոչ զգայությունը, իսկ ներգործողը որակ ունեցողն է, բայց ոչ որակը: Գուցե «որակ» բառը քեզ տարօրինակ է թվում, և դու չես հասկանում դրա ընդհանուր նշանակությունը: Այդ դեպքում լսիր հերթականությամբ: Չէ՞ որ ներգործողը ո՛չ ջերմություն է, ո՛չ էլ սպիտակություն, այլ դառնում է ջերմ և սպիտակ, ինչպես որ ուրիշ նման բաները: Դու անշուշտ հիշում ես, որ, ինչպես ասացինք քիչ առաջ, մեկը

ինքն ըստ ինքյան ոչինչ է՝ ո՛չ ներգործող, ո՛չ կրող: Միայն երկուսի համատեղմամբ է ծնվում զգայությունը և զգայելին, և վերջինը դառնում է որակ ունեցող, իսկ առաջինը՝ զգայող:

Թեոդորոս. Իհարկե հիշում եմ:

Սոկրատես. Թողնենք ուրեմն այն, թե ինչպես են նրանք
c դատում այս կամ այն հարցի մասին, և կենտրոնանալով մի կետի վրա՝ հարցնենք. դուք ասում եք, որ ամեն ինչ շարժվում և հոսում է, այդպես չէ՞:

Թեոդորոս. Այո:

Սոկրատես. Հետևաբար շարժվում են շարժման այն երկու եղանակներով, որոնք մենք տարբերակեցի՞նք, այսինքն՝ տեղափոխությամբ և փոփոխությամբ:

Թեոդորոս. Անշուշտ, եթե շարժումը լիակատար է:

Սոկրատես. Արդ, եթե այդ ամենը միայն տեղափոխվեր, սակայն չփոփոխվեր, մենք կկարողանայինք ասել, թե ինչպիսին է այն, ինչը հոսում է: Այդպես չէ՞:

Թեոդորոս. Այդպես է:

Սոկրատես. Բայց քանի որ դա էլ չի մնում [անփոփոխ] d և հոսողը հոսում է որպես սպիտակ, սակայն փոխվում է (այնպես որ տեղի ունի նաև սպիտակության հոսք և վերածում այլ գույնի, որպեսզի ամբողջը չմնա տեղում), ապա ինչպե՞ս կարելի է անվանել որևէ գույն, որպեսզի այդ անունը լինի ճիշտ:

Թեոդորոս. Ի՞նչ հնար կարելի է գտնել, Սոկրատես: Ուրիշ էլ ի՞նչ, եթե ոչ այն, ինչը միշտ փախչում է խոսողից՝ հոսողը:

Սոկրատես. Իսկ ի՞նչ կասենք որևէ զգայության մասին, օրինակ՝ տեսողության կամ լսողության: Պահպանվու՞մ է արդ-
e յոք զգայությունը տեսնելու կամ լսելու ընթացքում:

Թեոդորոս. Եթե ամեն բան շարժվում է, պիտի որ չպահպանվի:

Սոկրատես. Հետևաբար հարկ չկա ավելի շատ խոսել տեսնելու, քան չտեսնելու և նման ձևով նաև մյուս զգայու-

թյունների մասին, եթե ամեն բան շարժվում է բոլոր եղանակներով:

Թեոդորոս. Այո, չկա:

Սուկրատես. Մինչդեռ հենց զգայությունն է իմացություն, ինչպես ասացինք ես և Թեոտետոսը:

Թեոդորոս. Այո, ասացիք:

Սուկրատես. Ուրեմն «ի՞նչ է իմացությունը» հարցին մենք կպատասխանեինք ոչ ավելի, քան այն հարցին, թե ինչ է չիմացությունը:

Թեոդորոս. Երևում է, այդպես է:

183

Սուկրատես. Դա հրաշալի ուղղում կլիներ մեր պատասխանին, եթե մենք ձգտեինք ապացուցել, որ ամեն ինչ շարժվում է: Քանզի այդկերպ պատասխանը ճիշտ կլիներ: Սակայն կարծես թե պարզվեց, որ եթե ամեն բան շարժվում է, ցանկացած պատասխան, ինչ էլ հարցնենք, նմանապես ճիշտ կլինի, քանի որ ցույց կտա, որ բանն այսպես է և այսպես չէ, կամ, եթե ուզում ես, կայանում է, որպեսզի չկանգնեցնենք ամեն բան «է» բառով³⁹:

Թեոդորոս. Ճիշտ ես ասում:

Սուկրատես. Բացառությամբ նրա, Թեոդորոս, որ ես ասացի «այսպես» և «ոչ այսպես» բառերը: «Այսպես» պետք չէ ասել, քանի որ այն դեռևս շարժման մեջ չէ: Նմանապես և «ոչ այսպեսը». չէ՞ որ շարժում չկա նաև «սրա» մեջ: Այս ուսմունքի ջատագովները պիտի մեկ այլ դրույթ ընդունեն, որովհետև այժմ իրենց ենթադրությունների համար բառեր չունեն, բացառությամբ իհարկե «ոչ մի կերպ»-ի: Հենց սա լավագույնս կհամապատասխաներ նրանց խոսքերի անորոշությանը:

b

Թեոդորոս. Դա նրանց խոսքի համար ամենահարմար ձևն է:

Սուկրատես. Ուրեմն, Թեոդորոս, ինչ վերաբերում է բարեկամիդ, պարզեցինք և չենք համաձայնում նրան, թե ամեն մարդ, անգամ ոչ խելամիտ մեկը, բոլոր իրերի չափն է: Չենք համաձայնվի նաև, որ ըստ համընդհանուր շարժման ուսմուն-

c

քի իմացությունը զգայություն է, եթե իհարկե թեետետոսն այդպես ասելով այլ բան նկատի չունի:

Թեոդորոս. Հրաշալի ասացիր, Սոկրատես: Եվ քանի որ հարցը լուծված է, ինձ պետք է ազատ արձակես, և համաձայն պայմանավորվածության ես կարող եմ այլևս չպատասխանել հարցերիդ, չէ՞ որ Պրոտագորասին վերաբերող խոսքն այսքանով ավարտվեց:

Թեետետոս. Դեռ ոչ, Թեոդորոս, քանի որ դու և Սոկրատեսը դեռ չեք քննել նրանց դրույթերը, ուժքեր, ինչպես քիչ առաջ ասացիք, պնդում են, թե ամեն բան դադարի մեջ է:

Թեոդորոս. Լինելով այդքան երիտասարդ, ո՛վ Թեետետոս, դու սովորեցնում ես ավագներին խախտե՞լ պայմանավորվածությունները: Ոչ, ինքդ պատրաստվիր պատասխանել Սոկրատեսի մնացած հարցերին:

Թեետետոս. Եթե կամենա: Սակայն ավելի մեծ հաճույքով կլսեի այն, ինչի մասին ասացի:

Թեոդորոս. Սոկրատեսին զրույցի հրավիրել նույնն է, թե հեծյալին դաշտ դուրս բերելը: Հարցրու և կլսես:

Սոկրատես. Կարծում եմ, Թեոդորոս, որ չեմ ընդունի **e** Թեետետոսի պահանջը:

Թեոդորոս. Ինչու՞ չես ընդունի:

Սոկրատես. Ես վախենում եմ այդքան հանդուգն կերպով քննել Մելիստոսին և այլոց, ուժքեր պնդում են, թե ամեն բան դադարի մեջ է: Իսկ ամենից շատ վախենում եմ նրանցից մեկից՝ Պարմենիդեսից: Ինձ համար նա, ինչպես կասեր Հոմերոսը, «ակնածելի» է և «սարսափելի» միաժամանակ⁴⁰: Ես հանդիպեցի նրան, երբ տակավին երիտասարդ էի⁴¹, իսկ նա՝ շատ ծեր, և իմ առաջ բացվեց այդ այրի բոլոր առումներով ազնվագույն խորությունը: Վախենամ, թե չհասկանանք նրա խոսքերը և մանավանդ, թե ինչ նկատի ունի դրանց տակ: Իսկ ամենակարևորը՝ այն, հանուն ինչի ծավալվեց մեր քննությունը, — իմացության ինչ լինելը, — կթաքնվի հորդացող պնդումների մեջ, եթե իհարկե որևէ մեկը տեղի տա դրանց առաջ:

Մինչդեռ հարցը, որ մենք հիմա բարձրացնում ենք, վիթխարի է իր ընդգրկմամբ և կտուժի, եթե ինչ-որ մեկն այն դիտարկի հպանցիկ, իսկ եթե դիտարկվի բավարար չափով, դա կծգծգվի և կքողարկի իմացության մասին մեր հարցը: Պետք է խուսափել երկուսից էլ՝ փոխարենը տատմոր արվեստի օգնությամբ փորձելով ազատել Թեոտետոսին իմացության մասին հղացած մտքերից:

Թեոդորոս. Եթե ճիշտը դա ես համարում, այդպես կվարվենք:

Սոկրատես. Ասվածի առնչությամբ, Թեոտետոս, դու պետք է պարզես հետևյալը: Դու պատասխանեցիր, որ զգայությունը իմացություն է: Այդպես չէ՞:

Թեոտետոս. Այո:

Սոկրատես. Եթե ինչ-որ մեկը հարցներ քեզ. ինչո՞վ է մարդը տեսնում սպիտակն ու սևը, լսում բարձրն ու ցածրը, կարծում են՝ կպատասխանեիր, որ աչքերով և ականջներով:

Թեոտետոս. Իհարկե:

Սոկրատես. Անունների և նախադասությունների անբռնազբոս գործածությունն առանց բժախնդիր ընտրության շատ դեպքերում չի համարվում անազնիվ, ոչ, ավելի շուտ հակառակն է կարծես անազատ դաստիարակության, սակայն երբեմն անհրաժեշտ է, ինչպես հիմա, մերժել պատասխանը, եթե այն ճիշտ չէ: Մտածիր, ո՞ր պատասխանն է ավելի ճիշտ. աչքն այն է, ինչով մենք տեսնու՞մ ենք, թե՞ այն, ինչի միջոցով տեսնում ենք, կամ ականջն այն է, ինչով լսու՞մ ենք, թե՞ ինչի միջոցով լսում ենք:

Թեոտետոս. Ինձ թվում է, Սոկրատես, որ երկու դեպքում էլ ավելի շուտ զգայում ենք դրանց միջոցով, քան դրանցով:

Սոկրատես. Սոսկալի կլիներ, որդիս, եթե փայտե ձիերի նման մենք ունենայինք բազում զգայություններ և չկազմեինք նրանցից մեկ գաղափար⁴²,— կոչենք այն հոգի կամ մեկ այլ բան,— որով այդ զգայարանների՝ ինչպես գործիքների միջոցով մենք զգայում ենք զգայելին:

Թեոտետոս. Սա ինձ նախորդ պնդումից ավելի ճշմարիտ է թվում:

Սոկրատես. Ահա թե ինչու եմ մանրամասնում այս ամենը. եթե մենք միևնույնի օգնությամբ, օրինակ՝ աչքերի, ընկալում ենք սևն ու սպիտակը, իսկ ուրիշ զգայարանների միջոցով՝ մնացածը, կդասե՞ս արդյոք այս ամենը մարմնին, եթե քեզ հարցնեն այդ մասին: Ավելի լավ կլիներ, եթե ինքդ խոսեիր ու պատասխանեիր և ես չտքնեի քո փոխարեն: Ասա ինձ. մի՞թե չէիր դասի մարմնին այն, ինչի միջոցով զգայում ես տաքը, կարծրը, թեթևն ու քաղցրը: Թե՞ կդասեիր մեկ այլ բանի:

Թեոտետոս. Ոչ մի այլ բանի չէի դասի:

Սոկրատես. Իսկ չե՞ս համաձայնի, որ մի կարողությամբ զգայածը անհնար է զգայել մեկ ուրիշ կարողությամբ, ասենք լսողության միջոցով զգայածը՝ տեսողությամբ, կամ տեսողության միջոցով զգայելին՝ լսողությամբ:

Թեոտետոս. Ինչպե՞ս չհամաձայնեն:

Սոկրատես. Ուրեմն երկուսի մասին միաժամանակ խորհելու դեպքում դու չէի՞ր զգայի երկուսն էլ, մերթ առաջին, մերթ երկրորդ զգայարանի միջոցով:

Թեոտետոս. Ոչ:

Սոկրատես. Ուրեմն ձայնի և գույնի մասին դու առաջին հերթին մտածում ես, որ դրանք երկուսն էլ գոյություն ունեն:

Թեոտետոս. Իհարկե:

Սոկրատես. Եվ որ յուրաքանչյուրը տարբերվում է մյուսից, իսկ ինքն իր հետ նույնակա՞ն է:

Թեոտետոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Եվ որ երկուսով երկուսն են, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ մե՞կը:

Թեոտետոս. Դա նույնպես:

Սոկրատես. Ուրեմն դու կարո՞ղ ես նկատել, նույնն են արդյոք դրանք, թե ոչ:

Թեոտետոս. Հավանաբար:

Սոկրատես. Իսկ ինչի՞ միջոցով ես մտածում այդ ամենը: Չե՞ որ դրանց ընդհանուրը չես կարող որսալ ո՛չ լսողությամբ, ո՛չ էլ տեսողությամբ: Ահա իմ խոսքերի մի ապացույց է. եթե հմարավոր լիներ տեսնել՝ դառն են արդյոք ծայնը և գույնը, ես համոզված եմ, որ դու չէիր վարանի ասել, թե ինչով ես հասու դրան: Ընդ որում, դա ո՛չ տեսողությունն է, ո՛չ էլ լսողությունը, մեկ ուրիշ ինչ-որ բան է:

Թեետետոս. Ուրիշ ինչ, եթե ոչ լեզվի միջոցով գործող ունակություն:

Սոկրատես. Լավ ես ասում: Բայց ինչի՞ միջոցով է այդ ունակությունը բացահայտում քեզ համար ընդհանուրը բոլոր իրերի մեջ, ընդ որում նաև նրանց, որոնք դու կոչում ես «գոյություն» և «չգոյություն», և ինչպես է բացահայտում այն, ինչը քիչ առաջ հարցրեցինք դրանց մասին: Ի՞նչ զգայարանների կառանձնացնես այս ամենի համար, որոնց միջոցով յուրաքանչյուր իր կզգայվեր մեր [ընդհանուր] զգայականությամբ:

Թեետետոս. Դու խոսում ես գոյության և չգոյության, նմանության և ոչ նմանության, նույնականության և այլության, ինչպես նաև այն մասին, թե ինչ թիվ է կիրառելի դրանց նկատմամբ՝ մեկը, թե ուրիշ մի թիվ: Պարզ է, որ դու հարցնում ես զույգի և կենտի, ինչպես նաև այստեղից բխող մյուս բաների մասին, այսինքն՝ թե մարմնի որ մասի օգնությամբ ենք զգայում դրանք հոգով:

Սոկրատես. Գերազանց ես հետևում ինձ, Թեետետոս, ես հենց դա էի հարցնում:

Թեետետոս. Բայց Ձևսը վկա, ո՛վ Սոկրատես, ասելու ոչինչ չունեն, բացի նրանից, որ սրանց համար ի տարբերություն նախորդների չկա հատուկ զգայարան, և ինձ թվում է, թե հոգին ինքն ըստ ինքյան է դիտում բոլոր բաների ընդհանուրը:

Սոկրատես. Դու գեղեցիկ ես, Թեետետոս, և ոչ այլանդակ, ինչպես ասում էր Թեոդորոսը: Քանզի գեղեցիկ խոսողը գեղեցիկ է ու բարի: Դու ոչ միայն գեղեցիկ, այլև բարի գործ

արեցիր՝ ազատելով ինձ երկար ճառից, քանզի քեզ համար արդեն ակնհայտ է, որ իրերի մի մասը հոգին դիտում է ինքն ըստ ինքյան, իսկ մյուս մասը՝ մարմնական ունակությունների միջոցով: Ինքս հենց այդպես կարծելով՝ ես ուզում էի, որ համաձայնես ինձ:

186 Թեետետոս. Բայց դա ակնհայտ է:

Սոկրատես. [Իրերի] ո՞ր տեսակին կդասես էությունը: Չէ՞ որ սա ավելի շուտ պատկանում է ամեն ինչին:

Թեետետոս. Ես կդասեմ էությունը նրան, ինչին հոգին ձգտում է ինքն ըստ ինքյան:

Սոկրատես. Եվ նմանի՞ն ու ո՞չ նմանին, նույնականի՞ն ու այլի՞ն:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Իսկ գեղեցիկին ու այլանդակին կամ բարուն ու չարի՞ն:

Թեետետոս. Ինձ թվում է, որ հոգին ավելի շատ դիտում է սրանց էությունը փոխադարձ հարաբերության մեջ՝ իր իսկ մեջ համեմատելով ներկան ու անցյալը ապագայի հետ:

b

Սոկրատես. Շատ լավ: Իսկ արդյո՞ք կարծրի կարծրությունը հոգին զգայում է շոշափման միջոցով և նմանապես նաև փափուկի փափկությունը:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Իսկ դրանց էության, այսինքն՝ ինչ լինելու, դրանց հակադրության և հակադրության էության մասին հոգին փորձում է դատել՝ համեմատելով դրանք իրա՞ր:

Թեետետոս. Իհարկե:

Սոկրատես. Մի՞թե մարդկանց և կենդանիներին ի բնե հատուկ չէ ծննդյան պահից ևեթ ստանալ տպավորություններ, որոնք մարմնի միջոցով փոխանցվում են հոգուն: Իսկ ահա խորհրդածություններն այդ ամենի էության և օգուտի մասին գոյանում են (եթե գոյանում են) դժվարությամբ և շատ ժամանակ անց միայն՝ բազում ջանքերի և ուսման գնով:

c

Թեետետոս. Միանգամայն այդպես է:

Սոկրատես. Իսկ հնարավոր է հասու լինել ճշմարտությանը՝ հասու չլինելով եությանը:

Թեոտեստոս. Անհնար է:

Սոկրատես. Իսկ կարո՞ղ է արդյոք մի բանի գիտակ լինել նա, ով չգիտի դրա եությունը:

Թեոտեստոս. Այդ ինչպե՞ս, Սոկրատես:

d

Սոկրատես. Ուրեմն տպավորությունների մեջ չէ իմացությունը, այլ դրանց մասին մտահանգումներում, քանզի սրանց մեջ կարելի է որսալ եությունն ու ճշմարտությունը, իսկ տպավորությունների մեջ՝ ոչ:

Թեոտեստոս. Ակնհայտ է:

Սոկրատես. Մի՞թե նույն կերպ կանվանես այդքան տարբեր երկու բաները:

Թեոտեստոս. Դա անարդար կլիներ:

Սոկրատես. Իսկ ի՞նչ անուն կտաս լսողությանը, տեսողությանը, հոտառությանը, սառեցմանը և տաքացմանը [միասին վերցրած]:

Թեոտեստոս. Կանվանեի զգայություն, ուրիշ ի՞նչ:

e

Սոկրատես. Ուրեմն այդ ամենը զգայություն կանվանեիր:

Թեոտեստոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Որի միջոցով, ինչպես ասացինք, անհնար է որսալ ճշմարտությունը, ինչպես նաև եությունը:

Թեոտեստոս. Այո, անհնար է:

Սոկրատես. Ուրեմն նաև իմացությունը:

Թեոտեստոս. Նաև իմացությունը:

Սոկրատես. Այդ դեպքում, Թեոտեստոս, զգայությունն ու իմացությունը երբեք չեն կարող նույնական լինել:

Թեոտեստոս. Ակներևաբար ոչ, Սոկրատես: Հիմա պարզ դարձավ, որ իմացությունը զգայությունից տարբեր բան է:

Սոկրատես. Սակայն մենք սկսեցինք մեր զրույցը պարզելու համար ոչ թե իմացության ինչ չլինելը, այլ ինչ լինելը: Այդուհանդերձ մենք առաջադիմեցինք այնքանով, որ

187

այսուհետև կփնտրենք դա ոչ թե զգայության մեջ, այլ այն անվան, որը տրվում է հոգուն, երբ սա ինքն ըստ ինքյան քննում է գոյը:

Թեետետոս. Բայց, Սոկրատես, ինձ թվում է, որ հոգու այդ վիճակը կոչվում է «կարծել»:

Սոկրատես. Քեզ ճիշտ է թվում, բարեկամս: Այդ դեպքում սկսելով սկզբից և ջնջելով նախորդ բոլոր ասածները, **b** նայի՛ր, չե՞ս տեսնի արդյոք ավելին հիմա, երբ այսքան առաջադիմել ես, և ասա մեկ անգամ էլ՝ ի՞նչ է իմացությունը:

Թեետետոս. Ասել, որ ամեն իմացություն կարծիք է, չի կարելի, Սոկրատես, որովհետև գոյություն ունի նաև կեղծ իմացություն: Սակայն ճշմարիտ կարծիքը իմացություն է, և սա թող լինի իմ պատասխանը: Իսկ եթե քննության ընթացքում դա ակնհայտ չդառնա, մենք, ինչպես այժմ, կփորձենք գտնել մեկ այլ պատասխան:

Սոկրատես. Սակայն հարկ է ավելի խիզախ լինել, Թեետետոս, և չտալ երկչոտ պատասխաններ, ինչպես անում էիր սկզբում: Եթե այդպես վարվենք, ապա կլինի երկուսից մեկը՝ **c** կա՛մ կգտնենք այն, ինչ փնտրում ենք, կա՛մ էլ այլևս չենք համարի, թե գիտենք այն, ինչը բնավ չգիտենք: Չե՞ որ սա էլ փոքր պարզև չէ: Եվ այսպես, ի՞նչ ես ասում. կա կարծիքի երկու տեսակ, որոնցից մեկը ճշմարիտ է, իսկ մյուսը՝ կեղծ, և դու սահմանում ես իմացությունը որպես ճշմարիտ կարծի՞ք:

Թեետետոս. Իհարկե: Քանզի հիմա դա ինձ համար ակնհայտ է:

Սոկրատես. Չարժե՞ ուրեմն կրկին վերադառնալ կարծիքի քննությանը:

Թեետետոս. Ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Այժմ, ինչպես և հաճախ նախկինում, ինձ **d** անհանգստացնում է այն, որ ես մեծապես դժվարանում եմ ինքս ինձ և ուրիշ որևէ մեկին ասել, թե այդ ինչ կիրք է և ինչպես է այն գոյանում մեր մեջ:

Թեետետոս. Ի՞նչ կիրք:

Սուկրատես. Կեղծ կարծիք կազմելու կիրքը: Այժմ էլ ես կասկածով մտածում եմ՝ չթողնե՞նք արդյոք սա և շարժվենք այն ճանապարհով, որն ընտրեցինք քիչ առաջ:

Թեոտեոնոս. Ինչու՞ ոչ, Սուկրատես, մանավանդ որ դա քեզ անհրաժեշտ է թվում: Չէ՞ որ հենց նոր դու և Թեոդորոսը շատ ճիշտ նկատեցիք, որ մենք ազատ ժամանակի պակաս չունենք:

Սուկրատես. Լավ հիշեցրիր, քանզի ժամանակն է նորից բռնել ճիշտ հետքը: Չէ՞ որ ավելի նախընտրելի է լավ կատարել նվազագույնը, քան անավարտ թողնել առավելագույնը:

Թեոտեոնոս. Իհարկե:

Սուկրատես. Ուրեմն ի՞նչ: Ինչի՞ մասին էինք խոսում: Մի՞թե չասացինք, որ կարծիքը միշտ կեղծ է և որ մեզնից մեկի մոտ այն կեղծ է, իսկ մյուսի մոտ ճշմարիտ, և որ այդպես է ի բնե:

Թեոտեոնոս. Ասացինք:

Սուկրատես. Իսկ ամենայնի և առանձինի մասին մենք կարո՞ղ ենք իմանալ կամ չիմանալ: Ուսումը և մոռացումը, որ գտնվում են իմացության և չիմացության միջև, ես հիմա բաց եմ թողնում: Ներկայիս խորհրդածության հետ սա ոչ մի առնչություն չունի: 188

Թեոտեոնոս. Բայց չէ՞ որ յուրաքանչյուր իրի հարաբերությամբ ուրիշ ոչինչ չի մնում, Սուկրատես: Մնում է միայն կա՛մ իմանալ այն, կա՛մ էլ չիմանալ:

Սուկրատես. Այդ դեպքում կարծիք ունեցողը կարծիք ունի կա՛մ իմացածի, կա՛մ էլ չիմացածի մասին:

Թեոտեոնոս. Անհրաժեշտաբար:

Սուկրատես. Եվ իմացողը չի կարող չիմանալ այն, ինչ գիտի, ինչպես և չիմացողը չի կարող իմանալ այն, ինչ չգիտի: b

Թեոտեոնոս. Անկասկած:

Սուկրատես. Հետևաբար կեղծ կարծիք ունեցողը իր իմացածը համարում է ոչ այն, ինչ դա կա, այլ իր իմացած

մեկ ուրիշ բան, և երկուսն էլ իմանալով, երկուսն էլ չգիտի:

Թեետետոս. Բայց դա անհնար է, Սոկրատես:

Սոկրատես. Կամ էլ այն, ինչ նա չգիտի, տարբեր է համարում այն բաներից, որոնք նա չգիտի, այսպես օրինակ՝ ո՛չ Թեետետոսին, ո՛չ էլ Սոկրատեսին չիմացողի մտքով կարող է անցնել, թե Սոկրատեսը Թեետետոսն է, իսկ Թեետետոսը՝ Սոկրատեսը:

c **Թեետետոս.** Այդ ինչպե՞ս:

Սոկրատես. Բայց չէ՞ որ ոչ ոք չի կարծում, թե իր իմացածը չիմացածն է կամ չիմացածը՝ իմացածը:

Թեետետոս. Դա հրեշավոր բան կլիներ:

Սոկրատես. Ուրիշ ի՞նչ եղանակով կարելի է կեղծ կարծիք կազմել: Եթե բոլոր իրերը մենք կա՛ն գիտենք, կա՛ն չգիտենք, անհնար է որևէ կարծիք կազմել, գտնվելով այդ երկու պայմաններից դուրս:

Թեետետոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Այդ դեպքում մեր որոնումներում մենք պետք է առաջնորդվենք ոչ թե իմացությամբ կամ չիմացությամբ, այլ գոյությամբ և չգոյությամբ:

d **Թեետետոս.** Ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Ավելի պարզ կլինի, եթե մենք ասենք, որ ինչ-որ բանի՝ որպես չգոյության մասին կարծիք ունեցողը կեղծ կարծիք ունի անկախ իր մտավոր ունակություններից:

Թեետետոս. Թերևս այդպես է, Սոկրատես:

Սոկրատես. Ուրեմն ինչ, ո՛վ Թեետետոս, ի՞նչ պատասխան տանք հետևյալ հարցին. «Չնարավո՞ր է արդյոք այն, ինչ ասվեց, և կարո՞ղ է արդյոք ինչ-որ մեկը կարծիք կազմել գոյություն չունեցողի մասին, լինի դա որևէ իր կամ հենց ինքը»: Մենք հավանաբար կասենք. «Այո, երբ կարծողը ճիշտ չի կարծում»: Այդպե՞ս կասենք:

e **Թեետետոս.** Այդպես:

Սոկրատես. Ուրեմն նաև ա՞յլ դեպքերում տեղի է ունենում համանմանը:

ԹԵՆՏԵՆՈՒ. Ե՞րբ:

Սուկրատես. Երբ որևէ մեկը ինչ-որ բան է տեսնում, բայց ոչինչ չի տեսնում:

ԹԵՆՏԵՆՈՒ. Այդ ինչպե՞ս:

Սուկրատես. Եթե նա տեսնում է ինչ-որ բան, ապա տեսնում է գոյություն ունեցող ինչ-որ բան: Թե՞ դու կարծում ես, որ մի բանը նաև գոյություն չունեցողների մեջ է:

ԹԵՆՏԵՆՈՒ. Ոչ, չեմ կարծում:

Սուկրատես. Ուրեմն ինչ-որ բան տեսնողը տեսնում է այն, ինչ գոյություն ունի:

ԹԵՆՏԵՆՈՒ. Ակնհայտ է:

Սուկրատես. Եվ ինչ-որ բան լսողը լսում է մեկ բան, հետևաբար այն, ինչ գոյություն ունի: 189

ԹԵՆՏԵՆՈՒ. Այո:

Սուկրատես. Եվ ինչ-որ բանի դիպչողը դիպչում է մեկ բանի, որ գոյություն ունի, եթե իհարկե դա մեկն է:

ԹԵՆՏԵՆՈՒ. Դա էլ ճշմարիտ է:

Սուկրատես. Իսկ կարծիք ունեցողը մի՞թե մեկ բանի մասին չէ կարծիք կազմում:

ԹԵՆՏԵՆՈՒ. Անհրաժեշտաբար:

Սուկրատես. Իսկ կարծիք ունեցողը կարծիք է կազմում գոյողի՞ մասին:

ԹԵՆՏԵՆՈՒ. Համաձայն եմ, գոյողի մասին:

Սուկրատես. Ուրեմն չգոյի մասին կարծիք ունեցողը կարծիք ունի ոչինչի՞ մասին:

ԹԵՆՏԵՆՈՒ. Ակնհայտորեն:

Սուկրատես. Բայց նա, ով կարծիք ունի ոչինչի մասին, ընդհանրապես կարծիք չունի:

ԹԵՆՏԵՆՈՒ. Պարզ է, որ այդպես է:

Սուկրատես. Արդ, գոյություն չունեցողը անկարելի է մտածել ո՛չ իրերի հարաբերությամբ, ո՛չ էլ նրանցից անկա՞խ: b

ԹԵՆՏԵՆՈՒ. Իհարկե ոչ:

Սոկրատես. Ուրեմն կեղծ կարծիքը տարբեր մի բան է գոյություն չունեցողի մասին կարծիքից:

Թեետետոս. Այդպես է թվում:

Սոկրատես. Հետևաբար ո՛չ այս, ո՛չ էլ քիչ առաջ արված դիտարկմամբ մենք չենք ունենում կեղծ կարծիք:

Թեետետոս. Ոչ, չենք ունենում:

Սոկրատես. Իսկ չանվանե՞նք դա այսպես:

Թեետետոս. Ինչպե՞ս:

c Սոկրատես. Մենք կասենք, որ կեղծ կարծիքն այն է, երբ որևէ մեկն իր մտքում շփոթում է մի իրը մյուսի հետ և ասում, որ այն գոյություն ունի: Այդկերպ նա մշտապես կարծիք է կազմում գոյություն ունեցողի մասին, բայց մեկի մասին մյուսի փոխարեն, և քանի որ սխալվում է իր դիտարկածի վերաբերյալ, կարելի է արդարացիորեն ասել, որ կեղծ կարծիք ունի:

Թեետետոս. Ըստ իս, շատ ճիշտ ես ասում: Քանզի եթե որևէ մեկը կարծիք է կազմում գեղեցիկի մասին այլանդակի հիման վրա կամ էլ այլանդակի մասին գեղեցիկի հիման վրա, իսկապես կեղծ կարծիք է կազմում:

Սոկրատես. Ակնհայտ է, Թեետետոս, որ դու չես երկրպագում ինձ և ոչ էլ վախենում ես ինձնից:

Թեետետոս. Բայց ինչու՞:

d Սոկրատես. Ինձ թվում է, դու չես հավատում, թե ես կարող եմ սասանել այդ իսկապես կեղծը՝ հարցնելով. կարելի՞ է լինել դանդաղորեն արագընթաց, ծանրորեն թեթև կամ մեկ այլ բան, որ հակադիր է ինքն իրեն, այսինքն՝ լինել ոչ ըստ սեփական բնության, այլ ըստ սեփական հակադրության: Ես ներում եմ քեզ, որպեսզի հանդգնությունդ զուր չանցնի: Ուրեմն, դու նախընտրում ես ասել, որ կեղծ կարծիքը այլափոխված կարծիքն է:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Եվ, ըստ քեզ, որևէ իր կարելի՞ է մտովի համարել մեկ ուրիշ բան, և ոչ այն, ինչ է:

Թեոտեոս. Այո, կարելի է:

Սոկրատես. Ուրեմն, երբ ինչ-որ մեկի միտքը այդպես է վարվում, անհրաժեշտաբար մտածում է կա՛մ այդ երկու իրե-
րը միասին, կա՛մ դրանցից յուրաքանչյուրն առանձին:

e

Թեոտեոս. Անհրաժեշտաբար: Կա՛մ միաժամանակ, կա՛մ հաջորդաբար:

Սոկրատես. Հրաշալի է: Իսկ միտք ասելով դու նկատի ունես նույնը, ինչ ե՞ս:

Թեոտեոս. Իսկ ի՞նչ նկատի ունես դու:

Սոկրատես. Ես նկատի ունեմ զրույցը, որ հոգին վարում է ինքն իր հետ տեսածի մասին: Բացատրում եմ դա քեզ որպես մեկը, ով ոչինչ չգիտի: Ինձ թվում է, որ մտածող հոգին անում է ոչ այլ բան, քան զրուցում ինքն իր հետ, հարցնելով և պատասխանելով ինքն իրեն, հաստատելով և ժխտելով: Իսկ երբ դանդաղ կամ աշխույժ կերպով ինչ-որ բան ըմբռնելով՝ սահմանում է դա և այլևս չի վարանում, մենք սա կոչում ենք կարծիք: Ուստի ես պնդում եմ, որ կարծիք ունենալը նշանակում է խոսել և կարծիքը ընթացիկ խոսքն է, որը ոչ թե հաղորդվում է ուրիշին ձայնի միջոցով, այլ լռության մեջ՝ ինքն իրեն: Ի՞նչ ես կարծում:

190

Թեոտեոս. Նույնը:

Սոկրատես. Ուրեմն, երբ ինչ-որ մեկը կարծում է, որ մի իր մեկ ուրիշ իր է, ըստ երևույթին ասում է ինքն իրեն, որ մի իրը մյուսն է:

Թեոտեոս. Անշուշտ:

b

Սոկրատես. Հիշիր, երբևէ չե՞ս ասել ինքդ քեզ, թե գեղեցիկը ավելի շուտ այլանդակ է, իսկ անարդարը՝ արդար, կամ, ամենակարևորը, չե՞ս փորձել երբևէ համոզել ինքդ քեզ, որ դրանցից յուրաքանչյուրն ավելի շուտ մյուսն է կամ լրիվ հակառակը, անգամ երազում չե՞ս հանդգնել ասել ինքդ քեզ, թե կենտր զույգ է, կամ նման ուրիշ բաներ:

Թեոտեոս. Ճիշտ ես ասում:

Սոկրատես. Իսկ ի՞նչ ես մտածում, ուրիշ որևէ մեկը՝

c

ողջամիտ կամ խելագար, կհանդգնի ասել և համոզել ինքն իրեն, որ ցուլը ծի է կամ երկուսը՝ մեկ:

Թեետետոս. Ձևը վկա, այդպես չեմ մտածում:

Սոկրատես. Այդ դեպքում, եթե ինքն իր հետ խոսելը կարծիք կազմել է, ապա ոչ ոք խոսելով և կարծիք կազմելով երկու իրերի մասին և ըմբռնելով դրանք իր հոգով՝ չի ասի և չի կարծի, թե դրանցից մեկը մյուսն է: Այդ մյուս կոչվածը դու նույնպես պիտի մի կողմ թողնես: Քանզի ես ասում եմ՝ ոչ ոք չի կարծում, թե այլանդակը գեղեցիկ է կամ ուրիշ մնամ բան:

d

Թեետետոս. Ես թողնում եմ դա, Սոկրատես, և համաձայն եմ քեզ:

Սոկրատես. Ուրեմն երկու իրերի մասին կարծիք ունեցողը չի կարող դրանցից մեկը համարել մյուսը:

Թեետետոս. Թերևս:

Սոկրատես. Սակայն կարծիք ունենալով դրանցից միայն մեկի մասին, իսկ մյուսի մասին՝ ոչ, նա երբեք չի իմանա, որ մեկը մյուսն է:

Թեետետոս. Ճիշտ ես ասում: Քանզի նա ստիպված կլիներ ըմբռնել այն, ինչի մասին կարծիք չունի:

e

Սոկրատես. Ուրեմն ո՛չ նա, ով կարծիք ունի երկու իրերի մասին, ո՛չ էլ նա, ով կարծիք ունի դրանցից մեկի մասին, չի կարող մոլորվել: Հետևաբար, եթե որևէ մեկը սահմաներ կեղծ կարծիքը որպես մոլորություն, դրանով ոչինչ չէր ասի: Այսպես, ո՛չ այս, ո՛չ էլ նախորդ դեպքում մեր կարծիքը կեղծ չէ:

Թեետետոս. Թերևս ոչ:

Սոկրատես. Եվ այդուհանդերձ, Թեետետոս, եթե պարզվի, որ կեղծ կարծիք գոյություն չունի, ստիպված կլինենք շատ անհեթեթ բաներ ընդունել:

Թեետետոս. Ի՞նչ անհեթեթ բաներ:

Սոկրատես. Չեմ ասի քեզ, մինչև որ չփորձեմ խնդիրը քննել բոլոր կողմերից: Ես կամաչեի մեզ համար, եթե մենք հայտնվեինք փակուղում և ստիպված լինեինք ընդունել հիշ-

191

Թեետետոս

յալ անհեթեթությունները: Բայց եթե գտնենք ելքը և ազատվենք, այդժամ կասենք ուրիշների մասին, որ նրանք նման դրության մեջ են, և կխուսափենք զավեշտ դառնալուց: Բայց եթե անվերջ խոչընդոտների հանդիպենք, ապա, կարծում եմ, պիտի անձնատուր լինենք փաստարկին, և թող պտտի ու շուռ տա մեզ, ինչպես կամենա: Լսիր, թե ինչ ուղի եմ գտել մեր որոնումների համար:

Թեետետոս. Դե, խոսի՛ր:

Սոկրատես. Ես չէի ասի, որ մենք ճիշտ ենք վարվել՝ համաձայնելով, իբր ինչ-որ մեկը չի կարող կարծիք կազմել, **b** թե իր իմացած իրերը իր չիմացած իրերն են, և այդկերպ խաբվել: Բայց դա հնարավոր է:

Թեետետոս. Արդյո՞ք նկատի ունես այն, ինչը ես կասկածում էի դեռ այն ժամանակ, երբ ասում էինք, որ նման մի բան գոյություն ունի. ես, որ ճանաչում եմ Սոկրատեսին, երբեմն տեսնելով հեռավորության վրա ինձ անձանոթ ինչ-որ մեկին, կարող եմ մտածել, թե դա Սոկրատեսն է, որին գիտեմ: Նման դեպքերում լինում է ասածդ:

Սոկրատես. Չմերժե՞նք արդյոք այդ [պնդումը], քանի որ այն ստիպում է մեզ չիմանալ մեր իմացածը:

Թեետետոս. Իհարկե:

Սոկրատես. Մենք կպնդենք ոչ թե այդ դրությամբ, այլ մեկ ուրիշը. գուցե այդկերպ մեր բախտը բերի, գուցե և՛ ոչ: Այժմ **c** մենք մի վիճակում ենք, երբ հարկավոր է փորձել մեր փաստարկը ամեն կողմից: Տե՛ս, թե ինչ եմ ասում: Կարո՞ղ է արդյոք նախկինում ինչ-որ բան չիմացողը սովորել դա հետագայում:

Թեետետոս. Իհարկե կարող է:

Սոկրատես. Իսկ հետո մեկը մյուսի ետևից նաև ուրի՞շ բաներ:

Թեետետոս. Ինչու՞ չէ:

Սոկրատես. Փաստարկս հասկանալու համար պատկերացրու, որ մեր հոգիներում գոյություն ունի մոմե տախտակ.

d մեկի մոտ՝ մեծ, մյուսի մոտ՝ փոքր, մի դեպքում՝ մաքուր, մյուս դեպքում՝ ոչ մաքուր և ավելի կոպիտ մոմից, ոմանց մոտ այն առավել նուրբ է, իսկ ոմանց մոտ էլ՝ սովորական որակի:

Թեետետոս. Պատկերացրի:

e **Սոկրատես.** Ասենք, որ դա մուսաների մոր՝ Մնեմոսի-նեի⁴³ ընծա է, և երբ մենք ուզում ենք հիշել մեր տեսածը, լսածը կամ մտածածը, դնում ենք այդ տախտակը մեր զգայությունների ու մտքերի տակ և դրոշմում դրանք այնպես, ինչպես դրոշմում ենք մատանու կնիքը: Եվ այն, ինչը դրոշմվում է, մենք հիշում ենք և գիտենք, քանի դեռ պահպանվում է, իսկ երբ ջնջվում է և նոր դրոշմվածքներ չեն գոյանում, մոռանում ենք և այլևս չենք իմանում:

Թեետետոս. Թող այդպես լինի:

Սոկրատես. Ուրեմն դա իմացողը և իր տեսածից ու լսածից ինչ-որ բան քննողը կարո՞ղ է այդպերպ կեղծ կարծիք կազմել:

Թեետետոս. Ի՞նչ եղանակով:

Սոկրատես. Մերթ համարելով, որ իր իմացած իրերը այն իրերն են, որոնք նա գիտի, մերթ համարելով, որ դրանք իրեր են, որոնք նա չգիտի: Չէ՞ որ նախկինում մենք լավ չարեցիք՝ ընդունելով, որ դա անհնար է:

Թեետետոս. Իսկ ի՞նչ կասես հիմա:

192 **Սոկրատես.** Պետք է սկսել փաստարկը՝ սահմանելով, որ անհնար է իմանալով ինչ-որ բան և ունենալով հոգում դրա հիշողությունը, բայց չզգայելով այն, համարել դա մեկ ուրիշ բան, որը նույնպես գիտես և որի դրոշմվածքը նույնպես ունես, բայց չես զգայում: Եվ դարձյալ, իմացածը անհնար է համարել այն, ինչ չգիտես և որի դրոշմվածքը չունես, անհնար է նաև չիմացածը համարել չիմացած, չիմացածը համարել իմացած, զգայածը համարել ուրիշ, զգայածը համարել չզգայած, չզգայածը համարել չզգայած, չզգայածը համարել զգայած, զգայածը և իր նշանն ունեցողը համարել ուրիշ իմացած, զգայած և իր նշանն ունեցող. առավել ևս անհնար է,

եթե դա իհարկե պատահում է, ունենալով ճիշտ նշան, իմացածն ու զգայածը համարել ուրիշ իմացած, ինչպես նաև իմացածն ու զգայածը նույն պայմաններում համարել ուրիշ զգայած, չիմացածն ու չզգայածը համարել ուրիշ չիմացած և ուրիշ չզգայած, չիմացածն ու չզգայածը համարել չիմացած, չիմացածն ու չզգայածը համարել չզգայած: Բոլոր այս դեպքերում անհնար է կազմել կեղծ կարծիք: Դրա հնարավորությունը պահպանվում է միայն հետևյալ դեպքերում:

Թեոտեոս. Ո՞ր դեպքերում: Գուցե դրանց օգնությամբ հասկանամ քեզ: Քանզի հիմա չեմ հասցնում քո տեսից:

Սուկրատես. Դրանք այն դեպքերն են, երբ իմացածը դնում ես քո իմացած և զգայած ուրիշ ինչ-որ բանի տեղ՝ կամ չիմացած, բայց զգայած բանի տեղ, կամ էլ իմացածն ու զգայածը ուրիշ իմացածի ու զգայածի տեղ:

Թեոտեոս. Այժմ ես ավելի ետ մնացի:

Սուկրատես. Ուրեմն մի անգամ էլ լսիր: Իմանալով Թեոդորոսին և ինքս իմ մեջ հիշելով, թե ինչպիսին է, նույն կերպով իմանալով նաև Թեոտեոսին, չե՞մ կարող արդյոք երբեմն տեսնել հենց ձեզ, իսկ երբեմն՝ ոչ, երբեմն դիպչել ձեզ, իսկ երբեմն՝ ոչ, երբեմն լսել կամ զգայել մեկ այլ զգայություն, իսկ երբեմն ձեզնից ոչ մի զգայություն չունենալ, սակայն հիշել և իմ մեջ իմանալ ձեզ:

Թեոտեոս. Իհարկե:

Սուկրատես. Արդ, առաջինը, որ դու պիտի հասկանաս իմ պարզաբանումից, այն է, որ իմացածը կարելի է ինչպես չզգայել, այնպես էլ զգայել:

Թեոտեոս. Ճշմարիտ է:

Սուկրատես. Հետևաբար նաև չիմացածը կարելի է հաճախ չզգայել, բայց հաճախ՝ միայն զգայել:

Թեոտեոս. Դա նույնպես հնարավոր է:

Սուկրատես. Տե՛ս, գուցե այժմ ավելի լավ հասկանաս: Եթե Սուկրատեսը ճանաչում է և՛ Թեոդորոսին, և՛ Թեոտեոսին, բայց նրանցից ոչ մեկին չի տեսնում և չի ստանում

նրանցից ոչ մի ուրիշ զգայություն, նա երբեք չի կարող ինքն իր մեջ կարծիք կազմել, իբր Թենտետոսը Թեոդորոսն է: Գիշտ եմ ասում, թե՞ ոչ:

Թենտետոս. Այո, ճիշտ ես:

Սոկրատես. Արդ, սա իմ թվարկած դեպքերից առաջինն էր:

Թենտետոս. Այդպես է:

Սոկրատես. Երկրորդն այն է, որ իմանալով ձեզնից մեկին, իսկ մյուսին՝ ոչ, և չզգայելով ձեզնից ոչ մեկին, ես երբեք չէի համարի, թե նա, ում գիտեմ, այն մեկն է, որին չգիտեմ:

Թենտետոս. Գիշտ է:

Սոկրատես. Երրորդ դեպքն այն է, որ չճանաչելով և
b չզգայելով ձեզնից ոչ մեկին, ես մի չիմացածին չէի համարի մյուս չիմացածը: Պատկերացրու, որ մեկ անգամ էլ լսեցիր բոլոր մյուս դեպքերը. դրանցից ոչ մեկում ես երբեք կեղծ կարծիք չեմ կազմում քո և Թեոդորոսի մասին՝ ո՛չ այն ժամանակ, երբ երկուսիդ էլ ճանաչում եմ, ո՛չ էլ, երբ մեկին ճանաչում եմ, իսկ մյուսին՝ ոչ: Նույն բանն է նաև զգայությունների պարագայում, եթե իհարկե հետևում ես ինձ:

Թենտետոս. Հետևում եմ:

Սոկրատես. Ուստի կեղծ կարծիք կազմելու տարբերակ է մնում սա. երբ իմանալով քեզ և Թեոդորոսին և ունենալով
c նշված մոմե տախտակին ձեր մատանիների նշանները, բայց բավականաչափ լավ չտեսնելով երկուսիդ հեռվից, յուրաքանչյուրիդ տալիս եմ տեսողության համարժեք նշան և հարմարեցնում նախկին նշանին, որպեսզի կայանա վերաճանաչումը: Այսպես ես անհաջողության եմ մատնվում ու սխալվում, դնելով մեկի տեսողական զգայությունը մյուսի նշանին, շփոթելով դրանք, ինչպես ոտնամանները կամ աջն ու ձախը հայելու մեջ: Այդպերպ է գոյանում ոչ համարժեք և կեղծ կարծիքը:

Թենտետոս. Թերևս այդպես, Սոկրատես: Դու իրա-

շալիորեն ներկայացրիր [կեղծ] կարծիքի հատկությունը:

Սուկրատես. Նաև հետևյալը: Եթե իմանալով ձեզ երկուսիդ, մեկին զգայում եմ, իսկ մյուսին՝ ոչ, իմ ճանաչողությունն ըստ զգայության չէ: Դա էի ասում քիչ առաջ, երբ չէիր հասկանում:

Թեոտեոս. Այո, չէի հասկանում:

Սուկրատես. Իսկ ես ասում էի, որ ճանաչելով և զգայելով մեկին և ճանաչման հիմքում ունենալով զգայությունը, ոչ ոք երբեք չի համարի նրան մեկը, ում գիտի, զգայում է և որի ճանաչումը զգայության հիման վրա է: Այդպե՞ս էր:

Թեոտեոս. Այո:

Սուկրատես. Մնում է դեպքը, որի մասին խոսում ենք այժմ, ասելով, որ կեղծ կարծիքը գոյանում է այն ժամանակ, երբ որևէ մեկը իմանալով երկուսին, տեսնելով նրանց կամ զգայելով մեկ այլ զգայությամբ, դնում է նրանց նշանները ոչ ըստ յուրաքանչյուրից ստացված զգայության, այլ վատ նետածիգի նման վրիպում է քիրախից և սխալվում. հենց դա էլ կոչվում է կեղծ կարծիք:

Թեոտեոս. Թերևս այդպես է:

Սուկրատես. Արդ, երբ նշաններից մեկի համար զգայությունն առկա է, իսկ մյուսի համար՝ ոչ, և բացակայող նշանի զգայությունը դրվում է առկա զգայության վրա, մտածողությունը խաբվում է: Մի խոսքով, չիմացածի և երբեք չզգայվածի վերաբերյալ, ինչպես երևում է, չի լինում ո՛չ խաբկանք, ո՛չ էլ կեղծ կարծիք, եթե իհարկե մենք հիմա սթափ ենք դատում: Իսկ իմացածի և զգայվածի վերաբերմամբ մեր կարծիքը պարուն և ճոճվում է, դառնալով կեղծ կամ ճշմարիտ. ճշմարիտ, երբ համապատասխան դրոշմվածքն ու դրոշմը ճիշտ դրվում են միմյանց վրա, և կեղծ, երբ դրանք վրիպում են իրարից:

Թեոտեոս. Ի՞նչ հրաշալի դատողություն էր, ո՛վ Սուկրատես:

Սուկրատես. Դեռ ինչե՞ր պիտի ասես, երբ լսես մնաց-

յալը: Չէ՞ որ ճշմարիտ կարծիք ունենալը հրաշալի է, մինչդեռ խաբվելը՝ ամոթալի:

Թեետետոս. Անկասկած:

Սոկրատես. Ասում են, թե դրա պատճառը հետևյալն է: Եթե որևէ մեկի հոգու մոմը խորն է, առատ, հարթ և փափուկ, զգայությունների միջոցով թափանցողը դրոշմվում է հոգու այս սրտում, ինչպես ասում է Հոմերոսը, — ընդ որում սիրտը (κέντρο) նրա դեպքում հնչողությամբ նման է մոմին (κίτρος)⁴⁴, — և այդպիսի մարդկանց մոտ գոյացող նշանները մաքուր են, բավական խոր և մնայուն: Այդպիսի մարդիկ նախ ընդունակ են ուսման մեջ և ապա օժտված լավ հիշողությամբ, քանզի չեն շփոթում զգայությունների նշանները, այլ ճշմարիտ կարծիք են կազմում: Իրոք, նրանց դրոշմվածքները հստակ են և ազատ դասավորված, այնպես որ նրանք արագորեն դնում են յուրաքանչյուր դրոշմվածք համապատասխան իրի վրա, որը նրանք կոչում են գոյ: Այդ մարդկանց կոչում են իմաստուններ: Թե՞ դու այլ կերպ ես կարծում:

Թեետետոս. Ոչ, հենց այդպես:

Սոկրատես. Իսկ երբ այդ սիրտը բրդոտ է, ինչպես երգում է ամենախմաստուն պոետը⁴⁵, երբ աղտոտված է կամ մաքուր մոմից չէ, շատ կարծր է կամ շատ փափուկ, ապա նրանք, ում մոմը շատ փափուկ է, արագ են սովորում, բայց նաև արագ մոռանում են, իսկ նրանք, ում մոմը կարծր է, հակառակը: Նրանք, ում մոմը բրդոտ է և քարքարոտ, հողի և թրիքի հետ միախառնված, ունեն աղոտ դրոշմվածքներ: Աղոտ են նաև կարծր տախտակներ ունեցողների դրոշմվածքները, քանզի չունեն խորություն, և փափուկ տախտակներ ունեցողներինը, քանզի հալչելով լրդովում են և շատ արագ դառնում աղոտ: Իսկ եթե դրան գումարած մարդ փոքրոգի է, ապա տարածության պակասի պատճառով ծածկելով միմյանց՝ դրոշմվածքներն ավելի աղոտ են դառնում: Բոլոր այդ մարդիկ հակված են ունենալ կեղծ կարծիքներ: Քանզի, լինելով ծանրաշարժ, ինչ-որ բան տեսնելիս, լսելիս կամ մտածելիս

նրանք ի վիճակի չեն արագորեն յուրաքանչյուր իրի վրա դնել համապատասխան դրոշմվածքը, և քանի որ սխալ են անում նշանակումը, մեծ մասամբ տեսնում, լսում և մտածում են սխալ. նրանց կոչում են մոլորյալներ և տգետներ:

Թեոտեոս. Շատ ճիշտ ես ասում, ո՛վ Սոկրատես:

b

Սոկրատես. Կասե՞նք, ուրեմն, որ մենք ունենում ենք սխալ կարծիքներ:

Թեոտեոս. Հաստատապես:

Սոկրատես. Իհարկե նաև ճշմարիտ կարծիքներ:

Թեոտեոս. Նաև ճշմարիտ:

Սոկրատես. Այդ դեպքում համարե՞նք, որ եկել ենք վերջնական համաձայնության և կարծիքների այդ երկու տեսակները անկասկած գոյություն ունեն:

Թեոտեոս. Միանգամայն ճիշտ է:

Սոկրատես. Հիրավի զարհուրելի և տհաճ է շատախոս մարդը, Թեոտեոս:

Թեոտեոս. Ինչու՞: Ինչու՞ ես այդպես ասում:

Սոկրատես. Բարկանում եմ սեփական տգիտության և շատախոսության վրա: Ուրիշ ի՞նչ անուն կարելի է տալ նրան, ով այսպես տանում ու բերում է իր խոսքը և ծուլության պատճառով ի վիճակի չէ ընդունել կամ մերժել գեթ մեկ փաստարկ:

c

Թեոտեոս. Բայց դու բարկանալու ի՞նչ ունես:

Սոկրատես. Ոչ միայն բարկանում, այլև վախենում եմ, որ պատասխան չեմ գտնի, եթե որևէ մեկն ինձ հարցնի. «Սոկրատես, դու պարզեցիր, որ կեղծ կարծիքը ո՛չ զգայությունների փոխհարաբերության, ո՛չ էլ ինքնին մտքերի մեջ է, այլ գոյանում է զգայության և մտքի միացությունի՞ց»:

d

Թեոտեոս. Ինձ թվում է, Սոկրատես, որ հենց նոր ապացուցվածի մեջ ամոթալի ոչինչ չկա:

Սոկրատես. «Ուրեմն,— կասի նա,— դու պնդում ես, որ մարդուն, որին մենք միայն մտածում ենք, բայց չենք տեսնում, երբեք չենք համարի ձի, որին նույնպես չենք տեսնում

ու չենք շոշափում և որին հետևաբար միայն մտածում ենք, բայց չենք զգայում»: Կարծում եմ, ես կհաստատեմ դա:

Թեետետոս. Եվ իրավացիորեն:

- e** **Սոկրատես.** «Ուրեմն ի՞նչ,— կշարունակի նա,— տասնմեկը, որը միայն մտածվում է, երբեք չի՞ համարվի տասներկուս, որը սոսկ մտածվում է»: Դե արի ու պատասխանիր:

Թեետետոս. Բայց ես կպատասխանեմ, որ երբ ինչ-որ մեկը տեսնում կամ շոշափում է, նա կարող է տասնմեկը տասներկուս համարել, սակայն մտովի նման կարծիք այդ թվերի մասին կազմվել չի կարող:

- 196** **Սոկրատես.** Եվ ի՞նչ: Կարծում ես, որ եթե որևէ մեկը մտքում դիտարկի հինգն ու յոթը և նկատի չունենա հինգ կամ յոթ մարդու կամ ուրիշ ինչ-որ բան, այլ դիտարկի հենց հինգն ու յոթը, որոնք, ինչպես ասացինք, դրոշմվածքներ են և որոնց մասին անհնար է կեղծ կարծիք կազմել, ապա հարցնելով ինքն իրեն, թե ինչ կլինի դրանց գումարը, նա, քննելով դա իր մեջ, կասի, որ տասնմեկ, իսկ մեկ ուրիշն էլ կասի, թե տասներկու՞ս: Թե՞ բոլորը կասեն ու կմտածեն, որ տասներկուս:

- b** **Թեետետոս.** Ոչ, Ձևսը վկա, բոլորը կասեն, որ տասնմեկ: Իսկ եթե ոմն դիտարկի ավելի մեծ թվեր, սխալն առավել մեծ կլինի: Քանզի ինձ թվում է, դու խոսում ես ավելի շուտ ամեն թվի մասին:

Սոկրատես. Եհիշտ է թվում: Եվ նկատի առ, որ այդժամ դրոշմված տասներկուսը համարվում է տասնմեկ:

Թեետետոս. Թերևս:

- Սոկրատես.** Այդ դեպքում չե՞նք վերադառնում արդյոք նախորդ խորհրդածությանը: Չե՞ որ իրեն հայտնի ինչ-որ բան կրողը համարում է դա ուրիշ, դարձյալ իրեն հայտնի ինչ-որ բան: Մենք ասացինք, որ դա անհնար է, և ստիպված եղանք ընդունել, որ կեղծ կարծիք չի լինում, որպեսզի չստիպենք մարդուն միաժամանակ և՛ իմանալ, և՛ չիմանալ միևնույն բանը:

Թեոտեոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Արդ, հարկավոր է հայտարարել, որ կեղծ կարծիքն այլ բան է, քան զգալության փոխարինումը մտքով: Այլապես մենք կմոլորվեինք հենց մտքի մեջ: Իսկ հիմա դուրս է գալիս, որ կա՛մ կեղծ կարծիք գոյություն չունի, կա՛մ էլ կարելի է չիմանալ իմացածը: Այս երկուսից ո՞րն ես ընտրում:

Թեոտեոս. Դժվար ընտրություն ես առաջարկում, Սոկրատես:

Սոկրատես. Բայց վախենամ, երկու դեպքերն էլ անընդունելի են մեր խորհրդածության համար: Եվ այդուհանդերձ հարկ է հանդգնել: Ի՞նչ կլինի, եթե մի կողմ դնենք ամոթը:

Թեոտեոս. Ինչպե՞ս:

Սոկրատես. Պատրաստվելով ասելու, թե ինչ է իմանալը:

Թեոտեոս. Եվ ո՞րն է այստեղ ամոթալին:

Սոկրատես. Դու կարծես թե չես հասկանում, որ մեր խորհրդածությունն ի սկզբանե եղել է իմացության որոնում: Չէ՞ որ մենք չգիտեինք, թե ինչ է դա:

Թեոտեոս. Ոչ, ոչ, ես հասկանում եմ:

Սոկրատես. Այդ դեպքում, մի՞թե չես կարծում, որ բացատրել, թե ինչ է իմացությունը, չիմանալով իմացությունը, անամոթություն է: Ողջ զրույցի ընթացքում, Թեոտեոս, մեզ չհաջողվեց պահպանել խորհրդածության մաքրությունը: Մենք արդեն բյուր անգամ ասացինք «ճանաչում ենք» և «չենք ճանաչում», «գիտենք» և «չգիտենք», ասես հասկանում ենք միմյանց, մինչդեռ բոլորովին էլ չենք պարզել, թե ինչ է իմացությունը: Թե կուգես, հենց հիմա օգտագործում ենք «չճանաչել» և «հասկանալ» բառերը, ասես ունենք դրա իրավունքը, բայց չէ՞ որ մենք զուրկ ենք իմացությունից:

Թեոտեոս. Իսկ ի՞նչ կերպ պիտի խորհրդածես այդ բառերից հրաժարվելու դեպքում, ո՛վ Սոկրատես:

Սոկրատես. Ոչ մի կերպ, քանի դեռ ես ես եմ: Եթե լինեի վիճասեր ճամարտակ կամ այստեղ ներկա լինեիր այդպիսի այր, նա կկարգադրեր մեզ խուսափել նման բառերից 197

և լրջորեն կնախատեր ինձ: Բայց քանի որ մենք աննշան մարդիկ ենք, ուզում ես, ես կարող եմ խիզախել և ասել, թե ինչ է իմացությունը: Ինձ թվում է, դա օգտակար կլիներ:

Թեետետոս. Հանուն Ջևաի, խիզախի՛ր: Իսկ այդ բառերից չխուսափելդ միանգամայն ներելի է:

Սուկրատես. Լսե՞լ ես արդյոք, թե ինչպես են հիմա բացատրում այդ «իմանալը»:

Թեետետոս. Գուցե: Բայց այս պահին չեմ հիշում:

b Սուկրատես. Ասում են, որ դա նշանակում է «իմացություն ունենալ»:

Թեետետոս. Ճշմարիտ է:

Սուկրատես. Հետևաբար մենք քիչ բան կփոխենք, եթե ասենք, որ դա նշանակում է «ձեռք բերել իմացություն»:

Թեետետոս. Իսկ ինչո՞վ է սա տարբերվում առաջինից:

Սուկրատես. Գուցե ոչնչով: Սակայն լսիր, թե ինչ եմ ես մտածում և օգնիր պարզել մտքինս:

Թեետետոս. Եթե կարողանամ:

Սուկրատես. Ինձ այնուամենայնիվ թվում է, որ ձեռք բերելն ու տիրելը նույն բանը չեն: Այսպես, եթե ոմն գնել է թիկնոց և լինելով դրա տերը չի կրում այն, մենք չենք ասի, թե նա տիրում է դրան, այլ՝ որ ձեռք է բերել:

Թեետետոս. Ճիշտ է:

c Սուկրատես. Տե՛ս ուրեմն, կարո՞ղ է արդյոք իմացություն ձեռք բերողը չունենալ այդ իմացությունը: Եթե ինչ-որ մեկը որսալով թռչուններ՝ աղավնիներ և այլն, կերակրեր և խնամեր նրանց տանը պատրաստած աղավնաբնում, մենք կասեինք, որ նա մշտապես տիրում է դրանց, քանի որ ձեռք է բերել: Այդպես չէ՞:

Թեետետոս. Այո:

d Սուկրատես. Մյուս կողմից, սակայն, նա ոչ մի թռչուն էլ չունի, այլ ունի իշխանություն նրանց վրա, քանի որ ձեռնասուն է դարձրել փակի տակ պահելով, այնպես որ կարող է վերցնել յուրաքանչյուրին և բաց թողնել, երբ ցանկանա: Եվ

նա կարող է անել դա այնքան անգամ, որքան անցնի մտքով:

Թեոտոոս. Այդպես է:

Սուրատես. Արդ, ինչպես նախկինում, երբ մեր հոգում պատրաստեցինք չգիտես ինչ մոմե շինություն, հիմա էլ պատրաստենք յուրաքանչյուր հոգու մեջ աղավնաբնի պես ինչ-որ բան՝ բազմապիսի թռչուններով, որոնց մի մասը կապրի երամներով, մյուսներից առանձին, իսկ մյուս մասը՝ փոքր խմբերով կամ միայնակ, մյուսների մեջ այս ու այն կողմ թռչելով:

Թեոտոոս. Համարիր, որ պատրաստել ենք: Իսկ հետո՞:

e

Սուրատես. Պետք է նշել, որ մեր մանկության օրերին այդ վանդակը դատարկ է, քանզի թռչուններ ասելով նկատի ունեն իմացությունները: Նա, ով ձեռք է բերում իմացություն, փակում է այն նշված վանդակի մեջ: Մենք կասենք, որ նա սովորել կամ գտել է այդ իմացության առարկան և որ իմանալը հենց դա է նշանակում:

Թեոտոոս. Թող այդպես լինի:

Սուրատես. Ցանկության դեպքում նա կարող է դարձյալ իմացություն որսալ և որսալով պահել ու նորից բաց թողնել: Մտածիր, ի՞նչ բառերով անվանենք սա. այն բառերով, որոնցով անվանում էինք սկզբում, երբ նա ձեռք էր բերում, թե՞ ուրիշ: Ահա մի օրինակ, որի օգնությամբ դու ավելի պարզ կհասկանաս, թե ինչ նկատի ունեն: Դու ասում ես, որ թվաբանությունն արվեստ է:

198

Թեոտոոս. Այո:

Սուրատես. Դիցուք, թվաբանությունը կենտի և զույգի մասին ամեն տեսակ իմացությունների որս է:

Թեոտոոս. Դիցուք:

Սուրատես. Ես կարծում եմ, որ թվերի իմացությանը տիրողը և այդ իմացություններն ուրիշին փոխանցողը իր արվեստով ձեռնասուն է պահում դրանք և սովորեցնում ուրիշներին:

b

Թեոտոոս. Այո:

Սուրատես. Եվ փոխանցողին մենք անվանում ենք

ուսուցիչ, ընդունողին՝ աշակերտ, իսկ նրան, ով պահում է ձեռք բերած իմացություններն իր աղավնաբնում, անվանում ենք իմացող:

Թեետետոս. Իհարկե:

Սոկրատես. Իսկ հիմա ուշադրություն դարձրու և տես, թե ինչ է բխում այստեղից: Մի՞թե բոլոր թվերն իմացողը չէ թվաբանության գիտակը: Չէ՞ որ նրա հոգում առկա է բոլոր թվերի իմացությունը:

Թեետետոս. Եվ ի՞նչ:

c **Սոկրատես.** Ուրեմն նա կարող է ուզած ժամանակ հաշվել այդ թվերը կամ ուրիշ ինչ-որ բան, որքանով որ սա թիվ ունի:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Եվ մենք կենթադրենք, որ հաշվելը ոչ այլ ինչ է, եթե ոչ դիտարկել, թե ինչ թիվ կարող է ստացվել:

Թեետետոս. Այդպես է:

Սոկրատես. Ուրեմն նա, ով հետազոտում է այն, ինչ գիտի, թվում է չիմացող, մինչդեռ մենք արդեն պայմանավորվեցինք, որ նա գիտի բոլոր թվերը: Չէ՞ որ դու լսել ես նման անհեթեթությունների մասին:

Թեետետոս. Այո:

d **Սոկրատես.** Աղավնիներ որսալու և ձեռք բերելու հետ արված համեմատության մեջ մենք ասացինք, որ որսը եղել է երկակի՝ նախքան հայթայթումը հայթայթելու նպատակով և հայթայթումից հետո ձեռքի մեջ առնելու և պահելու համար այն, ինչն արդեն վաղուց ձեռք է բերված: Մի՞թե այդպես չէ նաև նրա դեպքում, ով երկարատև ուսման արդյունքում որոշակի իմացություն ձեռք բերելուց հետո, կարող է դարձյալ սովորել նույն բանը, որսալով և պահելով յուրաքանչյուր իրի իմացությունը, որը թեև վաղուց էր ձեռք բերել, բայց [այդ պահին] նրա մտքում ձեռքի տակ չէր:

Թեետետոս. Շշմարիտ է:

e **Սոկրատես.** Ես հենց նոր հարցրի քեզ, թե ինչ բանե-

րից պիտի օգտվենք՝ խոսելով այն դեպքերի մասին, երբ թվաբանության գիտակը մտադրվելով հաշվել, իսկ քերականության գիտակը՝ կարդալ, վերստին իմանում է ինքն իրենից այն, ինչ գիտի:

Թեոտեոսոս. Բայց դա անհեթեթ է, Սոկրատես:

Սոկրատես. Իսկ կասե՞նք արդյոք, որ նա կարդում կամ հաշվում է անհայտը, եթե ընդունենք, որ նա գիտի բոլոր տառերն ու բոլոր թվերը:

Թեոտեոսոս. Դա նույնպես անհեթեթ է:

199

Սոկրատես. Չէի՞ր կամենա, որ մենք ասեինք, թե մեզ համար ոչ մի նշանակություն չունի, եթե ինչ-որ մեկը փորձի այս կամ այն կողմ ձգել «իմանալ» և «սովորել» բառերը, քանի որ մենք սահմանեցինք՝ մի բան է իմացություն ձեռք բերելը և այլ բան է իմացությանը տիրելը: Եվ չե՞նք ասում արդյոք, թե անհնար է, որ ոմն ձեռք չբերի իր ձեռք բերածը: Ուստի անհնար է, որ ոմն չիմանա այն, ինչ գիտի, թեպետ նա կարող է դրա մասին կեղծ կարծիք կազմել: Քանզի կարելի է նաև չունենալ այդ իմացությունը, այլ օդում սավառնող իմացությունները որսալիս որևէ իմացության փոխարեն վերցնել մեկ ուրիշը: Այսպես, նա կարող է տասնմեկը համարել տասներկու՝ տասներկուսի իմացության փոխարեն որսալով իր մեջ եղած տասնմեկի իմացությունը, ինչպես ձեռնասուն աղավնու փոխարեն վայրի աղավնուն:

b

Թեոտեոսոս. Ասածդ իմաստ ունի:

Սոկրատես. Երբ նա որսում է այն, ինչ պատրաստվում էր որսալ, չի սխալվում և կարծիք է կազմում գոյություն ունեցողի մասին: Այնպես որ լինում է ծշմարիտ և կեղծ կարծիք, և նախկինում մեզ անհանգստացնող պահերից և ոչ մեկը մեզ չի խոչընդոտում: Թերևս կհամաձայնես ինձ: Կամ գուցե ա՞յլ կերպ կվարվես:

c

Թեոտեոսոս. Ոչ, այդպես:

Սոկրատես. Արդ, իմացածը չիմանալուց մենք ազատվեցինք: Չե՞ որ ձեռք բերածը երբեք չի կարող լինել ձեռք

չբերած, անկախ այն բանից՝ սխալվում ենք, թե ոչ: Այնուամենայնիվ ինձ թվում է, որ այստեղ կարող է ի հայտ գալ ավելի վտանգավոր մի բան:

Թենտետոս. Ի՞նչ:

Սոկրատես. Իմացությունների շփոթից կարող է գոյանալ կեղծ կարծիք:

Թենտետոս. Այդ ինչպե՞ս:

d **Սոկրատես.** Նախ ինչ-որ բանի մասին իմացություն ունեցողը չգիտի դրա մասին ոչ թե տգիտությունից, այլ սեփական իմացության պատճառով: Այնուհետև, այս մի իմացության մասին կարող է կարծել, թե սա մեկ ուրիշ իմացություն է, իսկ մեկ ուրիշ իմացության մասին՝ թե սա այս իմացությունն է: Իսկ դա անհեթեթություն է, քանի որ իմացություն ծռռք բերելու հետ մեկտեղ հոգին ամեն բանից անտեղյակ է և ոչինչ չգիտի: Դժվար չէ այստեղից եզրակացնել, որ լինելով անգետ՝ կարելի է իմանալ, և լինելով կույր՝ կարելի է տեսնել, քանզի իմացությունը ստիպում է չիմանալ:

e **Թենտետոս.** Գուցե լավ չէր, Սոկրատես, որ մենք թռչունների տեսքով ներկայացրինք միայն իմացությունները, հարկավոր էր անել այնպես, որ դրանց հետ հոգում սավառնեն նաև չիմացությունները: Այդ դեպքում որսացողը կբռներ նույնի մերթ իմացությունը, մերթ չիմացությունը. չիմացությունը կհանգեցներ նրան կեղծ կարծիքի, իսկ իմացությունը՝ ճշմարիտ:

Սոկրատես. Ինչպե՞ս չգովենք քեզ, Թենտետոս: Այդուհանդերձ մեկ անգամ ևս քննիր ասածդ, և թող լինի այնպես, ինչպես ասում ես: Նա, ով կբռնի չիմացությունը, ըստ քեզ կեղծ կարծիք կկազմի: Այդպես չէ՞:

Թենտետոս. Այո:

Սոկրատես. Բայց նա իհարկե չի համարի, թե կեղծ կարծիք է կազմում:

Թենտետոս. Այդ ինչպե՞ս:

Սոկրատես. Ոչ, նա համարելու է դա ճշմարիտ և իմացողի կեցվածք կընդունի մի բանի հանդեպ, որի առնչությամբ մոլորության մեջ է:

Թեոտեոս. Իհարկե:

Սոկրատես. Եվ ուրեմն կմտածի, թե բռնել է ոչ թե չիմացությունը, այլ իմացությունը:

Թեոտեոս. Պարզ է:

Սոկրատես. Եվ այսպես, երկար դեգերումներից հետո մենք վերադարձանք մեր առաջին դժվարությանը: Եվ մեր վերոհիշյալ մերկացնողը ծիծաղելով կասի. «Ո՛վ ազնվագույն այրեր, մի՞թե նա, ով գիտի երկուսն էլ՝ և՛ իմացությունը, և՛ չիմացությունը, կարող է դրանցից մեկը, որը նա գիտի, համարել մյուսը, որը նա նույնպես գիտի: Կամ մի՞թե դրանցից ոչ մեկը չիմացողը կարող է դրանցից մեկը, որը նա չգիտի, համարել մյուսը, որը նա նույնպես չգիտի: Կամ իմանալով մեկը, բայց չիմանալով մյուսը, մի՞թե իմացածը կհամարի չիմացած, կամ մի՞թե չիմացածը կհամարի իմացած: Թե՞ այս անգամ էլ կասեք, որ կան նաև իմացությունների և չիմացությունների իմացություններ, որոնք նա ձեռք է բերել և պահում է ինչ-որ ուրիշ զավեշտական աղավաղումներում և մոմե դրոշմվածքներում և ձեռք բերելուց ի վեր գիտի դրանք, անգամ եթե [տվյալ պահին] իր հոգում դրանք ձեռքի տակ չեն: Այդպես դուք ստիպված կլինեք բյուրավոր անգամներ վերադառնալ նույնին և դույզն իսկ չեք առաջադիմի»: Ի՞նչ պատասխանենք սրան, Թեոտեոս:

Թեոտեոս. Բայց Ձևսը վկա, Սոկրատես, ասելու ոչինչ չունեմ:

Սոկրատես. Մի՞թե, տղաս, նա իրավացի չէ՝ կշտամբելով մեր փաստարկը և ցույց տալով, որ ճիշտ չէ կեղծ կարծիքը իմացությունից առաջ քննելը, իսկ իմացությունը մի կողմ թողնելը: Չէ՞ որ անհնար է իմանալ, թե ինչ է կեղծ կարծիքը, քանի դեռ մենք բավարար չափով չենք ըմբռնել, թե ինչ է իմացությունը:

Թեետետոս. Ներկա պահին, Սոկրատես, անհրաժեշտ է համաձայնել քո խոսքերին:

Սոկրատես. Այդ դեպքում թող ոմն ևս մեկ անգամ հարցնի [սկսելով] սկզբից՝ ի՞նչ է իմացությունը: Չէ՞ որ մենք չենք հրաժարվել դրանից:

Թեետետոս. Բնավ, քանի դեռ դու չես հրաժարվել:

Սոկրատես. Ասա մեզ, ինչպե՞ս պատասխանենք, որպեսզի հնարավորինս քիչ հակասենք ինքներս մեզ:

e **Թեետետոս.** Այնպես, ինչպես մտադիր էինք պատասխանել նախկինում, Սոկրատես: Ուրիշ առաջարկ չունեմ:

Սոկրատես. Այդ ինչպե՞ս:

Թեետետոս. Ճշմարիտ կարծիքը իմացություն է, որովհետև ճշմարիտ կարծիքը անսխալ է, և դրան առնչվող ամեն բան գեղեցիկ է ու բարի:

Սոկրատես. Որևէ մեկին գետն անցկացնելիս, Թեետետոս, ուղեվարն ասում է. «Ինքը ցույց կտա»⁴⁶: Այստեղ նույնպես, եթե մենք շարունակում ենք փնտրտուքը, հանդիպող խոչընդոտները կբացահայտվեն հենց փնտրվող առարկայի կողմից: Իսկ եթե տեղում մնանք, ոչինչ չենք բացահայտի:

201 **Թեետետոս.** Գիշտ ես ասում: Շարունակենք քննությունը:

Սոկրատես. Այն չի լինի երկար, քանզի գոյություն ունի մի ամբողջ արվեստ, որը ցույց է տալիս քեզ, որ իմացությունը ճշմարիտ կարծիք չէ:

Թեետետոս. Ինչպե՞ս: Այդ ի՞նչ արվեստ է:

Սոկրատես. Իմաստության մեջ մեծերի արվեստը, նրանց, ում կոչում են հռետորներ և դատավորներ: Չէ՞ որ իրենց արվեստով վերջիններս ոչ թե սովորեցնում են, այլ համոզելով ստիպում [ուրիշներին] կարծել այն, ինչ իրենք են ցանկանում: Թե՞ դու նրանց ես համարում մեծ ուսուցիչներ,

b որոնք ջրային ժամացույցի ընձեռած կարճ ժամանակահատվածում կարող են սպառիչ կերպով ներկայացնել ճշմարտությունը ինչ-որ դրամական հավիշտակության կամ մեկ այլ

բռնության մասին մարդկանց, որոնք անտեղյակ են տվյալ պատահարից:

Թեոտեոսս. Բնավ այդպես չեմ համարում, բայց նրանք համոզում են:

Սոկրատես. Իսկ մի՞թե համոզելը չի նշանակում կարծիք համոզել:

Թեոտեոսս. Ինչպե՞ս թե չէ:

Սոկրատես. Եվ երբ դատավորները իրավացիորեն համոզված են, որ իմանալ ինչ-որ բան կարելի է միայն տեսած լինելով, և ոչ այլ կերպ, բայց միևնույն ժամանակ դատում են լսածի հիման վրա, ստանալով ճշմարիտ կարծիք, թեպետ դատելով առանց իմացության, նրանց համոզմունքը ճիշտ է, չէ՞ c

Թեոտեոսս. Իհարկե:

Սոկրատես. Սակայն, բարեկամս, եթե ճշմարիտ կարծիքը և իմացությունը դատական ատյաններում նույնը լինեին, ապա անգամ ամենալավ դատավորը երբեք չէր կազմի ճշարիտ կարծիք առանց իմացության: Այնպես որ սրանք պիտի որ տարբեր լինեն:

Թեոտեոսս. Հիմա հիշեցի, Սոկրատես: Ես լսել էի դրա մասին ինչ-որ մեկից, բայց մոռացել էի: Նրա ասելով՝ իմացությունը ճշմարիտ կարծիք է, որը հիմնված է բացատրության վրա, իսկ բացատրությունից զուրկ կարծիքը դուրս է իմացության ոլորտից: Այն, ինչը զուրկ է բացատրությունից, անիմանալի է, — նա այդպես էր կոչում դա, — իսկ այն, ինչը ունի բացատրություն՝ իմանալի է:

Սոկրատես. Հրաշալի ես խոսում: Բայց ասա նաև, թե ինչպես էր նա տարբերում իմանալին և անիմանալին, զուցե ես ու դու նույն բանն ենք լսել:

Թեոտեոսս. Բայց ես չգիտեմ, կկարողանամ արդյոք վերհիշել դա: Եթե խոսեր մեկ ուրիշը, ապա ես կկարողանայի հետևել նրան:

Սոկրատես. Այդ դեպքում մի երազը լսիր մյուսի փոխա-

- e** րեն: Քանզի ես կարծես թե նույնպես լսել եմ ոմանցից, որ առաջին տարրերը, որոնցից բաղադրված ենք մենք, և մնացյալ բոլոր բաները բացատրություն չունեն: Դրանցից յուրաքանչյուրն ինքն ըստ ինքյան կարելի է միայն անվանել, բայց անհնար է ինչ-որ բան ավելացնել այդ անվանը և ասել՝ գոյություն ունի այն արոյոք, թե ոչ: Քանզի այդ դեպքում դրան կվերագրվեր գոյություն կամ չգոյություն, մինչդեռ ոչինչ չպիտի հավելվի. չէ՞ որ խոսում են միայն այդ տարրի մասին: Նրա դեպքում տեղին չեն ո՛չ «ինքը», ո՛չ «այն», ո՛չ «յուրաքանչյուրը», ո՛չ «մեկը», ո՛չ «այս», ո՛չ էլ շատ ուրիշ նման արտահայտությունները: Քանի որ լինելով տարածված և վերագրվելով բոլոր իրերին՝ սրանք այնուամենայնիվ տարբեր են նրանից, ինչին վերագրվում են: Իսկ եթե առաջին տարրը հնարավոր լիներ բացատրել և սա ունենար իր ներքին իմաստը, այն հարկ կլիներ բացատրել առանց կողմնակի որևէ բանի: Սակայն իրականում առաջին տարրերից և ոչ մեկը հնարավոր չէ բացատրել: Դրանք կարելի է միայն անվանել, քանզի դրանք կարող են միայն անուն ունենալ: Իսկ այդ տարրերից կազմված իրերը, որոնք բաղադրյալ են և որոնց անունները նույնպես բաղադրյալ են, տալիս են բացատրություն: Չէ՞ որ բացատրության էությունը բառերի շարահյուսումն է: Այնպես որ հիշյալ տարրերը ո՛չ բացատրելի են, ո՛չ էլ ճանաչելի, դրանք լոկ զգայելի են, իսկ շարահյուսվածը և՛ ճանաչելի է, և՛ արտահայտելի, և՛ կարող է լինել ճշմարիտ կարծիքի առարկա: Ահա ինչու երբ ինչ-որ մեկը ճշմարիտ կարծիք է կազմում ինչ-որ բանի մասին առանց բացատրության, նրա հոգին հանգում է այդ իրի ճշմարտությանը, բայց ոչ ճանաչողությանը: Քանզի նա, ով չի կարող տալ կամ ստանալ ինչ-որ բանի բացատրությունը, չգիտի դա: Իսկ նա, ով ստացել է բացատրություն, կարող է ի վերջո իմանալ դա: Այսպիսի՞ն է քո երազը, թե՞ դու այլ բան ես լսել:

Թեետետոս. Հենց այդ եմ լսել:

Սոկրատես. Ուրեմն դու բավարարված ես և պնդում

ես, որ բացատրությամբ ուղեկցվող ճշմարիտ կարծիքը իմացությունն է:

Թեոտեոսոս. Հենց այդպես:

Սոկրատես. Այդ դեպքում, Թեոտեոսոս, մենք այսօր **d**
ծեռք բերեցինք այն, ինչը փնտրել են և նախքան գտնելը ծեռացել բազում իմաստուններ:

Թեոտեոսոս. Ինձ թվում է, ո՛վ Սոկրատես, որ այն, ինչ ասվեց, հրաշալի էր:

Սոկրատես. Թերևս այդպիսին է վերջին պնդումը: Քանզի ի՞նչ իմացություն կարող է լինել առանց բացատրության և ճշմարիտ կարծիքի: Սակայն մի բան ասվածի մեջ ինձ այնուամենայնիվ չի բավարարում:

Թեոտեոսոս. Ի՞նչը:

Սոկրատես. Այն, որ ամենից դիպուկ է թվում. իբր տարրերն անճանաչելի են, իսկ բաղադրյալի սեռը՝ ճանաչելի: **e**

Թեոտեոսոս. Մի՞թե դա ճիշտ չէ:

Սոկրատես. Պետք է պարզել: Իսկ ասվածին պատանդ կլինեն օրինակները, որոնցից օգտվում էր նա, ով ասում էր այդ ամենը:

Թեոտեոսոս. Ի՞նչ օրինակներ:

Սոկրատես. Գրի տառերն ու վանկերը: Թե՞ կարծում ես, մեր ասածը քննողը այլ բան նկատի ուներ:

Թեոտեոսոս. Ոչ, հենց դրանք:

Սոկրատես. Վերադառնանք դրանց և քննենք կամ, ավելի **203**
լի շուտ, քննենք ինքներս մեզ. արդյո՞ք այդպես ենք գրագիտություն սովորել, թե՞ ոչ: Նախ, մի՞թե վանկերն ունեն բացատրություն, իսկ տառերն անբացատրելի են:

Թեոտեոսոս. Թերևս:

Սոկրատես. Ինձ էլ է այդպես թվում: Քանզի եթե որևէ մեկը հարցնի, թե ինչ է «Սոկրատեսի» մեջ առաջին վանկը, և ասի. «Ո՛վ Թեոտեոսոս, ասա, ի՞նչ է «սո»-ն»,— ի՞նչ կպատասխանես:

Թեոտեոսոս. Որ դա սե և n է:

Սոկրատես. Այդպիսի՞ն է ուրեմն վանկի քո բացատրությունը:

Թեետետոս. Այո:

b **Սոկրատես.** Այդ դեպքում տուր նաև *սե*-ի բացատրությունը:

Թեետետոս. Բայց ինչպե՞ս կարելի է բացատրել տարրի տարրը: Չէ՞ որ *սե*-ն բաղաձայն է, այն սոսկ աղմուկ է, սուլոց, որ գոյանում է լեզվի օգնությամբ: Իսկ ահա *բե*-ն ո՛չ ձայն է, ո՛չ էլ աղմուկ, և այդպիսին են տառերից շատերը: Հետևաբար շատ ճիշտ ասվեց, որ տառերն անբացատրելի են: Նրանցից միայն յոթ ամենախտակներն են, որ ձայն ունեն, մինչդեռ իմաստ չունի դրանցից ոչ մեկը:

Սոկրատես. Ուրեմն այս մտեցմամբ, բարեկամս, իմացության մեր քննությունը ճիշտ է:

Թեետետոս. Այդպես է թվում:

c **Սոկրատես.** Ուրեմն ինչ, ճի՞շտ էինք՝ տառը համարելով անճանաչելի, իսկ վանկը ճանաչելի:

Թեետետոս. Հավանաբար:

Սոկրատես. Իսկ ի՞նչ կասենք՝ վանկ են համարում երկու՞ տառերը, թե՞ բոլորը, երբ դրանք երկուսից ավել են, կամ գուցե ինչ-որ մի գաղափար, որը գոյանում է դրանց համադրությունից:

Թեետետոս. Կարծում եմ, բոլորը:

Սոկրատես. Վերցնենք այս երկուսը՝ *սե*-ն և *ն*-ն: Միասին դրանք իմ անվան առաջին վանկն են: Ուրիշ ի՞նչ գիտի նա, ով գիտի այդ զույգը:

d **Թեետետոս.** Հենց այդ:

Սոկրատես. Ուրեմն նա գիտի *սե*-ն և *ն*-ն:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Եվ ինչ, ոչ մեկը չգիտի և չիմանալով երկուսն էլ գիտի՞:

Թեետետոս. Դա հրեշավոր անհեթեթություն է, Սոկրատես:

Սոկրատես. Սակայն եթե անհրաժեշտ է ճանաչել յուրա-

քանչյուրը, քանի որ պետք է ճանաչել երկուսն էլ, ապա անհրաժեշտ է ճանաչել բոլոր տառերը այնուհետև վանկը ճանաչելու համար, իսկ այդ դեպքում մեր հրաշալի տեսությունը հոգս է ցնդում:

Թեետետոս. Այն էլ շատ հանկարծակի:

e

Սուկրատես. Այո, քանզի լավ պահապաններ չեղանք դրան: Գուցե հարկավոր էր վանկ համարել ոչ թե տառերը, այլ նրանցից գոյացող որոշակի տեսքը, որն ունի իր սեփական, տառերից տարբեր գաղափարը:

Թեետետոս. Անշուշտ: Եվ դա ավելի շուտ այդպես է, քան այլ կերպ:

Սուկրատես. Ուրեմն քննենք և անարժան կերպով չդավաճանենք այդ մեծ ու նշանակալի ուսմունքը:

Թեետետոս. Իհարկե:

Սուկրատես. Եվ, ինչպես ասացինք, թող առանձին տառերի կազմությունից գոյացած գաղափարը լինի վանկ՝ ինչպես գրության, այնպես էլ մնացած բոլոր բաներում:

204

Թեետետոս. Թող:

Սուկրատես. Ահա ինչու այն չպիտի ունենա մասեր:

Թեետետոս. Այդ ինչպե՞ս:

Սուկրատես. Չէ՞ որ եթե կան մասեր, ամբողջը անհարաժեշտաբար մասերի համակցություն է: Թե՞ դու բացատրում ես մասերի ամբողջն իբրև մեկ տեսակ, որը տարբեր է բոլոր մասերից:

Թեետետոս. Ես, այո:

Սուկրատես. Իսկ ամենը և ամբողջը նու՞յնն ես համարում, թե՞ տարբեր:

b

Թեետետոս. Դա ինձ համար պարզ չէ, սակայն եթե պահանջում ես, որ խիզախորեն պատասխանեմ, կհանդգնեմ ասել, որ դրանք տարբեր են:

Սուկրատես. Խիզախությունդ տեղին է, Թեետետոս: Իսկ թե ճիշտ է արդյոք պատասխանդ, դեռ պետք է տեսնել:

Թեետետոս. Իհարկե պետք է:

Սոկրատես. Հետևաբար, համաձայն ներկայիս դատողության՝ ամբողջը տարբերվում է ամենից:

Թեետետոս. Այո:

c Սոկրատես. Իսկ կա՞ տարբերություն ամբողջի և ամենի միջև: Օրինակ, երբ մենք ասում ենք՝ «մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց» կամ «երկուսը երեք անգամ, երեքը երկու անգամ» կամ «չորս և երկուս, երեք, երկուս և մեկ»,— բոլոր այդ դեպքերում նկատի ունենք միևնու՞յնը, թե՞ տարբեր բաներ:

Թեետետոս. Միևնույնը:

Սոկրատես. Վեցից տարբե՞ր ինչ-որ բան:

Թեետետոս. Ոչ:

Սոկրատես. Ուրեմն յուրաքանչյուր արտահայտություն նշում էր վե՞ցը:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Եվ դարձյալ, մի՞թե մեկ բան նկատի չունենք, երբ խոսում ենք դրանց բոլորի մասին:

Թեետետոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Եվ արդյո՞ք վեցից տարբեր ինչ-որ բան:

Թեետետոս. Ոչ:

d Սոկրատես. Ուրեմն մեկը կարող է նույնական լինել նրան, ինչը թիվ է, և կոչում ենք դա ամեն կամ բոլորը:

Թեետետոս. Ակնհայտորեն:

Սոկրատես. Կարող ենք այսպես ասել այդ մասին. պլեթրոնը նշող թիվը և ինքը պլեթրոնը նույնն են: Թե՞ ոչ:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Ասպարեզի դեպքում և՞ս նույն բանն է:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Իսկ զորքի թվաքանակն ու ինքը զորքը և բոլոր նման դեպքե՞րը: Քանզի ամբողջ թիվը յուրաքանչյուր իրի ամբողջ էությունն է:

Թեետետոս. Այո:

e Սոկրատես. Եվ մի՞թե յուրաքանչյուր թիվ այլ բան է, քան իր մասերը:

Թեոտեոս. Ոչ:

Սոկրատես. Ուրեմն ամեն բան, որ մասեր ունի, կազմված է մասերի՞ց:

Թեոտեոս. Ակնհայտորեն:

Սոկրատես. Կարելի է համաձայնել, որ ամենը պիտի լինի մասերի ամեն, եթե ամենայն թիվը ամենն է:

Թեոտեոս. Այդպես է:

Սոկրատես. Ուրեմն ամբողջը մասերից չէ, քանզի լինելով մասերի ամենայնություն՝ կլիներ ամեն:

Թեոտեոս. Թերևս:

Սոկրատես. Իսկ մասը մի՞թե այլ բանի մաս է, եթե ոչ հենց ամբողջի:

Թեոտեոս. Ամենի մասն է:

Սոկրատես. Արիաբար ես մարտնչում, Թեոտեոս: Բայց 205 եթե ամենը ինչ-որ բան կորցներ, մի՞թե չէր լինի նույն ամենը:

Թեոտեոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Նույնը չէ՞ արդյոք ամբողջը, եթե նրանից ոչ մի տեղ ոչինչ չի պակասել: Այն, ինչին ինչ-որ բան պակասում է, ո՛չ ամեն է, ո՛չ էլ ամբողջ, քանզի սրանք գոյանում են որպես նույնական բաներ միաժամանակ և միևնույն տեղից:

Թեոտեոս. Այժմ ինձ թվում է, թե ամենը և ամբողջը ոչնչով չեն տարբերվում:

Սոկրատես. Արդ, մենք ասացինք, որ այնտեղ, ուր կան մասեր, ամբողջը և ամենը կլինեն մասերի ամենայնություն:

Թեոտեոս. Իհարկե:

Սոկրատես. Այդ դեպում վերադառնանք նրան, ինչը փորձում էի ասել քիչ առաջ: Եթե վանկը տառերը չէ, ապա տառերն անհրաժեշտաբար դրա մասերը չեն, այլապես վանկը նույնական կլիներ նրանց և ճանաչելի կլիներ նրանց չափով: b

Թեոտեոս. Այդպես է:

Սոկրատես. Չետևաբար այդ բանից խուսափելու համա՞ր եմք տարբեր համարում դրանք:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Ուրեմն ինչ, եթե տառերը վանկի մասեր չեն, կարո՞ղ ես ցույց տալ վանկի ուրիշ մասեր, որոնք չէին լինի տառեր:

Թեետետոս. Ոչ մի դեպքում, Սոկրատես: Քանզի ընդունելով, որ կան վանկի մասեր, զավեշտալի կլիներ մի կողմ նետել տառերը և գնալ ուրիշ մասերի ետևից:

c Սոկրատես. Իհարկե, Թեետետոս: Համաձայն ներկայիս փաստարկի՝ վանկը ինչ-որ մեկ, մասերից զուրկ գաղափար է:

Թեետետոս. Երևում է, այո:

Սոկրատես. Հիշու՞մ ես, բարեկամս, թե ինչպես քիչ առաջ ընդունեցինք դրույթը, ըստ որի սկզբունքները, որոնցից կազմված է մնացած ամեն բան, անբացատրելի են, որովհետև դրանցից յուրաքանչյուրն ինքնին անկազմ է, և ճիշտ չէր լինի դրա մասին ասել «գոյություն ունի» կամ ասել դրան «այս», քանի որ այդ արտահայտությունները նրանից տարբեր են և օտար են նրան: Դա է հիշյալ սկզբունքների անբացատրելիության և անճանաչելիության պատճառը:

Թեետետոս. Հիշում եմ:

d Սոկրատես. Իսկ կա՞ ուրիշ որևէ պատճառ, բացի նրանից, որ դրանք միակերպ և անբաժանելի են: Ես ուրիշ պատճառ չեմ տեսնում:

Թեետետոս. Բայց ուրիշ պատճառ կարծես թե չկա:

Սոկրատես. Այդ դեպքում չի՞ պատկանում արդյոք վանկը այն նույն տեսակին, ինչ տառը, եթե չունի մասեր և մեկ գաղափար է:

Թեետետոս. Միանգամայն:

Սոկրատես. Ուրեմն եթե վանկը տառերի բազմություն և ինչ-որ ամբողջություն է, իսկ տառերը նրա մասերն են, ապա նմանապես ճանաչելի և արտահայտելի են և՛ վանկերը, և՛ տառերը, քանի որ մասերի ամենայնությունը նույնական է ամբողջին:

e Թեետետոս. Իհարկե:

Սոկրատես. Իսկ եթե վանկը մեկ է և անբաժանելի, նմանապես անբացատրելի և անճանաչելի են նաև վանկը և տառը: Քանզի նույն պատճառն է այդպիսին դարձնում դրանք:

Թեոտեստոս. Չեմ կարող քեզ առարկել:

Սոկրատես. Հետևաբար մենք չէինք ընդունի պնդումը, ըստ որի վանկը ճանաչելի և արտահայտելի է, իսկ տառը՝ հակառակը:

Թեոտեստոս. Ոչ, եթե մեր փաստարկը համոզիչ է մեզ համար:

Սոկրատես. Իսկ չե՞ս ընդունի հակառակ պնդումը, որը 206 դու յուրացրել ես գրագիտություն ուսանելով:

Թեոտեստոս. Ի՞նչ պնդում:

Սոկրատես. Չե՞ որ ուսանելիս դու փորձել ես անել ոչ այլ բան, քան տեսողությամբ և լսողությամբ զանազանել յուրաքանչյուր տառ ինքն ըստ ինքյան, որպեսզի խոսելիս և գրելիս քեզ չչփոթեցնի դրանց դասավորությունը:

Թեոտեստոս. Շատ ճիշտ ես ասում:

Սոկրատես. Իսկ կիթառահարի մոտ կատարյալ նվագել սովորելը քեզ համար մի՞թե այլ բան է, քան յուրաքանչյուր **b** հնչյունին հետևել կարողանալը և որոշելը, թե որ լարն է արձակում այն: Եվ բոլորը կհամաձայնեն, որ հնչյունները երաժշտության տառերն են:

Թեոտեստոս. Ուրիշ ոչինչ:

Սոկրատես. Եվ եթե մենք հարկադրված լինեինք մեր իմացած տառերի և վանկերի հիման վրա դատել մյուսների մասին, ապա կասեինք, որ տառերի սեռը ավելի հստակ և ամեն կարգի ուսման մեջ ավելի հիմնավոր ճանաչողություն է տալիս, քան վանկերը: Իսկ եթե որևէ մեկն ասեր, թե վանկը ճանաչելի է, իսկ տառն ի բնե անճանաչելի, կմտածեինք, որ նա կամա թե ակամա կատակում է:

Թեոտեստոս. Իհարկե:

Սոկրատես. Ինձ թվում է, թե մենք կարող էինք բերել **c** նաև ուրիշ ապացույցներ, սակայն պետք չէ կորցնել նախնա-

կան քննության թելը՝ թե ինչ է նշանակում, որ բացատրությունը ճշմարիտ կարծիքի հետ միասին ծնում են կատարյալ իմացություն:

Թեետետոս. Դա պետք է դիտարկել:

Սոկրատես. Այդ դեպքում ասա ինձ, ի՞նչ է նշանակում բացատրությունը: Ըստ իս՝ խոսքը երեքից մեկի մասին է:

Թեետետոս. Ո՞ր երեքից:

- d** **Սոկրատես.** Առաջինը հետևյալն է. պարզաբանել սեփական միտքը խոսքի միջոցով՝ դիմելով բայերին ու անուններին և ասես ջրի կամ հայելու մեջ արտացոլելով կարծիքը բերանից ելնող հոսանքի մեջ: Քեզ չի՞ թվում, որ բացատրությունը նման մի բան է:

Թեետետոս. Թվում է: Ամեն դեպքում այդպես անողի մասին մենք ասում ենք, որ նա բացատրում է:

Սոկրատես. Հետևաբար ամեն ոք դա կարող է անել ավելի արագ կամ ավելի դանդաղ, կարող է ցույց տալ, թե ինչ է մտածում յուրաքանչյուր իրի մասին, եթե ի ծնե խուլ կամ համր չէ: Այսպիսով, բոլոր նրանք, ովքեր ճիշտ կարծիք ունեն, դրսևորում են դա բացատրությամբ, և ոչ ոքի ճիշտ կարծիքը չի գոյանում առանց իմացության:

Թեետետոս. ճշմարիտ է:

- 207** **Սոկրատես.** Այդ դեպքում թեթևամտորեն չմեղադրենք նրան, ով ներկայացրեց իմացությունն այնպիսին, ինչպիսին որ հիմա դիտարկում ենք, իբրև թե նա ոչինչ չի ասել: Քանզի նա գուցե նկատի է ունեցել ոչ թե սա, այլ այն, որ յուրաքանչյուր իրի մասին հարցնողին կարելի է պատասխանել դիմելով նախատարրերին:

Թեետետոս. Օրինակ ինչպե՞ս, Սոկրատես:

Սոկրատես. Օրինակ, Հեսիոդոսը խոսելով սայլի մասին՝ ասում է, որ «սայլը հարյուր փայտյա մասերից է»⁴⁷: Ես չեմ կարող թվել դրանք, կարծում եմ, դու նույնպես: Սակայն բավական կլիներ, եթե «ինչ է սայլը» հարցին մենք կարողանալինք թվել՝ անիվները, սռնակները, թափքը, բռնակները և լուծը:

Թեոտեոս. Իհարկե:

Սոկրատես. Իսկ գուցե նա զավեշտական համարեր մեզ, եթե քո անվանը վերաբերող հարցին պատասխանեինք վանկարկելով այն, և ունենալով ճիշտ կարծիք և արտասանություն՝ համարեինք մեզ քերականներ, որոնք ունեն Թեոտեոս անվան քերականական բացատրությունը: Չէ՞ որ հնարավոր չէ գիտուն կերպով խոսել մի բանի մասին, քանի դեռ չես սահմանել յուրաքանչյուր իրը նախատարրերի միջոցով համաձայն ճշմարիտ կարծիքի, ինչպես արդեն ասվեց քիչ առաջ:

Թեոտեոս. Այո, ասվեց:

Սոկրատես. Այսպես, սայլի մասին ևս ունենք ճիշտ կարծիք, իսկ նա, ով կարող է հասու լինել դրա էությանը հարյուր մասերի միջոցով, ավելացնելով այդ կարողությունը, ավելացնում է ճշմարիտ կարծիքին նաև բացատրությունը և կարծիք ունեցողի փոխարեն դառնում է սայլի իմացության հմուտ գիտակ՝ սահմանելով ամբողջը տարրերի միջոցով:

Թեոտեոս. Եվ դա քեզ թվում է ճի՞շտ, Սոկրատես:

Սոկրատես. Եթե քեզ, բարեկամս, այդպես է թվում և եթե ընդունում ես, որ տարրերի միջոցով յուրաքանչյուր իրի նկարագրությունը բացատրություն է, իսկ նկարագրությունն ըստ վանկերի կամ ավելի մեծ մասերի՝ անհեթեթություն, ապա հաստատիր դա, որպեսզի շարունակենք քննությունը:

Թեոտեոս. Ես միանգամայն ընդունում եմ դա:

Սոկրատես. Համարու՞մ ես արդյոք ինչ-որ բանի գիտակ մեկին, ում միևնույն բանը թվում է մերթ այսպիսին, մերթ այնպիսին և ով միևնույն բանի մասին կարծում է մերթ այսպես, մերթ այնպես:

Թեոտեոս. Ոչ, Ձևսը վկա:

Սոկրատես. Իսկ հիշու՞մ ես արդյոք, թե ինչից է սկսվել քո կամ մեկ ուրիշի համար գրաճանաչությունը:

Թեոտեոս. Նկատի ունես այն, որ մենք միևնույն վանկին հարաբերում ենք մերթ այս, մերթ այն տառը, կամ միևնույն տառը դնում ենք մերթ այս, մերթ այն վանկու՞մ:

Սոկրատես. Գեներ դա:

Թեետետոս. Ձևսը վկա, ես չեմ մոռացել դա և այդպես վարվողներին գիտակներ չեմ համարում:

208 Սոկրատես. Ուրեմն ի՞նչ: Եթե այդ ժամանակ որևէ մեկը, ցանկանալով գրել «Թեետետոս», մտածի, որ հարկ է գրել *Թո* և *եչ*, և գրի այդպես, իսկ այնուհետև, ցանկանալով գրել «Թեոդորոս», գրի *Տյուն* և *եչ*, համարելով, որ այդպես պետք է գրի, կասե՞նք արդյոք, որ նա գիտի մեր անունների առաջին վանկերը:

Թեետետոս. Սակայն մենք հենց նոր համաձայնեցինք, որ այդպես վարվողը չունի իմացություն:

Սոկրատես. Իսկ ի՞նչն է խանգարում նրան նույն իմացությունն ունենալ նաև երկրորդ, երրորդ և չորրորդ վանկի մասին:

Թեետետոս. Ոչինչ:

Սոկրատես. Ուրեմն այնժամ, երբ նա գրում է «Թեետետոս» անվան տառերը հերթականությամբ, ունի ճիշտ կարծիք և նկարագրություն տառերի միջոցով:

Թեետետոս. Ակներևաբար:

b Սոկրատես. Ուրեմն դեռ չլինելով գիտակ՝ նա ունի ճիշտ կարծիք, ինչպես ասացինք:

Թեետետոս. Այո:

Սոկրատես. Եվ ճիշտ կարծիքի հետ միասին նա ունի բացատրություն, քանզի նա գրի առավ տառացի, իսկ մենք համաձայնեցինք, որ այդ եղանակը բացատրություն է:

Թեետետոս. Ճշմարիտ է:

Սոկրատես. Այդ դեպքում, բարեկամս, լինում է ճիշտ կարծիք բացատրության հետ միասին, որը չի կարելի կոչել իմացություն:

Թեետետոս. Թերևս:

c Սոկրատես. Մտածելով, թե ունենք իմացության ամենաճշմարիտ բացատրությունը՝ մենք կարծես հարստացանք մի նոր երազով: Բայց գուցե այս մեղադրանքը վաղաժամ է:

Գուցե պետք է սահմանել իմացությունը ոչ թե այսպես, այլ երրորդ եղանակով, որն, ինչպես ասացինք, հաստատում է նա, ով սահմանում է իմացությունը որպես բացատրությամբ ուղեկցվող ճիշտ կարծիք:

Թեոտեոս. Լավ հիշեցրիր: Մի եղանակ դեռ մնացել է: Առաջինը մտքի պատկերն էր ձայնի մեջ, երկրորդը հենց նոր քննված անցումն է տարրերից դեպի ամբողջը: Իսկ ո՞րն է երրորդը, ի՞նչ կասես:

Սուկրատես. Կասեն այն, ինչ կասեին շատերը. պետք է ունենալ նշան, որով խնդրո առարկան կտարբերվեր մյուս բոլոր բաներից:

Թեոտեոս. Կարո՞ղ ես բերել որևէ օրինակ:

Սուկրատես. Օրինակ, եթե ցանկանում ես, Արեգակի մասին, կարծում եմ, բավական կլինի նշել, որ ամենապայծառն է այն ամենից, ինչ պտտվում է երկրի շուրջը:

Թեոտեոս. Իհարկե:

Սուկրատես. Փորձիր հասկանալ, թե ինչու եմ ասում սա: Հենց նոր մենք խոսում էինք այն մասին, որ առանձին իրի տարբերակիչ հատկանիշը,– այն, ինչով վերջինս տարբերվում է մյուս իրերից,– ըմբռնելու դեպքում ոմանց ասելով կարելի է գտնել այդ իրի բացատրությունը: Բայց քանի դեռ գործ ունես ընդհանուրի հետ, ի վիճակի կլինես բացատրել միայն իրերի միջև առկա ընդհանուրը:

Թեոտեոս. Հասկանում եմ: Եվ ինձ թվում է, թե հրաշալի կլիներ դա բացատրություն կոչել:

Սուկրատես. Նա, ով ճիշտ կարծիքին հավելում է իրի տարբերակիչ հատկանիշը, դառնում է գիտակը մի բանի, որի մասին մինչ այդ ուներ միայն կարծիք:

Թեոտեոս. Այդպես էլ կասենք:

Սուկրատես. Եվ այժմ, Թեոտեոս, երբ մոտեցել եմ պնդմանս, ինչպես մի նկարի, բոլորովին չեմ հասկանում այն: Մինչդեռ երբ հեռու էի, ինձ թվում էր, թե կարող եմ դատողություն անել դրա վերաբերյալ:

Թեոտետոս. Ինչու՞ է այդպես:

209 Սուկրատես. Կասեմ, եթե կարողանամ: Քո մասին ճիշտ կարծիք ունենալու դեպքում և հավելելով դրան նաև որոշակի բացատրություն, ես ճանաչում եմ քեզ, իսկ եթե ոչ, ապա միայն կարծիք եմ կազմում:

Թեոտետոս. Այո:

Սուկրատես. Իսկ բացատրությունը քո տարբերակիչ հատկանիշի մեկնությունն է:

Թեոտետոս. Այդպես է:

Սուկրատես. Քանի դեռ ես միայն կարծիք ունեի, մտովի ոչինչ չէի ըմբռնում նրանից, ինչով դու տարբերվում ես ուրիշներից:

Թեոտետոս. Կարծես թե ոչ:

Սուկրատես. Ուրեմն ես մտածել եմ ընդհանուր ինչ-որ բան, որին ուրիշները տիրում են քեզնից ոչ պակաս չափով:

b Թեոտետոս. Անհրաժեշտաբար:

Սուկրատես. Այդ դեպքում ասա՛ հանուն Ջեսի, ինչպե՞ս կարող էի ես քո մասին առավել [ճիշտ] կարծիք ունենալ, քան ուրիշ ինչ-որ մեկի: Դիցուք, ես մտածեցի, որ գոյություն ունի այս Թեոտետոսը՝ մարդ, որն ունի քիթ, աչքեր, բերան և այլն: Մի՞թե հիշյալ միտքը կարող է ստիպել ինձ մտածել ավելի շուտ Թեոտետոսին, քան Թեոդորոսին, կամ, ինչպես առածն է ասում, մյուսիացիներից վերջինին⁴⁶:

Թեոտետոս. Ուրեմն ի՞նչ:

c Սուկրատես. Եթե ես մտածում եմ մեկին, ով ոչ միայն քիթ և աչքեր ունի, այլև կճատ քիթ և դուրս պրծած աչքեր, ավելի շուտ քո՞ մասին եմ կարծիք կազմում, թե՞ ինքս իմ և ինձ նման ուրիշների:

Թեոտետոս. Ոչ:

Սուկրատես. Եվ ինձ թվում է, թե կարծիք կկազմեն Թեոտետոսի մասին ոչ ավելի վաղ, քան երբ քո կճատությունը կդրոշմի հիշողությանս մեջ մյուս բոլոր տեսած կճատությունների հետ ունեցած իր տարբերությունը: Նույնը վերաբերում

է նաև քո մյուս հատկանիշներին: Եթե ես վաղը հանդիպեմ քեզ, այդ տարբերությունը կհիշեցնի քեզ և կծնավորի իմ մեջ ճիշտ կարծիք քո մասին:

Թեոտեստոս. Շատ ճիշտ է:

Սուկրատես. Ուրեմն ճիշտ կարծիքը յուրաքանչյուր իրի մասին առնչվում է տարբերակիչ հատկանիշին: d

Թեոտեստոս. Ակնհայտորեն:

Սուկրատես. Ի՞նչ է նշանակում ճիշտ կարծիքին բացատրության հավելումը: Չէ՞ որ միանգամայն զավեշտական է խրատը, ըստ որի պետք է հավելյալ կարծիք կազմել այն մասին, թե ինչով է մի բանը տարբերվում մյուսներից:

Թեոտեստոս. Ինչու՞:

Սուկրատես. Որովհետև այն պատվիրում է մեզ ճիշտ կարծիք կազմել, թե ինչով են որոշ իրեր տարբերվում մյուսներից այն ժամանակ, երբ մենք ճիշտ կարծիք ունենք այն մասին, թե ինչպես են դրանք տարբերվում մյուսներից: Եվ որքան էլ այսպես ջուր ծեծենք, դա ոչինչ չի տա այդ խրատի համար, որն ավելի արդարացի կլիներ կոչել կույրի հրաման: Քանզի խրատել հավելել այն, ինչը մենք արդեն ունենք՝ հասկանալու համար այն, ինչի մասին կարծիք ենք կազմել, իսկական կուրություն է: e

Թեոտեստոս. Այդ դեպքում ասա, ի՞նչ նպատակ ունեին քիչ առաջ տվածդ հարցերը:

Սուկրատես. Եթե բացատրության հավելումը նշանակեր իմանալ, այլ ոչ թե կարծիք ունենալ տարբերակիչ հատկանիշի մասին, դա կլիներ իմացության ամենահրաշալի սահմանումը: Չէ՞ որ իմանալ նշանակում է իմացություն ստանալ: 210 Այդպես չէ՞:

Թեոտեստոս. Այո:

Սուկրատես. Ուրեմն ի՞նչ է իմացությունը հարցին կարելի է պատասխանել, որ դա ճիշտ կարծիք է՝ ուղեկցվող տարբերակիչ հատկանիշի իմացությամբ: Չէ՞ որ բացատրության հավելումը հենց դա էր:

Թեեւտտոս. Թերևս:

Սոկրատես. Եվ ի՞նչ միամիտ կլինեինք, եթե քննելով իմացությունը, ասեինք, իբր դա ճիշտ կարծիք է՝ ուղեկցված կա՛ն տարբերակիչ հատկանիշի, կա՛ն մեկ ուրիշ բանի իմացությամբ: Այնպես որ, Թեեւտտոս, ո՛չ զգայությունը, ո՛չ ճշմարիտ կարծիքը, ո՛չ էլ ճիշտ կարծիքով ուղեկցվող բացատրությունը իմացություն չեն:

b

Թեեւտտոս. Թվում է՝ ոչ:

Սոկրատես. Եվ մենք դեռ հղի՞ ենք իմացությամբ, բարեկամս, և դեռ տանջվու՞մ ենք նրանից, թե՞ արդեն լույս աշխարհի բերեցինք այն:

Թեեւտտոս. Այո, Ջեսը վկա, և քո օգնությամբ ես ասացի ավելին, քան կրում էի իմ մեջ:

Սոկրատես. Եվ այդ ամենը տատմոր մեր արվեստը համարում է սին և մշակման ոչ արժանի՞:

Թեեւտտոս. Այո, ամենը:

Սոկրատես. Եթե այսուհետ դու պատրաստվես լույս աշխարհի բերել ուրիշ պտուղ, ո՛վ Թեեւտտոս, և դա պատահի, ներկայիս վարժանքից հետո քո պտուղները կլինեն առավել լավը: Իսկ եթե մնաս դատարկ, ավելի մեծ բեռ չես լինի մերձավորներիդ համար, կլինես ավելի համեստ ու խոհեմ և չես համարի, թե գիտես այն, ինչ չգիտես: Իմ արվեստն ի գորու է անել միայն սա, ոչինչ ավելի, և ես ոչինչ չգիտեմ նրանից, ինչ գիտեմ մեծ և զարմանալի այրերը՝ թե՛ նրանք, որոնք կան, թե՛ նրանք, որ եղել են: Իսկ տատմոր արվեստը ես և մայրս ստացել ենք աստծուց. մայրս՝ կանանց համար, իսկ ես՝ ազնիվ պատանիների, նրանց, ովքեր գեղեցիկ են:

c

d

Իսկ հիմա ես պիտի գնամ թագավորական սրահ և պատասխան տամ Մելետոսի ներկայացրած ամբաստանագրին⁴⁹: Սակայն վաղը, Թեոդորոս, մենք կրկին կհանդիպենք այստեղ:



ՍՈՓԵՍ

ԹԵՌՈՂՈՐՈՍ. Համաձայն երեկվա պայմանավորվածության¹, Սոկրատես, մենք, ինչպես և հարկ էր, եկել ենք ինքներս և բերել մեզ հետ մի օտարականի՝ ծնունդով Էլեայից. նա Պարմենիդեսի և Ջենոնի հետևորդների բարեկամն է, իսկական փիլիսոփա:

Սոկրատես. Իսկ գուցե, Թեոդորոս, դու չիմանալով բերել ես ոչ թե օտարականի, այլ, ինչպես Հոմերոսն է ասում, ոմն աստժո՞²: Այսպես, նա պատմում է, որ աստվածները, և **b**
 հատկապես օտարականների աստվածը, հաճախ են ուղեկից դառնում արդար խիղճ ունեցողներին և հետևում են մարդկանց անօրեննությանն ու բարեպաշտությանը: Գուցե քեզ էլ է ընկերակցում ամենազորներից մեկը, ոմն մերկացնող աստված, որը պիտի հետևի և բացահայտի մեզ:

ԹԵՌՈՂՈՐՈՍ. Ոչ, այս օտարականն այդպիսին չէ, Սոկրատես, նա համեստ է նրանցից, որ անվերջ վիճում են: Եվ ինձ թվում է, նա ոչ թե աստված է, այլ աստվածային մարդ, քան- **c**
 զի բոլոր փիլիսոփաներին ես այդպես եմ կոչում:

Սոկրատես. Հրաշալի է, բարեկամս: Ամեն դեպքում կողմնորոշվել նշածդ սեռի հարցում ավելի հեշտ չէ, քան աստվածների սեռի: Քանզի այդ մարդիկ շրջում են քաղաքներով և այլոց տգիտության պայմաններում մշտապես աչքի են ընկնում³: Լինելով ոչ թե կեղծ, այլ իսկական փիլիսոփաներ և բարձրից դիտելով ցածում ընթացող կյանքը, ոմանց

թվում են չնչին, իսկ ոմանց՝ բազում արժանիքներով օժտված:

- d Նրանք ներկայանում են մերթ որպես քաղաքական գործիչներ, մերթ որպես սովետսուներ, իսկ ոմանք նույնիսկ մուլագարներ են համարում նրանց: Սակայն եթե մեր հյուրը դեմ չէ, ես հաճույքով հարցուփորձ կանեի նրան, թե ինչպես են վերաբերվում նման բաներին նրա երկրում և ինչպես են կոչում:

Թեոդորոս. Վերաբերվում ինչի՞ն:

Սոկրատես. Սովետսուին, քաղաքական գործչին, փիլիսոփային՝:

Թեոդորոս. Ի՞նչն է, որ ամենից շատ է հուզում քեզ, և ի՞նչի մասին ես ուզում հարցնել նրան:

Սոկրատես. Ահա թե ինչը: Արդյո՞ք նրանք համարում են այս ամենը մեկ բան, թե՞ երկու [տարբեր բաներ], կամ գուցե տարբերակելով դրանք, ինչպես որ երեք անուններն են հուշում, ըստ երեք սեռերի՝ յուրաքանչյուր անվանը հատկացնում են մե՞կ սեռ:

Թեոդորոս. Ես կարծում եմ, որ նա չի մերժի այդ առաջարկը: Ի՞նչ կասես, ո՛վ օտարական:

- b **Օտարական.** Այդպես է, Թեոդորոս, առարկություն չունեմ, և ոչ էլ պատասխանն է դժվարություն հարուցում. նրանք ընդունում են երեք սեռ: Սակայն դրանցից յուրաքանչյուրին հստակ սահմանում տալը փոքր ու դյուրին գործ չէ:

Թեոդորոս. Ի դեպ, Սոկրատես, քո հարցը շատ մոտ է այն հարցերին, որ տալիս էինք նրան նախքան այստեղ գալը: Իսկ օտարականը պատասխանում էր այնպես, ինչպես հիմա քեզ: Նա ասում է, որ բավականաչափ լսել է այդ մասին և հիշում է լսածը:

- c **Սոկրատես.** Այդ դեպքում, օտարական, մի՛ մերժիր մեր առաջին խնդրանքը, որով դիմում ենք քեզ: Ինչպե՞ս ես սովորաբար քննում ներկայացնելիքդ՝ երկար ճառի տեսքով, թե՞ հարցերի միջոցով: Օրինակ, Պարմենիդեսը իր հրաշալի ճառերում օգտվում էր երկրորդ եղանակից: Այն ժամանակ ես դեռ երիտասարդ էի, իսկ նա՝ արդեն շատ ծեր:

Օտարական. Հաշտ ու խաղաղ գրուցողի հետ, Սոկրատես, առավել հեշտ է խոսել հարց ու պատասխանի ձևով: **d**
Հակառակ դեպքում ստիպված ես խոսել ինքդ:

Սոկրատես. Դու կարող ես ներկաներից գրուցակից ընտրել, ում որ ցանկանաս, քանզի բոլորը սիրով կլսեն քեզ: Սակայն եթե հետևես խորհրդիս, կընտրես երիտասարդներից մեկին, այս թե՛ստետոսին կամ մեկ ուրիշին, ով սրտովդ է:

Օտարական. Լինելով ձեզ հետ առաջին անգամ, Սոկրատես, ես անաչում եմ գրույցը վարել ոչ թե աստիճանաբար, բառը բառի ետևից, այլ կառուցելով երկար ու ձիգ ճառ և դիմելով ինքս ինձ կամ ուրիշին միայն ձևի համար: Չէ՞ որ **e**
իրականում այն, ինչի մասին հիմա խոսվեց, հակառակ սպասման նույնքան պարզ չէ, որքան դրա մասին հարցը, և երկար քննության կարիք ունի: Բացի այդ, մերժել քեզ և այս մարդկանց, մանավանդ նրանից հետո, ինչ ասացիր, ինձ թվում է անբաղաճավարի ու բռի: Ես լիովին համաձայն եմ, որ իմ գրուցակիցը լինի թե՛ստետոսը. դրա համար հիմք են ծառայում ինչպես նրա հետ ունեցած իմ նախկին գրույցները, այնպես էլ քիչ առաջ տվածդ խորհուրդը: **218**

Թե՛ստետոս. Բայց, ո՛վ օտարական, կբավարարե՞ս արդյոք դրանով բոլորին, ինչպես ասաց Սոկրատեսը:

Օտարական. Դրա մասին խոսելն արդեն ավելորդ է, թե՛ստետոս: Ինչպես երևում է, այսուհետ իմ խոսքը պիտի ուղղված լինի քեզ: Իսկ եթե գրույցը քեզ ծանր թվա, մեղադրիր ոչ թե ինձ, այլ այս բարեկամներիդ:

Թե՛ստետոս. Այս պահին ես կարծում եմ, որ չեմ հոգնի, **b**
սակայն եթե դա պատահի, մենք կներգրավենք այս Սոկրատեսին՝ Սոկրատեսի անվանակցին, իմ տարեկցին, որն ընկերակցում է ինձ գիմնասիոնում և սովոր է տքնել ինձ հետ միասին⁵:

Օտարական. Լավ ասացիր: Այդ մասին դու կմտորես քննարկման ընթացքում, իսկ ինձ հետ դու, կարծում եմ, պիտի սկսես հետազոտությունը սովիեստից՝ պարզելու և բացատ-

- րելու համար, թե ինչ է նա իրենից ներկայացնում: Չէ՞ որ
- c հիմա մենք համամիտ ենք միայն նրա անվան հարցում: Բայց այն, ինչ կոչում ենք այդ անունով, մեզնից յուրաքանչյուրը հավանաբար հասկանում է յուրովի: Մինչդեռ միշտ ավելի շուտ պետք է բացատրության միջոցով համաձայնության գալ իրի շուրջ, քան համաձայնության գալ անվան շուրջ առանց բացատրության: Ամեն դեպքում հետազոտել այժմյան խնդրո առարկան, այսինքն այն, թե ինչ է սոփեստը, այնքան էլ դյուրին գործ չէ: Եվ քանի որ մեծ գործերը պիտի լավ կատարվեն, հնում բոլորը համամիտ էին, որ նախքան մեծ գործերին
- d անցնելը պետք է վարժվել աննշան ու թեթև բաներում: Այնպես որ հիմա, Թենտետոս, քանի որ դժվարահաս համարեցինք սոփեստի սեռը, ես խորհուրդ եմ տալիս նաև մեզ վարժվել մեկ այլ՝ առավել հեշտ բանի հետազոտության եղանակի մեջ, եթե իհարկե չնշես ուրիշ ավելի հարմար ճանապարհ:

Թենտետոս. Ոչ, ինձ հայտնի չէ այդպիսին:

Օտարական. Այդ դեպքում չփորձե՞նք արդյոք, հետևելով աննշան մի բանի, այն նմուշ դարձնել առավել մեծի համար:

- e Թենտետոս. Այո:

Օտարական. Ի՞նչ առաջարկենք, որ լինի քաջ հայտնի և աննշան, բայց չլինի մեծից պակաս բացատրելի: Օրինակ, ձկնորսը. մի՞թե նա բոլորին հայտնի և աննշան ինչ-որ բան չէ՞:

Թենտետոս. Այդպես է:

- 219 Օտարական. Բայց ես նրանից եմ ակնկալում ստանալ մեր ուզածին հասնելու եղանակը և դրա ոչ անօգուտ բացատրությունը:

Թենտետոս. Դա լավ կլիներ:

Օտարական. Այդ դեպքում սկսենք այսպես. ասա՛ ինձ, համարենք իր արվեստի գիտա՞կ, թե՞ անարվեստ նրան, ով ունի ուրիշ ինչ-որ ունակություն:

Թենտետոս. Բնավ ոչ անարվեստ մեկը:

Օտարական. Սակայն բոլոր արվեստները երկու տեսակ են:

Թեւտետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Հողագործությունը և մահկանացու մարմնի ամեն խնամք, նաև այն, ինչ վերաբերում է բաղադրյալին ու կազմվածին, որ անվանում ենք սպասք, ինչպես նաև նմանակող արվեստները,— բոլորն էլ կարելի է կոչել մեկ անունով:

b

Թեւտետոս. Ինչպե՞ս, այդ ի՞նչ անուն է:

Օտարական. Երբ ոմն կյանքի է կոչում մի բան, որը մինչ այդ գոյություն չուներ, մենք ասում ենք, որ նա ստեղծում է, իսկ կյանքի կոչվածի մասին ասում ենք, որ այն ստեղծվում է:

Թեւտետոս. ճիշտ է:

Օտարական. Բայց մեր դիտարկած արվեստների ուժը հենց ստեղծագործության մեջ էր:

Թեւտետոս. Այո:

Օտարական. Այդ բոլորը միասին մենք կանվանենք ստեղծագործ արվեստ:

Թեւտետոս. Այդպես է:

c

Օտարական. Իսկ սրան հետևում է գիտությունների և իմացությունների մի ամբողջ շարք, այդ թվում նաև առևտրականի, ըմբիշի և որսորդի արվեստները, քանի որ սրանք ոչինչ չեն ստեղծում, այլ խոսքով ու գործով իրենց են ենթարկում այն, ինչ գոյություն ունի կամ գոյանում է, իսկ մասամբ էլ խանգարում են անել դա ուրիշներին: Ամենից հարմար կլիներ բոլոր այս տեսակներն անվանել ձեռքբերման արվեստ:

Թեւտետոս. Այո, հարմար կլիներ:

Օտարական. Իսկ եթե բոլոր արվեստները բաժանվում են ձեռքբերման և ստեղծագործ արվեստների, դրանցից որո՞նց դասենք ձկնորսությունը:

d

Թեւտետոս. Ակնհայտ է, որ ձեռքբերման արվեստներին:

Օտարական. Բայց մի՞թե այդ արվեստը երկու տեսակ

չէ: Մեկը կամավոր փոխանակություն է ընծաների, վարձակալության և վաճառքի միջոցով, իսկ մյուսը գործով և խոսքով ամեն բան իրեն ենթարկելն է, և այդ դեպքում չի՞ լինի արդյոք այդ տեսակը ենթարկման արվեստ:

Թեետետոս. Այդպես է երևում ասվածից:

Օտարական. Ուրեմն ի՞նչ, չբաժանե՞նք երկու մասի ձեռքբերման արվեստը:

Թեետետոս. Ինչպե՞ս:

e Օտարական. Դասելով դրա ողջ հայտնի մասը ըմբշամարտին, իսկ գաղտնի մասը՝ որսորդությանը:

Թեետետոս. Այո:

Օտարական. Սակայն անհեթեթ կլիներ երկու մասի չբաժանել որսորդությունը:

Թեետետոս. Ասա, ինչպե՞ս:

Օտարական. Մի մասը կլինի շնչավորի որս, իսկ մյուսը՝ անշունչի:

Թեետետոս. Եթե, իհարկե, երկուսն էլ գոյություն ունեն:

220 Օտարական. Ինչպես թե չունեն: Անշունչ իրերի որսը, որը չունի անվանում, բացառությամբ ջրասուզակության որոշ տեսակների և ուրիշ արվեստների, մենք մի կողմ կթողնենք, իսկ շնչավոր կենդանիների որսը մենք կանվանենք կենդանիների որս:

Թեետետոս. Թող այդպես լինի:

Օտարական. Սակայն ճիշտ կլինի ասել, որ կենդանիների որսը երկու տեսակի է: Ցամաքային կենդանիների որսը, որոնք բաժանվում են բազում տեսակների և անվանումների, ճիշտ կլինի կոչել ցամաքային կենդանիների որս, իսկ լողացող կենդանիների որսը՝ ջրային կենդանիների որս:

Թեետետոս. Իհարկե:

b Օտարական. Չէ՞ որ մենք տեսնում ենք, որ լողացող կենդանիների մի դասը թևավոր է, իսկ մյուսը բնակվում է ջրում:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Սովետստ

Օտարական. Եվ թևավորների ամեն տեսակ որսին մենք ասում ենք թռչնորսություն:

Թեևտետոս. Այո, ասում ենք:

Օտարական. Իսկ ջրում բնակվողների որսը հիմնականում կոչվում է ձկնորսություն:

Թեևտետոս. Այո:

Օտարական. Եվ ի՞նչ: Կարո՞ղ եմ արդյոք բաժանել այդ որսը երկու մեծ մասերի:

Թեևտետոս. Ի՞նչ մասերի:

Օտարական. Մեկի դեպքում որսն արվում է տեղից՝ ուռկանով, իսկ մյուսում՝ հարվածի միջոցով:

Թեևտետոս. Ի՞նչ նկատի ունես, այդ ինչպե՞ս ես տարբերակում դրանք:

Օտարական. Մեկը՝ հաշվի առնելով, որ այն արգելափակում է, հարկ է կոչել ուռկանում: c

Թեևտետոս. Իհարկե:

Օտարական. Իսկ զամբյուղները, ցանցերը, թակարդներն ու որոգայթները ուրիշ ինչպե՞ս կոչենք, եթե ոչ ուռկաններ:

Թեևտետոս. Հենց այդպես:

Օտարական. Ուրեմն որսի այս տեսակը կոչենք ուռկանում, կամ նման մի բան:

Թեևտետոս. Այո:

Օտարական. Իսկ մյուս տեսակը, որ արվում է կեռերի ու եռաժանիների հարվածներով, մեկ բառով պիտի կոչենք հարվածում: Կամ գուցե կա՞ մեկը, ով ավելի գեղեցիկ անուն կտա դրան, Թեևտետոս: d

Թեևտետոս. Թողնենք անունը: Չէ՞ որ այս մեկն էլ բավարար է:

Օտարական. Հարվածող որսի այն տեսակը, որ արվում է գիշերով, կրակի լույսի տակ, հենց իրենք որսորդները կոչում են հրե որս:

Թեևտետոս. Ճշմարիտ է:

Օտարական. Իսկ ողջ ցերեկային որսը, որ արվում է կեռերով ու եռաժանիներով, կոչվում է կեռաորս:

e Թեետետոս. Այո, այդպես է կոչվում:

Օտարական. Եվ կեռաորսի մի տեսակը, որի դեպքում հարվածն ուղղված է վերևից ներքև (քանի որ այն իրականացվում է եռաժանիով), կարծում եմ, կոչվում է եռաժանիաորս:

Թեետետոս. Այո, ոմանք այդպես են կոչում:

Օտարական. Սակայն դեռ մնում է այսպես ասած միակ տեսակը:

Թեետետոս. Ի՞նչ տեսակ:

221 Օտարական. Երբ հարվածը հասցվում է հակառակ ուղղությամբ և կեռի միջոցով, ընդ որում ուղղված է ոչ թե ուր պատահի, այսինքն՝ մարմնի ցանկացած մասին, ինչպես եռաժանու դեպքում, այլ ձկան գլխին և բերանին, որից հետո նրան հակառակ ուղղությամբ ձգում են վեր ճյուղերի և կարթածողերի օգնությամբ: Ի՞նչ անունով պիտի կոչենք սա, Թեետետոս:

Թեետետոս. Ես կարծում եմ, որ մենք գտանք այն, ինչը ցանկանում էինք:

b Օտարական. Հետևաբար հիմա մենք քեզ հետ ոչ միայն համաձայնեցինք ձկնորսության անվան հարցում, այլև ստացանք խնդրի բացատրությունը: Բոլոր արվեստների կեսը կազմում է ձեռքբերման արվեստը, ձեռքբերման արվեստի կեսը՝ ենթարկելու արվեստը, երնթարկելու արվեստի կեսը՝ որսի արվեստը, որսի արվեստի կեսը՝ կենդանիների որսը, կենդանիների որսի կեսը՝ ջրում բնակվողների որսը, ջրի ստորին հատվածում որսը՝ ողջ ձկնորսությունը, ձկնորսության կեսը՝ հարվածող որսը, հարվածող որսի կեսը՝ կեռաորսը, իսկ սրա c կեսը՝ որսը, որի դեպքում հարվածն ուղղված է ներքևից դեպի վեր: Այդ գործողությունը կոչվում է կարթում, և մեր փնտրածը հենց դա էր:

Թեետետոս. Ամեն դեպքում դա բավական պարզ է:

Սուփեստ

Օտարական. Իսկ չփորձե՞նք արդյոք նույն օրինակով պարզել, թե ինչ է սուփեստը:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Առաջին հարցը, որ մենք տվեցինք, հետևյալն էր, պե՞տք է արդյոք ձկնորսին համարել սովորական մարդ, թե՞ նա մեկն է, ով տիրապետում է որոշակի արվեստի:

Թեետետոս. Այո:

Օտարական. Իսկ հիմա, Թեետետոս, վերցնենք սուփեստին: Արդյո՞ք նա սովորական մարդ է, թե բոլոր առումներով իսկական իմաստուն է? d

Թեետետոս. Իհարկե ոչ սովորական: Քանզի ես հասկանում եմ, թե ինչ նկատի ունես. նա ով կրում է այդ անունը, համենայն դեպս պետք է լինի այդպիսին:

Օտարական. Ուրեմն մենք պիտի ընդունենք, որ նա տիրապետում է որոշակի արվեստի:

Թեետետոս. Ի՞նչ արվեստի:

Օտարական. Հանուն աստվածների, մի՞թե մենք չգիտենք, որ այդ այրերը ցեղակից են միմյանց:

Թեետետոս. Ո՞վ ում:

Օտարական. Ձկնորսը սուփեստին:

Թեետետոս. Այդ ինչպե՞ս:

Օտարական. Նրանք երկուսն էլ ինձ որսորդներ են թվում:

Թեետետոս. Բայց ի՞նչ որս է անում երկրորդը: Առաջինի մասին մենք արդեն խոսեցինք: e

Օտարական. Քիչ առաջ մենք բաժանեցինք ամբողջ որսը երկու մասի՝ ջրային և ցամաքային:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ մենք դիտարկեցինք այն մասը, որն առնչվում է ջրաբնակներին: Իսկ ցամաքային մասը մենք թողեցինք առանց ստորաբաժանումների՝ ասելով, որ այն բազմազան է:

222 Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Հետևաբար մինչև այս պահը սովեստն ու ձկնորսը երկուսն էլ գործ ունեն ձեռքբերման արվեստի հետ:

Թեետետոս. Կարծես թե այդպես է:

Օտարական. Սակայն կենդանի արարածների որսի հարցում նրանք տարբերվում են: Նրանցից մեկը որս է անում ծովում, գետերում և լճերում:

Թեետետոս. Այո:

Օտարական. Իսկ մյուսը որս է անում ցամաքում և գանազան գետերում, հարստության ու երիտասարդության առատ հովիտներում և իրեն է ենթարկում այնտեղի արարածների:

b Թեետետոս. Ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Ցամաքային որսն ունի երկու գլխավոր մաս:

Թեետետոս. Որո՞նք են դրանք:

Օտարական. Ձեռնասուն կենդանիների որս և վայրի կենդանիների որս:

Թեետետոս. Մի՞թե գոյություն ունի ձեռնասուն կենդանիների որս:

Օտարական. Այո, եթե մարդը ձեռնասուն կենդանի է: Ընդունիր երկուսից մեկը. կա՛ն ձեռնասուն կենդանիներ գոյություն չունեն, կա՛ն գոյություն ունի մեկ ուրիշ ձեռնասուն կենդանի, իսկ մարդը վայրի կենդանի է, կամ էլ դու կարող ես ասել, որ մարդը ձեռնասուն կենդանի է, բայց դու չես ընդունում, որ գոյություն ունի մարդորսություն: Սահմանիր, ինչպես կուզես:

c Թեետետոս. Իմ կարծիքով, օտարական, մենք ձեռնասուն ենք և մարդորսություն գոյություն ունի:

Օտարական. Այդ դեպքում բաժանենք ձեռնասուն կենդանիների որսը երկու մասի:

Թեետետոս. Ինչպե՞ս կանենք դա:

Օտարական. Սահմանելով ավագակությունը, գերեվարունը, բռնակալությունը և ողջ ռազմական արվեստը որպէս բռնացող որս:

Թեւտետոս. Շատ լավ:

Օտարական. Իսկ դատավորական արվեստը, ժողովրդի առաջ խոսելու արվեստը, ինչպէս նաև վարվեցողության արվեստը ընդհանուր առմամբ կանվանենք համոզելու արվեստ: d

Թեւտետոս. ճիշտ է:

Օտարական. Նշենք համոզելու արվեստի երկու տեսակները:

Թեւտետոս. Որո՞նք:

Օտարական. Մեկը՝ մասնավոր գրույցի մեջ, իսկ մյուսը՝ հասարակական ելույթի ժամանակ:

Թեւտետոս. Իհարկէ երկուսն էլ գոյություն ունեն:

Օտարական. Իսկ չի՞ վարձատրվում արդոյոք մասնավոր որսը, կամ չի՞ բերում արդոյոք ընծաներ:

Թեւտետոս. Չեն հասկանում:

Օտարական. Դու թերևս ուշադրություն չես դարձրել սիրահարների որսին:

Թեւտետոս. Ի՞նչ առումով:

Օտարական. Այն, որ սիրահարներն ընծաներ են մատուցում նրանց, ուն փորձում են որսալ: e

Թեւտետոս. Շատ ճիշտ ես ասում:

Օտարական. Թող այդ տեսակը կոչվի սիրային արվեստ:

Թեւտետոս. Լավ:

Օտարական. Վարձատրման այն տեսակը, երբ զրույցի են բռնվում սիրաշահելու համար և ամեն կերպ հաճոյախոսում են, իսկ որպէս վարձատրություն ստանում միայն գովեստ, իմ կարծիքով մենք բոլորս կարող ենք կոչել հաճոյանալու արվեստ: 223

Թեւտետոս. Թերևս:

Օտարական. Իսկ այն տեսակը, երբ ասում են, թե զրույցի են բռնվում հանուն առաքինության և որպես վարձատրություն ստանում դրամ, ճիշտ չի՞ լինի արդյոք կոչել ուրիշ անունով:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Ի՞նչ անունով: Փորձիր ինքդ ասել:

Թեետետոս. Դա ակնհայտ է, քանզի մենք, ըստ իս, հայտնաբերեցինք սոփեստին: Կարծում են, այդպես կոչելով՝ ես նշեցի ճիշտ անունը⁸:

- b** **Օտարական.** Բայց համաձայն մեր այժմյան բացատրության, Թեետետոս, ձեռքբերման, ենթարկման, որսի, ցամաքային կենդանիների որսի, ձեռնասուն կենդանիների որսի, մարդորսության, առանձին մարդկանց որսի, հանուն վարձատրության, դրամի և կարծեցյալ դաստիարակության արվող որսի և հարուստ ու հրաշալի երիտասարդների որսի ողջ արվեստը պիտի կոչվի սոփեստություն:

Թեետետոս. Միանգամայն ճիշտ է:

Օտարական. Դիտարկենք սա նաև ուրիշ կողմից: Չէ՞

- c** որ մեր քննածն անկարևոր արվեստ չէ, այն շատ բազմակողմանի է: Եվ մեր նախորդ պնդումներում այն ներկայանում էր ոչ թե այնպիսին, ինչպիսին մենք հիմա նկարագրեցինք, այլ ուրիշ սեռի տակ:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Ձեռքբերման արվեստը երկու տեսակ էր. մի մասը որսն էր, իսկ մյուսը՝ փոխանակումը:

Թեետետոս. Այդպես էր:

Օտարական. Նշենք փոխանակման երկու տեսակները՝ մեկը նվիրատվության միջոցով է, իսկ մյուսը՝ առևտրի:

Թեետետոս. Նշենք:

Օտարական. Սակայն առևտուրը մենք նույնպես կբաժանենք երկու մասի:

- d** **Թեետետոս.** Ինչպե՞ս:

Օտարական. Տարբերակելով սեփական պատրաստման

իրերի վաճառքը և փոխանակումը, երբ փոխանակվում են այլոց պատրաստած իրերը:

Թեոփիլոս. Իհարկե:

Օտարական. Եվ ինչ, քաղաքում իրականացվող փոխանակման առևտուրը, որը կազմում է ողջ փոխանակման առևտրի գրեթե կեսը, չի՞ կոչվում արդյոք մանրածախ:

Թեոփիլոս. Այո:

Օտարական. Իսկ քաղաքների միջև գործող առևտուրն ու փոխանակումը կոչվում է մեծածախ:

Թեոփիլոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Բայց մի՞թե մենք չնկատեցինք, որ մեծածախ առևտրի մի մասը վաճառում և փոխանակում է այն, ինչը սնում և բավարարում է մարմնի կարիքները, իսկ մյուսը՝ e այն, ինչը սնում և բավարարում է հոգու կարիքները:

Թեոփիլոս. Ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Հոգուն վերաբերող մասից մենք գուցե անտեղյակ ենք, սակայն մյուսին ծանոթ ենք:

Թեոփիլոս. Այո:

Օտարական. Մենք կասենք, որ ամբողջ երաժշտական արվեստը, որը հաճախ քաղաքից քաղաք է անցնում, գնվելով այստեղ և վաճառվելով այնտեղ, նմանապես նաև նկարչությունը, աճապարարությունը և հոգու վրա ազդող շատ ուրիշ բաներ, որոնք ներկրվում և վաճառվում են մասամբ զվարճանքի համար, մասամբ էլ լուրջ կարիքների համար, ներկրողին և վաճառողին ոչ պակաս չափով են թույլ տալիս առևտրական կոչվել, քան կերակուրն ու խմիչքը՝ իսկական վաճառականին: 224

Թեոփիլոս. Շատ ճիշտ ես ասում:

Օտարական. Ուրեմն չե՞ս կոչի արդյոք նույն անունով b նաև նրան, ով գնում է իմացությունները և քաղաքից քաղաք շրջելով այն փոխանակում դրամի հետ:

Թեոփիլոս. Իհարկե:

Օտարական. Իսկ այդ հոգևոր առևտրի մեջ պետք չէ՞

արդյոք մի մասը կոչել ցուցադրության արվեստ, իսկ մյուսը, որ նախորդից պակաս զավեշտական չէ և իմացության առևտուր է, կոչել գործի բնույթից բխող որևէ անունով:

Թեոտետոս. Անշուշտ:

Օտարական. Հետևաբար իմացության առևտրի այն մասը, որը վերաբերում է մյուս բոլոր արվեստներին, պետք է կոչել մի անունով, իսկ այն, որ վերաբերում է առաքինությանը՝ ուրիշ անունով:

Թեոտետոս. Անտարակույս:

Օտարական. «Արվեստների վաճառք» անունը կհամապատասխաներ այն մեկին, որը վերաբերում է մյուս բոլորին, իսկ երկրորդի անունը դու ինքդ փորձիր գտնել:

Թեոտետոս. Ուրիշ ի՞նչ անուն կարելի է գտնել առանց սխալվելու, եթե ոչ մեր խնդրո առարկան. դա սովետսի սեռն է:

Օտարական. Եվ ուրիշ ոչինչ: Իսկ հիմա ամփոփենք դա՝ ասելով, որ սովետսությունը ձեռքբերման, փոխանակման, վաճառքի և առաքինությանը վերաբերող դատողությունների ու իմացությունների հոգևոր առևտրի արվեստ է:

Թեոտետոս. Միանգամայն ճիշտ է:

Օտարական. Եվ երրորդ. ինձ թվում է, որ եթե որևէ մեկը բնակություն հաստատի քաղաքում և մասամբ գնի իմացություններ, իսկ մասամբ ինքնուրույն պատրաստելով դրանք վաճառի՝ այդպես հոգալով իր ապրուստը, դու չես կոչի նրան ուրիշ անունով և կնշես քիչ առաջ ասվածը:

Թեոտետոս. Այո, կնշեն:

Օտարական. Եվ ձեռքբերման այդ արվեստը, որովհետև գործ ունի փոխանակման, ուրիշի և սեփական արտադրանքի վաճառքի հետ, որքան որ առնչվում է իմացությունների սեռին, ինչպես երևում է, միշտ կանվանես սովետսություն:

Թեոտետոս. Անհրաժեշտաբար, չէ՞ որ հարկ է հետևել դատողությանը:

Օտարական. Իսկ հիմա տեսնենք, նման չէ՞ արդոյք մեր հետազոտած սեռը մեկ ուրիշ այդպիսի բանի:

Թեւտետոս. Ինչի՞:

225

Օտարական. Ձեռքբերման արվեստի մի մասը մեր դեպքում ըմբշամարտն էր:

Թեւտետոս. Իհարկե:

Օտարական. Ուրեմն ճիշտ կլինի բաժանել այն երկու մասի:

Թեւտետոս. Ի՞նչ մասերի:

Օտարական. Համարենք դրանցից մեկը մրցում, իսկ մյուսը՝ մարտ⁹:

Թեւտետոս. Թող այդպես լինի:

Օտարական. Մարտի այն մասը, որի պարագայում մի մարմին ելնում է մեկ ուրիշ մարմնի դեմ, գուցե տեղին է կոչել, ասենք, բռնություն:

Թեւտետոս. Այո:

Օտարական. Իսկ այն մասին, որտեղ բառերն են ելնում բառերի դեմ, Թեւտետոս, ուրիշ ի՞նչ անուն տանք, եթե ոչ վիճաբանություն:

b

Թեւտետոս. Ճիշտ է:

Օտարական. Հետևաբար վեճերին առնչվող մասը պետք է համարել երկակի:

Թեւտետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Երբ հրապարակավ արտասանվող երկար ճառերը ելնում են երկար ճառերի դեմ և առնչվում արդարությանն ու անարդարությանը, դրանք կոչվում են դատական վեճեր:

Թեւտետոս. Այո:

Օտարական. Իսկ երբ մասնավոր զրույցի մեջ այն բաժանվում է հարցերի ու պատասխանների, ուրիշ ի՞նչ կերպ սովորություն ունենք անվանել դա, եթե ոչ հակաճառության արվեստ:

Թեւտետոս. Հենց այդպես:

Օտարական. Իսկ հակաճառության արվեստի այն մասը, որը գործ ունի առօրեական հարցերին վերաբերող վեճերի հետ և որը իրականացվում է պարզ ու ոչ հնարամիտ կերպով, թեպետ պիտի համարվի առանձին տեսակ, ինչպես որ համարվեց մեր փաստարկի կողմից, սակայն անուն չի ստացել մեր նախորդներից և արժանի չէ ստանալու նաև մեզնից:

Թեոտետոս. Շնորհիւ է: Քանզի բաժանվում է անչափ փոքր և զանազան մասերի:

Օտարական. Բայց այն մասը, որն արվեստ է պարունակում և վիճում է արդարի, անարդարի և մնացյալ ամենի մասին, սովոր չե՞նք արդյոք կոչել վիճաբանության արվեստ:

Թեոտետոս. Ինչպե՞ս չէ:

d Օտարական. Սակայն վիճաբանության արվեստի մի մասը ծախսատար է, իսկ մյուսը՝ դրամաբեր:

Թեոտետոս. Միանգամայն ճիշտ է:

Օտարական. Փորձենք ուրեմն նշել յուրաքանչյուրի անունը:

Թեոտետոս. Այո, պետք է նշել:

Օտարական. Ես կարծում եմ, որ արվեստի այն մասը, որը հանուն հաճելի ժամանցի մոռանալ է տալիս տան գործերը և որի ճառերը լսողներից շատերին տհաճություն են պատճառում, կոչվում է ճամարտակություն:

Թեոտետոս. Այո, կարծես այդպես է կոչվում:

e Օտարական. Իսկ սրա հակառակը, որը շահույթ է բերում մասնավոր վեճերից, ինքդ փորձիր անվանել:

Թեոտետոս. Եվ դարձյալ ուրիշ ի՞նչ կարելի է ասել առանց սխալվելու, եթե ոչ այն, որ նորից, արդեն չորրորդ անգամ, դա մեր հետամտած զարմանալի սոփեստն է:

226 Օտարական. Հետևաբար, ինչպես կրկին հիշեցնում է մեր քննությունը, սոփեստը [մարդկանց] մի սեռ է, որը շահույթ է ստանում վիճաբանության, հակաճառության, վեճի, մարտի և ձեռքբերման արվեստի միջոցով:

Թեոտետոս. ճիշտ է:

Օտարական. Տեսնում ես, ինչ ճիշտ են ասում, որ այս թռչունն այնքան էլ պարզունակ չէ, և, ինչպէս առածն է ասում, նրան անհնար է որսալ մի ձեռքով:

Թեւետետոս. Ուրեմն պետք է որսալ երկուսով:

Օտարական. Այո, և պետք է ըստ կարելվոյն կրնկա-կոխ հետևել նրան: Ասա ինձ, ստրուկների զբաղմունքն ունի՞ անուն:

b

Թեւետետոս. Շատ անուններ: Բայց դու որո՞նք նկատի ունես:

Օտարական. Ահա սրանք. օրինակ՝ «մաղել», «գտել», «քամհարել» և «ջոկել»:

Թեւետետոս. Իհարկէ:

Օտարական. Եվ դրանցից բացի՝ «սանրել», «մանել», «գործել» և մեր իմացած ուրիշ բոլոր այդպիսի արհեստներ: Այդպէս չէ՞:

Թեւետետոս. Ի՞նչ ես ուզում պարզաբանել այս օրինակ-ներով, ինչու՞ ես հարցնում:

c

Օտարական. Բոլոր այս հիշատակված արվեստները կոչվում են բաժանող:

Թեւետետոս. Այո:

Օտարական. Եվ քանի որ խոսքն, ըստ իս, մեկ ամբողջական արվեստի մասին է, այն պետք է մեկ անուն ունենա:

Թեւետետոս. Եվ ինչպէ՞ս կոչենք դա:

Օտարական. Տարբերակման արվեստ:

Թեւետետոս. Թող այդպէս լինի:

Օտարական. Մտածի՛ր, իսկ չէ՞նք կարող արդոյք հայտնաբերել սրա երկու տեսակները:

Թեւետետոս. Չափից արագ պատասխաններ ես պահանջում:

Օտարական. Այդուհանդերձ հիշյալ տարբերակման մեջ մի դեպքում վատագոյնը զատվում է լավագոյնից, իսկ մյուս դեպքում՝ նմանը նմանից:

d

Թեւետետոս. Չիմա, երբ արդեն ասվեց, դա ակնհայտ է:

Օտարական. Երկրորդ տարբերակման ընդհանուր անվանումը ես չգիտեմ, սակայն գիտեմ առաջինը, այն մեկի, որը բողոնում է լավագույնը և հեռացնում վատագույնը:

Թեետետոս. Ասա այդ անունը:

Օտարական. Ես կարծում եմ, որ ամեն այդպիսի տարբերակում բոլորը կոչում են մաքրման ինչ-որ տեսակ:

Թեետետոս. Այո, կոչում են:

e Օտարական. Բայց մի՞թե ամեն ոք չի հասկանա, որ մաքրման այս արվեստը երկու տեսակ է:

Թեետետոս. Այո, իր ժամանակին գուցե և հասկանա, սակայն ես հիմա չեմ հասկանում:

Օտարական. Եվ այդուհանդերձ մարմնի մաքրման բազում տեսակները կարելի է նշել մեկ անվամբ:

Թեետետոս. Որո՞նք են դրանք, և ո՞րն է այդ անունը:

227 Օտարական. Կենդանի էակների մարմիններում եղած [ախտերը] մաքրվում և հեռացվում են մարմնամարզությամբ, բժշկմամբ և արտաքին մաքրմանը վերաբերող արվեստների օգնությամբ, որոնցից է, ամոթ չլինի ասել, բաղնիսապանների արվեստը: Կա նաև անշունչ մարմինների մաքրումը, որի մասին մինչև վերջին մանրուքները հոգ է տանում թաղեգործական և զարդարման արվեստը. սա բազմաթիվ զավեշտական անուններ ունի:

Թեետետոս. Այն էլ ինչքան:

Օտարական. Իհարկե, Թեետետոս: Սակայն մեր քննության մեթոդին սպունգով լվանալու արվեստը պակաս հատուկ չէ, և սակայն առավել հատուկ չէ, քան դեղեր պատրաստելու արվեստը, անկախ այն բանից, որ առաջինի բերած օգուտը

b փոքր է, իսկ երկրորդինը՝ մեծ: Այդ մեթոդը, փորձելով հասկանալ բոլոր արվեստներին սեռակիցն ու ոչ սեռակիցը, համարում է դրանք միանման և մեկը մյուսից զավեշտական չի դիտում: Նա չի համարում զորավարությամբ որսի արվեստը բացատրողին առավել արժանի նրանից, ով դա անում է լվեր որսալով, սակայն համարում է շատ ավելի ինքնահավան:

Չենց նոր դու հարցրիր ինձ, թե ինչպես կոչենք բոլոր այն ունակութիւնները, որոնք պիտի մաքրեն ինչպես շնչավոր, այնպես էլ անշունչ մարմինները, քանզի մեր մեթոդի համար միևնույն է, թե որ անունը կլինի առավել փառաշուք: Կարևորն այն է, որ այդ անունը մի կողմ թողնի հոգու մաքրմանը վերաբերող բաները և իր մեջ առնի այն, ինչը վերաբերում է մնացյալ ամենի մաքրմանը: Չէ՞ որ հիմա մեր մեթոդը փորձում է առանձնացնել մտքի մաքրումը մյուսներից, եթե իհարկէ մենք հասկանում ենք, թե ինչ է նա ուզում:

Թեետետոս. Ես հասկացա և համաձայն եմ, որ գոյություն ունի մաքրման երկու տեսակ՝ մեկը հոգու մաքրումն է, և սա առանձին է մարմնի մաքրումից:

Օտարական. Հրաշալի է: Իսկ հիմա լսիր հաջորդ քայլի մասին: Փորձիր երկուսի բաժանել այն, ինչի մասին խոսում էինք:

Թեետետոս. Կփորձեմ բաժանել քեզ հետ միասին, ինչպես կարգադրես:

Օտարական. Հոգու արատավորութիւնը մի՞թե առաքինությունից տարբեր ինչ-որ բան չենք համարում:

Թեետետոս. Ինչպե՞ս թե ոչ:

Օտարական. Բայց չէ՞ որ մաքրվել նշանակում է դուրս նետել վատը և թողնել մնացածը:

Թեետետոս. Իհարկէ:

Օտարական. Ուրեմն, եթե մենք գտնենք հոգու միջից չարիքը հեռացնելու միջոցը, այն իրավացիորեն կանվանենք մաքրում:

Թեետետոս. Միանգամայն իրավացիորեն:

Օտարական. Սակայն պետք է նշել հոգևոր չարիքի երկու տեսակ:

Թեետետոս. Որո՞նք են այդ տեսակները:

Օտարական. Մեկը նման է մարմնի հիվանդությանը, իսկ մյուսը՝ այլանդակությանը:

Թեետետոս. Չեմ հասկանում:

Օտարական. Գուցե դու նույնը չե՞ս համարում հիվանդությունը և աններդաշնակությունը:

Թեետետոս. Այս հարցին նույնպես չգիտեմ ինչպես պատասխանեմ:

Օտարական. Մի՞թե այլ բան ես համարում աններդաշնակությունը¹¹, քան որևէ վնաս կրելու արդյունքում համասեռ բնության խանգարում:

Թեետետոս. Ոչ:

Օտարական. Իսկ այլանդակությունը մի՞թե այլ բան ես համարում, քան անհամաչափության բոլոր առումներով տգեղ դրսևորում:

b Թեետետոս. Բնավ ոչ:

Օտարական. Եվ ի՞նչ: Չե՞նք տեսնում արդյոք, որ անպիտան մարդկանց հոգիներում կարծիքները համահունչ չեն ցանկություններին, կամքը՝ հաճույքներին, բանականությունը՝ ցավերին, և այդպես նաև մյուս համանման բաները:

Թեետետոս. Այն էլ ինչպես:

Օտարական. Բայց չէ՞ որ դրանք բոլորը անհրաժեշտաբար ազգակից են:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Այդ դեպքում մենք ճիշտ կվարվենք՝ չարիք կոչելով հոգու աններդաշնակությունն ու հիվանդությունը:

Թեետետոս. Շատ ճիշտ:

c Օտարական. Եվ ինչ, եթե շարժվող իրերը, որոնք դնելով որոշակի նպատակ՝ ձգտում են իրագործել այն և ամեն անգամ վրիպում ու սխալվում են, կարո՞ղ ենք արդյոք ասել, որ դա տեղի է ունենում իրի և նպատակի համաչափությունից, թե՞ դա անհամաչափության հետևանքով է:

Թեետետոս. Ակնհայտ է, որ անհամաչափության:

Օտարական. Բայց մենք գիտենք, որ ամենայն հոգի անգետ է հակառակ իր կամքի:

Թեետետոս. Անկասկած:

Օտարական. Իսկ անգիտությունը ճշմարտությանը

միտված՝ հոգու վրիպում է, երբ ըմբռնումը չի հասնում իր **d**
նպատակին:

Թեւտետոս. Անտարակոյս:

Օտարական. Ուրեմն անմիտ հոգին հարկ է համարել
այլանդակ և անհամաչափ:

Թեւտետոս. Թերևս:

Օտարական. Նրա մեջ, ինչպես երևում է, գոյություն
ունեն չարիքի այդ երկու տեսակները: Մեկը կոչում են արատ,
և դա ակներևաբար հիվանդությունն է:

Թեւտետոս. Այո:

Օտարական. Իսկ մյուսը՝ անգիտություն, բայց չեն
ուզում համաձայնել, որ դա միայն հոգուն հատուկ չարիք է:

Թեւտետոս. Ճիշտ կլինի համաձայնել քիչ առաջ ասա- **e**
ծիդ, նրան, ինչ ես վիճարկեցի: Հոգու մեջ կա չարիքի երկու
տեսակ, ընդ որում վախկոտությունը, անժուժկալությունը և
անարդարությունը պետք է համարել մեր մեջ եղած հիվան-
դություններ, իսկ անգիտության հաճախակի և բազմապիսի
վիճակը՝ այլանդակություն:

Օտարական. Մարմնի մեջ այդ երկու վիճակների դեմ
մի՞թե չկան երկու արվեստներ:

Թեւտետոս. Ի՞նչ արվեստներ:

Օտարական. Այլանդակության դեմ՝ մարմնամարզությու- **229**
նը, իսկ հիվանդության դեմ՝ բժշկությունը:

Թեւտետոս. Ակնհայտ է:

Օտարական. Իսկ անբարտավանության, անարդարու-
թյան և վախկոտության դեմ մի՞թե չկա պատժիչ արվեստ,
մի՞թե չկա բոլոր արվեստներից ի բնե ամենահարմարը՝ Արդա-
րադատությունը¹¹:

Թեւտետոս. Թերևս այդպես է, եթե խոսենք ելնելով
մարդկանց կարծիքից:

Օտարական. Եվ ինչ, մի՞թե ցանկացած անգիտության
դեմ կարելի է ունենալ առավել ճիշտ արվեստ, քան ուսուցման
արվեստն է:

Թեև տեսնուս. Ոչ:

- b Օտարական. Շատ բարի: Եվ ինչ կասենք՝ մե՞կն է ուսուցման արվեստը, թե՞ դրանք բազմաթիվ են և դրանցից երկուսը ամենակարևորն են: Մտածի՛ր:

Թեև տեսնուս. Մտածում եմ:

Օտարական. Եվ ինձ թվում է, որ մենք ավելի շուտ կարող ենք գտնել դա այդ եղանակով:

Թեև տեսնուս. Ինչպե՞ս:

Օտարական. Դիտարկելով՝ արդյո՞ք անգիտությունը չի հատվում մեջտեղից: Չէ՞ որ լինելով երկակի՝ այն ստիպում է երկու մաս ունենալ նաև ուսուցմանը, քանի որ յուրաքանչյուր տեսակ պահանջում է իր մասը:

Թեև տեսնուս. Ուրեմն ի՞նչ: Հիմա դու տեսնու՞մ ես այն, ինչ փնտրում էինք:

- c Օտարական. Ինձ թվում է, ես տեսնում եմ անգիտության առանձնացված մեծ և ծանր մի տեսակ, որն իր մասերով համազոր է անգիտության մյուս մասերին:

Թեև տեսնուս. Ի՞նչ տեսակ:

Օտարական. Երբ չիմանալով մի բան, կարծում են, թե գիտեն: Մեր մտածողության բոլոր սխալները կարծես թե գոյանում են այստեղից:

Թեև տեսնուս. ճշմարիտ է:

Օտարական. Հենց միայն այս տեսակին է տրվում տգիտություն անունը:

Թեև տեսնուս. Իհարկե:

Օտարական. Իսկ ինչպե՞ս կոչենք ուսուցման արվեստի այն մասը, որն ազատում է դրանից:

- d Թեև տեսնուս. Կարծում եմ, օտարական, որ մնացյալը կոչվում է արհեստավորական ուսուցում, իսկ տգիտությունից ազատող մասը, այստեղ [վթենքում] կոչվում է դաստիարակություն:

Օտարական. Եվ գրեթե բոլոր հելլենների մոտ, ո՛վ Թեև տեսնուս: Սակայն մենք դեռ պիտի պարզենք՝ անբաժա՞ն է

այն արդյոք, թե՞ ունի անվանման արժանի որևէ ստորաբաժանում:

Թեետետոս. Այո, պետք է պարզել:

Օտարական. Ինձ թվում է, որ այս մասը նույնպես բաժանվում է:

Թեետետոս. Ի՞նչ հիմունքով:

Օտարական. Փաստարկների միջոցով ուսուցման արվեստի մի ուղին խորդուբորդ է, իսկ մյուսը՝ հարթ:

e

Թեետետոս. Ի՞նչ ասենք դրանցից յուրաքանչյուրի մասին:

Օտարական. Մեկը մեր հայրերի վաղեմի ուղին է, որը նրանք կիրառել են և շատերը դեռ կիրառում են իրենց որդիների նկատմամբ՝ մերթ նախատելով, մերթ պաղատելով, երբ սրանք ինչ-որ սխալ են գործում: Ամբողջ այդ մասը շատ ճիշտ կլինի կոչել հանդիմանություն:

230

Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Իսկ մյուսի դեպքում ո՞մանք իրենք իրենց որոշել են, որ ամեն տգիտություն ակամա է, այնպես որ նա, ով ինչ-որ բանում իմաստուն է համարում իրեն, երբեք չի ցանկանա որևէ բան սովորել այն բնագավառում, որում իրեն ուժեղ է համարում, և այստեղ հանդիմանության միջոցով մեծ դժվարությամբ դաստիարակելու եղանակը քիչ բան է տալիս:

Թեետետոս. Նրանք ճիշտ են մտածում:

Օտարական. Ահա ինչու հիշյալ մտայնության վերացման համար նրանք դիմում են ուրիշ եղանակի:

b

Թեետետոս. Ի՞նչ եղանակի:

Օտարական. Նրանք հարցնում են այդ մարդուն առարկայի մասին, որի վերաբերյալ նա կարծում է, թե ինչ-որ բան է ասում, թեև իրականում ոչինչ էլ չի ասում: Այնուհետև նրանք հեշտությամբ ի դերև են հանում նրա հարափոխ կարծիքները և, ժողովելով մեկ խորհրդածության մեջ, համեմատում են դրանք միմյանց հետ և համեմատելով ցույց տալիս, որ միևնույն իրերի հարցում դրանք հակադրվում են իրար

- միևնույն առումով և միևնույն հարաբերությամբ: Իսկ սրանք տեսնելով դա՝ բարկանում են իրենք իրենց վրա և բարյացակամ են դառնում ուրիշների նկատմամբ և այդպես ազատվում իրենց մասին մեծամիտ ու համառ կարծիքից, այնպես որ բոլոր ազատումներից ամենից հաճելի է լսել այդ ազատման մասին, և նրա համար, ով ապրում է այդ ազատումը, այն լինում է ամենահուսալին: Չէ՞ որ այդ մարդկանց մաքրագործողները, տղաս, մտածում են ինչպես բժիշկները, որոնք համարում են, թե մարմինը չի կարող վայելել առաջարկվող կերակուրը, քանի դեռ կերակուրից չի հեռացվել այն, ինչ կարող է խանգարել վայելքին: Հոգու վերաբերյալ նրանք նույն կարծիքի են: Սա որևէ օգուտ չի ստանա առաջարկվող գիտելիքներից, քանի դեռ բացահայտողը, ստիպելով բացահայտյալին ամաչել և հեռացնելով գիտելիքներին խանգարող կարծիքները, չի մաքրագործել նրան և ստիպել մտածելու, որ նա գիտի լոկ իր իմացածը, և ոչ ավել:

Թեետետոս. Այո, դա լավագույն և խոհեմագույն պահվածք է:

- Օտարական.** Ահա ինչու, Թեետետոս, այդպիսի բացահայտման մասին մենք պիտի խոսենք որպես մեծագույն և կարևորագույն մաքրագործման, իսկ նա, ով չի բացահայտվել, անգամ եթե նա մեծ արքան¹² է, քանի որ չի մաքրագործվել կարևորագույնի մեջ, պիտի համարվի անդաստիարակ և այլանդակ այն հարցերում, որոնցում իսկապես երջանիկ դառնալ ցանկացողը պիտի լիներ ամենամաքուրն ու ամենագեղեցիկը:

Թեետետոս. Միանգամայն ճիշտ է:

- Օտարական.** Եվ ի՞նչ: Ինչպե՞ս կոչենք այդ արվեստից օգտվողներին: Քանզի ես վախենում եմ նրանց սփեստներ կոչել:

Թեետետոս. Ինչու՞:

Օտարական. Որպեսզի նրանց շատ մեծ պատիվ արած չլինենք:

Թեետետոս. Բայց հենց նոր ասվածը կարծես նման մի բան էր:

Օտարական. Գայլը նույնպես նման է շանը, իսկ ամենավայրենի գազանը՝ ձեռնասուն կենդանուն: Սակայն շրջահայաց մարդն ամենից շատ պիտի զգուշավոր լինի նմանության հարցում, քանզի սա ամենախաբուսիկ սեռն է¹³: Բայց և այնպես ընդունենք, որ նրանք սուփեստներ են: Քանզի ես կարծում եմ, որ վեճը չի լինում փոքր սահմանների պատճառով, եթե դրանք լավ են պաշտպանվում:

b

Թեետետոս. Ոչ, թերևս չի լինում:

Օտարական. Թող ուրեմն տարբերակման արվեստի մի մասը լինի մաքրման արվեստը, մաքրման արվեստից առանձնացվի հոգուն վերաբերող մասը, այդ մասից՝ ուսուցման արվեստը, ուսուցման արվեստից՝ դաստիարակության արվեստը, իսկ դաստիարակության արվեստից՝ բացահայտումը, որը մեր ներկայիս քննարկման մեջ թող կոչվի ոչ այլ կերպ, քան սուփեստություն:

Թեետետոս. Թող կոչվի: Բայց քանի որ սուփեստը երևաց բազում կերպարանքներով, ես դժվարանում եմ և չգիտեմ, թե ինչպես կարելի է ճիշտ բնորոշել նրան:

c

Օտարական. Եվ զարմանալի չէ, որ դժվարանում ես: Սակայն սուփեստը նույնպես, պետք է մտածել, այս պահին արդեն դժվարանում է որոշել, թե ուր փախչի այս քննարկումից: Չէ՞ որ ճիշտ է ասացվածքը, որ հեշտ չէ փախչել ամեն բանից¹⁴: Այնպես որ հիմա մենք պիտի առավել ուժեղ գրոհենք նրան:

Թեետետոս. Եիշտ ես ասում:

Օտարական. Նախ դադար տանք ու շունչ առնենք, իսկ հանգստանալու ընթացքում քննենք մեզ համար հետևյալը: Տե՛ս, թե որքան բազում կերպարանքներով ներկայացավ սուփեստը: Սկզբում մենք գտանք, որ նա երիտասարդներ և հարուստներ որսացող է:

d

Թեետետոս. Այո:

Օտարական. Երկրորդ. նա հոգուն առնչվող գիտելիքների վաճառական է:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Երրորդ. մի՞թե նա նույն այդ գիտելիքների մանրածախ վաճառական չէ:

Թեետետոս. Այո, և չորրորդ. նա իր սեփական գիտելիքների վաճառականն է:

e Օտարական. Լավ հիշեցիր: Հինգերորդը կփորձեն ինքս հիշել: Տիրելով վիճաբանության արվեստին՝ նա դարձավ փաստարկների մրցամարտիկ:

Թեետետոս. Այդպես էր:

Օտարական. Վեցերորդը վիճելի է, բայց ամեն դեպքում մենք, զիջելով սովեստին, համարեցինք, որ նա հոգիները մաքրագործողն է կարծիքներից, որոնք խոչընդոտում են հոգուն առնչվող գիտելիքներին:

Թեետետոս. Միանգամայն ճիշտ է:

232 Օտարական. Նկատու՞մ ես, որ երբ ինչ-որ մեկը բազում իմացություններ ունի, իսկ նրան կոչում են միայն իր արվեստի անունով, այդ արվեստի մասին կեղծ տպավորություն է ստեղծվում: Սակայն պարզ է, որ նա, ով այդպիսի տպավորություն ունի, չի կարող տեսնել այն հիմնականը տվյալ արվեստի մեջ, որին ուղղված են բոլոր այդ իմացությունները, ահա ինչու այդ իմացություններին տիրողին նա մեկի փոխարեն կոչում է բազում անուններով:

Թեետետոս. Թերևս մեծ մասամբ այդպես է լինում:

b Օտարական. Թող ուրեմն նույնը չպատահի մեզ հետ մեր ծուլության պատճառով: Մենք նախ կվերցնենք սովեստի բնորոշումներից մեկը: Քանզի, ըստ իս, հենց այդ մեկն է առանձնացնում նրան:

Թեետետոս. Ո՞րը:

Օտարական. Մենք ասացինք, որ նա հակաճառության վարպետ է:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ ինչ, չասացի՞նք նաև, որ սովորեցնում է դա նաև ուրիշներին:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Այժմ տեսնենք, թե ինչի վերաբերյալ են նրանք սովորեցնում հակաճառել: Թող մեր քննությունը սկսվի հետևյալից. ասա ինձ, արդո՞ք նրանք սովորեցնում են վիճել աստվածային բաների մասին, որոնք շատերի համար անտեսանելի են:

Թեետետոս. Ասում են, թե այդպես է:

Օտարական. Իսկ երկրի, երկնքի և այլ տեսանելի բաների մասի՞ն:

Թեետետոս. Անշուշտ:

Օտարական. Եվ մասնավոր զրույցներում, երբ խոսք է բացվում ծագման և կեցության մասին ընդհանրապես, մենք գիտենք, որ նրանք ուժեղ են հակաճառության մեջ և ուրիշներին էլ այդպիսին են դարձնում:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Իսկ օրենքների և պետական այլ հարցերի առնչությամբ նրանք նու՞յնպես խոստանում են վիճաբաններ պատրաստել:

Թեետետոս. Ճիշտն ասած, նրանց հետ ոչ ոք չէր զրուցի, եթե չխոստանային:

Օտարական. Այն, ինչ բոլոր արվեստների և դրանցից յուրաքանչյուրի դեմ պիտի առարկի ինքը վարպետը, սովորել ցանկացողին մատչելի է գրավոր ձևով:

Թեետետոս. Դու հավանաբար նկատի ունես Պրոտագորասի գրքերը ըմբշամարտի և նման այլ արվեստների մասին¹⁵:

Օտարական. Այո, բարեկամս, և շատ ուրիշ գրքեր: Բայց մի՞թե հակաճառության արվեստը որոշակի ունակություն չէ, որը հարմար է ցանկացած վեճի ժամանակ:

Թեետետոս. Ամեն դեպքում ավելացնելու գրեթե ոչինչ չի մնում:

Օտարական. Հանուն աստվածների, տղաս, մի՞թե դա քեզ հնարավոր է թվում: Չէ՞ որ դուք, երիտասարդների, մեզ-նից ավելի սրատես եք:

233 Թեետետոս. Ի՞նչ նկատի ունես և ինչու՞ ես այդպես ասում: Ես չեմ հասկանում հարցդ:

Օտարականտ. Հնարավո՞ր է, որ մարդկանցից մեկը ամեն բան իմանա:

Թեետետոս. Ինչ երանելի կլիներ այդքան մեր ցեղը, ո՛վ օտարական:

Օտարական. Իսկ ինչպե՞ս կարող էր ոմն չիմանալով հանդերձ ողջամտորեն հակաճառել իմացողին:

Թեետետոս. Ոչ մի կերպ:

Օտարական. Այդ դեպքում ո՞րն է սովեստության հրաշալի ուժը:

Թեետետոս. Ի՞նչ առումով:

b Օտարական. Ինչպե՞ս են նրանք կարծիք ձևավորում երիտասարդների մեջ, իբր իրենք ամենաիմաստուն մարդիկ են: Ակնհայտ է, որ եթե նրանք հակաճառեին ոչ ճիշտ և երիտասարդներին չթվար, թե դա ճիշտ է, իսկ չթվալու դեպքում իմաստուն նրանք համարվեին ոչ իրենց առարկությունների համար, ապա, ինչպես դու ես ասում, հազիվ թե ցանկանային լինել նրանց աշակերտը և դրամ վճարել:

Թեետետոս. Այո, հազիվ թե:

Օտարական. Բայց չէ՞ որ ցանկանում են:

Թեետետոս. Այն էլ ինչպես:

c Օտարական. Քանզի ինձ թվում է, որ նրանց համարում են վիճարկվող առարկայի գիտակներ:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Բայց մենք ասացինք, որ նրանք այդպես են վարվում ամեն ինչի նկատմամբ:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ աշակերտներին նրանք թվում են իմաստուն ամե՞ն ինչում:

Թեոտեոս. Անկասկած:

Օտարական. Եվ այդուհանդերձ նրանք այդպիսին չեն, քանզի պարզվեց, որ դա անհնար է:

Թեոտեոս. Իհարկե անհնար է:

Օտարական. Հետևաբար պարզվում է, որ սուփեստը տիրում է ոչ թե ճշմարիտ, այլ կարծեցյալ իմացության:

Թեոտեոս. Միանգամայն, և նրանց մասին ասվածը **d** հիմա շատ ճիշտ է թվում:

Օտարական. Վերցնենք ավելի պարզ օրինակ:

Թեոտեոս. Ի՞նչ օրինակ:

Օտարական. Ահա այս մեկը, իսկ դու փորձիր ուշադիր լինել և ճիշտ պատասխանել:

Թեոտեոս. Խոսի՛ր:

Օտարական. Եթե որևէ մեկն ասեր, որ ո՛չ խոսել գիտի, ո՛չ էլ հակաճառել, այլ՝ միայն մեկ արվեստի միջոցով ստեղծել բոլոր իրերը:

Թեոտեոս. Ի՞նչ նկատի ունես՝ ասելով բոլոր իրերը: **e**

Օտարական. Դու չես հասկանում արդեն փաստարկիս սկիզբը: Քանզի «ամենը» դու կարծես թե չես հասկանում:

Թեոտեոս. Ոչ, չեմ հասկանում:

Օտարական. Ես ու դու այդ ամենի մեջ ենք, իսկ ինձ-մից ու քեզմից զատ մյուսները կենդանիներ ու ծառեր են:

Թեոտեոս. Ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Եթե ինչ-որ մեկն ասեր, որ ստեղծել է ինձ, քեզ և բոլոր բույսերը:

Թեոտեոս. Ի՞նչ ստեղծման մասին ես խոսում: Դու չես ասի դա հողագործի մասին, քանի որ նկատի ունես կենդանիների ստեղծողին: **234**

Օտարական. Եվ բացի այդ նաև ծովի, երկրի, երկնքի, աստվածների և մնացած ամեն բանի ստեղծողին: Արարելով արագ՝ նա վաճառում է այդ ամենը շատ քիչ դրամով:

Թեոտեոս. Սա ինչ-որ կատակ է:

Օտարական. Իսկ մի՞թե կատակ չէ, երբ ոմն ասում է,

թե ամեն բան գիտի և փոքր վճարի դիմաց կարճ ժամանակում կսովորեցնի դա նաև ուրիշին:

Թեետետոս. Իհարկե:

- b** **Օտարական.** Դու գիտե՞ս կատակի ավելի նուրբ ու գրավիչ տեսակ, քան նմանակումը¹⁶:

Թեետետոս. Ոչ: Դու նշեցիր ամենապարփակ և բոլորը մեկի մեջ միավորող բազմազան տեսակ:

Օտարական. Արդ, մենք գիտենք, որ նա, ով հայտարարում է, թե կարող է ամեն բան ստեղծել միայն արվեստի միջոցով, նկարչական արվեստի միջոցով ստեղծված նմանակումներով և գոյություն ունեցող իրերին համանուն իրերով կարող է խաբել անմիտ երիտասարդներին՝ հեռվից ցույց տալով պատկերվածը և համոզելով, որ ի վիճակի է գործնականում կատարել, ինչ կամենա:

- c** **Թեետետոս.** Ինչպե՞ս չէ:

Օտարական. Եվ ինչ, չե՞նք կարող մտածել, որ խոսքի հարաբերությամբ նույնպես գոյություն ունի ինչ-որ արվեստ, որի օգնությամբ կարելի է բառերով գրավել իրական ճշմարտությունից հեռու գտնվող երիտասարդների ականջները, ցույց տալով ամեն ինչի լեզվական տեսիլները և անելով այնպես, որ ասվածը թվա ճշմարտություն, իսկ ասողը՝ բոլոր հարցերում ամենափմաստունը:

- d** **Թեետետոս.** Իսկ ինչու՞ պիտի գոյություն չունենա նման մի արվեստ:

Օտարական. Մի՞թե բազում լսողներին, ո՛վ Թեետետոս, բավականաչափ ապրելուց և տարիք առնելուց հետո, երբ նրանք առավել սերտ շփման մեջ են մտնում իրականության հետ և կյանքի փորձով հարկադրվում են ավելի սթափ նայել

- e** իրերին, անհրաժեշտ չէ փոխել նախկինում կազմած կարծիքները, այնպես որ փոքրը երևում է մեծ, թեթևը՝ ծանր, իսկ բառերի երևութական ճշմարտությունը հերքվում է իրական գործով:

Թեետետոս. Որքանով կարող են դատել իմ այս տա-

րիքում, դա այդպես է: Սակայն ինձ թվում է, որ ես նույնպես հեռու գտնվողներից եմ:

Օտարական. Ահա ինչու մենք բոլորս կփորձենք, և հիմա էլ փորձում ենք, մոտեցնել քեզ առանց կենսափորձի: Ինչ վերաբերում է սոփեստին, ասա ինձ հետևյալը. պա՞րզ է արդեն, որ լինելով իրականության նմանակող, նա ասես մի հրաշագործ է, թե՞ դեռ վստահ չենք, որ նա իրականում չի տիրում այն ամենի իմացությանը, ինչին, թվում է, կարող է առարկել:

235

Թեոտետոս. Բայց ինչպե՞ս, օտարական: Ասվածից արդեն գրեթե հասկանալի է, որ նա մեկն է նրանցից, ովքեր հաղորդակից են կատակներին:

Օտարական. Այդ դեպքում նրան պետք է համարել հրաշագործ և նմանակող:

Թեոտետոս. Ինչպե՞ս կարելի է չհամարել:

Օտարական. Ուրեմն առաջ: Հիմա մեր գործն է ոչ մի դեպքում բաց չթողնել թռչնին: Քանզի մենք գրեթե բռնել ենք նրան մեր դատողության ցանցը, որից նա այլևս չի փախչի:

b

Թեոտետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Չէ՞ որ նա աճպարարների սեռից է:

Թեոտետոս. Ես համակարծիք եմ քեզ:

Օտարական. Մենք որոշեցինք բաժանել պատկերաստեղծ արվեստը և մուտք գործել դրա մեջ, և եթե սոփեստը իսկույն հայտնվի մեր դեմ, բռնել նրան համաձայն արքայի կարգադրության¹⁷, իսկ այնուհետև փոխանցել նրան արքային և հայտնել ավարի մասին: Իսկ եթե սոփեստը թաքնվի նմանակման արվեստի տարբեր մասերում, մենք պետք է հետևենք նրան, բաժանելով նրան ընդունած մասը, մինչև որ նա չբռնվի: Ընդհանրապես ո՛չ այս, ո՛չ ուրիշ որևէ սեռ գլուխ չի գովի, թե երբևէ փախչել է նրանցից, ովքեր կարող են մաս առ մաս հետապնդել նշված եղանակով:

c

Թեոտետոս. Լավ ես ասում: Այդպես էլ կվարվենք:

Օտարական. Համաձայն բաժանման նախորդ եղանակի՝ հիմա ես տեսնում եմ նմանակման արվեստի երկու

d

տեսակ: Սակայն դեռ չեմ կարողանում հասկանալ, թե որտեղ է մեր փնտրած գաղափարը:

Թեոտետոս. Բայց նախ նշիր և բաժանիր այդ երկու տեսակները մեզ համար:

Օտարական. Ես տեսնում եմ նմանակման արվեստը հետևյալի մեջ. վերջինս տեղի ունի գերազանցապես, երբ ոմն հետևելով բնօրինակի երկարության, լայնության և խորության e համաչափությանը, գունավորելով յուրաքանչյուր հատվածը՝ ստեղծում է նմանակում:

Թեոտետոս. Եվ ինչ, մի՞թե բոլոր նմանակողներն են փորձում անել դա:

Օտարական. Ոչ նրանք, ովքեր քանդակում կամ նկարում են մեծ գործեր: Եթե նրանք փոխանցեին գեղեցիկ իրերի ճշմարիտ համաչափությունը, դու գիտես, որ վերին մասը կլիներ հարկ եղածից փոքր, իսկ ներքևի մասը առավել մեծ, որովհետև առաջինները տեսանելի են հեռվից, իսկ երկրորդները՝ մոտիկից:

Թեոտետոս. Իհարկե:

Օտարական. Այդ դեպքում մի կողմ չե՞ն դնում արդյոք վարպետները ճշմարիտ, ոչ իրական համաչափությունները և իրագործում իրենց պատկերներում ոչ թե իրական, այլ այնպիսի համաչափություններ, որոնք գեղեցիկ են թվում իրենց:

Թեոտետոս. Իհարկե:

Օտարական. Արդար չի՞ լինի այդ նմանը կոչել նմանություն:

Թեոտետոս. Այո:

b Օտարական. Իսկ նմանակման արվեստի այն մասը, որը վերաբերում է սրան, չկոչե՞նք նմանությունների արվեստ:

Թեոտետոս. Կոչենք:

Օտարական. Իսկ ինչպե՞ս կոչենք այն, ինչը մի կողմից թվում է գեղեցիկ, թեև չի դիտվում գեղեցիկի տեսանկյունից, իսկ մյուս կողմից, եթե հնարավոր լինի բավականաչափ դիտարկել, նման չէ նրան, ինչին որ մեր ասելով նման

է: Մի՞թէ պատրանք չէ այն, ինչը թվում է նման, բայց նման չէ:

Թեւտետոս. Անշուշտ:

Օտարական. Այդ մասը մի՞թէ շատ ընդարձակ չէ և՛ գեղանկարչության մեջ, և՛ առհասարակ նմանակման ողջ արվեստում: c

Թեւտետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Ճիշտ չի՞ լինի արդյոք նմանության փոխարեն պատրանքներ ստեղծող արվեստը կոչել պատրանքների արվեստ:

Թեւտետոս. Իհարկէ:

Օտարական. Արդ, սրանք են պատկերաստեղծ արվեստի իմ նշած երկու տեսակները՝ նմանությունների արվեստը և պատրանքների արվեստը:

Թեւտետոս. Ճիշտ է:

Օտարական. Իսկ այն, ինչում ես նախկինում վստահ չէի, այսինքն՝ թե երկու արվեստներից որ մեկին հարկ է դասել սովետսոփն, հիմա էլ չեմ կարողանում հստակ պատկերացնել: d
Դա զարմանալի մարդ է, և նրան շատ դժվար է հասկանալ, քանի որ հիմա էլ թաքնվեց ստորաբաժանման համար անչափ խրթին տեսակի մեջ:

Թեւտետոս. Թերևս այդպես է:

Օտարական. Դու հասկանալով ես համաձայնում, թե՞ քեզ շուտափույթ համաձայնության դրո՞եց սովորության ուժը:

Թեւտետոս. Այդ ասելով ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Իրականում, երանելի՛ բարեկամ, մեզ բաժին է ընկել բավականին դժվար հետազոտություն: Չէ՞ որ երևալն ու թվալը, բայց չլինելը, ինչպես նաև ոչ ճշմարիտ ինչ-որ բան ասելը, – այս ամենը նախկինում էլ միշտ հղի էր բազում դժվարություններով և հիմա նույնպես: Քանզի, **Թեւտետոս**, չափազանց դժվար է հասկանալ, թե ինչպես է ոմն ասում կամ կարծում ինչ-որ կեղծ բան և սա բարձրաձայնելով՝ ոչ մի հակասության մեջ չի ընկնում: e

Թեոփրոս. Ինչու՞:

Օտարական. Այս պնդումը պիտի հանդգներ ենթադրել չգոյության գոյությունը¹⁸: Այլապես հենց կեղծիքը գոյություն չէր ունենա: Մեծն Պարմենիդեսը, տղաս, առաջին անգամ ասաց դա, երբ մենք դեռ երեխա էինք, և մինչև կյանքի վերջը նա վկայում էր դա թե՛ իր արծակում, թե՛ չափածոյում:

*Քանզի երբեք և ոչ մի տեղ, – ասում է նա, – չգոն չի լինում,
Այս ճանապարհից ետ պահիր քո միտքը¹⁹:*

- b** Այսպես է վկայում Պարմենիդեսը, և նրա գլխավոր պնդումը հանգամանալից քննության առնելու դեպքում դա պարզ է դառնում: Եվ եթե քեզ համար միևնույն է, նախ դիտարկենք այս պահը:

Թեոփրոս. Այո, համարի, որ ինձ միևնույն է, սակայն դու պետք է ավելի լավ քննության եղանակ գտնես, զնաս այդ ճանապարհով և ուղեկցես ինձ:

Օտարական. Պետք է այդպես վարվել: Ասա ինձ, կհանդգնե՞նք մենք արդյոք ասել «բացարձակ չգոյություն»:

Թեոփրոս. Ինչպե՞ս չէ:

- c** **Օտարական.** Եվ եթե նրա ունկնդիրներից մեկը ոչ թե հանուն խոսք ու կատակի, այլ լրջորեն ստիպված լիներ պատասխանել, թե ինչի նկատմամբ հարկ է կիրառել «չգոյությունը», մենք ի՞նչ կմտածեինք: Ի՞նչ պիտի աներ նա, ինչպե՞ս պիտի օգտագործեր այդ բառը և ի՞նչ պիտի ցույց տար հարցնողին:

Թեոփրոս. Դժվար բան ես հարցնում, և ինձ համար, կարելի է ասել, զրեթե անհաղթահարելի դժվար:

Օտարական. Սակայն պարզ է, որ չգոյությունը չի կարող կիրառվել գոյություն ունեցողի նկատմամբ:

Թեոփրոս. Իհարկե:

Օտարական. Իսկ եթե գոյություն ունեցողի նկատմամբ չի կիրառվում, ճիշտ չի՞ լինի կիրառել նաև ինչ-որ բանի նկատմամբ:

Թեւտետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Չե՞ որ մեզ համար պարզ է, որ «ինչ-որ բան» արտահայտությունը մենք միշտ կիրառում ենք գոյություն ունեցողի նկատմամբ: Խոսել նրա մասին որպես մերկ, գոյություն ունեցող ամեն ինչից անմասն բանի անհնար է: Այդպես չէ՞:

Թեւտետոս. Այո, անհնար է:

Օտարական. Այսպես խորհելու դեպքում համաձայն ես, որ եթե ոմն ինչ-որ բան է ասում, անհրաժեշտաբար ասում է դա մեկ բանի մասին:

Թեւտետոս. Այդպես է:

Օտարական. Քանզի դու կասես, որ «ինչ-որ բանը» մեկ է, «գույզը» նշանակում է երկուս, իսկ մի քանիսը՝ բազմություն:

Թեւտետոս. Իհարկէ:

Օտարական. Եվ ոչ ինչ-որ բանի մասին խոսողը, ինչպես երևում է, անհրաժեշտաբար չի ասում ընդհանրապես ոչինչ:

Թեւտետոս. Միանգամայն անհրաժեշտաբար:

Օտարական. Այդ դեպքում պետք է համաձայնել, որ նա խոսում է, սակայն ոչինչ չի ասում: Բայց չէ՞ որ նա, ով փորձում է ասել «չգոյություն», ոչ էլ խոսում է:

Թեւտետոս. Այսպես մեր քննության վերջը շատ դժվար կլինի:

Օտարական. Մի չափազանցրու: Քանզի, սիրելիս, կա մի դժվարություն ես, և դա ամենամեծ ու առաջնային դժվարությունն է: Այն առնչվում է հարցի սկզբին:

Թեւտետոս. Ի՞նչ նկատի ունես: Ասա, մի՛ ձգիր:

Օտարական. Հարաբերակցվում է արդյոք մի գոյին մեկ ուրիշ գոյ:

Թեւտետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Իսկ հնարավոր կհամարե՞նք, որ չգոյին հարաբերվի գոյություն ունեցողից ինչ-որ բան:

Թեետետոս. Այդ ինչպե՞ս:

Օտարական. Չէ՞ որ թիվը մենք կիրառում ենք գոյի նկատմամբ:

b Թեետետոս. Եթե առհասարակ պիտի ընդունենք, որ ինչ-որ բան գոյ է:

Օտարական. Ուրեմն մենք նաև չպիտի փորձենք չգոյի նկատմամբ կիրառել ո՛չ մեկը, ո՛չ էլ բազումը:

Թեետետոս. Սա փորձելու դեպքում, համաձայն մեր դատողության, մենք ճիշտ չենք վարվի:

Օտարական. Ուրեմն ինչպե՞ս կարող է ոմն բերանով արտասանել կամ մտքով ընդգրկել գոյություն չունեցող բաները կամ գոյություն չունեցող իրը առանց թվի:

Թեետետոս. Ասա, ինչպե՞ս:

c Օտարական. Երբ մենք ասում ենք «գոյություն չունեցող բաներ», մի՞թե չեն կիրառում հոգնակի թիվ:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Իսկ երբ ասում ենք չգո մի բան, մի՞թե չենք կիրառում եզակի թիվը:

Թեետետոս. Ակնհայտորեն:

Օտարական. Սակայն մենք ամարդար և սխալ ենք համարում գոյն ու չգոն միմյանց հարաբերելը:

Թեետետոս. Շատ ճշմարիտ ես ասում:

Օտարական. Եվ դու հասկանու՞մ ես, որ չգոյությունն ինքնին հնարավոր չէ ո՛չ ճիշտ արտահայտել, ո՛չ էլ մտածել, քանզի այն անմտածելի, անարտահայտելի, անարտաբերելի և անիմաստ է:

Թեետետոս. Իհարկե:

d Օտարական. Ուրեմն ես սխալվեցի՞ք քիչ առաջ՝ ասելով, որ կնշեն դրա հետ կապված մեծագույն դժվարությունը:

Թեետետոս. Բայց չէ՞ որ մենք կարող ենք նշել մեկ ուրիշ՝ ավելի մեծը:

Օտարական. Եվ ինչ, սիրելիս, չե՞ս հասկանում ասվածից, որ չգոյությունը նաև առարկողին դնում է այնպիսի

դժվարության մեջ, որ նրան հերքել փորձողը ստիպված է լինում հակասել ինքն իրեն:

Թեոտետոս. Ի՞նչ նկատի ունես: Ավելի պարզ խոսիր:

Օտարական. Պետք չէ պարզություն ակնկալել ինձնից: Չէ՞ որ ենթադրելով, որ չգոյությունը հաղորդակից չէ ո՛չ մե- e
կին, ո՛չ էլ բազումին, ես հենց նոր խոսեցի նրա մասին որ-
պես մեկի: Ես ասում եմ «այն, ինչ գոյություն չունի»: Հաս-
կանու՞մ ես:

Թեոտետոս. Այո:

Օտարական. Քիչ առաջ ես ասացի, որ այն անարտա-
բերելի, անարտահայտելի և անիմաստ է: Դու հետևու՞մ ես
ինձ:

Թեոտետոս. Հետևում եմ: Ինչպե՞ս չէ:

Օտարական. Սակայն փորձելով գոյությունը միացնել
չգոյությանը՝ ես մի՞թե չասացի նախորդի հակառակը: 239

Թեոտետոս. Այդպես է թվում:

Օտարական. Եվ ինչ, միացնելիս մի՞թե չասացի, որ
չգոյությունը մեկն է:

Թեոտետոս. Այո:

Օտարական. Եվ ասելով, որ չգոյությունը անիմաստ,
անարտահայտելի և անարտաբերելի է, ես խոսում էի դրա
մասին որպես մեկ բանի:

Թեոտետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Բայց մենք ասում ենք, որ ոմն արտա-
հայտվում է ճիշտ, եթե չի սահմանում չգոյությունը ո՛չ որպես
մեկ, ո՛չ որպես բազում և ընդհանրապես չի անվանում այն:
Քանզի այդ դեպքում էլ այն կոհտվեր որպես մեկ:

Թեոտետոս. Միանգամայն ճիշտ է:

Օտարական. Իսկ ի՞նչ կարելի է ասել իմ մասին: Չէ՞ b
որ առաջվա նման ես հիմա էլ կարող եմ պարտություն կրել
չգոյության իմ բացահայտումներում: Հետևաբար, ինչպես
ասացի, չփնտրենք իմ խոսքում չգոյության մասին ճիշտ
պնդումներ, այլ քննենք քեզ:

Թեետետոս. Ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Փորձիր հնարավորինս հավաքել ուժերդ, ինչպես դա վայել է քեզ պես երիտասարդին, և ճշմարիտ մի բան ասա չգոյության մասին՝ չկցելով դրան ո՛չ գոյություն, ո՛չ միասնություն, ո՛չ էլ բազմություն:

c **Թեետետոս.** Նման փորձ անելու շատ տարօրինակ ցանկությունը թերևս համակեր ինձ, եթե աչքիս առաջ ունենայի քո փորձը:

Օտարական. Եթե այդպես ես մտածում, թողնենք ինձ ու քեզ, քանի դեռ չենք գտել այնպիսի մեկին, ով կարենար դա անել, իսկ մինչ այդ ասենք, որ սովեստը շատ հմուտ կերպով թաքնվեց դժվարամատչելի տեղում:

Թեետետոս. Դա միանգամայն ակնհայտ է:

d **Օտարական.** Եվ եթե ասենք, որ նա տիրում է պատրանքներ ստեղծելու արվեստին, ապա կառչելով այդ բառօգտագործումից՝ նա կշրջի այն հակառակ ուղղությամբ և կհարցնի մեզ, թե ինչ նկատի ունենք ընդհանրապես պատկեր ասելով, երբ նրան կոչում ենք պատկերներ ստեղծող: Այնպես որ, Թեետետոս, պետք է մտածել, ինչ պատասխանել երիտասարդի հարցին:

Թեետետոս. Պարզ է, որ մենք կնշենք ջրի և հայելու մեջ գոյացող պատկերները, այնուհետև նկարներն ու քանդակները և բոլոր մյուս այդպիսի բաները:

e **Օտարական.** Ակնհայտ է, Թեետետոս, որ դու դեռ չես հանդիպել սովեստի:

Թեետետոս. Ինչու՞:

Օտարական. Քեզ կթվա, թե նա կկոցում է աչքերը կամ ընդհանրապես զուրկ է աչքերից:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Երբ դու պատասխանես նրան այդպես՝ խոսելով հայելիների և քանդակների մասին, նա կծիծաղի քո բացատրությունների վրա, որովհետև դու կխոսես նրա հետ որպես տեսնողի, իսկ նա կձևացնի, թե չգիտի ո՛չ հայելիներ,

ո՛չ ջուր, ո՛չ էլ տեսանելի ուրիշ ինչ-որ բան և կհարցնի քեզ միայն խոսքից բխողի մասին:

Թեետետոս. Ինչի՞ մասին:

Օտարական. Նրա, ինչը գոյություն ունի բոլոր այս բաների մեջ, որոնք քո ասելով բազմաթիվ են, սակայն քո կողմից նշվում են մեկ անունով, երբ այդ բոլորը կոչում են պատկեր, ասես դրանք մեկ բան են:

Թեետետոս. Ո՛վ օտարական, իսկ ի՞նչ ասենք պատկերի մասին, եթե ոչ այն, որ դա ճշմարիտ իրի նմանություն է՝ ինքը լինելով ուրիշ այդպիսի իր:

Օտարական. Իսկ ուրիշ այդպիսի իրը համարում են ճշմարիտ: Ի՞նչ նկատի ունես ասելով «այդպիսի»:

b

Թեետետոս. Նկատի ունեմ, որ այն ոչ թե ճշմարիտ, այլ նման է:

Օտարական. Չէ՞ որ դու ճշմարիտ են համարում իրական գոյը:

Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Ուրեմն ի՞նչ: Մի՞թե ոչ ճշմարիտը հակադիր չէ ճշմարտին:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Ուրեմն նմանը դու չես համարում իրական գոյ, քանի որ կոչում են այն ոչ ճշմարիտ:

Թեետետոս. Բայց չէ՞ որ այն գոյություն ունի:

Օտարական. Սակայն, ինչպես ինքդ ասացիր, ոչ ճշմարիտ կերպով:

Թեետետոս. Ոչ: Այն սոսկ պատկեր է:

Օտարական. Ուրեմն այն, ինչն իրականում գոյություն չունենալով գոյություն ունի, մենք կոչում ենք պատկեր:

Թեետետոս. Երևում է, գոյությունը և չգոյությունը միահյուսվելով իրար դարձան շատ անհեթեթ մի բան:

c

Օտարական. Իհարկե անհեթեթ: Տեսնու՞մ են, այդ խճճման շնորհիվ բազմազուխ սուփեստը²⁰ ստիպեց մեզ ակամա համաձայնել, որ չգոյությունը ինչ-որ ձևով գոյություն ունի:

Թեետետոս. Տեսնում եմ, այն էլ ինչպես:

Օտարական. Եվ ի՞նչ: Ինչպե՞ս սահմանենք նրա արվեստը, որպեսզի համաձայնության գանք ինքներս մեզ հետ:

Թեետետոս. Ինչու՞ ես այդպես ասում: Ի՞նչն է վախեցնում քեզ:

- d Օտարական. Երբ մենք ասում ենք, թե սոփեստը խաբում է պատրանքների միջոցով և նրա արվեստը խաբելության արվեստ է, չե՞նք պնդում արդյոք, որ մեր հոգին նրա արվեստի պատճառով կեղծ կարծիք է կազմում: Գուցե ա՞յլ բան պիտի ասենք:

Թեետետոս. Ոչ, հենց այդ: Ուրիշ ի՞նչ կարող ենք ասել:

Օտարական. Իսկ կեղծ կարծիքը հակառակ է գոյություն ունեցողին, թե՞ ոչ:

Թեետետոս. Հակառակ է:

Օտարական. Իսկ ինչ կասես, կեղծ կարծիք կազմելը նշանակում է կարծիք կազմել չգոյությա՞ն մասին:

Թեետետոս. Անհրաժեշտաբար:

- e Օտարական. Իսկ դա նշանակում է կարծիք ունենալ, որ չգոն գոյություն չունի՞, թե՞ որ բոլորովին չգոն գոյություն ունի:

Թեետետոս. Սակայն չգոն պիտի որ ինչ-որ կերպ գոյություն ունենա, եթե իհարկե ոմն երբևէ պիտի ստի գեթ անշան մի հարցում:

Օտարական. Եվ ի՞նչ: Մի՞թե նա չի կարծի, որ ստուգապես գոյություն ունեցող բաները բոլորովին գոյություն չունեն:

Թեետետոս. Այո:

Օտարական. Սա նու՞յնպես կեղծիք է:

Թեետետոս. Նույնպես:

- 241 Օտարական. Եվ պնդումը, թե գոյություն ունեցողը գոյություն չունի կամ գոյություն չունեցողը գոյություն ունի, ըստ իս նույնպես կեղծ կլինի:

Թեետետոս. Ինչպե՞ս կարող է չլինել:

Օտարական. Գուցեն չի կարող, բայց ոչ սովետստի համար: Ինչպե՞ս կարելի է համոզել ողջամիտ մարդուն, եթե սրանից առաջ համաձայնեցինք, որ այն, ինչի մասին խոսում ենք, անարտաբերելի, անարտահայտելի, անբացատրելի և անմտածելի է: Հասկանու՞մ ենք արդյոք, ո՛վ թե՛տետոս, սովետստի ասածը:

Թե՛տետոս. Ինչպե՞ս չենք հասկանում: Նա կասի, որ հանդգնելով պնդել, իբր սուտն առկա է նաև կարծիքների և խոսքի մեջ, մենք պնդում ենք քիչ առաջ ասվածի հակառակը: Քանզի մենք հաճախ ստիպված ենք գոյություն ունեցողը միացնել գոյություն չունեցողի հետ, թեպետ հիմա համաձայնեցինք, որ դա միանգամայն անհնար է:

b

Օտարական. Լավ հիշեցրիր: Սակայն հարկ է որոշել, թե ինչպես վարվենք սովետստի հետ: Դու տեսնում ես, թե ինչ հեշտությամբ ու առատությամբ են գոյանում առարկություններն ու դժվարությունները, երբ մենք փնտրում ենք նրան խաբեբաների ու ստախոսների արվեստի մեջ:

Թե՛տետոս. Այն էլ ինչպես եմ տեսնում:

Օտարական. Մենք հետևեցինք նրանց փոքր մասին, մինչդեռ նրանք ըստ էության անվերջ շատ են:

c

Թե՛տետոս. Երևում է, սովետստին անհնար է որսալ, եթե ամեն բան այսպես է:

Օտարական. Եվ ինչ, փոքրոգաբար նահանջե՞նք:

Թե՛տետոս. Ես կասեի, որ անգամ աննշան հնարավորության դեպքում մենք պիտի շարունակենք որսալ այդ մարդուն:

Օտարական. Այդ դեպքում պիտի ներողամիտ լինես և, ինչպես ասացիր քիչ առաջ, գոհանաս, եթե մենք կամացկամաց մի կերպ դուրս գանք այս դժվարին խորհրդածությունից:

Թե՛տետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Ես ունեմ մեկ ուրիշ, ավելի մեծ խնդրանք ևս:

d

Թեետետոս. Ի՞նչ խնդրանք:

Օտարական. Մի՛ կարծիր, թե ես վերածվում եմ ինչ-որ հայրասպանի:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Պաշտպանվելով, մենք ստիպված ենք ստուգել մեր հոր՝ Պարմենիդեսի ուսմունքը և ջանադիր կերպով պետք է փորձենք ցույց տալ, որ չգոյությունը ինչ-որ առումով գոյություն ունի և որ գոյությունն իր հերթին ինչ-որ իմաստով գոյություն չունի:

Թեետետոս. Ակնհայտ է, որ մենք պիտի կռիվ տանք հանուն նման մի բանի:

Օտարական. Ինչպես ասում են, դա կույրին էլ պարզ է: Որովհետև քանի դեռ մենք չենք հերքել դա կամ չենք ընդունել, որ ոչ ոք չի խոսի կեղծ խոսքերի կամ կարծիքների մասին, լինեն դրանք պատկերների, նկարների, նմանակումների, պատրանքների, թե դրանց առնչվող արվեստների վերաբերյալ, առանց ինքն իրեն հակասելու և զավեշտի առարկա դառնալու:

Թեետետոս. Շատ ճիշտ է:

242 Օտարական. Ահա ինչու հիմա մենք պիտի հանդգնենք դեմ դուրս գալ մեր հոր խոսքին կամ էլ մի կողմ թողնենք ամեն բան, եթե վախճ խանգարի մեզ ամել դա:

Թեետետոս. Սակայն մեզ ոչ մի բան ոչ մի դեպքում չպիտի խանգարի:

Օտարական. Ես ունեմ նաև երրորդ փոքր խնդրանքը:

Թեետետոս. Միայն ասա:

Օտարական. Քիչ առաջ նշեցի, որ միշտ անհույս եմ համարել այս ամենի բացահայտումը: Դիմա էլ այդպես եմ կարծում:

Թեետետոս. Այո, դու ասել ես այդ մասին:

Օտարական. Վախենամ, պատումներիս պատճառով խելագար թվամ քեզ, քանի որ ասես գլխիվայր շուռ պիտի գամ: Այդուհանդերձ հանուն քեզ ես հանձն եմ առնում այդ

ուսմունքի բացահայտումը, և գուցե մեզ հաջողվի դա անել:

Թեոտեոս. Ինձ թվում է, որ բացահայտմանն ու ապացույցին դիմելով՝ դու արգելված ոչինչ չես անի, այնպես որ գոտեպնդվիր և առաջ շարժվիր:

Օտարական. Թող այդպես լինի: Ինչի՞ց սկսենք այդ վտանգավոր խորհրդածությունը: Ես կարծում եմ, տղաս, որ մենք պիտի շարժվենք հետևյալ ուղղությամբ:

Թեոտեոս. Ո՞րն է այդ ուղղությունը:

Օտարական. Նախ մենք կդիտարկենք այս պահին ակնհայտ թվացողը, որպեսզի չընկնենք մոլորության մեջ և հեշտությամբ համաձայնենք միմյանց, իբրև թե ճիշտ դատողության ենք հանգել:

Թեոտեոս. Խոսիր ավելի հստակ, ասա՛, ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Ինձ թվում է, թե Պարմենիդեսը և ցանկացած մեկը, ով երբևէ փորձել է քննադատաբար սահմանել գոյի քանակն ու որակը, խոսել են մեզ հետ շատ թեթևամտորեն:

Թեոտեոս. Ինչպե՞ս:

Օտարական. Նրանցից յուրաքանչյուրը հեքիաթ է պատմում մեզ, ասես երեխաների: Մեկն ասում է, որ գոյը եռակի է և նրա մասերը երբեմն պատերազմում են միմյանց դեմ²¹, երբեմն էլ բարեկամանում են, ամուսնանում, զավակ ծնում ու կրթում: Մեկ ուրիշն ասում է, թե գոյը երկակի է՝ խոնավ ու չոր, տաք ու սառը, և որ դրանք բնակվում են միասին ու ամուսնանում: Մեր էլեական ցեղը, սկսած Քսենոփանեսից և դեռ նրանից էլ առաջ, իր պատումներում հաստատում է, որ «ամեն բան» ասածը մեկն է²²: Ավելի ուշ հոնիական և սիկիլիական մուսաները²³ հասկացան, որ ավելի ապահով է ի մի բերել այդ երկուսն ու ասել, որ գոյը բազում է և մեկն է և որ պահվում է թշնամությամբ ու բարեկամությամբ: Քանզի բաժանվողը միշտ միանում է, ինչպես ասում են ավելի խիստ մուսաները: Իսկ առավել համեստները պնդում են, թե ամեն

243 ինչ մշտապես մերթ մեկն է ու սիրված Ափրոդիտեի կողմից, մերթ բազում է և ինչ-որ վեճի պատճառով պառակտված ինքն իր հետ: Իսկ թե ճիշտ է արդյոք դրա մասին ասում նրանցից յուրաքանչյուրը, դժվար է պարզել, ինչպես նաև դժվար է մեղադրել հին ու նշանավոր մարդկանց այնպիսի մեծ մեղքի մեջ, ինչպիսին է սուտը: Սակայն մի բան համոզիչ է թվում:

Թեետետոս. Ի՞նչը:

Օտարական. Այն, որ նայելով մեզ բարձրից՝ նրանք մեզ մեծ նշանակություն չեն տալիս: Քանզի չմտախոզվելով, հետևում ենք արդյոք իրենց խոսքին, թե ոչ, նրանցից յուրաքանչյուրը շարունակում է ասել իրենը:

b

Թեետետոս. Ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Երբ նրանցից որևէ մեկը հայտարարում է, թե բազումը, մեկը կամ երկուսը գոյություն ունի կամ գոյանում է, որ տաքը խառնվում է պաղին և որ ենթադրվում են ուրիշ բաժանումներ ու խառնուրդներ, — հանդիսանում ենք մտավածների, Թեետետոս, մի՞թե ամեն անգամ դու հասկանում ես նրանց ասածը: Երիտասարդ տարիքում ինձ թվում էր, թե ես հրաշալիորեն հասկանում եմ չգոյության մասին որևէ մեկի ասածները: Մինչդեռ հիմա մենք դժվարանում ենք դրանում:

c **Թեետետոս.** Տեսնում եմ:

Օտարական. Հավանաբար, գոյության հարցում մեր հոգում միևնույն վիճակն է: Երբ ինչ-որ մեկը խոսում է գոյության մասին, մենք ասում ենք, թե հասկանում ենք նրան, իսկ երբ նա խոսում է չգոյության մասին, ասում ենք, որ չենք հասկանում: Մինչդեռ երկու դեպքում էլ նույն բանն է:

Թեետետոս. Թերևս:

Օտարական. Եվ նախկինում հիշատակված մյուս բաների մասին պետք է ասվի նույնը:

Թեետետոս. Իհարկե:

d **Օտարական.** Եթե կուզես, շատ բաների մասին մենք կխոսենք հետագայում, իսկ կարևորագույնի և առաջնագույնի մասին հարկ է խոսել հիմա:

Թեւտետոս. Ինչի՞ մասին ես խոսում: Պարզ է, որ առաջին հերթին հարկ է հետազոտել գոյությունը և պարզել, թե ինչ է այն նշանակում նրանց մոտ, ովքեր խոսում են դրա մասին:

Օտարական. Դու, Թեւտետոս, կրնակալոխ հետևում ես ինձ: Ես ասում եմ, որ մենք պիտի ընդունենք հետևյալ մեթոդը: Դիցուք, նրանք ներկա են այստեղ, և մենք հարցնում ենք. «Դուք, ում պնդմամբ տաքն ու սառը կամ մեկ ուրիշ երկակի բան գոյություն ունի միասին և առանձին,— ինչպե՞ս հասկանանք ձեր «գոյությունը»: Պե՞տք է արդյոք այդ երկուսից բացի ենթադրել երրորդը և հետևաբար ամեն ինչ համարել եռակի և ոչ երկակի: Չէ՞ որ եթե երկուսից մեկը կոչեք գոյություն, չեք կարող ասել, թե երկուսն էլ նմանապես գոյություն ունեն: Քանզի երկու դեպքում էլ գոյություն կունենար մեկը, բայց ոչ երկուսը»:

e

Թեւտետոս. ճշմարիտ ես ասում:

Օտարական. «Թե՞ երկուսն էլ ուզում եք գոյություն կոչել»:

Թեւտետոս. Գուցե:

Օտարական. «Բարեկամներ,— կասենք,— այդ դեպքում դուք միանգամայն պարզորոշ կերպով երկուսը կկոչեիք մեկ»:

244

Թեւտետոս. Շատ ճիշտ է:

Օտարական. «Քանի որ մենք հայտնվել ենք դժվար կացության մեջ, մատչելի կերպով բացատրեք մեզ, թե ինչ եք ուզում նշել, երբ ասում եք գոյություն: Չէ՞ որ պարզ է, դուք դա վաղուց գիտեք, իսկ մենք նախկինում կարծում էինք, թե գիտենք, իսկ հիմա դժվարանում ենք: Նախ սովորեցրեք մեզ, որպեսզի մենք չկարծենք, թե հասկանում ենք ձեր ասածները, այն դեպքում երբ բոլորովին չենք հասկանում:» Մի՞թե սխալ կլինի, եթե այսպիսի պահանջով դիմենք նրանց և ուրիշներին, ովքեր ասում են, թե ամենը մեկից շատ է:

b

Թեւտետոս. Բնավ:

Օտարական. Եվ ի՞նչ: Չպե՞տք է ուրեմն ամենը մեկ

համարողներից հնարավորինս պարզեմք, թե ինչն են նրանք կոչում գոյություն:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Նրանք պիտի պատասխանեն հետևյալ հարցին. «Դուք ասում եք, թե գոյություն ունի միայն մե՞կը»: Նրանք կպատասխանեն. «Ասում ենք»: Թե՞ ոչ:

Թեետետոս. Այո:

Օտարական. «Եվ ի՞նչ: Կա՞ մի բան, որը դուք կոչում եք գոյություն:»

Թեետետոս. Այո:

c Օտարական. «Այն, ինչը կոչում եք մեկ, և որի համար երկու անու՞ն ունեք, թե՞ այլ բան»:

Թեետետոս. Ո՞րը կլինի նրանց հաջորդ պատասխանը, օտարական:

Օտարական. Ակնհայտ է, Թեետետոս, որ այսպիսի ենթադրություն անողի համար հեշտ չէ պատասխանել այս և ուրիշ շատ հարցերի:

Թեետետոս. Ինչու՞:

Օտարական. Ընդունել երկու անուն, երբ համարում են, որ մեկից բացի ոչինչ գոյություն չունի, զավեշտալի կլիներ:

Թեետետոս. Իհարկե կլիներ:

Օտարական. Եվ ընդհանրապես, ընդունել, որ անունը ինչ-որ բան է, անհիմաստ է:

Թեետետոս. Ինչու՞:

d Օտարական. Իրից տարբեր անուն ընդունողը խոսում է երկուսի մասին:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եթե նա նույնն է համարում իրը և անունը, ապա ստիպված է ասել, որ դա ոչնչի անուն է, կամ էլ եթե ասի, որ դա ոչնչի անուն է, դա կլինի միայն անվան անուն, և ոչ ուրիշ ինչ-որ բանի:

Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Մեկը նույնպես, քանի որ մեկի անունն է, մեկ է միայն ըստ անվան:

Թեետետոս. Անհրաժեշտաբար:

Օտարական. Եվ ի՞նչ: Մի՞թե ամբողջը տարբեր է մեկ գոյից, թե՞ նրանց պնդմամբ դրանք նույնն են:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ, նրանք արդեն ասել են դա: e

Օտարական. Եթե ամբողջը, ինչպես ասում է Պարմենիդեսը,

Բոլոր կողմերից նման է գնդածն զանգվածի

*եվ մեջտեղից նույն չափն ունի բոլոր տեղերում, քանզի
ո՛չ ավել,*

Ո՛չ էլ պակաս չափով պիտի լինի և՛ այստեղ, և՛ այնտեղ²⁴,

ապա գոյությունն ունի մեջտեղ և ծայրեր, իսկ եթե ունի սրանք, անհրաժեշտաբար ունի նաև մասեր:

Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Սակայն ոչինչ չի խանգարում, որ մաս- 245
նատվածը ամեն մասի մեջ լինի մեկ և այդպերպ լինի ամեն, ամբողջ և մեկ:

Թեետետոս. Ինչու՞ չէ:

Օտարական. Բայց անհնար է, որ այդ վիճակը լինի ինքը մեկը:

Թեետետոս. Ինչու՞:

Օտարական. Համաձայն ճիշտ դատողության՝ իսկական մեկը պիտի համարվի առհասարակ մասերից զուրկ:

Թեետետոս. Իհարկե պիտի:

Օտարական. Իսկ բազում մասերից կազմված լինելու Բ
դեպքում այն կհակասի դատողությանը:

Թեետետոս. Հասկանում եմ:

Օտարական. Իսկ ունենալով մեկի հատկություն՝ կլինի՞ արդյոք գոյությունը մեկ և ամբողջ, թե՞ առհասարակ պետք չէ ասել, որ գոյն ամբողջ է:

Թեետետոս. Դժվար ընտրություն ես առաջարկում ինձ:

Օտարական. Շատ ճիշտ ես ասում: Քանզի եթե գոյությունը ինչ-որ ձևով մեկն է, այն նույնական չէ մեկին, և ամենը ավելի շատ կլինի մեկից:

Թեևտետոս. Այո:

c Օտարական. Եվ եթե գոյությունը ամբողջ է ոչ թե մեկության շնորհիվ, այլ հենց ամբողջի, ապա գոյությանը պակասում է ինքը գոյությունը:

Թեևտետոս. Իհարկե:

Օտարական. Համաձայն այս փաստարկի՝ գոյությունը, գրկվելով ինքն իրենից, կլինի չգոյություն:

Թեևտետոս. Այդպես է:

Օտարական. Եվ ամենը դարձյալ մեկից ավելի շատ է դառնում, եթե գոյությունն ու ամբողջը ստացել են իրենց առանձին բնությունը:

Թեևտետոս. Այո:

d Օտարական. Իսկ եթե ամբողջն ընդհանրապես գոյություն չունի, նույն բանին է ենթարկված նաև գոյությունը և չլինելուց գատ կարող է նաև երբևէ չդառնալ գոյություն:

Թեևտետոս. Ինչու՞:

Օտարական. Դարձողը գոյություն է դառնում դառնալով ամբողջ: Ուստի ո՛չ գոյության, ո՛չ էլ գոյացման մասին չպետք է խոսվի որպես գոյություն ունեցողների մասին, եթե գոյություն ունեցող բաների մեջ չի ենթադրվում ամբողջ:

Թեևտետոս. Թվում է, միանգամայն այդպես է:

Օտարական. Եվ ոչ ամբողջը չպիտի ունենա քանակություն: Քանզի քանակություն ունենալու դեպքում, ինչպիսին էլ լինի այդ քանակությունը, այն անհրաժեշտաբար պիտի լինի այդ քանակության ամբողջ:

Թեևտետոս. Իհարկե:

e Օտարական. Եվ բյուրավոր ուրիշ բաներից յուրաքանչյուրը բովանդակում է դժվարություններ, որոնք ծառանում են նրա առաջ, ով ասում է, թե գոյությունը կա՛մ երկակի է, կա՛մ էլ մեկն է:

Թեետետոս. Սա ի դերս է հանում այն, ինչն արդեն գրեթե պարզ էր: Չէ՞ որ մեկ բան հետևում է մյուսին՝ իր հետ բերելով նախապես ասվածին առնչվող մեծ ու խրթին մոլորություններ:

Օտարական. Մենք ամենևին էլ լավ չքննեցինք նրանց, ովքեր ջանասիրաբար ուսումնասիրում են գոյությունը և չգոյությունը, սակայն դա էլ բավական է: Պետք է քննել նաև նրանց, ովքեր այլ բան են ասում, որպեսզի այդ ամենից ելնելով տեսնենք, որ ասել, թե ինչ է գոյությունը, ավելի դյուրին է, քան ասել, թե ինչ է չգոյությունը:

246

Թեետետոս. Ուրեմն հարկավոր է դեմ դուրս գալ նաև վերջիններիս:

Օտարական. Նրանք կարծես գիզանտների կռիվ են ելնում, որի պատճառը գոյության մասին վեճն է:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Ոմանք ամեն ինչ իջեցնում են երկնքից և անտեսանելի ոլորտից, ասես ծեռքերով գրկում իսկական ժայռերն ու ծառերը: Բռնելով դա՝ նրանք պնդում են, թե գոյություն ունի սոսկ այն, ինչին կարելի է դիպչել և ինչը կարելի է շոշափել, իսկ մարմինն ու գոյությունը սահմանում են որպես նույնական բաներ, և մյուսներին, ովքեր ասում են, թե գոյությունն անմարմին ինչ-որ բան է, արհամարհում են և ոչինչ չեն ուզում լսել նրանցից²⁵:

b

Թեետետոս. Դու խոսում ես ահավոր մարդկանց մասին: Ես նույնպես հանդիպել եմ նրանցից շատերին:

Օտարական. Ահա ինչու նրանց հետ վիճաբանողները զգուշորեն պաշտպանվում են վերկից՝ անտեսանելի ոլորտից, պնդելով, որ ճշմարիտ գոյությունը մտահասու և անմարմին գաղափարներն են²⁶: Իսկ հակառակորդների նշած մարմիններն ու ճշմարտությունը փոքր մասերի բաժանելով՝ իրենց դատողություններում գոյության փոխարեն կոչում են կայացում, այսինքն՝ շարժում ինչ-որ բան: Երկու կողմերի միջև, Թեետետոս, այս առիթով մշտապես մեծ կռիվ է:

c

Թեետետոս. Ճշմարիտ է:

Օտարական. Ուրեմն երկու կողմերից էլ մենք պիտի բացատրություն ստանանք, թե ինչ են նրանք համարում գոյություն:

Թեետետոս. Իսկ ինչպե՞ս ստանանք:

Օտարական. Այն ավելի հեշտ է ստանալ նրանցից, ովքեր գոյությունը տեսնում են գաղափարների մեջ: Քանզի նրանք ավելի համերաշխ են: Իսկ նրանցից, ովքեր ամեն բան
d հանգեցնում են մարմնին, ավելի դժվար է և հավանաբար՝ գրեթե անհնար: Ինձ թվում է, որ մենք պիտի այսպես վարվենք նրանց հետ:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Լավագույնը, եթե հնարավոր լիներ, գործով նրանց կատարելագործելն էր: Բայց եթե դա չհաջողվի, կանենք խոսքով՝ ենթադրելով, որ նրանք ուզում են քիչ առաջ տրված պատասխաններից առավել հիմնավոր պատասխաններ տալ մեզ: Այն, ինչին համաձայնել են լավագույն մարդիկ, ավելի ուժեղ է նրանից, ինչին համաձայնել են վատթարները: Սակայն մենք հոգ ենք տանում ոչ թե նրանց, այլ ճշմարտության մասին:

e Թեետետոս. Շատ ճիշտ է:

Օտարական. Կարգադրի՛ր ուրեմն կատարելագործվածներին պատասխանել քեզ և պարզաբանի՛ր նրանց ասածները:

Թեետետոս. Թող այդպես լինի:

Օտարական. Թող նրանք ասեն, կա՞ այնպիսի մի բան, ինչպիսին մահկանացու կենդանին է:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Իսկ կհամաձայնե՞ն արդյոք, որ դա հոգի ունեցող մարմին է:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Իսկ հոգին գոյություն ունեցող բան համարու՞մ են:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ ի՞նչ: Չե՞ն ասում արդյոք, որ մի հոգին արդար է, իսկ մեկ ուրիշը՝ անարդար, առաջինը խոհեմ է, իսկ մյուսը՝ անխոհեմ:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Եվ չե՞ն ասում, որ արդարության ներկայության շնորհիվ յուրաքանչյուր հոգի դառնում է արդար, իսկ անարդարության ներկայությամբ՝ անարդար:

Թեետետոս. Այո, և նրանք համաձայն են, որ այդպես է:

Օտարական. Բայց այն, ինչը կարող է ներկա կամ բացակա լինել, կասեն նրանք, անպայմանորեն գոյություն ունի:

Թեետետոս. Այո, կասեն:

Օտարական. Իսկ երբ արդարությունը, բանականությունը, մյուս առաքինություններն ու դրանց հակադրությունները գոյություն ունեն և գոյություն ունի հոգի, որի մեջ գոյանում է այդ ամենը, ասու՞մ են արդյոք, թե դրանցից գեթ մեկը տեսանելի կամ շոշափելի է կամ որ դրանք բոլորը տեսանելի են:

Թեետետոս. Դրանցից գրեթե ոչ մեկը տեսանելի չէ:

Օտարական. Եվ ինչ, մի՞թե նրանք ասում են, թե նման բաները մարմին ունեն:

Թեետետոս. Այս դեպքում նրանք նույն պատասխանը չեն տալիս, այլ նրանց թվում է, թե ինքը հոգին մարմին ունի, իսկ բանականության և հարցրածդ ամեն ինչի վերաբերյալ նրանք չեն համարձակվում համաձայնել, որ դրանք գոյություն չունեն կամ որ դրանք բոլորը մարմիններ են:

Օտարական. Մեզ համար պարզ է, Թեետետոս, որ այդ մարդիկ կատարելագործվել են: Քանզի նրանց մեջ եղած սպարտերը և ավտոքթոնները²⁷ չէին վարանի հանդգնել և ասել, որ այն, ինչ չեն կարող շոշափել իրենց ձեռքերով, ոչինչ է:

Թեետետոս. Նրանք մտածում են գրեթե ասածիդ պես:

Օտարական. Նորից հարցնենք նրանց: Եթե համաձայ-

d նեն, որ գոյություն ունեցող ամենամեծն է և ամենափոքունն է, դա արդեն բավական կլինի: Քանզի այդ դեպքում նրանք միաժամանակ պիտի ասեն, թե ինչն է ի բնե հատուկ և՛ մարմնավոր, և՛ անմարմին իրերին և ինչին նայելով նրանք պնդում են, թե երկուսն էլ գոյություն ունեն: Գուցե նրանք հայտնվեն դժվարության մեջ: Սակայն եթե դա պատահի, տե՛ս, կուզե՞ն արդյոք նրանք ընդունել և համաձայնել, որ գոյությունն այսպիսին է:

Թեոտետոս. Ինչպիսի՞ն: Ասա, և մենք իսկույն կհմանանք:

e **Օտարական.** Ես պնդում եմ՝ ամեն բան, որ ի բնե ունակ է ազդել ուրիշի վրա կամ ազդեցություն կրել անգամ շատ աննշան ինչ-որ բանից և միայն մեկ անգամ, իսկապես գոյություն ունի: Ես այսպես եմ սահմանում գոյը. դա ոչ այլ ինչ է, եթե ոչ ունակություն:

Թեոտետոս. Ներկայում ավելի լավ ասելիք չունենալու պատճառով նրանք ընդունում են այդ սահմանումը:

Օտարական. Հրաշալի է: Քիչ հետո գուցե և՛ մեզ, և՛ նրանց ուրիշ բան թվա: Սակայն համաձայնեցնենք դա նրանց հետ այն ձևով, որով հիմա առաջարկեցինք:

Թեոտետոս. Թող այդպես լինի:

Օտարական. Իսկ այժմ անցնենք մյուսներին՝ գաղափարների բարեկամներին: Մեկնի՛ր մեզ համար նրանց փաստարկները:

Թեոտետոս. Կփորձեմ:

Օտարական. Դուք խոսում եք կայացման և գոյության մասին՝ տարբերակելով դրանք: Այդպես չէ՞:

b **Թեոտետոս.** Այո:

Օտարական. Եվ մարմնով, այսինքն զգայության միջոցով ենք մենք հաղորդակից դառնում կայացմանը, իսկ հոգով, այսինքն խորհրդածության միջոցով՝ իսկական կեցությանը, որի մասին դուք ասում եք, թե մշտապես նույնն է, իսկ կայացումը՝ մշտապես տարբեր:

Թեւտետոս. Այո, ասում ենք:

b

Օտարական. Բայց այդ դեպքում, ո՞վ ազնվագոյն մարդիկ, ի՞նչ նկատի ունեք, երբ երկու դեպքում էլ ասում եք «հաղորդակից դառնալ»: Մի՞թե ոչ այն, ինչի մասին հենց նոր խոսում էինք:

Թեւտետոս. Ի՞նչը:

Օտարական. Որևէ ունակությամբ առաջ բերված ներգործությունը կամ կրավորությունը, որոնք գոյանում են երկու իրերի հանդիպումից: Գուցե դու չես լսում նրանց պատասխանը, Թեւտետոս, բայց ես, քանի որ սովոր եմ նրանց, լավ լսում եմ:

Թեւտետոս. Եվ ի՞նչ են պատասխանում:

Օտարական. Նրանք համաձայն չեն մեզ այն բանի շուրջ, ինչը հողածինների առիթով ասվեց գոյության մասին:

c

Թեւտետոս. Ո՞րն էր դա:

Օտարական. Որպես գոյի բավարար սահմանում մենք առաջադրեցինք, որ ամեն բան կարող է կրել և ներգործել նաև աննշան չափով:

Թեւտետոս. Այո:

Օտարական. Դրա դեմ, սակայն, նրանք առարկում են, թե կրելն ու ներգործելը հատուկ է կայացմանը, մինչդեռ գոյության հետ դրանցից և ոչ մեկը կապված չէ:

Թեւտետոս. Եվ մի՞թե որոշ իմաստով իրավացի չեն:

Օտարական. Մենք կպատասխանենք, որ պիտի ավելի հստակ կերպով տեղեկանանք նրանցից՝ համաձայն են արդյոք, որ հոգին ճանաչում է, իսկ գոյությունը ճանաչվում:

Թեւտետոս. Նրանք այդպես են ասում:

Օտարական. Եվ ինչ, ինչ են համարում ճանաչելն ու ճանաչվելը՝ ներգործություն՞ն, թե՞ կրավորություն, թե՞ երկուսն էլ միասին:

d

Թեւտետոս. Պարզ է, որ ո՛չ այս և ո՛չ էլ այն: Քանզի այդ դեպքում նրանք կասեին մախորդ պնդումների հակառակը:

e **Օտարական.** Հասկանում եմ: Եթե ճանաչել նշանակում է ինչ-որ բան անել, ապա ճանաչվողը պիտի անհրաժեշտաբար կրի այդ գործողությունը: Համաձայն այս փաստարկի՝ կեցությունը ճանաչողությամբ ճանաչվողն է և որքանով որ ճանաչվում է, այդքանով շարժման մեջ է դրված կրավորությամբ, որը, ինչպես ասացինք, չի կարող գոյանալ դադարի մեջ գտնվողի մոտ:

Թեոետետոս. ճիշտ է:

Օտարական. Հանուն Ջևսի, մի՞թե մենք հեշտությամբ թույլ կտանք համոզել մեզ, որ շարժումը, կյանքը, հոգին և բանականությունը հաղորդակից չեն բացարձակ գոյությանը և որ գոյությունը ո՛չ ապրում է, ո՛չ էլ մտածում, իսկ պատկանելին և սրբազանը, չունենալով խելք, կանգնած է անշարժ:

Թեոետետոս. Մենք զարհուրելի դրույթ ընդունած կլինեինք, օտարական:

Օտարական. Բայց կասե՞նք արդյոք, որ այն մտածում և ապրում է:

Թեոետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Մենք ասում ենք, որ երկուսն էլ գոյություն ունեն նրանում, բայց չենք ասում, թե դրանք կան նրա հոգում:

Թեոետետոս. Ուրիշ ինչպե՞ս պիտի գոյությունը տիրեր դրանց:

Օտարական. Իսկ չե՞նք ասի, թե ունենալով կյանք, հոգի՝ գոյությունն անշարժ է, չնայած որ շնչավոր է:

b **Թեոետետոս.** Դե ինձ անհեթեթ է թվում:

Օտարական. Ուրեմն պետք է համաձայնել, որ շարժվողն ու շարժումը գոյություն ունեն:

Թեոետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Այստեղից, Թեոետետոս, բխում է, որ եթե գոյն անշարժ է, ոչ ոք ոչ մի տեղ ոչինչ չի կարող մտածել:

Թեոետետոս. Իհարկե:

Օտարական. Մյուս կողմից, եթե մենք ընդունենք, որ

ամեն բան ընթացքի և շարժման մեջ է, այդ պնդմամբ գոյի մեջ կբացառենք նույնականը:

Թեւտետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Մի՞թե քեզ թվում է, որ առանց դադարի գոյություն կունենար նույնականը, նույն քանակություն ունեցողը և միևնույն հարաբերության մեջ գտնվողը:

Թեւտետոս. Ոչ մի դեպքում:

Օտարական. Եվ ինչ, ինչպե՞ս ես պատկերացնում, որ առանց սրա ինչ-որ տեղ լինի կամ գոյանա խելքը:

Թեւտետոս. Ոչ մի կերպ:

Օտարական. Պետք է ամեն գնով խոսքի օգնությամբ պայքարել նրա դեմ, ով մի կողմ թողնելով իմացությունը, բանականությունը և խելքը, շարունակում է ինչ-որ բան պնդել:

Թեւտետոս. Իհարկէ:

Օտարական. Փիլիսոփան, որը բարձր է գնահատում դրանք, հիշյալի արդյունքում թերևս չպիտի ընդունի ամեն ինչի դադար վերագրողների ասածները,— անկախ նրանից, թե ինչպես է վերցվում այդ ամենը՝ որպես մեկություն, թե որպես բազմություն,— և բոլորովին չպիտի լսի նրանց, ովքեր ասում են, թե գոյը համատարած շարժում է: Նա պիտի հիշի մանկական շուտասելուկը՝ «ն՛ անշարժ են, ն՛ շարժվում են», և ընդունի, որ գոյությունն ու ամեն բան կազմված է երկուսից էլ:

Թեւտետոս. Շատ ճիշտ է:

Օտարական. Եվ ինչ, մի՞թե արդեն բավարար չափով չսահմանեցինք մեր խոսքով գոյությունը:

Թեւտետոս. Անշուշտ:

Օտարական. Ջարմանալի՞ բան, Թեւտետոս: Իսկ ես կարծում եմ, որ մենք հիմա կհասկանանք այդ քննության դժվարությունը:

Թեւտետոս. Ինչպես, ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Չե՞ս նկատում, սիրելիս, որ այժմ հայտնվեցինք գոյության կատարյալ չիմացության մեջ, մինչդեռ մեզ թվում է, թե խելքին մոտ բան ենք ասում:

Թեետետոս. Կարծում եմ, այո: Սակայն ես բոլորովին չեմ հասկանում, թե ինչպես դա պատահեց:

250 Օտարական. Ավելի ուշադիր նայիր: Եթե մենք հիմա համաձայնենք սրան, մեզ իրավացիորեն կարող են ուղղել այն հարցերը, որոնք ինքներս էինք պատրաստել նրանց համար, ովքեր պնդում են, թե ամենը տաք է և պաղ:

Թեետետոս. Ի՞նչ հարցեր: Հիշեցրու ինձ:

Օտարական. Իհարկե: Եվ ես կփորձեմ դա անել՝ հարցնելով քեզ, ինչպես այն ժամանակ հարցնում էի նրանց, որպեսզի առաջ շարժվենք միասին:

Թեետետոս. ճիշտ է:

Օտարական. Շատ լավ: Չե՞ս համարում արդյոք շարժումն ու դադարը միմյանց հակադիր բաներ:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Եվ դու իհարկե ասում ես, որ դրանք երկուսն էլ և դրանցից յուրաքանչյուրը հավասարապես գոյություն ունեն:

b **Թեետետոս.** Այո, ասում եմ:

Օտարական. Իսկ եթե համաձայն ես, որ գոյություն ունեն, ինչ ես կարծում, երկուսն էլ և յուրաքանչյուրը շարժվում են:

Թեետետոս. Բնավ:

Օտարական. Ուրեմն ասելով, որ երկուսն էլ գոյություն ունեն, դու նկատի ունես, որ երկուսն էլ դադարի մե՞ջ են:

Թեետետոս. Այդ ինչպե՞ս:

Օտարական. Ենթադրելով հոգու մեջ այդ երկուսից բացի մաս երրորդը՝ գոյությունը, որն ընդգրկում է դադարն ու շարժումը, դու, ընթրնելով և հայելով դրանց հաղորդակցությունը գոյությանը, չե՞ս ասում արդյոք, որ երկուսն էլ գոյություն ունեն:

c **Թեետետոս.** Երևում է, պնդելով, որ շարժումն ու դադարը գոյություն ունեն, մենք կանխատեսում ենք ինչ-որ երրորդ բանի գոյությունը:

Օտարական. Ուրեմն շարժումն ու դադարը միասին գոյություն չեն, և սա մեկ ուրիշ բան է:

Թեետետոս. Թերևս:

Օտարական. Հետևաբար իր բնությամբ գոյությունը ո՛չ դադարի մեջ է, ո՛չ էլ շարժման:

Թեետետոս. Հավանաբար:

Օտարական. Ու՞ր պիտի ուղղի իր միտքը նա, ով ցանկանում է պարզություն մտցնել այս հարցում:

Թեետետոս. Ու՞ր:

Օտարական. Կարծում եմ, հեշտությամբ ոչ մի տեղ: Քանզի եթե ինչ-որ բան չի շարժվում, ինչպե՞ս կարող է այն չլինել դադարի մեջ: Եվ այն, ինչը դադարի մեջ չէ, ինչպե՞ս կարող է չշարժվել: Այնպես որ գոյությունը մեզ մոտ հայտնվեց այդ երկուսից դուրս: Մի՞թե դա հնարավոր է:

Թեետետոս. Միանգամայն անհնար է:

Օտարական. Ընդ որում արդար կլինի հիշել հետևյալը:

Թեետետոս. Ի՞նչը:

Օտարական. Այն, որ երբ մեզ հարցրին, թե ինչին պետք է վերագրվի «չգոյություն» անունը, մենք հայտնվեցինք դժվար կացության մեջ: Հիշու՞մ ես:

Թեետետոս. Իհարկե հիշում եմ:

Օտարական. Իսկ մի՞թե այս պահին մենք պակաս դժվար կացության մեջ ենք գոյության հարցում:

Թեետետոս. Ինձ, օտարական, եթե իհարկե այդպես կարելի է ասել, թվում է, որ մենք ավելի մեծ դժվարության մեջ ենք:

Օտարական. Այս պահին թողնենք սա: Քանի որ գոյությունը և չգոյությունը հավասարապես կապված են այդ դժվարության հետ, հիմա արդեն կարելի է հույս ունենալ, որ դրանցից մեկի առավել կամ պակաս չափով հստակ երևալու դեպքում նույն չափով կերևա նաև մյուսը: Եվ եթե մենք ի զորու չենք տեսնելու դրանցից ոչ մեկը, ապա պիտի շարունակենք դրանց միաժամանակյա պատշաճ քննությունը:

Թեետետոս. Չրաշալի է:

Օտարական. Բացատրենք, թե ինչպես ենք ամեն անգամ բազում անուններով կոչում միևնույն բանը:

Թեետետոս. Ինչպե՞ս: Որևէ օրինակ բեր:

Օտարական. Մարդու մասին խոսելիս մենք օգտվում ենք բազում բառերից՝ վերագրելով նրան գույն, տեսք, հասակ, արատներ ու առաքինություններ, և այդ ամենի միջոցով ասում ենք ոչ միայն, որ նա մարդ է, այլև որ բարի մարդ է, և այդպես անթիվ-անհամար ուրիշ բաներ: Այդպես էլ յուրաքանչյուր իր, որը մենք մեկ ենք համարում, համարում ենք նաև բազմակի և կոչում ենք բազում անուններով:

Թեետետոս. Ճշմարիտ ես ասում:

Օտարական. Այդպիսով մենք իսկական տոն սարքեցինք երիտասարդների և թերուս ծերունիների համար: Չէ՞ որ յուրաքանչյուրին հասու է, որ բազումը չի կարող մեկ լինել, իսկ մեկը՝ բազում, և նրանք հաճույքով պնդում են, թե պետք է մարդուն բարի կոչել և բարին բարի է, իսկ մարդը՝ մարդ: Թեետետոս, ինձ թվում է, դու հաճախ ես հանդիպում այս խնդրով զբաղվողների, երբեմն տարեց մարդկանց, որոնք իրենց կարճամտության պատճառով զարմանում են դրա վրա և կարծում, թե այդպերպ շատ իմաստուն բան են հայտնաբերել²⁸:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Որպեսզի մեր խոսքը լինի բոլորի համար, ովքեր երբևէ ինչ-որ կերպ խորհել են գոյության մասին, թող այն ուղղված լինի ինչպես սրանց, այնպես էլ բոլոր մյուսներին, ում հետ զրուցել ենք մինչև հիմա, և թող շարունակվի հարցերի ձևով:

Թեետետոս. Ի՞նչ հարցեր:

Օտարական. Չե՞նք կապում արդյոք գոյությունը շարժման և դադարի հետ կամ ուրիշ ինչ-որ բան մեկ ուրիշ բանի հետ, թե՞ հաշվի առնելով, որ դրանք չեն խառնվում և չեն հաղորդակցվում, հենց այդպիսին ենք համարում մեր դատո-

ղություններում: Թե՞ ամեն ինչ ի մի բերենք հաղորդակից լինելու կարողութեան տակ: Իսկ գուցե մի մասը հաղորդակցվում է, իսկ մյուս մասը՝ ո՞չ: Ո՞րը կլինի նրանց ընտրութիւնը, Թե՞ տեսնո՞ւ, ի՞նչ կասենք: e

Թե՞ տեսնո՞ւ. Ես չեմ կարող պատասխանել այդ հարցին:

Օտարական. Իսկ ինչու՞ չես պատասխանում ամեն հարցին առանձին, որպէսզի կարողանաս տեսնել ամբողջը:

Թե՞ տեսնո՞ւ. Ճիշտ ես ասում:

Օտարական. Եթե դեմ չես, ընդունենք, թե նրանք ասում են, իբր ոչ մի բան ոչ մի բանի հետ չի կարող հաղորդակցվել: Այդ դեպքում շարժումն ու դադարը անմա՞սն կմնան գոյութիւնից:

Թե՞ տեսնո՞ւ. Ինչպէ՞ս չէ: 252

Օտարական. Եվ ի՞նչ, անհաղորդ մնալով գոյութեանը՝ մի՞թե դրանցից որևէ մեկը կարող է լինել:

Թե՞ տեսնո՞ւ. Չի կարող:

Օտարական. Ինչպէս երևում է, այս ենթադրութեան պատճառով ամեն ինչ իսկույն և միաժամանակ փուլ եկավ թե՛ նրանց մոտ, ովքեր պնդում են, թե ամեն բան շարժվում է, և թե՛ նրանց, ովքեր ասում են, թե գոյը համաձայն գաղափարների է և նույնական է: Քանզի նրանք բոլորն էլ հավելում են գոյութիւնը, ոմանք ասելով, որ ամեն բան իսկապէս շարժվում է, ոմանք էլ՝ որ իսկապէս դադարի մեջ է:

Թե՞ տեսնո՞ւ. Ճիշտ այդպէս:

Օտարական. Նրանք, ովքեր մերթ համադրում են, մերթ բաժանում, դարձնելով այն մեկ կամ բաժանելով անվերջ կամ վերջավոր տարրերի և այնուհետև համադրելով դրանք, — անկախ նրանից՝ պատահում է դա, իրենց կարծիքով, պարբերաբար, թե միշտ, — բոլորն էլ սրանով ոչինչ չեն ասում, եթե չկա ոչ մի միախառնում: b

Թե՞ տեսնո՞ւ. Ճիշտ է:

Օտարական. Բացի այդ, նրանք, ովքեր բոլորովին չեն ընդունում, որ որևէ բան, հաղորդակցվելով ուրիշի հատկու-

թյանը, կոչվում է ուրիշ, կներկայացնեին հիշյալ ուսմունքի ամենազավեշտական մասը:

c Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Ստիպված լինելով ամեն բանի նկատմամբ կիրառել «լինել», «առանց», «այլ», «ինքն ըստ ինքյան» և բյուրավոր այլ արտահայտություններ՝ նրանք անզոր են հրաժարվել դրանցից իրենց խոսքում, այնպես որ հավելյալ բացահայտիչների կարիք չունեն և, ինչպես առածն է ասում, ուր էլ գնան, իրենց տանն են պահում թշնամուն և ապագա հակառակորդին, որը ծայն է տալիս ներսից, ինչպես զարմա-նալի եվրիկեսը²⁹:

d Թեետետոս. Ասածդ միանգամայն ճշմարտանման է:

Օտարական. Իսկ ինչու՞ չվերագրենք բոլոր իրերին փոխադարձ հաղորդակցության ունակություն:

Թեետետոս. Դա նույնիսկ ես կարող եմ հերքել:

Օտարական. Ինչպե՞ս:

Թեետետոս. Չէ՞ որ շարժումը լիովին կդադարեր, իսկ ինքը դադարը կշարժվեր, եթե դրանք հանդիպեին իրար:

Օտարական. Սակայն մեծագույն անհրաժեշտությունն անհնար է դարձնում, որ շարժումը դադարի, իսկ դադարը շարժվի:

Թեետետոս. Անկասկած:

Օտարական. Հետևաբար մնում է միայն երրորդը:

Թեետետոս. Այո:

e Օտարական. Եվ անհրաժեշտ է սրանցից մեկը՝ կա՛ն ամեն ինչ ձգտում է խառնվելու, կա՛ն ոչինչ չի ձգտում, կա՛ն էլ մեկը ձգտում է, իսկ մյուսը՝ ոչ:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Առաջին երկուսն անհնար ճանաչվեցին:

Թեետետոս. Այո:

Օտարական. Ուրեմն ճիշտ պատասխանել ցանկացողը պիտի ընդունի երեք տարբերակներից մնացածը:

Թեետետոս. Ճիշտ այդպես:

Օտարական. եթե որոշ բաներ ձգտում են խառնվել, իսկ որոշ բաներ՝ ոչ, ապա այստեղ կրկնվում է տառերի դեպքը. դրանցից մի մասը ներդաշնակվում է, իսկ մյուս մասը՝ ոչ:

Թեթևտոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Ձայնավորները, ի տարբերություն մյուսների, առավելապես անցնում են բոլորի միջով, ինչպես շղթան, հետևաբար առանց դրանց անհնար է միմյանց ներդաշնակեցնել [մնացյալ] տառերը:

Թեթևտոս. Անտարակոյս:

Օտարական. Իսկ արդյո՞ք բոլորը գիտեն, թե որ տառը որի հետ կարող է հաղորդակցվել, թե՞ դա ըստ պատշաճի իրագործողին անհրաժեշտ է որոշակի արվեստ:

Թեթևտոս. Անհրաժեշտ է արվեստ:

Օտարական. Ի՞նչ արվեստ:

Թեթևտոս. Քերականության արվեստը:

Օտարական. Եվ ինչ, մի՞թե այդպես չէ նաև բարձր և ցածր հնչյունների դեպքում: Մի՞թե միմյանց հետ համադրվող և չհամադրվող հնչյուններն իմանալու արվեստին տիրապետողը երաժիշտ չէ, իսկ չիմացողը՝ ոչ երաժիշտ:

b

Թեթևտոս. Այդպես է:

Օտարական. Եվ մյուս արվեստների և անարվեստության դեպքում էլ մենք կգտնենք այսպիսի բաներ:

Թեթևտոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Ուրեմն, եթե մենք համաձայն ենք, որ սեռերը նման խառնուրդ են կազմում, մի՞թե ինչ-որ իմացության շնորհիվ չպիտի առաջ շարժվի իր դատողության մեջ նա, ով ցանկանում է ճշտորեն ցույց տալ, թե որ սեռերն են համահունչ իրար և որոնք իրար չեն ընդունում: Եվ կա՞ն արդյոք այնպիսի տարրեր, որոնք անցնում են բոլորի միջով և ի մի բերում դրանք այնպես, որ դրանք կարողանան միախառնվել, և հակառակը՝ բաժանման դեպքում արդյո՞ք կան բաժանման բոլորովին տարբեր պատճառներ:

c

Թեետետոս. Իհարկե, նրան անհրաժեշտ է իմացություն, և գուցե ամենակարևոր իմացությունը:

Օտարական. Ինչպե՞ս անվանենք այդ իմացությունը, ո՛վ Թեետետոս: Կամ, հանուն Ջևսի, գուցե մենք աննկատորեն հայտնաբերեցինք ազատների իմացությունը և փնտրելով սոփեստին՝ կարծես ավելի շուտ գտանք փիլիսոփայի՞ն:

Թեետետոս. Ի՞նչ նկատի ունես:

d **Օտարական.** Բաժանել սեռերի, միևնույն տեսակը չհամարել ուրիշ, իսկ ուրիշը չհամարել միևնույն, — մի՞թե չենք ասի, որ սա առնչվում է դիալեկտիկական իմացությանը³⁰:

Թեետետոս. Այո, կասենք:

Օտարական. Ուրեմն նա, ով կարող է անել դա, կարող է բավարար չափով տարբերել մեկ գաղափարը, որն անցնում է միմյանցից գատված բազում այլ բաների միջով: Նա կնկատի, թե ինչպես են բազում, միմյանցից տարբեր գաղափարներ դրսից ընդգրկվում մեկ գաղափարով, ինչպես է մեկ գաղափարն ամփոփվում բազմությունների մեջ և ինչպես են բազում գաղափարներ բաժանվում իրարից: Սա նշանակում է իմանալ և տարբերակել ըստ սեռերի, թե որքանով կարող է յուրաքանչյուր իր հաղորդակցվել մյուսի հետ և որքանով՝ ոչ:

Թեետետոս. Միանգամայն ճիշտ է:

Օտարական. Բայց ես կարծում եմ, դու չես վերագրի դիալեկտիկան որևէ մեկին, բացի նրանից, ով անկեղծորեն և արդար կերպով զբաղվում է փիլիսոփայությամբ:

Թեետետոս. Ինչպե՞ս կարելի է վերագրել դա ուրիշին:

Օտարական. Փիլիսոփային այսպիսի տեղում մենք կգտնենք թե՛ հիմա, թե՛ հետագայում, եթե իհարկե փնտրենք:

254 Սակայն նրան նույնպես դժվար է պարզորոշ տեսնել, թեպես սոփեստին տեսնելու դժվարությունը այլ կարգի է:

Թեետետոս. Ինչու՞:

Օտարական. Նա փախչում է չզոյության խավարի մեջ, քանզի դա անելու մեծ հմտություն ունի, և նրան դժվար է նշմարել մթության մեջ: Այդպես չէ՞:

Թեոտետոս. Թերևս:

Օտարական. Իսկ փիլիսոփային, որը մշտապես դիմում է գոյության գաղափարին բանականության միջոցով, դյուրին չէ տեսնել իր տեղի շլացնող լույսի պատճառով: Չէ՞ որ շատերի հոգևոր աչքերն անզոր են դիմանալ աստվածայինի հայեցողությանը:

b

Թեոտետոս. Սա պակաս ճիշտ չէ, քան այն, ինչ ասացիր սոփեստի մասին:

Օտարական. Այդ դեպքում մենք նախ ավելի հիմնավոր կքննենք փիլիսոփային, եթե դեռ ցանկանում ենք դա անել: Սակայն պարզ է, որ պետք չէ մի կողմ թողնել սոփեստին, քանի դեռ բավականաչափ չենք դիտարկել նրան:

Թեոտետոս. Լավ ասացիր:

Օտարական. Ուրեմն մենք համաձայնեցինք, որ որոշ սեռեր ձգտում են հաղորդակցվել միմյանց, իսկ մյուսները՝ ոչ, և որ որոշ սեռեր՝ քչերի հետ, մյուսները՝ շատերի, իսկ մի մասին էլ ոչինչ չի խանգարում հաղորդակցվել բոլորի հետ: Գետևաբար այնպես կառուցենք մեր խորհրդածությունը, որ, խառնաշփոթից խուսափելով, չդիտարկենք բոլորը, այլ ընտրենք կարևորագույն համարվողները: Նախ տեսնենք, թե ինչպիսին է դրանցից յուրաքանչյուրը, իսկ այնուհետև տեսնենք, թե ինչպիսին է միմյանց հետ հաղորդակցվելու դրանց ունակությունը: Եվ եթե ողջ պարզությամբ չըմբռնենք գոյությունն ու չգոյությունը, ապա, որքանով դա թույլ է տալիս ներկայիս քննությունը, անզոր չենք լինի բացատրելու դրանք, եթե ասելով չգոյության մասին, որ այն իսկապես չգոյություն է, կարողանանք անվնաս հեռանալ այստեղից:

c

d

Թեոտետոս. Այո, մենք պիտի այդպես վարվենք:

Օտարական. Այժմ հետազոտվող կարևորագույն սեռերը հետևյալն են՝ ինքը գոյությունը, դադարը և շարժումը:

Թեոտետոս. Այո, դրանք են:

Օտարական. Եվ դրանցից երկուսը, մեր ասելով, չեն կապվում իրար հետ:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Սակայն գոյությունը երկուսի հետ էլ կապվում է: Չէ՞ որ դրանք երկուսն էլ գոյություն ունեն:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Ուրեմն դրանք երեքն են:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Դրանցից յուրաքանչյուրը մյուս երկուսի հարաբերությամբ ուրիշ է և նույնական է ինքն իր հարաբերությամբ:

e Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Իսկ ի՞նչ նկատի ունենք հիմա՝ ասելով «նույնական» և «այլ»: Արդյո՞ք դրանք երկու սեռ են, որոնք տարբերվում են այն երեքից և մշտապես կապվում են նրանց հետ, եթե դա անհրաժեշտ է, և գուցե պիտի հետազոտվի հինգ սեռ, և ոչ երեք, թե՞ մենք ինքներս մեզ համար աննկատ կերպով այդ երեք սեռից մեկն ենք անվանում նույնական և ուրիշ:

Թեետետոս. Գուցե:

Օտարական. Սակայն թե՛ շարժումը, թե՛ դադարը ո՛չ ուրիշ է, ո՛չ էլ նույնական:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Այն, ինչը մենք կվերագրեինք շարժմանն ու դադարին ընդհանուր ձևով, դրանցից ոչ մեկի համար ճիշտ չէր լինի:

Թեետետոս. Ինչու՞:

Օտարական. Շարժումը կդադարեր, իսկ դադարը կշարժվեր, քանզի երկուսի առումով, անկախ նրանից, թե որ մեկն է դառնում ուրիշ, այն ստիպում է մյուսին փոխվել և դառնալ հակառակ իր բնությանը, որքանով որ վերջինս հաղորդակից է հակառակին:

b Թեետետոս. Ճիշտ այդպես:

Օտարական. Երկուսն էլ հաղորդակից են նույնականին և ուրիշին:

Թե՛տե՛տոս. Այո:

Օտարական. Ո՛չ շարժման, ո՛չ էլ դադարի մասին մենք չպիտի ասենք, թե դրանք նույնական կամ ուրիշ են:

Թե՛տե՛տոս. Ոչ:

Օտարական. Իսկ չպիտի՞ գոյությունը և նույնականը մտածենք որպես մեկ բան:

Թե՛տե՛տոս. Գուցե:

Օտարական. Բայց եթե գոյությունը և նույնականը տարբեր ոչինչ չեն նշանակում, մի՞թե ասելով, թե շարժումն ու դադարը երկուսն էլ գոյություն ունեն, մենք կասենք, որ դրանք երկուսն էլ նույնական են, քանի որ գոյություն ունեն: c

Թե՛տե՛տոս. Բայց դա անհնար է:

Օտարական. Ուրեմն անհնար է, որ նույնականը և գոյությունը մեկ լինեն:

Թե՛տե՛տոս. Հավանաբար:

Օտարական. Իսկ չե՞նք ընդունի երեք տեսակներից բացի նաև չորրորդը:

Թե՛տե՛տոս. Այո, իհարկե:

Օտարական. Եվ ի՞նչ: Գուցե հարկավոր է «ուրիշը» կոչել հինգերորդ տեսակ: Թե՞ «ուրիշը» և «գոյությունը» հարկավոր է կոչել մեկ սեռի երկու անվանումներ:

Թե՛տե՛տոս. Գուցե:

Օտարական. Բայց ես կարծում եմ, դու համաձայն ես, որ գոյի մի մասը մշտապես համարվում է ինքն ըստ ինքյան, իսկ մյուսը՝ հարաբերական:

Թե՛տե՛տոս. Իհարկե:

Օտարական. Ուրիշը մշտապես ուրիշի նկատմամբ հարաբերության մեջ է: Այդպես չէ՞: d

Թե՛տե՛տոս. Այդպես է:

Օտարական. Ոչ, դա այդպես չէ, եթե գոյությունը և ուրիշը միանգամայն տարբեր չեն: Սակայն եթե ուրիշը հարողորակից է երկուսին էլ որպես գոյություն, ապա ուրիշների մեջ կլինեն այնպիսին, որն ուրիշ է ոչ ուրիշների հարաբերու-

թյամբ: Իսկ հիմա մեզ պարզ դարձավ, որ ուրիշն այդպիսին է ուրիշի հարաբերությամբ:

Թեետետոս. Քո ասածն իրականություն է:

e Օտարական. Ուրեմն ընտրված տեսակների մեջ հինգերորդը կլինի ուրիշի բնությունը:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ այդ բնությունն անցնում է բոլոր մյուսների միջով: Քանզի յուրաքանչյուր մեկ ուրիշ է մյուսների հարաբերությամբ ոչ թե սեփական բնության պատճառով, այլ ուրիշի գաղափարին հաղորդակից լինելու շնորհիվ:

Թեետետոս. Ճիշտ այդպես:

Օտարական. Այդ հինգ տեսակների մասին առանձին-առանձին մենք կասենք այսպես:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Նախ շարժումը միանգամայն տարբեր է դադարից: Թե՞ ուրիշ կերպ կասենք:

Թեետետոս. Այդպես:

Օտարական. Ուրեմն շարժումը դադար չէ:

Թեետետոս. Բնավ:

256 Օտարական. Սակայն գոյություն ունի, քանզի հաղորդակից է գոյությանը:

Թեետետոս. Այո, գոյություն ունի:

Օտարական. Եվ դարձյալ շարժումը ուրիշ է, քան նույնականը:

Թեետետոս. Հավանաբար:

Օտարական. Ուրեմն նույնական չէ:

Թեետետոս. Ոչ:

Օտարական. Բայց չէ՞ որ վերջինս նույնական էր, քանի որ ամեն բան հաղորդակից է նույնականին:

Թեետետոս. Այն էլ ինչպես:

Օտարական. Հարկ է համաձայնել, որ շարժումը թե՛ նույնական է, թե՛ ոչ նույնական, և չվշտանալ դրանից: Քանզի երբ մենք ասացինք, որ այն նույնական է և ոչ նույնական,

նկատի ունեինք երկու տարբեր բան: Երբ մենք կոչում ենք այն նույնական, անում ենք դա, որովհետև հաղորդակից է նույնականին ինքն իր հարաբերությամբ, իսկ երբ կոչում ենք ոչ նույնական, դա տեղի է ունենում ուրիշին հաղորդակցվելու պատճառով, ինչի շնորհիվ բաժանվելով նույնականից՝ շարժումը դառնում է ոչ թե այս, այլ ուրիշ, այնպես որ արդարացիորեն համարվում է նույնական:

Թեթետտոս. Իհարկե:

Օտարական. Ահա ինչու, եթե շարժումը մասնակից լիներ դադարին, բոլորովին էլ անհեթեթ չէր լինի կոչել այն դադարած:

Թեթետտոս. Շատ ճիշտ է, եթե մենք ընդունեցինք, որ սեռերի մի մասը ձգտում է միախառնվել, իսկ մյուսը՝ ոչ:

Օտարական. Դրա ապացույցին մենք հանգեցինք ավելի վաղ, քան այժմյան ապացույցներին. մենք պարզեցինք, որ դա այդպես է համաձայն բնության:

Թեթետտոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Ասենք մեկ անգամ ես. շարժումը տարբեր է ուրիշից, ինչպես նաև ուրիշ՝ նույնականի և դադարի հարաբերությամբ:

Թեթետտոս. Անհրաժեշտաբար:

Օտարական. Ուրեմն համաձայն այժմյան բացատրության՝ ուրիշ է և ուրիշ չէ:

Թեթետտոս. Ճշմարիտ է:

Օտարական. Իսկ հետո՞: Կասե՞նք արդյոք, որ այն ուրիշ է երեք տեսակների հարաբերությամբ, իսկ չորրորդի հարաբերությամբ՝ ոչ, ընդունելով, որ տեսակները, որոնք մենք ձգտում էինք հետազոտել, հինգն են:

Թեթետտոս. Ինչպե՞ս: Չէ՞ որ անհնար է համաձայնել, որ դրանց քանակն ավելի փոքր է հենց նոր ցույց տրվածից:

Օտարական. Ուրեմն մենք պիտի քաջաբար շարունակենք պնդել, որ շարժումը կեցության հարաբերությամբ ուրիշ է:

Թեոփրոստոս. Այո, որքան կարելի է քաջաբար:

Օտարական. Բայց մի՞թե պարզ չէ, որ շարժումն իրականում և՛ գոյություն է, և՛ չգոյություն, քանի որ հաղորդակից է գոյությանը:

Թեոփրոստոս. Միանգամայն պարզ է:

Օտարական. Ուրեմն չգոյությունը անհրաժեշտաբար առկա է ինչպես շարժման, այնպես էլ բոլոր սեռերի մեջ: **e** Քանզի ամեն ինչի վրա տարածվող ուրիշի բնությունը յուրաքանչյուր բան դարձնում է չգո, և մենք իրավացիորեն կարող ենք ամեն ինչ կոչել չգոյություն, և դարձյալ, քանի որ այդ ամենը հաղորդակից է կեցությանը, կոչել գոյ:

Թեոփրոստոս. Թերևս:

Օտարական. Յուրաքանչյուր տեսակի մեջ գոյությունը շատ է, բայց նաև անվերջ շատ է չգոյության քանակը:

Թեոփրոստոս. Երևում է, այդպես է:

257 **Օտարական.** Ուրեմն պետք է ասել, որ մյուս տեսակների հարաբերությամբ գոյությունն ուրիշ է:

Թեոփրոստոս. Անհրաժեշտաբար:

Օտարական. Եվ քանի դեռ առկա են ուրիշ բաները, մեզ մոտ չի մնում գոյություն: Չլինելով ուրիշ բան՝ գոյությունը մեկ է և հետևաբար չի կարող թվապես անվերջ շատ լինել:

Թեոփրոստոս. Կարծես թե այդպես է:

Օտարական. Պետք չէ վշտանալ դրանից, քանի որ սեռերի բնությունն ընդհանուր է: Իսկ եթե որևէ մեկը համաձայն չէ սրան, թող հերքի մեր նախորդ փաստարկները և հետո միայն այս վերջինները:

Թեոփրոստոս. Շատ ճիշտ ես ասում:

b **Օտարական.** Այժմ քննենք հետևյալը:

Թեոփրոստոս. Ի՞նչը:

Օտարական. Երբ մենք խոսում ենք չգոյության մասին, ըստ երևույթին նկատի ունենք ոչ թե գոյությանը հակադիր, այլ պարզապես նրանից տարբեր ինչ-որ բան³¹:

Թեոփրոստոս. Ինչպե՞ս:

Օտարական. Երբ, օրինակ, ասում ենք, թե ինչ-որ բան մեծ չէ, չի՞ թվում քեզ արդյոք, որ դրանով ավելի շուտ նկատի ունենք փոքրը, քան հավասարը:

Թեետետոս. Ոչ, ինչու՞:

Օտարական. Ուրեմն, եթե ասվեր, որ բացասումը նշանակում է հակադրություն, մենք չէինք համաձայնի, կամ կհամաձայնեինք միայն այնքանով, որ «ոչ»-ը նշանակում է իրեն հաջորդող բառից տարբեր ինչ-որ բան կամ, ավելի շուտ, այն իրերից, որոնց վերաբերում են բացասմանը հաջորդող բառերը:

Թեետետոս. Միանգամայն ճիշտ է:

Օտարական. Եթե դեմ չես, մտածենք նաև հետևյալի մասին:

Թեետետոս. Ինչի՞ մասին:

Օտարական. Ուրիշի բնությունը թվում է ինձ իմացության պես մասնատված:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Իմացությունը նույնպես մեկն է, բայց նրա ամեն մաս, որն առնչվում է որևէ առարկայի, առանձնացված է և ունի իր հատուկ անվանումը: Ահա ինչու է խոսվում բազում արվեստների և գիտելիքների մասին:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Հետևաբար նաև ուրիշի բնության մասերը ենթարկված են նույն բանին:

Թեետետոս. Գուցե: Բայց ինչպե՞ս նկարագրենք դա:

Օտարական. Ուրիշի ինչ-որ մաս հակադիր չէ՞ արդյոք գեղեցիկին:

Թեետետոս. Հակադիր է:

Օտարական. Կասե՞նք, որ անանուն է, թե՞ կասենք, որ անուն ունի:

Թեետետոս. Կասենք, որ ունի: Քանզի այն, ինչ մենք ամեն անգամ ոչ գեղեցիկ ենք կոչում, ուրիշ է հենց գեղեցիկի բնության հարաբերությամբ:

Օտարական. Արդ, ասա ինձ հետևյալը:

e Թեևտետոս. Ի՞նչ:

Օտարական. Մի՞թե ոչ գեղեցիկը ինչ-որ գոյի սեռից առանձնացված մի բան չէ, որը դարձյալ հակադրված է ինչ-որ գոյի³²:

Թեևտետոս. Այդպես է:

Օտարական. Այդ դեպքում, ինչպես երևում է, ոչ գեղեցիկը գոյի հակադրությունն է [մեկ ուրիշ] գոյին:

Թեևտետոս. Շատ ճիշտ է:

Օտարական. Եվ ի՞նչ: Մի՞թե համաձայն նշված դատողության՝ գեղեցիկը մեզ մոտ առավել չափով է գոյի մեջ, քան ոչ գեղեցիկը:

Թեևտետոս. Բնավ:

258 Օտարական. Ուրեմն պետք է հաստատել, որ ոչ մեծը և մեծը հավասարապես գոյություն ունեն:

Թեևտետոս. Հավասարապես:

Օտարական. Իսկ պետք չէ՞ արդյոք նույնական համարել արդարն ու անարդարը այն իմաստով, որ մեկի գոյությունը մյուսից բխում է և առավել չէ:

Թեևտետոս. Իհարկե:

Օտարական. Նույնը պիտի ասենք նաև մնացյալ բաների մասին, քանզի պարզվեց, որ ուրիշի բնությունը իրական գոյություն ունի: Իսկ եթե ուրիշը գոյություն ունի, ոչ պակաս չափով անհրաժեշտ է ընդունել նաև դրա մասերը:

Թեևտետոս. Ինչպե՞ս չէ:

b Օտարական. Ուրեմն ուրիշի մասի բնության հակադրումը գոյությանը, եթե կարելի է ասել, պակաս չափով չէ գոյություն, քան ինքը գոյությունը, և չի նշանակում գոյության հակառակը, այլ՝ սոսկ դրա ուրիշը:

Թեևտետոս. Միանգամայն պարզ է:

Օտարական. Ինչպե՞ս կոչենք դա:

Թեևտետոս. Ակնհայտ է, որ դա հենց չգոյությունն է, որը մենք հետազոտում ենք սովեստի պատճառով:

Օտարական. Եվ գուցե, ինչպես դու ես ասում, կեցության առումով այն բոլորովին էլ պակաս չէ՞ մյուս բաներից, այնպես որ հիմա արդեն պետք է համարձակորեն ասել, որ չգոյությունը անկասկած ունի սեփական բնությունը, և ինչպես մեծը մեծ էր, իսկ գեղեցիկը՝ գեղեցիկ, այնպես էլ չգոյությունը բազում թվով գոյություն ունեցող տեսակներից մեկն է: Կամ գուցե մենք վստահ չե՞նք դրանում, Թեետետոս:

Թեետետոս. Բնավ:

Օտարական. Իսկ գիտե՞ս, որ մեր անհնազանդությունը գերազանցում է այն արգելքը, որ դրել էր ինքը Պարմենիդեսը:

Թեետետոս. Ի՞նչ արգելք:

Օտարական. Մեր հետազոտության ընթացքում մենք ապացուցեցինք շատ ավելի, քան նա թույլ էր տվել մեզ դիտարկելու:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Մի տեղ նա ասում է.

*Երբեք և ոչ մի տեղ չգոն գոյություն չունի.
Ետ պահիր միտքդ որոնման այդ ուղուց³³:*

Թեետետոս. Այո, ասում է:

Օտարական. Իսկ մենք ոչ միայն ապացուցեցինք, որ չգոյությունը գոյություն ունի, այլև ցույց տվեցինք, թե ինչպիսին է չգոյության ծնը: Քանզի ապացուցելով ուրիշի բնության գոյությունը և այն, որ վերջինս տարածվում է ամբողջ գոյի փոխվժռորվածության վրա, մենք համարձակվեցինք ասելու, որ կեցությանը հակադրված ուրիշի բնության յուրաքանչյուր մաս իսկապես չգոյություն է:

Թեետետոս. Եվ ինձ թվում է, օտարական, որ մենք շատ ճիշտ ենք ասել:

Օտարական. Թող ուրեմն ոչ ոք չասի, թե մենք ներկայացնելով չգոյությունը որպես գոյության հակադրություն՝

- 259 համարձակվում ենք ասել, որ այն գոյություն ունի: Քանզի գոյության հակադրության մասին մենք վաղուց արդեն հրաժարվել ենք ասել՝ գոյություն ունի արդյոք, թե ոչ, իմաստ ունի, թե բոլորովին անիմաստ է: Իսկ այն, ինչ ասացինք քիչ առաջ, թե չգոյությունը գոյություն ունի, ապա թո՛ղ որևէ մեկը մեզ տարհամոզի, բացահայտելով, որ մենք ճիշտ չենք ասում, կամ էլ, եթե նա դեռ չի կարող դա անել, թող ասի այն, ինչ մենք ենք ասում, այն է՝ որ սեռերը միախառնվում են և որ գոյությունը և ուրիշը թափանցում են ամեն բան և միմյանց, իսկ ինքը ուրիշը, որ հաղորդակից է գոյությանը, գոյում է այդ
- b հաղորդակցության շնորհիվ, թեև տարբեր է նրանից, ինչին հաղորդակից է: Եվ քանի որ ուրիշ է գոյության հարաբերությամբ, միանգամայն պարզ է և անհրաժեշտ, որ այն լինի չգոյություն: Իսկ գոյությունը հաղորդակից լինելով չգոյությանը՝ ուրիշ է մյուս սեռերի համար, և բոլորի համար լինելով ուրիշ՝ չի լինի ո՛չ դրանցից յուրաքանչյուր մեկը, ո՛չ բոլորը միասին, այլ՝ հենց ինքը, այնպես որ բյուրավոր դեպքերում գոյություն անկասկած չկա, և մյուս բաներից յուրաքանչյուրը և բոլորը միասին շատ առումներով գոյություն ունեն, իսկ շատ առումներով՝ ոչ:

Թեետետոս. Շշմարիտ է:

- Օտարական.** Բայց եթե ոմն չի հավատում այս հակադրություններին, ապա պիտի ինքը քննի խնդիրը և քիչ առաջ
- c ասվածից ավելի լավ ինչ-որ բան առաջարկի: Իսկ եթե հաճույք է ստանում բառերի տարուբերումից, ձևացնելով, իբր դժվար ինչ-որ բան է նկատել, այդ դեպքում, ինչպես ցույց է տալիս մեր այժմյան փաստարկը, նա զբաղվում է մեծ ուշադրության ոչ արժանի գործով: Քանզի այդ բանն անելու դժվարություն չկա, դա չի պահանջում խելամտություն, իսկ մեր առաջարկածը և՛ դժվար է, և՛ գեղեցիկ:

Թեետետոս. Ի՞նչը:

- Օտարական.** Այն, ինչի մասին ասվեց սրանից առաջ. հնարավոր համարելով այս ամենը՝ կարողանալ հետևել աս-

վածին և հիմնովին հերքել նրան, ով պնդում է, թե ուրիշը ինչ-որ կերպ նույնական է, իսկ նույնականը ուրիշ է այն **d**
 իմաստով ու առումով, որոնք նա է վերագրում դրանց: Սա-
 կայն նույնականը ներկայացնել որպես ուրիշ, իսկ ուրիշը՝
 նույնական, մեծը՝ փոքր կամ նմանը՝ ոչ նման և հաճույք ստա-
 նալ փաստարկներում մշտապես հակասություններ առաջա-
 դրելուց՝ իսկական հերքում չէ, այստեղ ավելի շուտ երևում է
 սկսնակը, ով նոր է միայն առնչվել գոյի խնդրին:

Թեետետոս. Ճիշտ այդպես:

Օտարական. Իրոք, սիրելիս, փորձել զատորոշել ամե-
 նը ամենից³⁴ և՛ ճիշտ չէ, և՛ վայել է միայն տգետին, բայց ոչ **e**
 փիլիսոփային:

Թեետետոս. Ինչու՞:

Օտարական. Ամեն ինչի զատումն ամենից կարող է
 ընդհանրապես խոսքի վերջը լինել, քանզի խորհրդածությու-
 նը զոյանում է գաղափարների փոխիյուսումից:

Թեետետոս. Ճշմարիտ է:

Օտարական. Տե՛ս ուրեմն, թե որքան տեղին էր մեր **260**
 պայքարն այդպիսի մարդկանց դեմ և այն, որ ստիպեցինք
 նրանց ընդունել, որ մի բանը միախառնվում է մյուսի հետ:

Թեետետոս. Իսկ հանուն ինչի՞:

Օտարական. Որպեսզի հաստատենք, որ խոսքը մեզ
 համար գոյի սեռերից մեկն է: Եթե զրկվենք նրանից, մենք,—
 և դա շատ կարևոր է,— կզրկվենք փիլիսոփայությունից: Դեռ
 ավելին, մենք պիտի համաձայնության գանք նաև խոսքի էութ-
 յան շուրջ: Եթե մենք զրկվեինք նրանից և այն ընդհանրապես
 չլիներ, ապա ոչինչ չէինք կարողանա ասել: Իսկ մենք կզրկ- **b**
 վեինք, եթե չընդունեինք, որ ոչինչ ոչինչի հետ չի միախառն-
 վում:

Թեետետոս. Դա ճիշտ է: Բայց ես չեմ հասկանում, թե
 ինչու պիտի մենք համաձայնության գանք խոսքի շուրջ:

Օտարական. Գուցե դու ավելի հեշտ հասկանայիր հե-
 տևելով ինձ այսպես:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Չգոյությունը երևաց մեզ որպես գոյության սեռերից մեկը, որը ցրված է ողջ գոյով մեկ:

Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Ուրեմն հարկ է քննել՝ արդյո՞ք միախառնվում է այն կարծիքի և խոսքի հետ³⁵:

Թեետետոս. Այսի՞նքն:

Օտարական. Եթե չի միախառնվում դրանց հետ, ապա
c ամեն ինչ անհրաժեշտաբար կլինի ճշմարիտ, իսկ եթե միախառնվում է, ապա ն՛ կարծիքը, ն՛ խոսքը դառնում են կեղծ: Չէ՞ որ չգոյի մասին կարծիք կազմելն ու խոսելն է մտածողության և խոսքի մեջ սկիզբ առնող մոլորությունը:

Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Իսկ եթե կա մոլորություն, կա նաև խաբեություն:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ եթե կա խաբեություն, ամեն ինչ պիտի լցված լինի նմանություններով, պատկերներով և պատրանքներով:

Թեետետոս. Անտարակույս:

Օտարական. Ասացինք, որ սոփեստն այստեղ է թաքնված, սակայն ընդհանրապես բացառում է կեղծիքի գոյությունը: Քանզի ասում է, թե ոչ ոք չի մտածում ու չի խոսում չգոյության մասին և սա բոլորովին հաղորդակից չէ գոյությանը:

Թեետետոս. Այո, դա այդպես էր:

Օտարական. Իսկ հիմա պարզվեց, որ չգոյությունը հաղորդակից է գոյությանը, այնպես որ նա այս հարցում չի հակառակվի: Գուցե ասի, որ գաղափարների մի մասը հաղորդակից է չգոյությանը, իսկ մյուսը՝ ոչ, և որ խոսքն ու կարծիքը անհաղորդների թվում են: Ուստի դարձյալ կպնդի, որ առհասարակ պատկերման և պատրանքներ ստեղծելու արվեստ, որի մեջ է նա մեր ասելով, գոյություն չունի, որովհետև կարծիքը և խոսքը չեն հաղորդակցվում չգոյության հետ: Կեղծիք

առհասարակ գոյություն չունի, եթե գոյություն չունի այդպիսի հաղորդակցություն: Ահա ինչու հարկ է նախ հետազոտել խոսքը, կարծիքը և պատկերացումը, որպեսզի երբ դրանք պարզ դառնան մեզ, տեսնենք դրանց հաղորդակցությունը չգոյության հետ: Դա տեսնելով՝ մենք կապացուցենք, որ կեղծիքը գոյություն ունի, և ապացուցելով՝ կկապենք կեղծիքի հետ սովետստին, եթե նա մեղավոր է, կամ, ազատ արձակելով, կփնտրենք նրան ուրիշ սեռի մեջ:

261

Թեթետտոս. Սովետստի մասին կարծես միանգամայն ճշմարիտ էր ասված սկզբում, որ այդ սեռն անորոսալի է: Ինչպես երևում է, նա բազմաթիվ թաքստոցներ ունի, և երբ լքում է դրանցից մեկը, անհրաժեշտ է հաղթահարել այդ թաքստոցը դեռ նախքան սովետստին հասնելը: Հազիվ հաղթահարեցինք մի թաքստոցը, — իբրև թե չգոյությունը գոյություն չունի, — նա արդեն գտել է ուրիշը, և հարկ է ապացուցել, որ խոսքի և կարծիքի մեջ գոյություն ունի կեղծիք, և գուցե այս մեկից հետո գտնվի մեկ ուրիշը, իսկ այնուհետև հաջորդը, այնպես որ թվում է՝ սա վերջ չունի:

b

Օտարական. Նա, ով թեկուզև քիչ-քիչ կարող է առաջ շարժվել, պիտի քաջություն պահպանի: Ով նման դեպքերում փոքրոգություն է դրսևորում, ի՞նչ պիտի անի ուրիշ դեպքերում, երբ ոչ մի բանում չի առաջադիմի կամ էլ դարձյալ ստիպված կլինի ետ գնալ: Համաձայն ասացվածքի՝ այդպիսին դժվար թե քաղաք առնի: Իսկ հիմա, սիրելիս, երբ սպառնեցինք այն, ինչի մասին խոսում ես, մնում է հաղթահարել ամենամեծ արգելքը. մնացյալն ավելի հեշտ է և աննշան:

c

Թեթետտոս. Լավ ասացիր:

Օտարական. Նախ, ինչպես և պայմանավորվել ենք, վերցնենք խոսքն ու կարծիքը, որպեսզի հստակ պատկերացնենք՝ առնչվում է դրանց չգոյությունը, թե երկուսն էլ միանգամայն ճշմարիտ են և դրանցից ոչ մեկը երբեք չի լինում կեղծ:

Թեթետտոս. Ճիշտ է:

d Օտարական. Եկ այնպես, ինչպես խոսում էինք պատկերների և գրերի մասին, դիտարկենք նաև անունները, քանզի այդպես է բացահայտվում այն, ինչ հիմա փնտրում ենք:

Թեետետոս. Իսկ ինչի՞ն պիտի անդրադառնանք բառերի մեջ:

Օտարական. Արդյո՞ք դրանք բոլորը համաձայնեցված են միմյանց, թե՞ դրանցից ոչ մեկը մյուսին համաձայնեցված չէ: Կամ գուցե մի մասը ձգտու՞մ է դրան, իսկ մյուսը՝ ո՞չ:

Թեետետոս. Պարզ է, որ մի մասը ձգտում է, իսկ մյուսը՝ ոչ:

Օտարական. Գուցե դու նկատի ունես հետևյալը.

e նրանք, որոնք ասվում են հերթով և ինչ-որ բան են նշանակում, համաձայնեցված են, իսկ նրանք, որոնց համադրությունը ոչինչ չի նշանակում, համաձայնեցված չեն:

Թեետետոս. Ինչպե՞ս: Ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Այն, ինչն, իմ կարծիքով, դու ենթադրում էիր և ընդունեցիր: Չէ՞ որ մենք ունենք գոյությունը ձայնով նշանակելու երկու եղանակ:

Թեետետոս. Ինչպե՞ս:

262 Օտարական. Մեկը՝ անուններով, մյուսը՝ բայով³⁶:

Թեետետոս. Նկարագրիր յուրաքանչյուրը:

Օտարական. Գործողության նշանակումը մենք կոչում ենք բայ:

Թեետետոս. Այո:

Օտարական. Չայնային նշանը, որը վերաբերում է գործողություններ կատարողին, մենք կոչում ենք անուն:

Թեետետոս. Միանգամայն ճիշտ է:

Օտարական. Սակայն խոսքը երբեք չի կազմվում միայն հերթականությամբ ասված անուններից և ոչ էլ առանց անունների ասված բայերից:

Թեետետոս. Չեմ հասկանում դա:

b Օտարական. Ակնհայտ է, որ հենց նոր ինձ համաձայնելով՝ դու նկատի ունեիր ուրիշ ինչ-որ բան: Իսկ ես ուզում

էի միայն ասել, որ այդպէս հերթականութեամբ արտասանվածը խոսք չէ:

Թեւտետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Դիցուք, «քայլուն է», «վազուն է», «ննջուն է» և ուրիշ այդպիսի բայերը նշում են գործողություններ, և եթէ ոմն կրկներ դրանք բոլորը, դա չէր լինի խոսք:

Թեւտետոս. Իհարկէ:

Օտարական. Ուրեմն, եթէ ասվում են «առյուծ», «եղջերու», «ծի» և ուրիշ բառեր, որոնք նշում են գործողություն կատարողներին, դրանց հաջորդականությունից նույնպէս չի գոյանում խոսք: Քանզի արտասանվածը չի արտահայտում ո՛չ գործողություն, ո՛չ անգործություն, ո՛չ իրական գոյություն, ո՛չ էլ չգոյություն, քանի դեռ բայերը չենք միացրել անուններին: Այդժամ ամեն բան ներդաշնակվում է, և առաջին իսկ համադրությունը անմիջապէս դառնում է առաջին և ամենահակիրճ խոսքը:

Թեւտետոս. Ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Երբ ինչ-որ մեկն ասում է՝ «մարդը սովորում է», չե՞ս ասի արդոյք, որ դա նվազագոյն և առաջին խոսքն է:

Թեւտետոս. Իհարկէ:

Օտարական. Քանզի այդկերպ նա ինչ-որ բան է հայտնում գոյություն ունեցողի, կայացողի, գոյություն ունեցածի կամ գալիքի մասին և ոչ միայն արտասանում է անունները, այլև որոշակի եզրակացություն կազմում՝ համադրելով անուններն ու բայերը: Ահա ինչու ասացինք, որ նա խոսում է, և ոչ թէ սոսկ անուններ տալիս, իսկ այդ համադրությունը կոչեցինք խոսք³⁷:

Թեւտետոս. ճիշտ է:

Օտարական. Ինչպէս որ որոշ իրեր համատեղվում են միմյանց հետ, իսկ մյուսները՝ ոչ, այնպէս էլ ծայնով արված որոշ նշաններ չեն համատեղվում, մյուսներն էլ, համատեղվելով, խոսք են կազմում³⁸:

Թեոտեոս. Միանգամայն այդպես է:

Օտարական. Կա մի մանրուք ես:

Թեոտեոս. Ի՞նչ մանրուք:

Օտարական. Խոսքը, եթե կա, անհրաժեշտաբար ինչ-որ բանի մասին է, քանզի ոչ մի բանի մասին խոսք չի լինում:

Թեոտեոս. Այդպես է:

Օտարական. Իսկ պե՞տք է արդյոք խոսքը որակ ունենա:

Թեոտեոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Դառնանք ինքներս մեզ:

Թեոտեոս. Դառնանք:

Օտարական. Ես կարտասանեմ նախադասություն՝ համադրելով իրերն ու գործերը անունների և բայերի միջոցով, իսկ դու ասա, ինչի մասին է այդ խոսքը:

263 Թեոտեոս. Կփորձեմ ուժերիս ներածին չափով:

Օտարական. «Թեոտեոսը նստած է»: Այս նախադասությունը երկար չէ՞:

Թեոտեոս. Ոչ, համառոտ է:

Օտարական. Դու պետք է ասես, թե ում մասին է այն և ում նկատի ունի:

Թեոտեոս. Պարզ է, որ իմ մասին է և նկատի ունի ինձ:

Օտարական. Իսկ ա՞յս մեկը:

Թեոտեոս. Ո՞րը:

Օտարական. «Թեոտեոսը, որի հետ ես հիմա զրուցում եմ, թռչում է»:

Թեոտեոս. Այս մեկի դեպքում նույնպես ոչ ոք չի ասի, թե այն նկատի չունի ինձ կամ որ իմ մասին չէ:

Օտարական. Մենք ասացինք, որ ամեն խոսք անհրաժեշտաբար պիտի ունենա որակ:

b Թեոտեոս. Այո:

Օտարական. Իսկ ի՞նչ որակի դասենք այդ երկու նախադասություններից յուրաքանչյուրը:

Թեետետոս. Մեկը կեղծ է, մյուսը՝ ճշմարիտ:

Օտարական. Մեկը քո մասին ճշմարտություն ասում է, այսինքն՝ այն, ինչ կա իրականում:

Թեետետոս. Անշուշտ:

Օտարական. Իսկ կեղծն ասում է իրականությունից տարբեր բան:

Թեետետոս. Այո:

Օտարական. Ուստի խոսում է գոյություն չունեցողի մասին որպես գոյություն ունեցողի:

Թեետետոս. Թերևս:

Օտարական. Ասում է բաներ, որոնք տարբեր են քո մասին ասվածներից: Չէ՞ որ մենք ասացինք, որ յուրաքանչյուր բանի հարաբերությամբ բազում բաներ գոյություն ունեն, իսկ բազում բաներ՝ ոչ:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Իմ հաջորդ նախադասությունը քո մասին, ելնելով խոսքի մեր բնորոշումից, անհրաժեշտաբար պիտի լինի ամենահամառոտներից մեկը:

Թեետետոս. Քիչ առաջ մենք համաձայնեցինք, որ այդպես է:

Օտարական. Այնուհետև, որ դա խոսք է ինչ-որ բանի մասին:

Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Եթե այն քո մասին չէ, ապա ուրիշ ոչ ոքի մասին էլ չէ:

Թեետետոս. Ինչպե՞ս թե:

Օտարական. Լինելով ոչ մի բանի մասին, այն առհասարակ չէր լինի խոսք: Մենք ցույց տվեցինք, որ անհնար է, որ խոսքը լինի ոչ մի բանի մասին:

Թեետետոս. Շատ ճիշտ է:

Օտարական. Եթե քո մասին ասված բաները ուրիշ են, սակայն ասվում են որպես նույնական, և գոյություն չունեցող բաներն ասվում են որպես գոյություն ունեցող, ապա բայերից

և անուններից գոյացող այդպիսի համադրությունը հիրավի կեղծ խոսք է իրականում:

Թեետետոս. Շատ ճիշտ է:

Օտարական. Ուրեմն ի՞նչ: Մի՞թե պարզ չէ, որ մտածողությունը, կարծիքը և երևակայությունը, լինեն կեղծ, թե ճշմարիտ, գոյանում են մեր հոգում:

Թեետետոս. Ինչպե՞ս:

e Օտարական. Դու ավելի հեշտ կհասկանաս, եթե նախ ըմբռնես, թե ինչ է իրենից ներկայացնում դրանցից յուրաքանչյուրը և ինչով է տարբերվում մյուսներից:

Թեետետոս. Տուր ինձ դրա հնարավորությունը:

Օտարական. Այսպիսով, մտածողությունը և խոսքը նույնն են, միայն թե մտածողությունն մենք կոչում ենք մեր հոգու ներսում տեղի ունեցող ամձայն զրույցը, որ հոգին վարում է ինքն իր հետ³⁹:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Իսկ հոգուց ելնող և բերանով անցնող հնչյունների հոսքը կոչվում է խոսք:

Թեետետոս. ճշմարիտ է:

Օտարական. Եվ մենք գիտենք, որ խոսքի մեջ է...

Թեետետոս. Ի՞նչը:

Օտարական. Հաստատումն ու բացասումը:

Թեետետոս. Այո, գիտենք:

264 Օտարական. Եթե դա հոգում գոյանում է լուռ և մտածողության միջոցով, ուրիշ ի՞նչ կկոչես, եթե ոչ կարծիք:

Թեետետոս. Թերևս այդպես:

Օտարական. Իսկ երբ ինչ-որ մեկի մոտ այդ վիճակը գոյանում է ոչ թե ինքն ըստ ինքյան, այլ զգայության միջոցով, ճիշտ չի՞ լինի արդյոք այն կոչել երևակայություն:

Թեետետոս. Ինչպե՞ս չէ:

Օտարական. Ուրեմն, եթե խոսքը լինում է ճշմարիտ և կեղծ, եթե մտածողությունը երևաց մեզ որպես հոգու զրույց ինքն իր հետ, կարծիքը մտածողության արդյունքն է, իսկ

«երևում է» կոչվածը՝ զգայության և կարծիքի խառնուրդ, ապա **b**
անհրաժեշտ է, որ խոսքին ազգակից որոշ բաներ երբեմն
լինեն կեղծ⁴⁰:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Նկատու՞մ ես, որ կեղծ կարծիքն ու խոս-
քը գտնվեցին ավելի շուտ, քան սպասում էինք՝ վախենալով,
թե ամեն ինչ հետազոտելով, անվերջանալի գործ բռնած
կլինենք:

Թեետետոս. Նկատում եմ:

Օտարական. Այդ դեպքում քաջ լինենք նաև մնացյալի
հարցում: Քանզի այժմ, երբ դա մեզ պարզ է դարձել, հիշենք **c**
քիչ առաջ արված տեսակների բաժանումները:

Թեետետոս. Որո՞նք:

Օտարական. Մենք տարբերեցինք պատկերավոր ար-
վեստի երկու տեսակ՝ պատկերների արվեստը և տեսիլների
արվեստը:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ ասացինք, որ չգիտենք, թե որ տե-
սակին դասենք սոփեստին:

Թեետետոս. Այդպես էր:

Օտարական. Եվ մեր այդ չիմացությունն առավել մեծ
խավարով պատվեց, երբ հայտնվեց ամեն ինչ կասկածի տակ
առնող ուսմունքը, ըստ որի չկան ո՛չ պատկերներ, ո՛չ տե- **d**
սիլներ, ո՛չ ուրվականներ և ընդհանրապես երբեք և ոչ մի
տեղ կեղծիք չկա:

Թեետետոս. Ճշմարիտ ես ասում:

Օտարական. Այժմ, երբ պարզվեց, որ գոյություն ունի
կեղծ խոսք և կեղծ կարծիք, կարելի է ընդունել, որ գոյություն
ունեն իրերի նմանակումներ, և այստեղից գոյանում է խաբե-
ության արվեստը:

Թեետետոս. Կարելի է:

Օտարական. Եվ այն, որ սոփեստն այդ տեսակներից
մեկին է պատկանում, մենք արդեն նախապես ընդունել ենք:

Թեետետոս. Այո:

e Օտարական. Փորձենք, դարձյալ բաժանելով երկու մասի մեր առաջ եղած սեռը, առաջ շարժվել միայն աջ մասի ուղղությամբ, ունենալով այն, ինչը հատուկ է սոփեստին, մինչև որ անցնելով ամենայն ընդհանուրի կողքով և թողնելով նրան 265 իր բնությունը, ցույց տանք այն հատկապես ինքներս մեզ, իսկ հետո նրանց, ովքեր ի բնե ավելի մոտ են այս մեթոդին:

Թեետետոս. ճիշտ է:

Օտարական. Մի՞թե մենք չսկսեցինք ստեղծագործական և ձեռքբերման արվեստների բաժանումից:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ մի՞թե սոփեստը չերևաց մեզ որսի, պայքարի, առևտրի և ձեռքբերման մի քանի ուրիշ տեսակների մեջ:

Թեետետոս. Իհարկե:

b Օտարական. Իսկ այժմ, երբ նրան հափշտակել է նմանակման արվեստը, պարզ է, որ նախ հարկ է երկու մասի բաժանել ստեղծագործական արվեստը: Չէ՞ որ նմանակումը որոշակի ստեղծագործություն է, թեև մենք խոսում ենք ոչ թե հենց իրերի, այլ դրանց պատկերումների մասին: Այդպես չէ՞:

Թեետետոս. Միանգամայն այդպես է:

Օտարական. Իսկ ստեղծագործական արվեստը նախ և առաջ ունի երկու մաս:

Թեետետոս. Որո՞նք են դրանք:

Օտարական. Մեկն՝ աստվածային, մյուսը՝ մարդկային:

Թեետետոս. Չհասկացա:

Օտարական. Ստեղծագործությունը, ասացինք մենք, — եթե հիշենք սկզբում ասվածը, — ունակություն է, որը նախապես գոյություն չունեցածի գոյացման պատճառ է:

Թեետետոս. Այո, մենք դա հիշում ենք:

c Օտարական. Կասե՞նք արդյոք, որ բոլոր կենդանի էակներն ու բույսերը, որ գոյանում են երկրի վրա սերմերից և արմատներից, ինչպես նաև անշունչ առարկաները, որ գտն-

վում են հողի մեջ հոսում և ոչ հոսում վիճակում, նախապես չլինելով, գոյանում են ոչ թե դեմիուրգոս աստծո⁴¹, այլ մեկ ուրիշ ինչ-որ բանի գործունեությունից: Թե՞ կօգտվենք ուրիշների ուսմունքներից և ասույթներից:

Թեետետոս. Ի՞նչ ուսմունքներ:

Օտարական. Որ բնությունն ինքն է ծնում դրանք ինքնաբերական պատճառի ուժով, առանց սերող մտածողության: Թե՞ ասենք, որ դրանք ստեղծվում են աստծուց եկող աստվածային բանականությամբ ու իմացությամբ:

Թեետետոս. Գուցե տարիքիս բերումով ես հաճախ եմ d փոխում կարծիքներս: Բայց հիմա, նայելով քեզ և հասկանալով, որ դու կարծում ես, թե ամեն բան գոյացել է աստծուց, ես էլ եմ այդպես մտածում:

Օտարական. Հրաշալի է, Թեետետոս: Եթե մենք համարեինք, որ հետագայում դու կլինես այլ կերպ մտածողների թվում, հիմա համոզիչ խոսքով կստիպեինք քեզ համաձայնել: Բայց քանի որ ես հասկանում եմ քո բնությունը, որ անգամ առանց մեր զրույցի կդիմի նրան, ինչին ձգտում էր, ես e թողնում եմ դա, քանզի մենք զուր ժամանակ կվատնեինք: Ես կընդունեմ, որ այն, ինչ վերագրում են բնությանը, արարվում է աստվածային արվեստով, իսկ այն, ինչ ստեղծվում է մարդկանց կողմից՝ մարդկային արվեստով, և, համաձայն այդ դրույթի, գոյություն ունի ստեղծագործության երկու տեսակ, մեկը՝ մարդկային, մյուսը՝ աստվածային:

Թեետետոս. Ճիշտ է:

Օտարական. Դրանցից յուրաքանչյուրը նույնպես բաժանենք երկու մասի:

Թեետետոս. Ինչպե՞ս:

Օտարական. Ինչպես որ ամբողջ ստեղծագործական 266 արվեստը բաժանեցիր լայնքով, այնպես էլ հիմա բաժանիր երկայնքով⁴²:

Թեետետոս. Թող այդպես լինի:

Օտարական. Արդ, գոյանում է չորս մաս. երկուսը, որ

ՊԼատոն

վերաբերում են մեզ, մարդկային են, իսկ մյուս երկուսը, որ վերաբերում են աստվածներին՝ աստվածային:

Թեետետոս. Այո:

Օտարական. Եվ երբ դրանք այլ կերպ են բաժանված, յուրաքանչյուր բաժնի մի մասը բուն ստեղծագործական է, իսկ մյուսները լավագույնս կարող են կոչվել պատկերավոր: Ըստ այդմ ստեղծագործական արվեստը դարձյալ բաժանվում է երկու մասի:

b **Թեետետոս.** Ասա, ինչով է տարբերվում յուրաքանչյուրը:

Օտարական. Մենք գիտենք, որ և՛ մենք, և՛ մյուս կենդանի էակները, և՛ այն, ինչից գոյացել են բնական երևույթները՝ կրակը, ջուրը և դրանց եղբայրակից բաները, աստծո ստեղծագործությունն են, և յուրաքանչյուրն արարված է նրա կողմից: Այդպես չէ՞:

Թեետետոս. Այդպես է:

Օտարական. Դրանցից յուրաքանչյուրին ուղեկցում են պատկերները, բայց ոչ իրենք իրերը, որոնք նույնպես աստվածային արվեստի արդյունք են:

Թեետետոս. Ի՞նչ պատկերներ:

c **Օտարական.** Ե՛վ նրանք, որ այցելում են քնած ժամանակ, և՛ նրանք, որ ցերեկը կոչվում են բնական տեսիլներ. ստվերները, երբ կրակի առկայությամբ որոշ մթություն է գոյանում, կամ կրկնակի տեսիլները, երբ իրի սեփական լույսը և լուսատուի լույսը միանում և ստեղծում են պատկեր, որը հակասում է տեսողական զգայության տրամադրած նախկին սովորական պատկերին:

Թեետետոս. Ուրեմն գոյություն ունի աստվածային ստեղծագործության երկու արգասիք՝ ինքը իրը և դրան ուղեկցող պատկերը:

Օտարական. Իսկ մե՞ր արվեստը: Չե՞նք ասի արդյոք, որ տնաշինական արվեստի շնորհիվ այն տուն է կառուցում, նկարչության շնորհիվ մեկ ուրիշ բան է անում, որը, ինչպես մարդու քունը, ստեղծվում է արթունների համար:

Թեոտեոս. Իհարկե:

d

Օտարական. Մեր ստեղծագործական գործունեության մյուս արգասիքները նույնպես երկակի են. մենք ասում ենք, որ մի կողմից՝ ինքը իրը բնաստեղծական արվեստի արգասիք է, իսկ մյուս կողմից՝ պատկերը պատկերավոր արվեստի արգասիք է:

Թեոտեոս. Հիմա ես ավելի լավ հասկացա և ընդունում եմ ստեղծագործության երկու տեսակները, որոնք նույնպես բաժանվում են երկու մասի: Համաձայն առաջին բաժանման՝ դրանք են աստվածային և մարդկային արվեստները, իսկ համաձայն երկրորդ բաժանման՝ դրանք են իրենք իրերը և այն արգասիքները, որոնք իրերի նմանակումներն են:

Օտարական. Հիշենք, որ պատկերավոր արվեստի մի տեսակը պատկերներ ստեղծելու արվեստ է, իսկ մյուսը՝ տեսիլներ ստեղծելու արվեստ, եթե կեղծիքն իսկապես գոյություն ունի և իր բնությամբ գոյություն ունեցող բաներից մեկն է:

e

Թեոտեոս. Այո, այդպես էր:

Օտարական. Եվ քանի որ կեղծիքն այսպես երևաց մեզ, մենք առանց որևէ կասկածի պիտի համարենք, որ այն երկու տեսակի է:

Թեոտեոս. Այո:

Օտարական. Տեսիլներ ստեղծելու արվեստը դարձյալ բաժանենք երկու մասի:

267

Թեոտեոս. Ինչպե՞ս:

Օտարական. Մի տեսակն իրագործվում է գործիքների օգնությամբ, իսկ մյուսի դեպքում տեսիլներ ստեղծողը ինքն է դառնում դրա գործիքը:

Թեոտեոս. Ի՞նչ նկատի ունես:

Օտարական. Ըստ իս, երբ ոմն ցանկանում է իր մարմնով նմանվել քո արտաքինին կամ ձայնով՝ քո ձայնին, տեսլական այդ արվեստը մեծ մասամբ կոչվում է նմանակում:

Թեոտեոս. Այո:

Օտարական. Առանձնացնենք վերջինը՝ կոչելով այն

- b** նմանակման արվեստ: Մի կողմ թողնենք մնացած ամեն բան՝ զիջելով ու տրամադրելով դա մեկ ուրիշին, ով ի մի կերի դա և հարմար անվանում կգտնի:

Թեետետոս. Առանձնացնենք, իսկ մնացյալը թողնենք ուրիշին:

Օտարական. Սակայն նմանակման արվեստը, Թեետետոս, նույնպես հարկ է համարել երկակի: Եվ տե՛ս, թե ինչու:

Թեետետոս. Խոսի՛ր:

Օտարական. Նմանակողներից ոմանք գիտեն, թե ինչն են նմանակում, իսկ ոմանք չգիտեն: Իսկ ո՞ր տարբերությունն ենք մենք ավելի մեծ համարում չիմացության և իմացության միջև առկա տարբերությունից:

Թեետետոս. Ոչ մի ուրիշ տարբերություն, հենց այդ մեկը:

Օտարական. Քիչ առաջ բերված նմանակումը պատկանում էր իմացողներին: Քանզի քո արտաքինին ծանոթ լինելով՝ որևէ մեկը կարող է նմանակել քեզ:

- c** **Թեետետոս.** Անշուշտ:

Օտարական. Իսկ ինչպե՞ս վարվենք արդարության և ընդհանրապես ամբողջ առաքինության հետ: Մի՞թե բազում չիմացողներ, որոնք սակայն կարծիք ունեն, ամեն կերպ չեն փորձի անել այնպես, որ այն, ինչն իրենց մեջ առաքինություն են համարում, դրսևորվի, և այդ իսկ պատճառով արդյո՞ք մեծապես չեն նմանակի դրան գործով և խոսքով:

Թեետետոս. Եվ այն էլ շատերը:

Օտարական. Բայց մի՞թե բոլորն էլ չեն մատուցի անհաջողության՝ փորձելով արդար թվալ, բայց չլինելով այդպիսին: Թե՞ միանգամայն հակառակը:

Թեետետոս. Միանգամայն հակառակը:

- d** **Օտարական.** Այդպիսի նմանակողին՝ չիմացողին, կարծում եմ, պետք է տարբերել այն մյուսից՝ իմացողից:

Թեետետոս. Այո:

Օտարական. Բայց որտեղի՞ց հարմար անվանում

գտնենք նրանցից յուրաքանչյուրի համար: Ակնհայտ է, որ դա դժվար է, և սեռերի բաժանումը տեսակների թերևս նաև հնում ներկայանում էր պարապ ու անմիտ զբաղմունք, այնպես որ ոչ ոք երբևէ չի փորձել բաժանում կատարել: Ահա ինչու անուններն այդքան անհրաժեշտ չէին: Եթե ավելի խիզախ խոսենք, ապա հանուն տարբերակման կարծիքի հետ միավորված նմանակումը կկոչենք կարծիք-նմանակում, իսկ իմացության հետ միավորվածը կկոչենք գիտական նմանակում:

Թեետետոս. Թող այդպես լինի:

Օտարական. Ուրեմն պետք է օգտագործել առաջին անվանումը, քանի որ սուփեստը ոչ թե իմացողներից է, այլ նմանակողներից⁴³:

Թեետետոս. Շատ ճիշտ է:

Օտարական. Այդ դեպքում փորձենք կարծիք-նմանակմանը հետևողին, ինչպես փորձում են երկաթը պարզելու համար՝ մաքուր է այն արդյոք, թե ժանգոտ:

Թեետետոս. Փորձենք:

Օտարական. Բայց այն ժանգոտ է, և այն էլ շատ: **268**
Քանզի նմանակողներից մեկը պարզամիտ է, և իրեն թվում է, թե գիտի իր կարծեցածը, իսկ մյուսի կերպարը իր վայրիվերո ճառերի պատճառով հարուցում է բազում տագնապներ՝ ստիպելով կասկածել, որ նա չգիտի այն, ինչուն գիտակ է ձևանում ուրիշների առաջ:

Թեետետոս. Իհարկե, քո նշած երկու սեռերն էլ գոյություն ունեն:

Օտարական. Չկոչե՞նք առաջինին պարզամիտ նմանակող, իսկ երկրորդին երեսպաշտ նմանակող:

Թեետետոս. Թերևս:

Օտարական. Իսկ վերջինիս սեռը մե՞կն է, թե՞ երկուսը:

Թեետետոս. Դու քննիր:

Օտարական. Ես քննում եմ, և ինձ երևում է երկու սեռ: **b**
Մեկը կարող է երեսպաշտություն անել հրապարակավ և երկար ճառերի ձևով, իսկ մյուսը մասնավոր, կարճ զրույցներով

ստիպում է զրուցակցին ինքնահակասության մեջ ընկնել:

Թեետետոս. Շատ ճիշտ ես ասում:

Օտարական. Եվ ինչպե՞ս կոչենք երկար ճառեր արտասանողին՝ քաղաքական գործի՞չ, թե՞ հրապարակային ճարտասան:

Թեետետոս. Հրապարակային ճարտասան:

Օտարական. Իսկ ինչպե՞ս կկոչենք մյուսին՝ իմաստուն՞ն, թե՞ սոփեստ:

Թեետետոս. Նրան անհնար է իմաստուն կոչել, չէ՞ որ
c ընդունեցինք, որ նա անգետ է: Բայց քանի որ նա նմանակում է փիլիսոփային, կստանա վերջինից ածանցված անունը, և ես արդեն գրեթե հասկացա, որ նա բոլոր առումներով իսկապես պիտի կոչվի սոփեստ:

Օտարական. Իսկ ի մի չբերե՞նք, ինչպես և նախկինում, նրա անունը, այս անգամ շարժվելով վերջից դեպի սկիզբ:

Թեետետոս. Իհարկե:

Օտարական. Այդ անունով կոչվում է [զրուցակցին] հակասության մեջ զցող երեսպաշտ կարծիք-նմանակունը, որը
d տեսիլներ ծնող պատկերավոր արվեստի մասն է, ոչ թե աստվածային է, այլ մարդկային, և մեր փաստարկներում սահմանվեց որպես ստեղծագործության աճպարարական մաս. նա, ով կասի, որ իսկական սոփեստն այս միս ու արյունից է, ըստ իս, միանգամայն ճշմարիտ կվարվի⁴⁴:

Թեետետոս. Միանգամայն:



ՊԱՐՄԵՆԻԴԵՍ

**ԿԵՓԱԼՈՍ, ԱԴԻՍԱՆՏՈՍ, ԱՆՏԻՓՈՆ, ԳԼԱՎԿՈՆ,
ՊՅՈՒԹՈՂՈՐՈՍ, ՍՈԿՐԱՏԵՍ, ՋԵՆՈՆ, ՊԱՐՄԵՆԻԴԵՍ,
ԱՐԻՍՏՈՏԵԼ**

126

Կեփալոս. Երբ հայրենի Կլազոմենեից¹ եկանք Աթենք, ազորայում հանդիպեցինք Ադիմանտոսին և Գլավկոնին: Բռնելով ձեռքս՝ Ադիմանտոսն ասաց.

– Ողջուն, Կեփալոս: Եթե որևէ բանի կարիք ունես, որ կարող եմք այստեղ անել քեզ համար, ասա:

– Բայց ես հենց այստեղ եմ,– պատասխանեցի ես,– որպեսզի խնդրանքով դիմեմ ձեզ:

– Ո՞րն է խնդրանքդ,– ասաց նա: Եվ ես հարցրի.

b

– Ի՞նչ էր քո համամայր եղբոր անունը: Ես չեմ հիշում: Նա դեռ երեխա էր, երբ նախկինում այստեղ էի գալիս Կլազոմենեից: Շատ ժամանակ է անցել դրանից: Նրա հոր անունը, կարծեմ, Պիրիլամպոս էր:

– Այո,– պատասխանեց նա:

– Իսկ ի՞նչ էր նրա անունը:

– Անտիփոն: Բայց ինչու՞ ես հարցնում:

– Տեսնու՞մ ես, – ասացի ես,– իմ այս համաքաղաքացիների: Նրանք իմաստության մեծ սիրահարներ են: Նրանք լսել են, որ այդ Անտիփոնը հաճախ է հանդիպել Ջենոնի բարեկամ ոմն Պյութոդորոսի հետ և որ հաճախ լսած լինելով նրանից Սոկրատեսի, Ջենոնի և Պարմենիդեսի երբեմնի տեղի ունեցած զրույցը² անգիր հիշում է այն:

c

– Ճիշտ ես ասում,– պատասխանեց Ադիմանտոսը:

– Դենց այդ գրույցը կուզեինք լսել,– խնդրեցի ես:

– Դժվար ոչինչ չկա,– պատասխանեց նա,– որովհետև պատանի տարիքում Անտիփոնը լավ է յուրացրել այն, չնայած որ այժմ, հետևելով պապի և անվանակցի օրինակին, զբաղվում է գլխավորապես ծիերով: Բայց եթե պետք է, գնանք իր մոտ: Նա հենց նոր այստեղից տուն գնաց, և բացի այդ մոտ է ապրում՝ Մելիտեում³:

- 127 Այնուհետև շարժվեցինք և տեղ հասնելով գտանք Անտիփոնին տանը: Նա նոր սանձ էր պատվիրում դարբնին: Իսկ երբ ճանապարհի դրեց վերջինիս, եղբայրները հայտնեցին մեր այցի պատճառը. նա հիշեց ինձ իմ նախորդ այցելությունից և ողջունեց: Եվ երբ մենք խնդրեցինք պատմել գրույցը, նախ հրաժարվում էր՝ ասելով, որ դա դժվար գործ է, բայց հետո այնուամենայնիվ սկսեց պատմել: Նա ասաց, որ Պյութոդորոսի պատմելով՝ Ձենոնը և Պարմենիդեսը մի անգամ ժամանեցին
- b Զամաթենական մեծ խաղերին⁴: Պարմենիդեսն արդեն բավականին ծեր էր՝ վաթսուներեք անց, լրիվ ճերմակած, սակայն գեղեցիկ և բարեսես: Ձենոնն այդ ժամանակ մոտ քառասուն տարեկան էր՝ բարձրահասակ և բարեկազմ. ասում էին, թե նա Պարմենիդեսի սիրելին էր: Նրանք հանգրվանեցին Պյութոդորոսի մոտ, քաղաքային պարսպից այն կողմ, Կերամիկոսում⁵: Եկել էր նաև Սոկրատեսը և նրա հետ շատ ուրիշներ, ովքեր ցանկանում էին լսել Ձենոնի երկերը, քանզի դրանք առաջին անգամ էին բերվել: Սոկրատեսն այդ ժամանակ շատ երիտասարդ էր: Ընթերցում էր ինքը Ձենոնը, իսկ Պարմենիդեսը դուրս էր եկել: Ընթերցելու արդեն քիչ բան էր մնացել, երբ
- d ներս մտավ Պյութոդորոսը, իսկ նրա ետևից նաև Պարմենիդեսն ու Արիստոտելը⁶, որը հետագայում դարձավ երեսուներից մեկը: Նրանք միայն կարճ հատված լսեցին ընթերցվող երկից: Սակայն Պյութոդորոսը նախկինում լսել էր Ձենոնին:

Ամբողջ երկը լսելուց հետո Սոկրատեսը խնդրեց մեկ անգամ էլ կարդալ առաջին փաստարկի առաջին դրույթը, և երբ այն ընթերցվեց, ասաց.

– Ի՞նչ նկատի ունես, Ձեռնոն, ասելով, որ եթե գոյը բազում է, պիտի լինի նման և ոչ նման: Չէ՞ որ դա անհնար է: Ոչ նմանը չի լինում նման, իսկ նմանը չի լինում ոչ նման: Այդպե՞ս չես ասում:

– Այդպես,– պատասխանեց Ձեռնոնը:

– Չետևաբար, եթե ոչ նմանը չի լինում նման, իսկ նմանը՝ ոչ նման, չի կարող գոյություն ունենալ նաև բազումը: Քանզի եթե բազումը գոյություն ունենար, այն կկրեր [իր համար] անհնարը: Դա՞ ես ուզում ասել, ուզում ես հակառակ բոլորի պնդել, որ բազումը գոյություն չունի՞: Քո յուրաքանչյուր պնդում դրա ապացույցն էս համարում և կարծում ես, որ քո գրի առած յուրաքանչյուր փաստարկ ապացուցում է, որ բազումը գոյություն չունի՞: Դա՞ նկատի ունես, թե՞ ճիշտ չեմ հասկացել:

– Ոչ,– պատասխանեց Ձեռնոնը,– ընդհանուր առմամբ լավ ես հասկացել երկը:

– Տեսնում եմ, ո՛վ Պարմենիդես,– ասաց Սոկրատեսը,– որ Ձեռնոնը ուզում է մոտ լինել քեզ ոչ միայն բարեկամության մեջ, այլև իր երկերում: Քանզի նա գրել է գրեթե նույնը, ինչ դու, սակայն որոշ ձևափոխությունների շնորհիվ փորձում է մոլորեցնել մեզ և համոզել, թե ուրիշ ինչ-որ բան է ասում: Քո պոեմներում դու ասում ես, որ ամեն ինչ մեկն է, և տալիս ես դրա հրաշալի ապացույցները: Իսկ նա ասում է, թե բազումը գոյություն չունի, և նույնպես ներկայացնում է բազմաթիվ ծանրակշիռ ապացույցներ: Ձեզնից առաջինը պնդում է մեկի գոյությունը, իսկ մյուսը՝ թե բազումը գոյություն չունի, և յուրաքանչյուրը խոսում է այնպես, ասես բոլորովին էլ չի կրկնում մյուսին, մինչդեռ դուք գրեթե նույնն եք ասում, և այդ ամենը մեր՝ մյուսներիս ըմբռնման կարողությունից վեր է:

– Այո, Սոկրատես,– պատասխանեց Ձեռնոնը,– սակայն դու ամբողջությամբ չես հասկացել այս երկի ճշմարտությունը, թեպետ լակոնական լակոտների⁷ պես հրաշալիորեն հետևում և հետամուտ ես լինում ասվածին: Նախ և առաջ քեզ համար

մութ մնաց, որ իմ երկը բոլորովին նկատի չունի այն, ինչ ասացիր, և չի փորձում մարդկանցից թաքցնել այդ մեծ մտահղացումը: Քո նշածը կողմնակի բան է, քանզի իրականում երկս պաշտպանում է Պարմենիդեսի փաստարկը նրանց դեմ, ովքեր փորձում են ծաղրել նրան՝ ասելով, որ եթե մեկը գոյություն ունի, ապա այստեղից ծագում են բազում զավեշտական հետևություններ, որոնք հակասում են նրա ուսմունքին: Այս երկն ուղղված է նրանց դեմ, ովքեր հաստատում են բազումը, ընդ որում համարժեք, եթե ոչ ավելի սուր ծաղրի է ենթարկում նրանց հարձակումները՝ ցանկանալով ցույց տալ, որ «բազումը գոյություն ունի» դրույթը առավել զավեշտալի է, քան դրույթը, ըստ որի գոյություն ունի մեկը: Վիճասիրության այդպիսի ճնշման տակ ես երիտասարդ տարիքում գրեցի այս երկը: Սակայն ինչ-որ մեկը գողացավ այն, այնպես որ ինձ առիթ չմնաց որոշելու՝ արժե արդյոք այն հրապարակել, թե ոչ: Քեզնից, Սոկրատես, վրիպեց, որ ես գրել եմ դա դրդված լինելով վեճերի նկատմամբ երիտասարդական սիրուց, բայց ոչ տարեց մարդու փառասիրությունից: Թեպետ, ինչպես արդեն ասացի, դու վատ չես հասկացել այն:

– Ընդունում եմ դիտողությունդ,– ասաց Սոկրատեսը,– և գտնում, որ այնպես է, ինչպես դու ես ասում: Պատասխանիր հետևյալ հարցին. չե՞ս կարծում, որ գոյություն ունի նմանության ինչ-որ ինքնին գաղափար և նրան հակադիր մեկ ուրիշ՝ ոչ նմանի գաղափար⁸ և որ այդ երկուսին հաղորդակից ենք լինում և՛ ես, և՛ դու, և՛ մնացյալ ամեն բան, որ մենք բազում ենք կոչում: Որ նմանին հաղորդակից եղողը ինքը նման է դառնում հենց այդ հաղորդակցության չափով, որ այն, ինչը հաղորդակից է լինում ոչ նմանին, դառնում է նման, իսկ այն, ինչը հաղորդակից է լինում երկուսին էլ, դառնում է և՛ առաջինը, և՛ երկրորդը: Եվ եթե բոլոր իրերը հաղորդակից են դառնում երկու հակադիր գաղափարներին և երկուսին էլ նման դառնալով՝ ոչ նման են դառնում միմյանց, ապա դրա մեջ զարմանալի ի՞նչ կա:

Տարօրինակ կլիներ, եթե որևէ մեկը ցույց տար, որ նմանը դառնում է ոչ նման, իսկ ոչ նմանը՝ նման: Բայց եթե նա ցույց տար, որ երկուսին էլ հաղորդակից եղողը երկուսին էլ նման և ոչ նման է, ապա ինձ, Ջենոն, դա անհեթեթ չի թվում, ինչպես եթե ոմն ցույց տար, որ ամեն բան մեկ է և հաղորդակից է մեկին, և նույնը նաև բազում է, քանի որ հաղորդակից է բազմությանը: Բայց եթե նա ապացուցեր, որ մեկը բազում է, այդ դեպքում ես կզարմանայի: Եվ այդպես է նաև մյուս բոլոր բաների պարագայում: Եթե նա ցույց տար, որ սեռերն ու տեսակները իրենց մեջ կրում են այդ հակադիր վիճակները, դա զարմանքի արժանի կլիներ: Բայց զարմանալի ի՞նչ կա, եթե որևէ մեկն ապացուցի, որ ես մեկն եմ և բազում եմ, և երբ ցանկանա ցույց տալ այդ բազմությունը, ասի, որ իմ մեջ տարբեր են աջ և ձախ, առջևի և ետևի, վերին և ստորին մասերը, քանի որ ես հաղորդակից եմ բազումին: Իսկ եթե ցանկանա ցույց տալ, որ ես մեկն եմ, ասի, թե ես մեկն եմ յոթ ներկա անձանցից: Այդպես նա ցույց կտար, որ երկու դեպքն էլ ճշմարիտ է: Արդ, եթե որևէ մեկը փորձի ցույց տալ մեկի և բազումի նույնությունը քարերի, գերանների և ուրիշ այդպիսի բաների օրինակի վրա, մենք կասենք, որ նա ցույց է տալիս, որ դրանք շատ են կամ մեկն են, բայց չի ապացուցում ո՛չ այն, որ մեկը բազում է, ո՛չ էլ այն, որ բազումն է մեկ, և նա ոչ մի զարմանալի բան չի ասի, այլ կասի այն, ինչի հետ մենք բոլորս համաձայն ենք: Իսկ եթե որևէ մեկն անի այն, ինչի մասին հենց նոր ասում էի, այսինքն նախ տարբերակի գաղափարներն իրենք ըստ ինքյան, ինչպես, օրինակ, նմանությունն ու ոչ նմանությունը, բազմությունն ու մեկը, դադարն ու շարժումը և շատ ուրիշ նման բաներ, և ցույց տա, որ դրանք կարող են միախառնվել և բաժանվել, այդժամ, Ջենոն, ես կզարմանամ: Դու ամեն ինչ շարադրել ես բավական խիզախորեն, բայց, ինչպես ասացի, շատ ավելի կզարմանամ, եթե որևէ մեկը ցույց տա, որ միևնույն դժվարությունը բոլոր առումներով առկա է նաև հենց գաղափար-

c

d

e

130

ների մեջ, և եթե ցույց տա այդ դժվարությունը քննախոսությանը ընթանված բաներում ճիշտ այնպես, ինչպես ցույց տվեցիք տեսանելի իրերի պարագայում:

Պյութոգորոսն ասաց, որ Սոկրատեսի խոսելու ընթացքում իրեն թվում էր, թե նրա արտասանած ամեն բառ կբարկացնի Պարմենիդեսին և Ջենոնին: Սակայն նրանք մեծ ուշադրությանը վերաբերվեցին նրա ասածներին և մերթ ընդ մերթ հայացքներ փոխանակելով ժպտում էին՝ արտահայտելով իրենց հիացմունքը: Երբ Սոկրատեսն ավարտեց, Պարմենիդեսն ասաց.

b – Ո՛վ Սոկրատես, որքա՛ն է հիացնում փաստարկելու շնորհքը: Ասա ինձ, ի՞նքո՞ւ ես կատարել այդ բաժանումը, ըստ որի միմյանցից առանձին գոյություն ունեն գաղափարները և այն, ինչ հաղորդակից է դրանց: Մի՞թե ինքը նմանը առանձին է այն նմանից, որը մեր տրամադրության տակ է, և մի՞թե այդպես է նաև մեկի, բազումի և բոլոր այն բաների դեպքում, որոնց մասին լսեցիր Ջենոնից:

– Այո,– պատասխանեց Սոկրատեսը:

– Այդպես է նաև այնպիսի գաղափարների դեպքում, ինչպիսիք են ինքն ըստ ինքյան արդարը, գեղեցիկը, բարին և բոլոր նման բանե՞րը:

– Այո,– ասաց նա:

c – Ուրեմն գոյություն ունի նաև մարդու՞ գաղափար, որն առանձին է մեզնից և բոլոր մեզ նմաններից՝ մարդու գաղափար, կրակի գաղափար կամ ջրի գաղափար:

– Հաճախ, Պարմենիդես,– պատասխանեց Սոկրատեսը,– ես դժվարանում եմ և չգիտեմ, թե ինչպես խոսել այդպիսի բաների մասին՝ այնպես, ինչպես նախորդների՞, թե՞ այլ կերպ:

– Իսկ այնպիսի բաների մասին, Սոկրատես, որոնք կարող էին զավեշտալի թվալ, ինչպես օրինակ՝ մազը, ցեխը, աղբը և շատ ուրիշ աննշան ու անպետք իրեր, մի՞թե նույնպես դժվարանում ես ասել, որ դրանցից յուրաքանչյուրի համար գոյություն ունի առանձին գաղափար՝ տարբեր այն մեկից, որին

d մենք դիպչում ենք, թե՞ ոչ:

– Ամենին,– պատասխանեց Սոկրատեսը:– Դրանք այնպիսին են, ինչպիսին տեսնում ենք: Եվ միանգամայն անհեթեթ կլիներ կարծել, թե դրանք ինչ-որ գաղափար ունեն: Թեպետ, երբեմն ինձ տանջել է կասկածը, թե բոլոր իրերի դեպքում էլ պիտի որ նույն բանը լինի: Բայց ամեն անգամ, երբ կանգ եմ առնում այդ կասկածի վրա, իսկույն փախչում եմ՝ վախենալով կորչել դատարկաբանության վիհում: Հասնելով այդտեղ՝ ես վերադառնում եմ իրերին, որոնց մասին հենց նոր ասում էինք, թե գաղափարներ ունեն, և զբաղվում դրանց քննությամբ:

– Դու դեռ երիտասարդ ես, Սոկրատես,– ասաց Պարմենիդեսը,– և փիլիսոփայությունն ամբողջությամբ չի համակել քեզ, ինչպես, կարծում եմ, դեռ կհամակի: Այդժամ հիշյալ իրերից և ոչ մեկը դու չես արհամարհի: Իսկ այժմ երիտասարդ տարիքիդ պատճառով դու հաշվի ես առնում մարդկանց կարծիքը: Ասա ինձ հետևյալը. դու ասացիր, որ քո կարծիքով կան գաղափարներ, որոնց անունները կցվում են իրենց հաղորդակից իրերին, ինչպես, օրինակ, նմանին հաղորդակիցները դառնում են նման, մեծությանը հաղորդակիցները՝ մեծ, իսկ գեղեցիկին և արդարին հաղորդակիցները՝ արդար և գեղեցիկ:

– Իհարկե,– պատասխանեց Սոկրատեսը:

– Իսկ հաղորդակից ամեն իր հաղորդակից է ամբողջ գաղափարին, թե՞ դրա մասին: Թե՞ կարող է լինել հաղորդակցության մեկ ուրիշ տեսակ:

– Այդ ինչպե՞ս,– հարցրեց Սոկրատեսը:

– Քո կարծիքով, ամբողջ գաղափարը լինելով մեկ՝ գոյություն ունի բազում իրերի մեջ, թե՞ ինչպես:

– Իսկ ի՞նչն է խանգարում նրան լինել դրանց մեջ, Պարմենիդես,– հարցրեց Սոկրատեսը:

– Լինելով մեկ և նույնական՝ այն միաժամանակ կլինի բազում առանձին իրերի մեջ և այդկերպ առանձնացած կլինի ինքն իրենից⁹:

ՊԼատոն

– Ոչ,– պատասխանեց Սոկրատեսը,– քանզի միևնույն ցեղերը միաժամանակ բազում տեղերում է և չի առանձնանում ինքն իրենից, և այդպես նաև գաղափարներից յուրաքանչյուրը, լինելով մեկ և նույնական, կարող է միաժամանակ լինել շատ բաներում:

– Հրաշալի է, Սոկրատես,– ասաց Պարմենիդեսը,– դու բազում տեղերում միաժամանակ տեղադրում ես միևնույնը, ինչպես եթե մեկ առագաստով ծածկելով շատ մարդկանց, ասեիր, որ մեկը վեր է շատերից: Թե՞ այլ բան նկատի ունեիր:

– Թերևս դա,– պատասխանեց Սոկրատեսը:

– Բայց մի՞թե ամբողջ առագաստը կլինի նրանցից յուրաքանչյուրի վրա, թե՞ մասամբ մեկի վրա, իսկ մասամբ՝ մյուսի:

– Մասամբ՝ մեկի, մասամբ էլ՝ մյուսի:

– Հետևաբար իրենք գաղափարները, Սոկրատես,– շարունակեց Պարմենիդեսը,– ունեն մասեր, և այն, ինչ հաղորդակից է դրանց, հաղորդակից է դրանց մասին, այնպես որ յուրաքանչյուր իրի մեջ կլինի ոչ թե ամբողջ գաղափարը, այլ նրա մասը:

– Երևում է, այդպես է:

– Եվ դու, Սոկրատես, ցանկանում ես ասել, թե մեկ գաղափարը իսկապես բաժանվում է մասերի և դրանից հետո էլ մե՞կ է մնում:

– Ոչ մի դեպքում,– ասաց Սոկրատեսը:

– Տե՛ս,– շարունակեց Պարմենիդեսը,– մի՞թե անհեթեթ չէ, որ երբ մասերի բաժանես մեծությունը, բազում մեծ մասերից յուրաքանչյուրը մեծ լինի մեծության մասի շնորհիվ, որն ավելի փոքր է, քան ինքը մեծություը:

– Անշուշտ,– պատասխանեց Սոկրատեսը:

– Եվ եթե յուրաքանչյուր իր ստանա հավասարի փոքր մասը, մի՞թե այդ մասը, որ փոքր է հավասարից, կդարձնի այն որևէ բանի հավասար:

– Դա անհնար է:

– Բայց, ասենք, մեզնից մեկն ունի փոքրի մասը, այդ դեպքում փոքրն ավելի մեծ կլինի այդ մասից և հետևաբար ինքը փոքրը մեծ կլինի, իսկ այն, ինչին կավելանա առանձնացված մասը, կդառնա նախկինից փոքր, և ոչ ավելի մեծ:

e

– Լինելու բան չէ,– ասաց Սոկրատեսը:

– Ուրեմն ի՞նչ եղանակով, Սոկրատես,– հարցրեց Պարմենիդես,– կհաղորդակցվեն իրերը քո այդ գաղափարներին, եթե չեն կարող հաղորդակցվել ո՛չ մասերին, ո՛չ էլ ամբողջ գաղափարներին:

– Ձևը վկա,– պատասխանեց Սոկրատեսը,– դա որոշելն ինձ բոլորովին էլ հեշտ չի թվում:

– Իսկ ի՞նչ կասես հետևյալի մասին:

– Ինչի՞ մասին:

– Կարծում եմ, որ յուրաքանչյուր գաղափար դու մեկ ես համարում հետևյալ պատճառով: Երբ բազում իրեր քեզ մեծ են թվում, դու, նայելով դրանց բոլորին, հավանաբար տեսնում ես մեկ նույնական գաղափար, այնպես որ մեծը համարում ես մեկ:

132

– Ճշմարիտ ես ասում,– հարեց Սոկրատեսը:

– Իսկ եթե հոգով հայես ինքը մեծը և մյուս մեծ բաները, չի՞ երևա արդյոք քեզ ինչ-որ մեծ բան, որի միջոցով այդ ամենը անհրաժեշտաբար մեծ է երևում:

– Թերևս:

– Ուրեմն կհայտնվի մեծության մեկ ուրիշ գաղափար, որը գոյանում է մեծի և նրան հաղորդակից բաների կողքին, իսկ դրանց բոլորի վերևում՝ մեկ ուրիշը, որի միջոցով դրանք բոլորը մեծ կլինեն: Եվ յուրաքանչյուր գաղափար քեզ մոտ արդեն չի լինի մեկ, այլ կլինի անսահման բազմություն:

b

– Բայց մի՞թե այդ գաղափարներից յուրաքանչյուրը միտք չէ, Պարմենիդես,– հարցրեց Սոկրատեսը,– և մի՞թե նրան հատուկ չէ գոյանալ բացառապես հոգում: Այդկերպ դրանցից յուրաքանչյուրը մեկ կլիներ և չէր կրի այն, ինչի մասին հիմա ասացիր:

ՊԼատոն

– Արդյո՞ք ցանկացած միտք մեկ է,– հարցրեց Պարմենիդեսը,– և արդյո՞ք այն միտք է ոչնչի մասին:

– Դա անհնար է,– պատասխանեց Սոկրատեսը:

– Ուրեմն ինչ-որ բանի մասի՞ն է:

– Այո:

c – Գոյություն ունեցո՞ղ, թե՞ չունեցող բանի:

– Գոյություն ունեցող:

– Իսկ չի՞ մտածում արդյոք այդ միտքն այն մեկի մասին, որն ընդգրկում է ամեն բան և մեկ գաղափար է:

– Այո:

– Այդ դեպքում գաղափար չէ՞ արդյոք այն, ինչը մտածվում է որպես մեկ, եթե այն միշտ նույնն է բոլոր բաների համար:

– Անհրաժեշտաբար այդպես է թվում:

– Իսկ եթե բոլոր իրերը,– շարունակեց Պարմենիդեսը,– ինչպես դու ես ասում, հաղորդակից են գաղափարներին, չպե՞տք է նկատի առնես, որ յուրաքանչյուր իր կազմված է մտքերից և մտածում է ամենը կամ որ լինելով միտք՝ մտա-գուրկ է:

d – Դա անիմաստ է,– պատասխանեց Սոկրատեսը,– և ինձ թվում է, ո՛վ Պարմենիդես, որ ամեն ինչ այսպես է. գաղափարները բնության մեջ գոյություն ունեն որպես օրինակներ, իսկ մնացյալ իրերը նմանվում են դրանց կամ դրանց նմանակներն են: Իսկ գաղափարներին հաղորդակից լինելը ոչ այլ ինչ է, եթե ոչ դրանց նմանվելը:

– Արդ, եթե ինչ-որ բան նման է գաղափարին,– ասաց Պարմենիդեսը,– չի՞ կարող արդյոք այդ գաղափարը նման լինել իրեն նմանվածին այնքան, որքան որ սա նմանվել է իրեն: Թե՞ գոյություն ունի միջոց, որ նմանը նման չլինի նմանին:

– Ոչ, չկա:

e – Իսկ մի՞թե մեծապես անհրաժեշտ չէ, որ նմանը և այն, ինչ նման է նրան, հաղորդակից լինեն միևնույն գաղափարին:

– Անհրաժեշտ է:

– Իսկ այն, ինչին հաղորդակից լինելով նմանը նման է դառնում, մի՞թե հենց գաղափար չէ:

– Իհարկե:

– Ուրեմն ոչինչ չի կարող նման լինել գաղափարին, և գաղափարը ոչնչին նման լինել չի կարող: Եթե ոչ՝ այդ գաղափարի կողքին միշտ կհայտնվի մեկ ուրիշ գաղափար, և եթե վերջինը նման է մեկ ուրիշ բանի, ապա դարձյալ կհայտնվի մեկ ուրիշը: Եվ նոր գաղափարների գոյացումը երբեք չի դադարի, եթե գաղափարը նման լինի իրեն հաղորդակից իրերին:

133

– Շատ ճիշտ ես ասում:

– Ուրեմն իրերը հաղորդակից են գաղափարներին ոչ նմանությամբ, և հարկ է փնտրել հաղորդակցության այլ միջոց:

– Թերևս:

– Դիմա դու տեսնու՞մ ես, Սոկրատես,– շարունակեց Պարմենիդեսը,– թե ինչ դժվարություն է ծագում գաղափարների ինքն ըստ ինքյան գոյությունը պնդելու դեպքում:

– Այն էլ ի՞նչ դժվարություն:

– Բայց լավ իմացիր,– ասաց Պարմենիդեսը,– որ դու ըստ էության չես զգացել այն պնդման դժվարության մեծությունը, թե ամեն գաղափար մեկ է և մշտապես առանձնացած է իրերից:

b

– Ինչու՞,– հարցրեց Սոկրատեսը:

– Պատճառները շատ են, սակայն գլխավորը հետևյալն է: Եթե որևէ մեկն ասեր, թե գաղափարները լինելով այնպիսին, որպիսին նկարագրում ենք, չեն ճանաչվում, հնարավոր չէր լինի ապացուցել, որ նա սխալվում է, եթե իհարկե նրա ընդդիմախոսը չլիներ փորձված, հմուտ և չցանկանար հարցի քննության ընթացքում հետևել բազմաթիվ ապացույցների, այլապես նրան, ով պնդում է, թե դրանք անճանաչելի են, անհնար կլիներ տարհանոզել:

c

– Ինչու՞, Պարմենիդես,– հարցրեց Սոկրատեսը:

– Որովհետև, Սոկրատես, ես կարծում եմ՝ դու և ուրիշ

մեկը, ով ընդունում է որևէ իրի ինքն ըստ ինքյան էությունը, նախ կհամաձայնի, որ մեր մեջ ոչ մի էություն էլ չկա:

– Հակառակ դեպքում ինչպե՞ս այն կարող էր գոյություն ունենալ ինքն ըստ ինքյան,– հարեց Սոկրատեսը:

– Ճիշտ ես ասում,– շարունակեց Պարմենիդեսը,– քանզի գաղափարները փոխադարձ հարաբերության մեջ են այն, ինչ են, և այդ հարաբերության մեջ է, որ ունեն էություն, և ոչ թե մեր մեջ եղած իրենց նմանությունների նկատմամբ հարաբերության մեջ, որոնց հաղորդակից լինելու շնորհիվ յուրաքանչյուրս անուն է ստանում: Իսկ այդ մեր մեջ եղածները համանուն են, գոյություն ունեն միմյանց հարաբերությամբ, և ոչ գաղափարների, այնպես որ պատկանում են իրենք իրենց, այլ ոչ անվանակից գաղափարներին:

– Ի՞նչ նկատի ունես,– հարցրեց Սոկրատեսը:

– Եթե, օրինակ, ձեզնից որևէ մեկը,– պատասխանեց Պարմենիդեսը,– տեր է կամ ստրուկ, ապա նա հենց տիրոջ ստրուկ չէ, և ոչ էլ տեր է հենց ստրուկի տերը. յուրաքանչյուրը մարդ է, և յուրաքանչյուրը կա՛մ մարդու տեր է, կա՛մ մարդու ստրուկ: Իսկ ինքը տիրությունը այն է, ինչ կա ստրկության հարաբերությամբ, և նմանապես ինքը ստրկությունը այն է, ինչ կա տիրության հարաբերությամբ, և մեր մեջ եղածը չի առնչվում գաղափարներին, ոչ էլ դրանք՝ մեզ: Կրկնում են, գաղափարները գոյություն ունեն ինքնին և առնչվում են միմիայն իրենք իրենց: Հասկանու՞մ ես, թե ինչ են ասում:

– Միանգամայն,– պատասխանեց Սոկրատեսը:

– Ուրեմն նաև ինքը իմացություն՞նը պիտի լինի ինքնին ճշմարտության իմացություն¹⁰:

– Իհարկե:

– Եվ իմացության ամեն տեսակ, որպես այդպիսին, կլինի որևէ իրի իմացություն, այդպես չէ՞:

– Այո:

– Իսկ մեր մեջ առկա իմացությունը մի՞թե չի լինի մեր

Պարմենիդես

Ճշմարտության իմացություն, և ամեն մեր իմացություն մի՞թե **b**
չի վերաբերի մեր կողքին եղած ամեն իրի:

– Անհրաժեշտաբար:

– Բայց ինքնին գաղափարներ, ինչպես և համաձայնում
ես, մենք չունենք, և դրանք չեն կարող լինել մեր կողքին:

– Ոչ, չեն կարող:

– Սակայն գաղափարների ամեն ինքնին սեռ ճանաչվում
է իմացության գաղափարով:

– Այո:

– Որը մենք չունենք:

– Ոչ:

– Յետևաբար մենք չենք ճանաչում գաղափարներից և ոչ
մեկը, որովհետև հաղորդակից չենք ինքնին իմացությամբ:

– Թերևս ոչ:

– Եվ մեզ համար անճանաչելի են թե՛ ինքնին գեղեցիկը,
թե՛ ինքնին բարին և թե՛ այն ամենը, որ մենք ենթադրում ենք **c**
իրեն ինքնագո գաղափար:

– Կարծես թե այդպես է:

– Տե՛ս, դեռ կա ավելի զարմանալի բան:

– Ի՞նչ:

– Կասե՞ս արդյոք, որ եթե գոյություն ունի ինքնին իմա-
ցության որևէ տեսակ, այն շատ ավելի ճշգրիտ է մեր մեջ
եղած իմացությունից, և նույնը նաև գեղեցիկի և մյուս նման
բաների պարագայում:

– Այո:

– Ուրեմն, եթե ինչ-որ բան հաղորդակից է ինքնին իմացու-
թյամբ, դու կասես, որ ոչ այլ ոք, քան աստված է ամենից
շատ տիրում այդ ամենաճշգրիտ իմացությամբ:

– Անհրաժեշտաբար:

– Իսկ հնարավո՞ր է, որ աստված, ունենալով այդ իմացու- **d**
թյունը, իմանա նաև մեր մեջ եղածը:

– Ինչու՞ ոչ:

– Որովհետև, Սոկրատես,– պատասխանեց Պարմենիդեսը,–

ինչպես մենք համաձայնեցինք, դրանց ուժը չի տարածվում մեր մեջ եղածի վրա, իսկ մեր մեջ եղածի ուժը չի տարածվում գաղափարների վրա, այլ յուրաքանչյուրը միայն իր համար է:

– Այո, մենք ընդունեցինք դա:

– Արդ, եթե աստված ունի ամենակատարյալ տիրությունը և ամենաճշգրիտ իմացությունը, աստվածների տիրությունը երբեք չի վերաբերի մեզ և նրանց իմացությունը երբեք չի ներառի ո՛չ մեզ, ո՛չ մեր կողքին եղած ուրիշ մի բան, այլ ինչպես մենք մեր իշխանությամբ չենք իշխում աստվածներին և աստվածային ոչինչ չենք ճանաչում մեր իմացությամբ, այնպես էլ նրանք, միննույն հիմունքով, թեպետ աստվածներ են, մեզ տեր չեն և անտեղյակ են մարդկանց գործերից:

– Բայց մի՞թե ավելի զարմանալի չի լինի,– հարցրեց Սոկրատեսը,– եթե աստծուն զրկենք իմացությունից:

– Այդուհանդերձ,– պատասխանեց Պարմենիդեսը,– գաղափարները, Սոկրատես, անխուսափելիորեն հանգեցնում են այս և շատ ուրիշ դժվարությունների, եթե այդ գաղափարները իրերի գաղափարներ են և եթե մենք ամեն գաղափար սահմանենք որպես ինքնին մի բան: Լսողը կդժվարանա հասկանալ սա և կվիճի՝ պնդելով, որ կա՛մ գաղափար գոյություն չունի, կա՛մ, եթե դրանք գոյություն ունեն, պիտի անհրաժեշտաբար անճանաչելի լինեն մարդկային բնությանը: Այս առարկությունը զուրկ չէ իմաստից, և ինչպես ասացինք քիչ առաջ, դժվար է տարհամոզել այդպես ասողին: Միայն շնորհաշատ այրը կարող է հասկանալ, որ գոյություն ունի ամենայն իրի սեռ և ինքն ըստ ինքյան էություն, իսկ առավել շնորհալին նաև կհասկանա և կհամոզի ուրիշին բավարար չափով դա քննելու:

– Համաձայն եմ, Պարմենիդես,– ասաց Սոկրատեսը,– ասածներդ շատ սրտովս են:

– Բայց եթե, Սոկրատես,– շարունակեց Պարմենիդեսը,– նկատի առնելով հենց նոր և նախկինում ասվածը, որևէ մեկը

չընդունի իրերի գաղափարները և չսահմանի յուրաքանչյուր իրի գաղափարը, ապա նա բոլորովին չի իմանա, թե ուր պիտի ուղղորդի իր միտքը, քանի որ մերժում է մշտապես նույնական գաղափարի գոյությունը, և այդպես լիովին կվերացնի քննախոսության ամեն հնարավորություն: Իմ կարծիքով, դու լավ հասկացել ես սա:

– Ճիշտ ես ասում,— պատասխանեց Սոկրատեսը:

– Ինչպե՞ս կվարվես, ուրեմն, փիլիսոփայության հետ: Ու՞ր կդիմես, եթե անտեղյակ ես նման բաներից:

– Այս պահին բոլորովին չեմ պատկերացնում:

– Որովհետև, Սոկրատես, առանց նախապես մարզվելու, դու փորձում ես սահմանել, թե ինչ է գեղեցիկը, արդարը, բարին և մյուս բոլոր գաղափարները: Ես նախկինում էլ նկատել եմ դա, երբ դու այստեղ գրուցում էիր այս Արիստոտելի հետ: Լավ իմացիր, որ քննախոսության հանդեպ քո կիրքը գեղեցիկ ու աստվածային է, բայց քանի դեռ երիտասարդ ես, մարզվիր նրանում, ինչը շատերը անօգուտ են համարում և կոչում են դատարկաբանություն: Հակառակ դեպքում ճշմարտությունը խույս կտա քեզնից:

– Իսկ ինչպե՞ս պետք է մարզվել, ո՞վ Պարմենիդես,— հարցրեց Սոկրատեսը:

– Դրա մասին լսել ես Ջենոնից,— պատասխանեց Պարմենիդեսը,— սակայն հուրախություն ինձ նրա հետ գրուցելիս էլ դու հրաժարվեցիր տեսանելի իրերի շուրջ խարխափող դատողություններից և առաջարկում ես քննել այն, ինչը կարելի է լավագույնս ըմբռնել քանականությամբ և համարել գաղափար:

– Քանզի ինձ թվում է,— պատասխանեց Սոկրատեսը,— որ այդպես ամենևին էլ դժվար չէ ցույց տալ, որ իրերն ունեն և՛ նմանություն, և՛ ոչ նմանություն, և այլն:

– Շատ ճիշտ է,— ասաց Պարմենիդեսը,— սակայն եթե ուզում ես ավելի լավ մարզվել, հարկավոր է անել նաև հետևյալը. ոչ միայն ենթադրել գոյություն ունեցողը և դիտարկել

այդ ենթադրությունից բխող հետևությունները, այլև ենթադրել, որ դա գոյություն չունի:

– Ի՞նչ նկատի ունես:

– Վերցնենք, օրինակ, Ջենոնի արած ենթադրությունը. եթե կա բազումը, ի՞նչ է հետևում սրանից թե՛ իր՝ բազումի համար իր և մեկի հարաբերությամբ, թե՛ մեկի՝ իր և բազումի հարաբերությամբ: Իսկ եթե բազումը գոյություն չունի, ապա հարկ է տեսնել, թե ինչ է դրանից հետևում մեկի և բազումի համար՝

- b** իրենք իրենց և միմյանց հարաբերությամբ: Եվ դարձյալ, եթե ենթադրենք, որ նմանը գոյություն ունի կամ գոյություն չունի, ի՞նչ է բխում այդ երկու ենթադրություններից՝ ինչպես դրանց հիմքում դրված իրերի, այնպես էլ ուրիշ իրերի առումով իրենք իրենց և միմյանց հարաբերությամբ: Նույնը վերաբերում է նաև ոչ նմանին, շարժմանը, դադարին, գոյացմանը և ոչնչացմանը, անգամ գոյությանը և չգոյությանը: Մի խոսքով, ինչ էլ ենթադրես որպես գոյություն ունեցող կամ չունեցող, կամ մեկ
- c** այլ բան կրող, հարկավոր է քննել հետևանքները ինչպես այդ ենթադրության, այնպես էլ յուրաքանչյուր ուրիշ ենթադրության հարաբերությամբ: Նույնը վերաբերում է նաև մի քանի կամ մեծ թվով ենթադրությունների: Այդ ուրիշ ենթադրությունները նույնպես դու պիտի քննես թե՛ իրենք իրենց, թե՛ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերության մեջ, անկախ այն բանից, թե ինչ կընտրես և ինչպիսին կենթադրես՝ գոյություն ունեցող, թե չունեցող, և այս ամենը՝ եթե իհարկե ցանկանում ես կարգին մարզվելուց հետո տեսանել ճշմարտությունը:

– Անհնարին բան ես ասում, Պարմենիդես,– պատասխանեց Սոկրատեսը,– ես լավ չեմ հասկանում դա: Գուցե ինքդ որևէ ենթադրություն անես, որպեսզի ես ավելի լավ պատկերացնեմ:

- d** – Ծանր առաջադրանք ես տալիս իմ տարիքի մարդուն,– ասաց Պարմենիդեսը:

– Իսկ դու, Ջենոն,– ասաց Սոկրատեսը,– գուցե դու՞ անես դա:

Ձենոնը ծիծաղելով ասաց.

– Խնդրեմք Պարմենիդեսին, Սոկրատես: Քանզի հեշտ բան չէ նրա ասածը: Թե՞ չես տեսնում, ինչ ես խնդրում: Եթե մենք ավելի շատ լինեինք, չարժեր խնդրել, որովհետև շատերի առաջ տեղին չէ խոսել նման բաների մասին և այն էլ այդ տարիքում: Չե՞ որ բազմությունը չգիտի, որ առանց համակողմանի քննության անհնար է ըմբռնել ճշմարտությունը: Եվ ես, Պարմենիդես, միանում եմ Սոկրատեսի խնդրանքին, որպեսզի ինքս էլ լսեմ այն, ինչ երկար ժամանակ արդեն չեմ լսել:

e

Անտիփոնի ասելով Պյութոգորոսը պատմում էր, որ Ձենոնի այս խոսքերից հետո ինքը ևս, ինչպես նաև Արիստոտելն ու մյուսները խնդրեցին Պարմենիդեսին խոսել և չմերժել: Եվ Պարմենիդեսն ասաց.

– Ստիպված եմ համաձայնել: Ինձ թվում է, որ ես հայտնվել եմ Իբիկոսի՝ ձիու վիճակում: Լինելով ծեր՝ այդ ձին պիտի դուրս գա մրցավազքի, և փորձը հուշում է նրան գալիքի մասին, իսկ Իբիկոսը, համեմատելով իրեն ձիու հետ, ասում է, որ ինքն էլ ծեր տարիքում ստիպված է կամքին հակառակ տրվել սիրուն: Սա հիշելով երկյուղ եմ ապրում՝ ինչպես պիտի կարողանամ այդ տարիքում լողալով անցնել դատողությունների այս օվկիանոսը: Ամեն դեպքում կփորձեմ, մանավանդ եթե, ինչպես Ձենոնն է ասում, այստեղ բոլորս մերոնք ենք: Ինչի՞ց սկսեմք և առաջին հերթին ի՞նչ ենթադրենք: Կամ, եթե ցանկանում եք և պիտի խրթին խաղ խաղանք, կսկսեմ ինձնից ու իմ ենթադրությունից և կքննեմ, թե որոնք են հետևանքները, եթե մեկը գոյություն ունի և եթե գոյություն չունի:

137

b

– Իհարկե,– պատասխանեց Ձենոնը:

– Իսկ ո՞վ կպատասխանի ինձ,– ասաց Պարմենիդեսը,– ուրիշ ո՞վ, եթե ոչ ամենակրտսերը: Նա պակաս բժախնդիր կլինի և կպատասխանի հենց այն, ինչ մտածում է, և նրա պատասխանները միաժամանակ շունչ առնելու դադարներ կլինեն ինձ համար:

- c – Ես պատրաստ եմ, Պարմենիդես,– արծազանքեց Արիստոտելը,– քանզի ամենակրտսեր ասելով նկատի ունես ինձ: Տո՛ւր հարցերդ, և ես կպատասխանեմ:
- Շատ լավ,– ասաց Պարմենիդեսը:– Եթե կա մեկը, կարո՞ղ է այն արդյոք լինել բազում:
- Ինչպե՞ս թե:
- Ուրեմն այն չունի մասեր և ինքը չպիտի որ ամբողջ լինի:
- Ինչու՞:
- Մասը ամբողջի՞ մասն է:
- Այո:
- Իսկ ի՞նչ է ամբողջը: Մի՞թե ոչ այն, որի մեջ ոչ մի մաս չի պակասում:
- Իհարկե:
- Ուրեմն երկու դեպքում էլ մեկը բաղկացած կլիներ մասերից, եթե լիներ ամբողջ և ունենար մասեր¹²:
- d – Անհրաժեշտաբար:
- Ուրեմն երկու դեպքում էլ մեկը կլիներ ոչ թե մեկ, այլ բազում:
- Ճշմարիտ է:
- Սակայն պիտի ոչ թե բազում լինի, այլ մեկ:
- Այո, պիտի:
- Ուստի եթե մեկը մեկ լինի, ո՛չ ամբողջ կլինի, ո՛չ էլ մասեր կունենա:
- Իհարկե ոչ:
- Արդ, եթե այն բոլորովին զուրկ է մասերից, չի ունենա ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ, ո՛չ էլ մեջտեղ, քանզի դրանք կլինեին նրա մասերը:
- Ճիշտ է:
- Բայց չէ՞ որ վերջը և սկիզբը յուրաքանչյուր իրի սահմաններն են:
- Ինչպե՞ս չէ:
- Հետևաբար մեկն անսահման է, եթե չունի ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ:

- Անսահման է:
- Ուրեմն զուրկ է նաև ձևից, քանի որ հաղորդակից չէ ո՛չ e շրջանին, ո՛չ էլ ուղիղին:
- Ինչպե՞ս:
- Չէ՞ որ շրջանը այն է, ինչի ծայրերը ամենուր միևնույն հեռավորության վրա են կենտրոնից:
- Այո:
- Իսկ ուղիղը այն է, ինչի կենտրոնը երկու ծայրերի նկատմամբ միևնույն հեռավորության վրա է:
- Այդպես է:
- Յետևաբար, եթե մեկը հաղորդակից լիներ ուղղաձգությանը կամ շրջանաձևությանը, կունենար մասեր և կլիներ բազում:
- Իհարկե:
- Յետևաբար այն ուղղաձիգ և շրջանաձև չէ, եթե չունի մասեր:
- Ճիշտ է:
- Եվ լինելով այդպիսին՝ ոչ մի տեղ գոյություն ունենալ չի կարող, քանզի չի կարող լինել ուրիշ բանի մեջ, ոչ էլ ինքն իր մեջ:
- Ինչու՞:
- Լինելով ուրիշ որևէ բանի մեջ՝ այն կպարագծվեր վերջինիս կողմից և բազում տեղերում կհավեր դրան իր բազում մասերով, բայց քանի որ մեկը զուրկ է մասերից և հաղորդակից չէ շրջանին, անհնար է, որ բազում տեղերով հավի շրջանին:
- Անհնար է:
- Իսկ գտնվելով ինքն իր մեջ՝ կպարագծի ոչ այլ բան, b քան ինքն իրեն: Եթե իհարկե գտնվի իր մեջ: Քանզի անհնար է, որ մի բան գտնվի ինքն իր մեջ և չպարագծի իրեն:
- Անհնար է:
- Ուրեմն երկուսն էլ՝ և՛ պարագծվողը, և՛ պարագծողը կլինեին բոլորովին տարբեր բաներ, և միևնույն ամբողջը չէր

կարողանա միաժամանակ կրել և գործել, այնպես որ մեկը կլիներ ոչ թե մեկ, այլ երկու:

– Ինչպե՞ս չէ:

– Ուրեմն մեկը ոչ մի տեղ չի գտնվում՝ ո՛չ ինքն իր մեջ, ո՛չ էլ ուրիշի:

– Չի գտնվում:

– Եթե այդպես է, ասա ինձ՝ արդյոք կարո՞ղ է այն դադարի կամ շարժման մեջ լինել:

– Իսկ ինչու՞ ոչ:

c – Քանզի շարժվելով՝ կա՛մ կտեղաշարժվեր, կա՛մ կփոփոխվեր: Չէ՞ որ միայն սրանք են շարժման տեսակները:

– Այո:

– Սակայն փոփոխվելով՝ մեկն այլևս չի կարող մեկ լինել:

– Չի կարող:

– Ուրեմն փոփոխությամբ չի շարժվում:

– Երևում է՝ ոչ:

– Իսկ տեղափոխությա՞մբ:

– Գուցե:

– Սակայն եթե մեկը տեղափոխվեր, ապա կա՛մ կպտտվեր նույն կետում, կա՛մ էլ մի տեղը կփոխեր ուրիշով:

– Անհրաժեշտաբար:

d – Ուրեմն պետք է որ պտտվելիս ունենա կենտրոն և ուրիշ մասեր, որոնք կպտտվեն դրա շուրջ: Բայց ինչպե՞ս հնարավոր է, որ ո՛չ կենտրոն, ո՛չ էլ մասեր ունեցողը պտտվի առանցքի շուրջ:

– Ոչ մի կերպ:

– Իսկ գուցե այս ու այնտեղ հայտնվելով է շարժվում:

– Այո, եթե իհարկե շարժվում է:

– Սակայն պարզվեց, որ այն չի կարող ոչ մի բանի մեջ գտնվել:

– Այո:

– Ուրեմն հայտնվել [ինչ-որ տեղ] առավել ևս անկարող է:

– Չեմ հասկանում, թե ինչու:

– Եթե ինչ-որ բանի մեջ որևէ բան գոյանում է, անհրաժեշտ է, որ քանի դեռ գոյանում է, չլինի այդտեղ, բայց ոչ էլ ամբողջովին դրանից դուրս լինի, քանի որ արդեն գոյանում է:

– Անհրաժեշտաբար:

– Այնպես որ, եթե ինչ-որ բան կրում է այդ վիճակը, ապա միայն մասեր ունենալու շնորհիվ: Այդժամ նրա մի մասը կարող է գտնվել ինչ-որ բանի ներսում, իսկ մյուսը՝ միևնույն ժամանակ դրսում: Իսկ մասեր չունեցողը ոչ մի կերպ չի կարող միաժամանակ գտնվել և՛ ներսում, և՛ դրսում:

– Եշմարիտ է:

– Իսկ մի՞թե առավել ևս անհնար չէ, որ մասեր չունեցողն ու ամբողջ չեղողը, քանի որ չի գոյանում ո՛չ մաս-մաս, ո՛չ ամբողջությամբ, հայտնվի ինչ-որ տեղ:

– Ակնհայտ է:

– Ուրեմն մեկը ինչ-որ տեղ գնալով և ինչ-որ տեղ հայտնվելով՝ չի փոխում տեղը, չի պտտվում նույն տեղում և չի փոփոխվում:

– Թերևս ոչ:

– Հետևաբար մեկը զուրկ է որևէ շարժումից:

– Զուրկ է:

– Սակայն մենք նաև ասում ենք, որ այն չի կարող գտնվել ինչ-որ բանում:

– Այո, ասում ենք:

– Ուրեմն մեկը երբեք միևնույն տեղում չէ:

– Ինչու՞:

– Որովհետև այդ դեպքում այն կգտնվեր մեկ ուրիշ տեղում՝ այնպես, ինչպես գտնվում էր այդ տեղում:

– Իհարկե:

– Սակայն մեկը չի կարող լինել ո՛չ ինքն իր մեջ, ո՛չ էլ ուրիշի:

– Ոչ:

– Ուրեմն մեկը երբեք միևնույն բանի մեջ չէ:

b

– Թերևս ոչ:

– Իսկ այն, ինչը երբեք չի լինում միևնույնի մեջ, ո՛չ դադարի մեջ է, ո՛չ էլ կանգնած է տեղում:

– Դա անհնար է:

– Եվ ըստ երևույթին մեկը ո՛չ կանգնած է տեղում, ո՛չ էլ շարժվում է:

– Երևում է, այո:

– Ուստի այն չի կարող նույնական լինել ո՛չ ուրիշի հետ, ո՛չ էլ ինքն իր, բայց նաև չի կարող տարբեր լինել ուրիշից և ինքն իրենից:

– Ինչպե՞ս:

– Տարբեր լինելով ինքն իրենից՝ տարբեր կլիներ մեկից և չէր լինի մեկ:

– Ճշմարիտ է:

c – Իսկ նույնական լինելով ուրիշի հետ՝ կլիներ ուրիշ և չէր լինի ինքը, այնպես որ չէր լինի, ինչ է, այլ կլիներ մեկից տարբեր ինչ-որ բան:

– Այո, կլիներ:

– Ուրեմն այն նույնական չէ ուրիշին և տարբեր չէ ինքն իրենից:

– Ոչ:

– Բայց չի լինի տարբեր նաև ուրիշից, քանի դեռ մեկ է: Քանզի մեկին հատուկ չէ ինչ-որ բանից տարբեր լինել, դա հատուկ է միայն ուրիշին և այլևս ոչ մի բանի:

– Ճիշտ է:

d – Շնորհիվ այն բանի, որ մեկ է, չի կարող լինել ուրիշ: Ի՞նչ ես կարծում:

– Իհարկե չի կարող:

– Բայց եթե դրա պատճառով չի լինում ուրիշ, ինքն իր պատճառով էլ չի լինի ուրիշ, իսկ եթե չի լինում ուրիշ ինքն իր պատճառով, ապա ոչնչով տարբեր չլինելով՝ ոչնչից տարբեր չի լինի:

– Ճիշտ է:

- Բայց նաև ինքն իրեն նույնական չի լինի:
- Ինչու՞ ոչ:
- Մեկի բնությունը նույնական չէ նույնականի բնությանը:
- Այդ ինչպե՞ս:
- Որովհետև, երբ ինչ-որ բան ինչ-որ բանի նույնական է դառնում, այն չի դառնում մեկ:
- Իսկ ի՞նչ է դառնում:
- Նույնական դառնալով բազում բաների՝ այն անհրաժեշտաբար դառնում է բազում, բայց ոչ մեկ:
- Ճշմարիտ է:
- Բայց եթե մեկը և նույնականը ոչնչով չտարբերվեին, ապա երբ ինչ-որ բան նույնական դառնար, այն մշտապես կդառնար մեկ, և դառնալով մեկ՝ կդառնար նույնական:
- Իհարկե:
- Հետևաբար եթե մեկը նույնական է ինքն իրեն, այն մեկ չէ ինքն իր հետ, և լինելով մեկ՝ չի լինի մեկ: Բայց դա անհնար է, և մեկը չի կարող տարբեր լինել ուրիշից կամ նույնական լինել ինքն իրեն:
- Անհնար է:
- Ուրեմն մեկը չի կարող տարբեր կամ նույնական լինել ո՛չ իր, ո՛չ ուրիշի հարաբերությամբ:
- Ոչ, չի կարող:
- Եվ ոչ մի բանի նման կամ ոչ նման չի լինի՝ ո՛չ ինքն իր, ո՛չ ուրիշ ինչ-որ բանի:
- Ինչու՞:
- Որովհետև նմանը այն է, ինչին հատուկ է նույնականությունը:
- Այո:
- Սակայն պարզվեց, որ մեկը զուրկ է նույնականի բնու- 140
թյունից:
- Այո, պարզվեց:
- Բայց եթե մեկին հատուկ լիներ որևէ բան բացի հենց մեկ լինելուց, այն կլիներ ավելին, քան մեկը, իսկ դա անհնար է:

- Այո:
- Ուրեմն, մեկին բոլորովին հատուկ չէ նույնականությունը՝ ո՛չ ուրիշ ինչ-որ բանի, ո՛չ էլ իր հարաբերությամբ:
- Կարժես թե՛ ոչ:
- Չեստեսաբար մեկը չի կարող նման լինել ո՛չ ուրիշին, ո՛չ էլ ինքն իրեն:
- Թերևս ոչ:
- Սակայն մեկին նաև հատուկ չէ ուրիշ լինելը, քանզի այդ դեպքում նրան հատուկ կլիներ մեկից ավելին լինելը:
- Այո, ավելին:
- Իսկ այն, ինչին հատուկ է տարբեր լինելն իրենից և ուրիշից, նման չէ ո՛չ ինքն իրեն, ո՛չ էլ ուրիշին, եթե այն, ինչին հատուկ է նույնականությունը, նման է:
- Ճիշտ է:
- Իսկ մեկը, որին, ինչպես երևում է, հատուկ չէ տարբեր լինելը, ամենևին չի կարող լինել ոչ նման՝ թե՛ իրեն, թե՛ ուրիշին:
- Ոչ, չի կարող:
- Չեստեսաբար մեկը ո՛չ նման է, ո՛չ էլ ոչ նման՝ թե՛ ինքն իրեն, թե՛ ուրիշին:
- Երևում է՝ ոչ:
- Եվ լինելով այդպիսին՝ չի լինի ո՛չ հավասար, ո՛չ էլ անհավասար թե՛ ինքն իրեն, թե՛ ուրիշին:
- Ինչու՞:
- Չավասար լինելու դեպքում վերջինս կունենա չափ, որն ունի այն, ինչին պիտի հավասար լիներ մեկը:
- Այո:
- Իսկ ավելի փոքր կամ ավելի մեծ լինելով այն իրերից, որոնց համաչափ է, ավելի մեծ կլինի փոքրերից, իսկ մեծերից՝ փոքր:
- Այո:
- Իսկ այն իրերի հարաբերությամբ, որոնց նկատմամբ անհամաչափ է, չափով կլինի ո՛չ մեծ, ո՛չ էլ փո՞քր:

– Ինչպե՞ս չէ:

– Բայց մի՞թե անհնար է, որ նույնականին հաղորդակիցն ունենա նույն չափը կամ ուրիշ որևէ բան:

– Անհնար է:

– Իսկ այն, ինչը չունի նույն չափը, չի կարող հավասար լինել ո՛չ ինքն իրեն, ո՛չ էլ ուրիշին:

– Երևում է՞ ոչ:

– Սակայն ունենալով ավելի մեծ կամ ավելի փոքր թվով չափման միավորներ, այն կունենար նույնքան մաս, որքան չափման միավոր, և այդպերպ դարձյալ մեկ չէր լինի, այլ կլի-
ներ այնքան, որքան իր մեջ եղած չափման միավորներն են:

– Գիշտ է:

– Եթե ունենար չափման միայն մեկ միավոր, ապա հավասար կլիներ մեկ միավորին: Սակայն պարզվեց, որ չի կարող հավասար լինել ինչ-որ բանի:

– Այո, պարզվեց:

– Հետևաբար հաղորդակից չլինելով ո՛չ չափի մեկ միավորին, ո՛չ շատերին, ո՛չ էլ քչերին և բոլորովին հաղորդակից չլինելով նույնականին՝ այն, ինչպես երևում է, երբեք հավասար չի լինի ո՛չ ինքն իրեն, ո՛չ ուրիշին և ոչ էլ ավելի մեծ կամ ավելի փոքր կլինի ինքն իրենից կամ ուրիշից:

– Միանգամայն այդպես է:

– Եվ ինչ, կարո՞ղ է արդյոք մեկը նույն տարիքի թվալ ինչ-
որ բանի հետ կամ թվալ ավելի երիտասարդ կամ ավելի տարեց:

– Ինչու՞ ոչ:

– Որովհետև միննույն տարիքի լինելով իր կամ ուրիշի հետ՝ այն հաղորդակից կլինի ժամանակային հավասարությանն ու նմանությանը, իսկ մենք ասացինք, որ մեկը հաղորդակից չէ ո՛չ նմանությանը, ո՛չ էլ հավասարությանը:

– Այո, ասացինք:

– Մենք ասել ենք մաս, որ այն հաղորդակից չէ ոչ նմանությանը և անհավասարությանը:

- Իհարկե:
 - Սակայն լինելով այդպիսին՝ կարո՞ղ է արդյոք մեկը որևէ
- 141** բանից ավելի տարեց կամ ավելի երիտասարդ լինել և նույն տարիքն ունենալ ինչ-որ բանի հետ:
- Ամենևին:
 - Ուրեմն մեկը չի կարող ավելի տարեց կամ ավելի երիտասարդ լինել թե՛ ինքն իրենից, թե՛ ուրիշից և նույն տարիքի չի կարող լինել ո՛չ ինքն իր, ո՛չ էլ ուրիշի հետ:
 - Ակնհայտորեն ոչ:
 - Սակայն եթե մեկն այդպիսին է, կարո՞ղ է արդյոք ընդհանրապես գոյություն ունենալ ժամանակի մեջ: Թե՞ անհրաժեշտ չէ, որ ժամանակի մեջ գոյություն ունեցողը միշտ ավելի տարեց դառնա ինքն իրենից:
 - Անհրաժեշտ է:
 - Իսկ մի՞թե տարեցը միշտ ավելի տարեց չէ երիտասարդից:
 - Ինչպե՞ս չէ:
- b** - Ուրեմն այն, ինչն ավելի տարեց է դառնում ինքն իրենից, միաժամանակ ավելի երրիտասարդ է դառնում ինքն իրենից, եթե ունենա իր մեջ այն, ինչից որ տարեց է դառնում:
- Ի՞նչ նկատի ունես:
 - Չետևյալը. եթե ինչ-որ բան տարբեր է ուրիշից, այն չի կարող դառնալ նրանից տարբեր, քանզի արդեն տարբեր է, իսկ այն, ինչը եղել է տարբեր և կլինի տարբեր, միայն եղել է տարբեր և տարբեր կլինի ապագայում, բայց այն, ինչը դառնում է ուրիշից տարբեր, ո՛չ եղել է, ո՛չ է և ո՛չ էլ կլինի այդպիսին, այլ միայն դառնում է, և ուրիշ ոչինչ:
 - Անհրաժեշտաբար:
- c** - Ուրեմն ավելի տարեցը տարբեր է ոչ այլ բանից, քան երիտասարդից:
- Այդպես է:
 - Չետևաբար ինքն իրենից տարեց դարձողը անհրաժեշտաբար պիտի ավելի երիտասարդ դառնա իրենից:

Պարմենիդես

– Թերևս:

– Սակայն ժամանակի մեջ չի դառնում ինքն իրենից ավելի երկար կամ ավելի կարճ, այլ դառնում է և կա, կար և կլինի ինքն իրեն հավասար:

– Դա նույնպես անխուսափելի է:

– Այդ դեպքում անհրաժեշտ է թվում, որ ժամանակի մեջ գոյություն ունեցող և նրան հաղորդակից ամեն բան ինքն իր հետ լինի նույն տարիքի և միաժամանակ ավելի տարեց ու ավելի երիտասարդ դառնա ինքն իրենից:

– Կարծես թե այդպես է:

– Սակայն նշվածներից որևէ վիճակ մեկին հատուկ չէ:

– Այո, հատուկ չէ:

– Ուրեմն մեկը հաղորդակից չէ ժամանակին և ոչ մի ժամանակի մեջ գոյություն չունի:

– Ուրեմն ոչ, ինչպես ցույց է տալիս դատողությունը:

– Եվ ինչ, մի՞թե չի երևում, որ «եղել է», «դարձել է» և «դառնում էր» բառերը ցույց են տալիս հաղորդակցություն անցյալին:

– Այն էլ ինչպես:

– Իսկ «կլինի», «դառնալու է» և «կդառնա» բառերը մի՞թե ցույց չեն տալիս ապագան:

– Այո:

– Իսկ «գոյություն ունի» և «դառնում է» բառերը ցույց են տալիս հաղորդակցություն ներկայի՞ն:

– Իհարկե:

– Յետևաբար, եթե մեկը հաղորդակից չէ ոչ մի ժամանակի, ուրեմն երբևէ չէր դառնում, չի դարձել, հիմա գոյություն չունի և հետագայում նույնպես ո՛չ գոյանալիս կլինի և ո՛չ էլ կգոյանա:

– Շատ ճիշտ է:

– Բայց կա՞ մի բան, որ հաղորդակից է գոյությանը այլ կերպ, քան անցյալի, ներկայի և ապագայի միջոցով:

– Չկա:

– Չետևաբար մեկը հաղորդակից չէ գոյությանը:

– Թերևս ոչ:

– Եվ ուրեմն մեկը ոչ մի կերպ գոյություն չունի:

– Երևում է՝ ոչ:

– Եվ ոչ էլ գոյություն ունի որպես մեկ, քանզի այդ դեպքում գոյություն կունենար և հաղորդակից կլիներ գոյությանը: Բայց, ինչպես երևում է, մեկը գոյություն չունի որպես մեկ և ընդհանրապես գոյություն չունի, եթե հավատանք այսպիսի դատողությանը:

142

– Թերևս:

– Իսկ այն, ինչ գոյություն չունի, կարո՞ղ է արդյոք մի բան կրել կամ ունենալ:

– Ինչպե՞ս:

– Նրա համար չկա ո՛չ անուն, ո՛չ բառ, և նրա մասին չկա իմացություն: Այն չի կարելի զգայել, և անգամ անկարելի է դրա մասին կարծիք կազմել:

– Երևում է՝ ոչ:

– Չետևաբար չի կարելի անվանել այն, խոսել և կարծիք կազմել նրա մասին, նաև ճանաչել, և գոյություն ունեցող բաներից ոչ մեկի զգայությանը սա հասանելի չէ:

– Կարծես թե ոչ:

– Բայց հնարավո՞ր է արդյոք, որ այս ամենը համապատասխանի մեկին:

– Ինձ թվում է՝ ոչ:

– Այդ դեպքում, եթե դեմ չես, վերադառնանք մեր սկզբնական ենթադրությանը և նորովի քննենք խնդիրը:

b

– Իհարկե դեմ չեմ:

– Արդ, մենք ասում ենք, որ եթե մեկը գոյություն ունի, մենք պիտի համաձայնության գանք այն հարցի շուրջ, թե ինչ հետևանքներ են բխում դրանից: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Սկսենք սկզբից: Եթե մեկը գոյություն ունի, կարո՞ղ է արդյոք գոյելով հանդերձ հաղորդակից չլինել գոյությանը:

– Չի կարող:

– Ուրեմն պետք է լինի նաև մեկի գոյություն, որը նույնական չէ մեկին, քանզի այդ դեպքում այն չէր լինի մեկի գոյություն և մեկը նրան հաղորդակից չէր լինի, այլ միևնույն բանը կլիներ ասել, որ մեկը գոյություն ունի կամ որ մեկը մեկ է: Իսկ հիմա մենք ելնում ենք ոչ թե ենթադրությունից, թե մեկը մեկ է, այլ՝ որ մեկը գոյություն ունի: Այդպես չէ°:

– Այդպես է:

– Այդ դեպքում ուրիշ ի՞նչ պիտի նշանակի գոյություն ունենալը, եթե ոչ մեկ:

– Իհարկե:

– Չետևաբար, եթե ոմն ընդհանուր առմամբ ասի, որ մեկը գոյություն ունի, մի՞թե դա չի նշանակի, որ մեկը հաղորդակից է գոյությանը:

– Իհարկե:

– Մի անգամ էլ հարցնենք. եթե մեկը գոյություն ունի, ի՞նչ է հետևում սրանից: Մտածիր, մի՞թե այս ենթադրությունը անհրաժեշտաբար չի նշանակում, որ մեկն այն է, ինչը ունի մասեր:

– Ինչպե՞ս:

– Ահա թե ինչպես: Եթե գոյություն ունեցող մեկի մասին ասվում է, որ այն կա, իսկ մեկի մասին, որը գոյություն ունի, ասվում է, որ մեկ է, և դարձյալ՝ եթե գոյությունը և մեկը նույնը չեն, սակայն վերաբերում են մեր ենթադրած գոյություն ունեցող մեկին, ապա անհրաժեշտ է, որ ինքը գոյություն ունեցող մեկը լինի ամբողջ, իսկ մեկը և գոյությունը լինեն նրա մասերը:

– Անհրաժեշտաբար:

– Ինչպե՞ս կոչենք մասերից յուրաքանչյուրը՝ սոսկ մա՞ս, թե՞ ամբողջի մաս:

– Ամբողջի մաս:

– Ուրեմն ամբողջն այն է, ինչը մեկ է և ունի մասե՞ր:

– Իհարկե:

e – Եվ ի՞նչ, գոյություն ունեցող մեկի հիշյալ մասերից յուրաքանչյուրը, այսինքն մեկը և գոյությունը, կարող է մնալ առանձի՞մ՝ մեկը առանց գոյության իբրև իր մասի, իսկ գոյությունը առանց մեկի իբրև իր մասի:

– Ոչ, չեն կարող:

– Եվ դարձյալ, այդ մասերից յուրաքանչյուրն ունի մեկ և գոյություն, և յուրաքանչյուր մաս կազմված է առնվազն երկու մասերից: Նույն հիմունքով այն, ինչը պիտի մաս դառնա, միշտ նույն կերպով կունենա այդ երկու մասերը: Քանզի մեկը միշտ բովանդակում է գոյություն, իսկ գոյությունը՝ մեկ: 143 Ուստի միշտ դառնալով երկու, այն անհրաժեշտաբար երբեք մեկ չէ:

– Միանգամայն ճիշտ է:

– Եվ մի՞թե գոյություն ունեցող մեկն այդպիսով անսահման բազմություն չէ:

– Կարծես, այո:

– Մոտենանք խնդրին նաև ուրիշ կողմից:

– Ո՞ր:

– Մենք ասացինք, որ մեկը հաղորդակից է գոյությանը, որի միջոցով էլ գոյություն ունի:

– Այո:

– Եվ հենց այդ պատճառով պարզվեց, որ գոյություն ունեցող մեկը բազում է:

– Այդպես է:

– Եվ ինչ, արդյո՞ք մեկը, որն, ինչպես ասացինք, հաղորդակից է գոյությանը, կլինի միայն մեկ, թե՞ նաև բազում, եթե մենք մտովի վերցնենք միայն այդ մեկը ինքն ըստ ինքյան, առանց նրա, ինչին մեր ասելով այն հաղորդակից է:

– Իմ կարծիքով, այն կլինի մեկ:

b – Արի տեսնենք: Մի՞թե գոյությունը անհրաժեշտաբար տարբեր չափի լինի մեկից և մեկը՝ գոյությունից, եթե մեկը գոյություն չէ, այլ՝ գոյությանը հաղորդակից ինչ-որ բան:

– Անհրաժեշտաբար:

Պարմենիդես

– Ուրեմն, եթե մեկը և գոյությունը տարբեր են, ապա ոչ այն պատճառով, որ մեկը, մեկ լինելով, տարբեր է գոյությունից, իսկ գոյությունը, գոյություն լինելով, տարբեր է մեկից: Ոչ: Դրանք տարբերվում են միմյանցից ուրիշի և այլի պատճառով:

– Ճիշտ է:

– Հետևաբար ուրիշը նույնական չէ ո՛չ մեկին, ո՛չ էլ գոյությանը:

– Անկասկած:

– Եվ եթե մենք ընտրենք դրանցից կա՛մ գոյությունը և ուրիշը, կա՛մ գոյությունը և մեկը, կա՛մ մեկը և ուրիշը, ինչպես կուզես, ապա յուրաքանչյուր ընտրության մեջ մենք մի՞թե չենք ընտրի այնպիսիք, որոնք կարելի է կոչել զույգ:

– Անկասկած:

– Հետևյալ կերպ: Կարելի՞ է ասել «գոյություն»:

– Կարելի է:

– Իսկ կարելի՞ է ասել «մեկ»:

– Այդ էլ կարելի է:

– Այդպեսով մշվել է դրանցից յուրաքանչյուրը:

– Այո:

– Իսկ եթե ես ասեմ «գոյություն և մեկ», մի՞թե չեմ նշի զույգ:

– Իհարկե:

– Հետևաբար, եթե ես ասում եմ «գոյություն և ուրիշ» կամ «ուրիշ և գոյություն», ես խոսում եմ յուրաքանչյուր զույգի մասին: Այդպե՞ս է:

– Այո:

– Իսկ այն, ինչը ճշտորեն կարելի է կոչել զույգ, լինելով այդպիսին, մի՞թե չէր լինի երկու:

– Անհնար է, որ չլիներ:

– Բայց եթե իրերը երկուսն են, կարո՞ղ է դրանցից յուրաքանչյուրը չլինել մեկ:

– Ոչ, չի կարող:

– Քանի որ մեր զույգերից յուրաքանչյուրի մեկերը միասին երկուսն են, հետևաբար յուրաքանչյուրն առանձին մեկ է:

– Ակնհայտորեն:

– Իսկ եթե դրանցից յուրաքանչյուրը մեկ է, ապա ցանկացած մեկի համադրությունը ցանկացած զույգի հետ չի՞ կազմի արդյոք երեք:

– Այո:

– Իսկ մի՞թե երեքը կենտ չէ, իսկ երկուսը՝ զույգ:

e – Ինչպե՞ս չէ:

– Ուրեմն ի՞նչ, եթե կա երկուսը, անհրաժեշտաբար պիտի լինի կրկնակին, իսկ եթե երեքը՝ եռակին, քանի որ երկուսի մեջ կրկնակի անգամ բովանդակված է մեկը, իսկ երեքի մեջ՝ եռակի անգամ մեկը:

– Անհրաժեշտաբար:

– Իսկ երբ կա երկուսը և կրկնակին, արդյո՞ք անհրաժեշտ չէ, որ երկուսը լինի կրկնակի, և եթե կա երեքը և եռակին, անհրաժեշտ չէ՞, որ երեքը լինի եռակի անգամ:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ եթե կա երեքը և կրկնակին, ինչպես նաև երկուսը և եռակին, անհրաժեշտ չէ՞, որ լինի երեքը կրկնակի անգամ և երկուսը եռակի:

– Միանգամայն:

144 կենտերը՝ կենտերի, կենտերը՝ զույգերի և զույգերը՝ կենտերի:

– Այդպես է:

– Իսկ եթե այդպես է, մի՞թե չես կարծում, որ մնում է ինչ-որ մի թիվ, որի գոյությունն անհրաժեշտ չէ:

– Բնավ:

– Ուրեմն, եթե գոյություն ունի մեկը, անհրաժեշտաբար պիտի գոյություն ունենա նաև թիվը:

– Անհրաժեշտաբար:

– Սակայն եթե գոյություն ունի թիվը, պիտի գոյություն ունենա գոյի անսահման բազմություն¹³: Մի՞թե թիվը անսահ-

Պարմենիդես

ման չէ իր բազմությամբ և գոյությանը հաղորդակից լինելու մեջ:

– Իհարկե:

– Բայց եթե բոլոր թվերը հաղորդակից են գոյությանը, թվի յուրաքանչյուր մաս նույնպես պիտի հաղորդակից լինի դրան:

– Այո:

– Հետևաբար գոյությունը տարածվում է գոյություն ունեցող բազում բաների վրա և չի պակասում գոյություն ունեցող ոչ մի իրի մեջ՝ ո՛չ ամենամեծ, ո՛չ ամենափոքր: Բայց այդ հարցն անգամ անհեթեթ է: Քանզի ինչպե՞ս կարող էր գոյությունը պակասել գոյություն ունեցողին:

– Ոչ մի կերպ:

– Ուրեմն գոյությունը բաժանված է ամենափոքր, ամենամեծ և այլ մասերի և ամբողջովին մասնատված է, այնպես որ դրա մասերն անհամար են:

– Այդպես է:

– Հետևաբար ամենից շատ մասեր ունեցողը գոյությունն է:

– Այո, ամենից շատ:

– Իսկ կա՞ դրանց մեջ այնպիսինը, որը գոյության մասն է, բայց ինքը մաս չէ:

– Ինչպե՞ս կարող է դա պատահել:

– Բայց ես կարծում եմ, որ եթե այն գոյություն ունի, ապա, քանի դեռ գոյություն ունի, մշտապես պիտի ինչ-որ բան լինի և չի կարող լինել ոչինչ:

– Անհրաժեշտաբար:

– Ուրեմն մեկը առկա է գոյության յուրաքանչյուր մասի մեջ՝ չբացառելով ո՛չ ավելի փոքր, ո՛չ ավելի մեծ, ո՛չ ուրիշ ինչ-որ մաս:

– Այդպես է:

– Իսկ լինելով բազում տեղերում՝ մնու՞մ է արդյոք մեկը ամբողջ: Մտածիր այս մասին:

– Մտածել եմ և տեսնում եմ, որ անհնար է:

– Ուրեմն այն մասնատված է, եթե ամբողջ չէ: Քանզի չլի-
նելով մասնատված՝ չի կարող միևնույն ժամանակ գտնվել գո-
յության բոլոր մասերում:

– Այո:

– Եվ անհրաժեշտ է, որ մասնատվողը լինի այնքան, որ-
քան իր մասերի թիվն է:

– Անհրաժեշտ է:

– Ուրեմն ճիշտ չէինք ասում քիչ առաջ, պնդելով, թե գո-
յությունը ամենից շատ մասերի բաժանվողն է: Չէ՞ որ այն բա-
ժանվում է ոչ թե մեկից ավելի թվով մասերի, այլ, ինչպես
e կարծում եմ, հենց մեկի: Քանզի ո՛չ գոյությունը մեկի պակաս
ունի, ո՛չ էլ մեկը՝ գոյության, այլ միասին լինելով երկուս՝
դրանք մշտապես ամեն ինչի մեջ են:

– Ըստ էության, այդպես էլ կա:

– Չետևաբար գոյությամբ բաժանված ինքը մեկը մեծ և
անսահման բազմություն է:

– Ակնհայտորեն:

– Ուրեմն ոչ միայն գոյություն ունեցող մեկն է բազում,
այլև ինքը մեկը, բաժանված լինելով գոյությամբ, անհրաժեշ-
տաբար պիտի լինի բազում:

– Միանգամայն ճիշտ է:

– Եվ որովհետև մասերը ամբողջի մասերն են, մեկը պիտի
ամփոփվի ամբողջի մեջ: Մի՞թե մասերը չեն ամփոփվում ամ-
բողջի կողմից:

145

– Անհրաժեշտաբար:

– Իսկ ամփոփողը սահմանն է:

– Ինչպե՞ս չէ:

– Չետևաբար գոյություն ունեցող մեկը և՛ մեկ է, և՛ բա-
զում, և՛ ամբողջ է, և՛ մաս, և՛ սահմանված է, և՛ անսահման է:

– Ակնհայտորեն:

– Իսկ եթե սահմանված է, չունի՞ արդյոք ծայրեր:

– Անհրաժեշտաբար:

– Եվ եթե ամբողջ է, չունի՞ արդյոք սկիզբ, մեջտեղ և

վերջ: Մի՞թե որևէ բան կարող է ամբողջ լինել առանց այս երեքի: Եվ գրկվելով դրանցից որևէ մեկից, մի՞թե որևէ բան կարող է ամբողջ մնալ:

– Չի կարող:

– Ուրեմն մեկը, ինչպես երևում է, պիտի ունենա սկիզբ, **b**
մեջտեղ և վերջ:

– Պիտի ունենա:

– Սակայն մեջտեղը ծայրերից հավասար հեռավորության վրա է: Հակառակ դեպքում այն չէր լինի մեջտեղ:

– Ոչ, չէր լինի:

– Եվ լինելով այդպիսին՝ մեկը, ինչպես երևում է, հաղորդակից է ինչ-որ ֆիզուրի՝ ուղղաձիգ, շրջանաձև կամ դրանց խառնուրդին:

– Այո, հաղորդակից է:

– Բայց լինելով այդպիսին՝ մի՞թե մեկը չի գտնվի թե՛ ինքն իր մեջ և թե՛ ուրիշի:

– Ինչպե՞ս:

– Չէ՞ որ մասերից յուրաքանչյուրը գտնվում է ամբողջի մեջ, և ամբողջից դուրս ոչ մեկը գոյություն չունի:

– Այդպես է:

– Եվ բոլոր մասերն ամփոփվում են ամբողջի կողմի՞ց:

– Այո:

– Սակայն ամբողջի բոլոր մասերը հենց մեկ են՝ ոչ ավել, ոչ պակաս բոլոր մասերը:

– Այո:

– Ուրեմն ամբողջը մեկ է:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ եթե բոլոր մասերը գոյություն ունեն ամբողջի մեջ և եթե բոլորը կազմում են մեկ և հենց ամբողջ և ամփոփվում են ամբողջի կողմից, չի՞ մշանակում դա արդյոք, որ մեկը ամփոփվում է մեկի կողմից և այդպերպ մեկն արդեն ինքն իր մեջ է:

– Ակնհայտորեն:

c

d – Սակայն ամբողջը մասերի մեջ չէ՝ ո՛չ բոլոր մասերի, ո՛չ ինչ-որ մեկի: Քանզի եթե բոլոր մասերի մեջ է, ապա անհրաժեշտաբար պիտի լինի նաև մեկի մեջ: Չէ՞ որ չլինելով որևէ մեկի մեջ՝ այն չի կարող լինել բոլորի մեջ: Եթե այն բոլորից մեկն է և նրա մեջ չկա ամբողջ, ինչպե՞ս ամբողջը կլինի բոլոր մասերի մեջ:

– Ոչ մի կերպ:

– Բայց այն նաև որոշ մասերի մեջ չէ: Քանզի եթե ամբողջը որոշ մասերի մեջ լիներ, ավելի մեծը կգտնվեր ավելի փոքրի մեջ, իսկ դա անհնար է:

– Այո, անհնար է:

– Սակայն չլինելով ո՛չ մեծ թվով մասերի, ո՛չ մեկ մասի և ո՛չ էլ բոլորի մեջ, չպիտի՞ արդյոք ամբողջը լիներ կա՛մ ուրիշ ինչ-որ բանի մեջ, կա՛մ էլ ընդհանրապես ոչ մի տեղ:

e – Անհրաժեշտաբար:

– Սակայն ոչ մի տեղ չգտնվելով՝ այն կլիներ ոչինչ, իսկ քանի որ ամբողջ է և ինքն իր մեջ չէ, չպիտի՞ արդյոք լինի ուրիշ ինչ-որ բանի մեջ:

– Իհարկե:

– Հետևաբար, եթե մեկն ամբողջ է, ուրիշի մեջ է, իսկ քանի որ իր մասերի ամբողջությունն է, ապա ինքն իր մեջ է: Այսպիսով, մեկն անհրաժեշտաբար պիտի լինի և՛ ինքն իր, և՛ ուրիշի մեջ:

– Անհրաժեշտաբար:

– Ունենալով նման բնություն՝ չպիտի՞ այն շարժվի և լինի դադարի մեջ:

– Ինչպե՞ս:

– Պիտի լինի դադարի մեջ, քանի որ ինքն իր մեջ է: Չէ՞ որ լինելով մեկի մեջ և դուրս չգալով ինքն իր միջից, այն նույնի՞ ինքն իր մեջ է:

146

– Այո, այդպես է:

– Իսկ այն, ինչ միշտ միևնույնի մեջ է, մշտապես դադարի մեջ՞ է:

– Իհարկե:

– Իսկ այն, ինչ ուրիշի մեջ է, ընդհակառակը, պիտի մշտապես չլինի նույնի մեջ, և երբեք չլինելով նույնի մեջ՝ ոչ էլ դադարի մեջ է, իսկ չլինելով դադարի մեջ, շարժվում է:

– Այդպես է:

– Ուրեմն մշտապես լինելով ինքն իր և ուրիշի մեջ՝ մեկը պիտի մշտապես շարժվի և լինի դադարի մեջ:

– Ակնհայտորեն:

– Նաև պիտի նույնական լինի ինքն իրեն և տարբեր ինքն իրենից և ուրիշ իրերի հարաբերությամբ նույնպես պիտի լինի նույնական և տարբեր, եթե այնպիսին է, ինչպիսին ներկայացրինք:

b

– Այդ ինչպե՞ս:

– Որևէ իր մյուսի նկատմամբ հետևյալ հարաբերության մեջ է՝ կա՛ն նույնական է դրան, կա՛ն տարբեր է դրանից: Եվ եթե ո՛չ նույնական է, ո՛չ էլ տարբեր, ապա այս իրի նկատմամբ դրա հարաբերությունը կա՛ն մասի հարաբերություն է ամբողջի նկատմամբ, կա՛ն ամբողջի հարաբերություն՝ մասի:

– Երևում է, այդպես է:

– Արդ, մի՞թե մեկը ինքն իր մասն է:

– Բնավ:

– Ուրեմն հարաբերվելով ինքն իրեն որպես մասի՝ այն նաև չի լինի իր հարաբերությամբ ամբողջ, եթե ինքն իր նկատմամբ մաս է:

– Ոչ, չի լինի:

– Իսկ մեկը տարբե՞ր է մեկից:

– Ակներևաբար՝ ոչ:

– Չետևաբար չի կարող ինքն իրենից տարբեր լինել:

– Ոչ:

– Արդ, եթե մեկը ինքն իր նկատմամբ ո՛չ այլ է, ո՛չ ամբողջ, ո՛չ էլ մաս, չպիտի՞ արդյոք նույնական լինի ինքն իրեն:

– Անհրաժեշտաբար:

– Եվ ինչպե՞ս: Այն, ինչ գտնվում է ինքն իրենից տարբեր

c

տեղում, բայց ինքն իր մեջ է, չպիտի՞ արդյոք տարբեր լինի ինքն իրենից, եթե գտնվում է ուրիշ տեղում:

– Կարծում եմ, պիտի:

– Պարզվեց, որ մեկը հենց այդպիսին է, քանի որ միաժամանակ և՛ իր, և՛ ուրիշի մեջ է:

– Այո, պարզվեց:

– Ուրեմն մեկը կարծես թե տարբեր է ինքն իրենից:

d – Կարծես:

– Իսկ եթե մի բան տարբեր է ինչ-որ բանից, ապա մի՞թե այն տարբեր չէ [իրենից] տարբերից:

– Անհրաժեշտաբար:

– Մի՞թե այն ամենը, ինչը մեկ չէ, տարբեր է մեկից, և մի՞թե մեկը տարբեր է այն ամենից, ինչը մեկ չէ:

– Իհարկե:

– Ուրեմն մեկը տարբե՞ր է ուրիշ բաներից:

– Տարբեր է:

– Հիմա տե՛ս, ինքը նույնականը և ինքը տարբերը մի՞թե հակադիր չեն միմյանց:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ կարո՞ղ է երբևէ նույնականը լինել տարբերի մեջ, իսկ տարբերը՝ նույնականի:

– Չի կարող:

e – Բայց եթե տարբերը երբեք չի կարող լինել նույնականի մեջ, ապա գոյություն ունեցող բաներից ոչ մեկի մեջ տարբերը ոչ մի ժամանակ գոյություն չէր ունենա: Քանզի եթե այդպես լիներ, այդ ժամանակամիջոցում տարբերը կգտնվեր նույնականի մեջ: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Իսկ եթե երբեք նույնականի մեջ չէ, ապա երբեք չի գտնվում գոյություն ունեցող բաների մեջ:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն տարբերը ո՛չ նրա մեջ է, ինչը մեկ չէ, ո՛չ էլ նրա մեջ, ինչը մեկ է:

- Իհարկե ոչ:
- Չետևաբար տարբերի օգնությամբ չէ մեկը տարբեր նրանից, ինչը մեկ չէ, իսկ այն, ինչը մեկ չէ՝ մեկից:
- Ոչ:
- Ուրեմն, իրենք իրենց օգնությամբ չեն տարբեր միմյանցից, քանի որ հաղորդակից չեն տարբերին:
- Իհարկե ոչ:
- Իսկ եթե տարբեր են ո՛չ իրենց, ո՛չ էլ տարբերի օգնությամբ, չի՞ կորչում դրանց փոխադարձ տարբերությունը:
- Կորչում է:
- Բայց մաս այն, ինչը մեկ չէ, հաղորդակից չէ մեկին, քանզի չէր լինի ոչ մեկ, այլ ինչ-որ իմաստով կլիներ մեկ:
- Եզմարիտ է:
- Սակայն ոչ մեկը չի կարող լինել թիվ, որովհետև ունենալով թիվ՝ այն բոլորովին էլ չէր լինի ոչ մեկ:
- Իհարկե ոչ:
- Եվ ինչ, մի՞թե ոչ մեկը մեկի մասը չէ: Թե՞ այդպերպ այն հաղորդակից կլիներ մեկին:
- Չաղորդակից կլիներ:
- Արդ, ամեն դեպքում, եթե մեկը մեկ է, իսկ ոչ մեկը՝ ոչ մեկ, ոչ մեկը չի կարող լինել ոչ մեկի մասը, ոչ էլ կարող է ամբողջ լինել նրա հարաբերությամբ որպես մասի, ինչպես մաս ոչ մեկը չի կարող լինել մեկի մասը, ոչ էլ ամբողջ լինել նրա հարաբերությամբ որպես մասի:
- Ոչ, չի կարող:
- Բայց մենք ասացինք, որ միմյանց նկատմամբ ամբողջի և մասի, մասի և ամբողջի կամ տարբերության հարաբերության մեջ գտնվող բաները նույնական են:
- Այո, ասացինք:
- Իսկ եթե այդպես է, չասե՞նք մաս, որ մեկը նույնական է ոչ մեկին:
- Ասենք:
- Չետևաբար մեկը, ինչպես երևում է, տարբեր է ուրիշ

147

b

- c բաներից և ինքն իրենից, բայց մաս նույնական է դրանց և ինքն իրեն:
- Մեր դատողությունից դա է բխում:
 - Իսկ չի՞ լինի արդյոք մեկը նման և ոչ նման ինքն իրեն և ուրիշ բաներին:
 - Գուցե:
 - Քանի որ այն տարբեր երևաց ուրիշ բաներից, ուրիշ բաներն էլ պիտի տարբեր լինեն նրանից:
 - Իհարկե:
 - Բայց չէ՞ որ այն տարբեր է ուրիշ բաներից նույնքան, որքան վերջիններս նրանից՝ ոչ ավել, ոչ պակաս:
 - Այդպես է:
 - Իսկ եթե ոչ ավել, ոչ պակաս, ուրեմն մաս նմանապե՞ս:
 - Այո:
 - Որովհետև մեկը ուրիշ բաներից տարբեր ինչ-որ բան է
- d կրում և որովհետև մեկը ուրիշ բաների նկատմամբ և վերջիններս մեկի նկատմամբ կրում են նույնը:
- Ի՞նչ նկատի ունես:
 - Ահա թե ինչ: Մի՞թե յուրաքանչյուր անվամբ դու ինչ-որ բան չես կոչում:
 - Կոչում եմ:
 - Եվ նույն անունը դու կարող ես ասել մեկից ավելի՞ անգամ:
 - Իհարկե:
 - Բայց մի՞թե մեկ անգամ ասելով՝ դու կոչում ես այդ իրը, իսկ մի քանի անգամ ասելով՝ ոչ այդ իրը: Թե՞ անկախ նրանից, քանի անգամ ես ասում՝ մեկ անգամ, թե մի քանի անգամ, մշտապես նկատի ունես միևնույնը:
 - Անկասկած:
 - Բայց չէ՞ որ «տարբերը» նույնպես ինչ-որ բանի անուն է:
 - Անտարակույս:
- e - Հետևաբար, երբ դու այն արտասանում ես մեկ, թե մի

քանի անգամ, դա անում ես անվանելու համար ոչ այլ ինչ, եթե ոչ այն, ինչը կրում է այդ անունը:

– Անհրաժեշտաբար:

– Երբ մենք ասում ենք, որ ուրիշը մեկից տարբեր ինչ-որ բան է, իսկ մեկը տարբեր է ուրիշից, երկու անգամ ասելով «տարբեր»՝ մենք այդպեղայ անվանում ենք ոչ այլ ինչ, եթե ոչ այն բնությունը, որը կրում է այդ անունը:

– Անշուշտ:

– Եվ ինչպես որ մեկը տարբեր է ուրիշ բաներից, այնպես էլ ուրիշ բաները տարբերվում են մեկից, և մեկին հատուկ է հենց այն տարբերությունը, որը հատուկ է ուրիշին: Իսկ այն, ինչը որևէ կերպ նույնական է, նաև նման է: Այդպես չէ՞:

148

– Այդպես է:

– Իսկ որքանով մեկը տարբեր է ուրիշ բաներից, դրանցից յուրաքանչյուրը նման է յուրաքանչյուրին, քանի որ յուրաքանչյուրը մյուսից տարբեր է:

– Թերևս:

– Սակայն նմանը հակադի՞ր է ոչ նմանին:

– Այո:

– Հետևաբար նաև տարբերը հակադիր է նույնականին:

– Այո:

– Սակայն պարզվեց նաև, որ մեկը նույնական է ուրիշ բաներին:

– Այո, պարզվեց:

– Բայց չէ՞ որ ուրիշի հետ նույնական լինելը և ուրիշից տարբեր լինելը հակադիր վիճակներ են:

b

– Իհարկե:

– Սակայն պարզվեց, որ նրանով, որ տարբեր են, դրանք նման են:

– Այո:

– Ուրեմն նույնականությունը ոչ նման է դարձնում դրանք շնորհիվ նմանության հատկությանը հակադիր հատկության, քանզի տարբերը դարձնում է դրանք նման:

- Այո:
- Արդ, նույնականն է ոչ նման դարձնում դրանք, այլապես
- c այն հակադիր կլինի տարբերին:
 - Թերևս:
 - Յետևաբար մեկը նման և ոչ նման կլինի ուրիշ բաներին, որքանով որ տարբերը նման է և որքանով որ նույնականը՝ ոչ նման:
 - Այո, թերևս այսպիսի բացատրությունը տեղին է:
 - Սակայն տեղին է նաև հետևյալը:
 - Ի՞նչը:
 - Քանի որ նրան հատուկ է նույնականությունը, այլությունը նրան հատուկ չէ, իսկ եթե այլությունը նրան հատուկ չէ, ապա նրան հատուկ չէ նաև ոչ նմանությունը, իսկ չլինելով ոչ նման՝ այն նման է: Բայց քանի որ նրան հատուկ է այլությունը, այն ուրիշ է, իսկ լինելով ուրիշ՝ ոչ նման:
 - Ճշմարիտ ես ասում:
 - Յետևաբար, եթե մեկը նույնական է ուրիշ բաներին և տարբեր է դրանցից, ապա համաձայն երկու հատկությունների և դրանցից յուրաքանչյուրի՝ այն կլինի նման և ոչ նման ուրիշ բաներին:
- d - Իհարկե:
 - Իսկ քանի որ պարզվեց, որ այն տարբեր է ինքն իրենից և նույնական է իրեն, չի՞ պարզվի արդյոք համաձայն հիշյալ երկու հատկությունների և համաձայն դրանցից յուրաքանչյուրի, որ այն նման է և ոչ նման ինքն իրեն:
 - Անհրաժեշտաբար:
 - Իսկ հիմա տե՛ս, արդյո՞ք մեկը հպվում է ինքն իրեն և ուրիշ բաներին, թե՞ չի հպվում:
 - Ես հետևում եմ քեզ:
 - Չէ՞ որ պարզվեց, որ մեկը ամբողջությամբ գտնվում է ինքն իր մեջ:
 - Ճիշտ է:
 - Իսկ արդյո՞ք մեկը նաև ուրիշ բաների մեջ չէ:

– Իհարկե:

– Բայց քանի որ ուրիշ բաների մեջ է, հպվում է ուրիշ բաներին: Իսկ որքանով որ ինքն իր մեջ է, ուրիշին չի կարող հպվել և հպվում է միայն ինքն իրեն:

– Ակնհայտորեն:

– Այսպիսով, մեկը հպվում է և՛ ինքն իրեն, և՛ ուրիշ բաներին:

– Հպվում է:

– Իսկ հիմա հետևյալը. մի՞թե ամեն բան, որ պիտի հավի որևէ բանի, անհրաժեշտաբար չպիտի լինի նրա կողքին, ինչին որ պիտի հավի, ընդ որում՝ նրան շատ մոտ տեղում, ուր չլինելու դեպքում չի հավի:

– Անհրաժեշտաբար՝ պիտի:

– Ուրեմն, եթե մեկը պիտի հավի ինքն իրեն, ապա պիտի անմիջապես ինքն իր կողքին լինի, մոտ այն տեղին, ուր ինքն է:

– Այո, պիտի:

– Եթե մեկը երկուս լիներ, ապա կարող էր անել դա և միաժամանակ գտնվել երկու տեղերում: Բայց քանի դեռ այն մեկ է, չի կարող դա անել:

– Ոչ, չի կարող:

– Հետևաբար, նույն անհրաժեշտությունը թույլ չի տալիս մեկին լինել երկուս և հավել ինքն իրեն:

– Այո, նույն:

– Սակայն այդպե՞րպա մեկը չի հավի նաև ուրիշ բաներին:

– Ինչու՞:

– Որովհետև, ինչպես ասացինք, այն, ինչը պիտի հավի լինելով առանձին, գտնվում է նրա կողքին, ինչին պիտի հավի, և ոչ մի երրորդ բան նրանց միջև չպիտի լինի:

– Ճշմարիտ է:

– Հետևաբար հավելու համար պիտի գոյություն ունենա առնվազն երկու բան:

– Այո:

ՊԼատոն

– Եվ եթե այդ երկուսին հաջորդաբար ավելանա երրորդը, դրանք կլինեն երեքը, իսկ հպումները՝ երկուսը:

– Այո:

– Այսպիսով, երբ ավելանում է մեկը, ավելանում է նաև մեկ հպում, և դա նշանակում է, որ հպումները մեկով պակաս են հավող բաներից: Իրոք, որքանով որ առաջին երկու բաները գերազանցում են հպումները, այսինքն՝ ինչ թվով որ ավել են հպումների թվից, այդ նույն թվով էլ դրանք ավել են հպումներից, քանզի հետագայում արդեն յուրաքանչյուր հպում միանում է հպումներին, իսկ միավորները՝ միավորներին:

c

– Ճիշտ է:

– Ուրեմն որքան էլ լինի միավորների թիվը, հպումների քանակը մշտապես մեկով փոքր է այդ թվից:

– Ճշմարիտ է:

– Բայց եթե գոյություն ունի միայն մեկը, իսկ երկուսը՝ ոչ, ապա հպում լինել չի կարող:

– Իհարկե:

– Արդ, մենք ասացինք, որ մեկի ուրիշը ո՛չ մեկ է, ո՛չ էլ հաղորդակից է նրան, եթե ուրիշ է:

– Այո:

d

– Յետևաբար ուրիշը ո՛չ մեկ է, ո՛չ էլ երկուս և չի կարող կրել որևէ այլ թվի անուն:

– Ոչ:

– Ուրեմն մեկը միայն մեկ է և չի կարող երկուս լինել:

– Երևում է՝ ոչ:

– Բայց եթե չկա երկուս, չկա նաև հպում:

– Չկա:

– Ուրեմն մեկը չի հավում ուրիշ բաներին, և ոչ էլ ուրիշ բաներն են հավում մեկին, եթե չկա հպում:

– Այո:

– Ըստ այդմ մեկը և՛ հավում է ուրիշ բաներին ու ինքն իրեն, և՛ չի հավում:

– Թերևս:

– Իսկ չի՞ լինի արդյոք մեկը նաև հավասար և ոչ հավասար ինքն իրեն և ուրիշ բաներին:

– Ինչպե՞ս:

– Եթե այն ավելի մեծ կամ ավելի փոքր է ուրիշ բաներից e կամ ուրիշ բաներն են ավելի փոքր մեկից, ապա դրանք միմյանցից մեծ կամ փոքր կլինեն ոչ իրենց էությունների շնորհիվ: Բայց եթե դրանից զատ երկուսն էլ ունենան հավասարություն, ապա հավասար կլինեն միմյանց: Իսկ եթե ուրիշ բաները ունենան մեծություն, իսկ մեկը՝ փոքրություն, կամ մեկը ունենա մեծություն, իսկ ուրիշ բաները՝ փոքրություն, ապա գաղափարը, որին կավելանա մեծությունը, ավելի մեծ կլինի, իսկ այն մեկը, որին կավելանա փոքրությունը, կլինի փոքր:

– Անհրաժեշտաբար:

– Յետևաբար գոյություն ունեն մեծության և փոքրության գաղափարներ: Քանզի եթե գոյություն չունենային, միմյանց հակադիր չէին լինի և չէին գտնվի գոյի մեջ:

– Իհարկե:

– Սակայն եթե մեկի մեջ կա փոքրություն, այն կա՛մ ամբողջի մեջ է, կա՛մ էլ դրա մասի: 150

– Անհրաժեշտաբար:

– Արդ, եթե մեկը ամբողջի մեջ է, չի՞ ձգվի արդյոք հավասարաչափ ամբողջ մեկի երկայնքով կամ չի՞ ամփոփի այն արդյոք:

– Ակներևաբար:

– Սակայն հավասարաչափ ձգվելով մեկի երկայնքով, չի՞ լինի արդյոք փոքրությունը նրան հավասար, իսկ ամփոփելով՝ նրանից մեծ:

– Ինչպե՞ս չէ:

– Բայց հնարավո՞ր է, որ փոքրությունը հավասար լինի ինչ-որ բանի կամ ավելի մեծ լինի ինչ-որ բանից և գործի որպես մեծություն և հավասարություն, բայց ոչ որպես հենց b ինքը:

– Անհնար է:

– Ուրեմն փոքրությունը չի կարող գտնվել մեկի ամբողջի մեջ, այլ միայն դրա մասի:

– Այո:

– Բայց ոչ ամբողջի մասի մեջ, հակառակ դեպքում այն կդրսևորի իրեն այնպես, ինչպես ամբողջի նկատմամբ, և կլինի կա՛մ ավելի մեծ, կա՛մ ավելի փոքր այն մասից, որի մեջ է:

– Անհրաժեշտաբար:

– Ուրեմն փոքրությունը երբեք չի լինի գոյություն ունեցող որևէ բանի մեջ, քանի որ չի գտնվում ո՛չ մասի մեջ, ո՛չ էլ ամբողջի: Եվ հետևաբար, չի լինի ոչ մի փոքր բան, բացի հենց փոքրությունից:

– Թերևս ոչ:

c – Ուրեմն մեկի մեջ չի լինի մեծություն, քանզի այդ դեպքում մեծությունից բացի մեծ կլինի նաև ուրիշ մի բան, այն, ինչի մեջ գտնվում է մեծությունը և ինչը զուրկ է փոքրությունից, որին մեծությունը պիտի գերազանցեր, եթե մեծ է: Բայց դա անհնար է, որովհետև փոքրությունը ոչ մի բանի մեջ չէ:

– Ճշմարիտ է:

– Սակայն ինքը մեծությունը մեծ է ոչ այլ բանից, քան հենց փոքրությունից, և ինքը փոքրությունը փոքր է հենց մեծությունից:

– Իհարկե:

– Այսպիսով, ուրիշ բաները ո՛չ մեծ, ո՛չ էլ փոքր են մեկից,

d եթե չունեն ո՛չ մեծություն, ո՛չ էլ փոքրություն: Այս երկուսը ընդունակ են գերազանցել և գերազանցվել ոչ թե մեկի հարաբերությամբ, այլ միմյանց, և նմանապես մեկը չի կարող ավելի մեծ կամ ավելի փոքր լինել մեծությունից ու փոքրությունից, ինչպես նաև ուրիշ բաներից, քանի որ դրանք չեն բովանդակում իրենց մեջ ո՛չ մեծություն, ո՛չ էլ փոքրություն:

– Ակներևաբար:

– Ուստի, եթե մեկը մեծ կամ փոքր չէ ուրիշ բաներից, ան-

հրաժեշտ չէ՞ արդյոք, որ գերազանցի դրանք և գերազանցվի դրանց կողմից:

– Անհրաժեշտ է:

– Բայց միանգամայն անհրաժեշտ է, որ այն, ինչը գերազանցում և գերազանցվում է, լինի հավասարաչափ և, լինելով հավասարաչափ, լինի հավասար:

– Ինչպե՞ս չէ:

– Այնուհետև, մեկը այդպիսի հարաբերության մեջ կլինի նաև իր նկատմամբ: Այն չունի իր մեջ ո՛չ մեծություն, ո՛չ փոքրություն, այն ո՛չ գերազանցվում է ինքն իր կողմից, ո՛չ էլ գերազանցում է ինքն իրեն, այլ լինելով հավասարաչափ՝ կլինի ինքն իրեն հավասար:

– Իհարկե:

– Չետևաբար մեկը կլինի հավասար ինքն իրեն և ուրիշ բաներին:

– Ակներևաբար:

– Եվ գտնվելով ինքն իր մեջ՝ մեկը նաև ամփոփելու է իրեն դրսից և, որպես ամփոփող, ավելի մեծ կլինի ինքն իրենից, իսկ որպես ամփոփվող՝ ավելի փոքր: Այդպես այն կլինի ինքն իրենից մեծ և ինքն իրենից փոքր:

– Այո, կլինի:

– Իսկ անհրաժե՞շտ է նաև, որ մեկից և ուրիշ բաներից դուրս ոչինչ գոյություն չունենա:

– Իհարկե:

– Բայց չէ՞ որ գոյը մշտապես պիտի գտնվի ինչ-որ տեղ¹⁴:

– Այո:

– Իսկ մի՞թե մի բանի մեջ գտնվողը չի լինի փոքր մեծի մեջ: Չէ՞ որ այլ կերպ այն չէր կարող գտնվել ուրիշ բանի մեջ:

– Ոչ, չէր կարող:

– Բայց քանի որ մեկից և ուրիշից բացի ուրիշ ոչ մի բան չկա, մի՞թե անհրաժեշտ չէ, որ դրանք գտնվեն միմյանց մեջ, ուրիշ բաները՝ մեկի մեջ կամ մեկը՝ ուրիշ բաների մեջ, կամ էլ՝ ոչ մի տեղ:

e

151

b

– Ակներևաբար:

– Ուրեմն, եթե մեկը ուրիշ բաների մեջ է, ուրիշ բաները մեծ են մեկից, քանի որ ամփոփում են այն, իսկ մեկը, որպես ամփոփվող, փոքր է ուրիշ բաներից: Իսկ եթե ուրիշ բաներն են մեկի մեջ, մեկը մեծ կլինի ուրիշ բաներից, իսկ ուրիշ բաները՝ փոքր մեկից:

– Թերևս:

– Այդ դեպքում մեկը ն՛ հավասար, ն՛ մեծ, ն՛ փոքր է ինքն իր և ուրիշ բաների հարաբերությամբ:

– Ակնհայտորեն:

c ուրիշ բաների հարաբերությամբ կլինի հավասարաչափ, իսկ քանի որ ունի չափ, ունի նաև մասեր:

– Ինչպե՞ս չէ:

– Սակայն չափի մեջ լինելով մեծ կամ փոքր, այն մեծ, փոքր կամ հավասար կլինի ինքն իր և ուրիշ բաների հարաբերությամբ նաև թվապես:

– Ինչպե՞ս:

– Եթե մեծ է ինչ-որ բանից, ապա ավելի մեծ է նրանից իր չափով: Իսկ եթե կա չափ, ուրեմն կան մասեր: Նույնը տեղի ունի նաև այն դեպքում, երբ մեկը փոքր է կամ հավասար:

– Այդպես է:

d վասար՝ այն կլինի նույնաչափ ինքն իրեն կամ ինքն իրենից չափով մեծ կամ փոքր, իսկ եթե չափով, ապա նաև մասերով:

– Ինչպե՞ս չէ:

– Սակայն լինելով հավասարաչափ, այն հավասարաչափ է ինքն իր նկատմամբ, իսկ լինելով մեծ կամ փոքր, թվապես մեծ կամ փոքր է իր նկատմամբ:

– Ակներևաբար:

– Ուրեմն մեկը ճիշտ այդպես կհարաբերվի նաև ուրիշ բաներին: Քանզի եթե մեծ է երևում ուրիշ բաներից, անհրաժեշտաբար պիտի նաև թվապես նրանցից մեծ լինի, իսկ եթե

փոքր է՝ փոքր, և եթե հավասար է մեծությանը, պիտի նաև մասերով հավասար լինի:

– Անհրաժեշտաբար:

– Այսպիսով մեկը, ինչպես երևում է, դարձյալ թվապես հավասար, մեծ և փոքր կլինի իր և ուրիշ բաների նկատմամբ:

– Կլինի:

– Իսկ հաղորդակի՞ց է արդյոք մեկը ժամանակին, և եթե հաղորդակից է, չի՞ դառնում արդյոք ավելի երիտասարդ և ավելի տարեց ինքն իրենից և ուրիշ բաներից, ինչպես նաև ոչ երիտասարդ և ավելի տարեց ինքն իրենից և ուրիշ բաներից:

– Ինչպե՞ս:

– Եթե մեկը կա, ուրեմն նրան հատուկ է գոյությունը:

– Այո:

– Իսկ մի՞թե «կա»-ն չի նշանակում կեցության հաղորդակցություն ներկա ժամանակին, մի՞թե «կար»-ը չի նշանակում կեցության հաղորդակցություն անցյալ ժամանակին և մի՞թե «լինելու է»-ն չի նշանակում կեցության հաղորդակցություն ապագային:

– Նշանակում է:

– Դետևաբար, եթե մեկը հաղորդակից է կեցությանը, այն հաղորդակից է նաև ժամանակին:

– Իհարկե:

– Ուրեմն՝ ընթացող ժամանակին:

– Այո:

– Ուրեմն այն միշտ ինքն իրենից ավելի տարեց է դառնում, եթե առաջ է շարժվում ժամանակի մեջ:

– Անհրաժեշտաբար:

– Իսկ դու չե՞ս հիշում արդյոք, որ առավել տարեցը դառնում է առավել տարեց նրանից, ինչը դառնում է առավել երիտասարդ:

– Դիշում եմ:

– Սակայն եթե մեկը դառնում է ինքն իրենից տարեց,

- b ապա պիտի տարեց դառնա ինքն իրենից որպես ավելի երիտասարդ դարձողից:
- Անհրաժեշտաբար:
 - Այսպիսով, այն տարեց և երիտասարդ է դառնում ինքն իրենից:
 - Այո:
 - Իսկ մի՞թե այն ավելի տարեց չէ ներկա պահին, երբ կայանում է՝ գտնվելով անցյալի և ապագայի միջև: Չէ՞ որ անցյալից շարժվելով դեպի ապագա՝ չի կարող խուսափել ներկայից:
 - Ոչ:
 - Արդ, չի՞ դադարում արդյոք առավել տարեց դառնալուց,
- c երբ հայտնվում է ներկայում և այլևս ոչ թե դառնում է, այլ արդեն առավել տարեց է: Քանզի եթե այն առաջ է շարժվում, չի կարող կանգնեցվել ներկայով, չէ՞ որ առաջ շարժվողին հատուկ է հպվել և՛ անցյալին, և՛ ապագային, թողնելով ներկան և բռնվելով ապագայից՝ այդպես գտնվելով նրանց մեջտեղում:
- Ճշմարիտ է:
- d - Իսկ եթե ամեն կայացող բան պիտի անցնի ապագայով, ապա, հասնելով դրան, դադարում է կայանալուց և դառնում այն, ինչին հասել էր կայացման մեջ:
- Ակներևաբար:
 - Այնպես որ, երբ մեկը առավել տարեց դառնալով հասնում է ներկային, դադարում է կայանալուց և այդ պահին առավել տարեց է:
 - Իհարկե:
 - Իսկ մի՞թե առավել տարեց չէ նրանից, ինչից որ տարեց էր դառնում: Եվ մի՞թե առավել տարեց չի դառնում ինքն իրենից:
 - Այո:
 - Իսկ առավել տարեցը ավելի տարեց է նրանից, ինչն առավել երիտասարդ է:

– Այդպես է:

– Ուրեմն մեկը ավելի երիտասարդ է ինքն իրենից այն ժամանակ, երբ առավել տարեց դառնալով հայտնվում է ներկայում:

– Անհրաժեշտաբար:

– Սակայն ներկան մշտապես առկա է մեկի դեպքում նրա ողջ գոյության ընթացքում: Քանզի երբ էլ գոյություն ունենա, գոյություն ունի ներկայում:

– Ինչպե՞ս չէ:

– Ուրեմն մեկը միշտ ինքն իրենից ավելի տարեց և ավելի երիտասարդ է դառնում:

– Թերևս:

– Իսկ գոյություն ունի կամ կայանում է ինքն իրեն հավասար ժամանակի մեջ, թե՞ ավելի երկար ժամանակի ընթացքում:

– Հավասար:

– Իսկ եթե կայանում է կամ գոյություն ունի հավասար ժամանակի ընթացքում, ունի միևնույն տարիքը:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ այն, ինչ ունի միևնույն տարիքը, ո՛չ տարեց է, ո՛չ էլ երիտասա՞րդ:

– Իհարկե:

– Հետևաբար, եթե մեկը գոյություն ունի և կայանում է ինքն իրեն հավասար ժամանակի ընթացքում, ո՛չ ինքն իրենից տարեց կամ երիտասարդ է և ո՛չ էլ դառնում է այդպիսին¹⁵:

– Ինձ թվում է՝ ոչ:

– Իսկ ուրիշ բաների՞ց:

– Չեմ կարող ասել:

– Բայց դու կարող ես ասել, որ ուրիշ բաները, քանի որ տարբեր բաներ են և ոչ՝ տարբեր բան, ավելի շատ են մեկից, քանզի լինելով տարբեր բան, դրանք կլինեին մեկ, իսկ լինելով տարբեր բաներ, շատ են մեկից և ունեն բազմություն:

– Այո, ունեն:

e

153

– Իսկ լինելով բազմություն՝ հաղորդակից են մեկից ավելի մեծ թվի:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ ինչ, ինչն է գոյանում և գոյացել առաջինը՝ մե՞ծ թիվը, թե՞ փոքրը:

– Փոքրը:

– Սակայն նվազագույնը առաջինն է, իսկ դա մեկն է, այդպես չէ՞:

b – Այո:

– Ուրեմն բոլոր բաներից, որ թիվ ունեն, առաջինը գոյացել է մեկը: Սակայն մյուս բաներն էլ թիվ ունեն, քանի որ դրանք ուրիշ բաներ են և ոչ՝ ուրիշ բան:

– Այո, ունեն:

– Առաջին գոյացածը, կարծում եմ, գոյացել է ավելի վաղ, իսկ մյուս բաները՝ ավելի ուշ, ընդ որում ավելի ուշ գոյացածները ավելի երիտասարդ են նախապես գոյացածից: Այնպես որ ուրիշ բաները ավելի երիտասարդ կլինեն մեկից, իսկ մեկը ավելի տարեց կլինի ուրիշ բաներից:

– Այո:

– Կա մի ուրիշ հարց ևս: Կարո՞ղ էր արդյոք մեկը գոյանալ հակառակ իր բնության, թե՞ դա անհնար է:

– Անհնար է:

c – Սակայն պարզվեց, որ մեկը ունի մասեր, իսկ եթե ունի մասեր, ունի նաև սկիզբ, վերջ և մեջտեղ:

– Այո:

– Իսկ մի՞թե ամեն բանի՞ թե՛ հենց մեկի, թե՛ ուրիշ բաներից յուրաքանչյուրի մեջ չէ նախ գոյանում սկիզբը, իսկ այնուհետև մնացյալը, ներառյալ նաև վերջը:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ մենք ասում ենք, որ այդ մնացյալը մեկի և ամբողջի մաս է և որ վերջին հասնելով է դառնում մեկ և ամբողջ:

– Ասում ենք:

– Ըստ իս, վերջը գոյանում է ավելի ուշ, և նրա հետ,

համաձայն իր բնության, գոյանում է մեկը: Ուրեմն, եթե մեկը **d**
գոյանում է ոչ հակառակ բնության, ապա գոյանալով վերջի
հետ միաժամանակ և ուրիշ բաներից հետո, այն կգոյանար
համաձայն իր բնության:

– Ակներևաբար:

– Նշանակում է, մեկը ավելի երիտասարդ է ուրիշ բանե-
րից, իսկ ուրիշ բաները ավելի տարեց են մեկից:

– Ինձ այդպես է թվում:

– Եվ ինչ, մի՞թե անհրաժեշտ չէ, որ սկիզբը կամ մեկի կամ
ուրիշ որևէ բանի մի այլ մաս, եթե այն մաս է և ոչ մասեր,
լինելով մաս՝ լինի մեկ:

– Անհրաժեշտ է:

– Ուրեմն մեկը գոյանում է թե՛ առաջին մասի գոյացման
հետ, թե՛ երկրորդ մասի և բոլոր մյուս մասերի գոյացումից **e**
ետ չի մնում, անկախ նրանից, թե որն է որին միանում, մինչև
որ հասնելով վերջինին, դառնում է մեկ ամբողջ՝ բաց չթող-
նելով գոյացման մեջ ո՛չ մեջտեղի, ո՛չ առաջին, ո՛չ վերջին և
ո՛չ էլ ուրիշ որևէ մաս:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն մեկը միևնույն տարիքի է բոլոր ուրիշ բաների
հետ: Այնպես որ, եթե չի ելնում իր բնության դեմ, չպիտի
գոյանա ուրիշ բաներից ավելի վաղ կամ ավելի ուշ, այլ՝ **154**
նրանց հետ միաժամանակ: Եվ համաձայն այս փաստարկի՝
մեկը չպիտի ավելի տարեց կամ ավելի երիտասարդ լինի
ուրիշ բաներից, և նմանապես ուրիշ բաները՝ մեկից, մինչդեռ
համաձայն նախորդ փաստարկի՝ այն ավելի տարեց ու ավելի
երիտասարդ էր ուրիշ բաներից, իսկ ուրիշ բաները ճիշտ
նույն ձևով՝ նրանից:

– Իհարկե:

– Այդպիսին է մեկը, և այդպես է այն գոյացել: Բայց ինչ-
պե՞ս է մեկը ավելի տարեց կամ ավելի երիտասարդ դառնում
ուրիշ բաներից և ուրիշ բաները՝ մեկից, և ինչպե՞ս չի դառ-
նում առավել տարեց և առավել երիտասարդ: Մի՞թե կայաց-

ման դեպքում էլ ամեն բան այնպես է, ինչպես կեցության հարցում, թե՞ այլ կերպ է:

b – Չեմ կարող ասել:

– Իսկ ես կարող եմ ասել միայն այսքանը: Եթե մի բան մյուսից տարեց է, ապա չի կարող նրանից տարեց դառնալ ավելի, քան իր գոյացման պահին էր, և չի կարող ավելի երիտասարդ դառնալ, որովհետև անհավասար մեծությունները ավելանալով հավասար մեծություններին՝ լինի դա ժամանակ կամ մեկ ուրիշ բան, մշտապես հավասար են պահում իրենց միջև եղած սկզբնական տարբերությունը:

– Ինչպե՞ս չէ:

– Հետևաբար ոչ մի գոյ չի կարող ուրիշ գոյից ավելի տարեց կամ ավելի երիտասարդ դառնալ, եթե նրանց տարիքային տարբերությունը միշտ հավասար է: Մեկը տարեց է, մյուսը՝ երիտասարդ, և դա այլևս չի փոխվում:

c

– Ճշմարիտ է:

– Այնպես որ գոյություն ունեցող մեկը երբեք ավելի տարեց կամ երիտասարդ չի դառնում ուրիշ գոյություն ունեցող բաներից:

– Ոչ, չի դառնում:

– Բայց տե՛ս, մի՞թե դրանք առավել տարեց կամ առավել երիտասարդ չեն դառնում հետևյալ կերպ:

– Ի՞նչ կերպ:

– Ինչպես որ մեկը ավելի տարեց ներկայացավ ուրիշ բաներից և ուրիշ բաները՝ մեկից:

– Ուրեմն ի՞նչ:

– Երբ մեկը տարեց է ուրիշ բաներից, հետևաբար ավելի

d շա՞տ ժամանակ է գոյություն ունեցել, քան ուրիշը:

– Այո:

– Տե՛ս մի անգամ էլ: Եթե մենք երկար և կարճ ժամանակին ավելացնենք նույն ժամանակը, կտարբերվի՞ արդյոք երկար ժամանակը կարճ ժամանակից նույն չափով, թե՞ ավելի փոքր չափով:

– Ավելի փոքր չափով:

– Ուրեմն հետագայում մեկը տարիքով կտարբերվի ուրիշ բաներից ոչ այն չափով, որով տարբերվում էր սկզբում, այլ, ավելանալով ուրիշ բաների հետ հավասար ժամանակաչափով, տարիքով միշտ պակաս չափով կտարբերվի դրանցից, քան մինչ այդ: Այդպես չէ՞:

– Այո:

– Այսպիսով, այն, ինչ տարիքով ինչ-որ բանից պակաս չափով է տարբերվում, քան նախկինում, չի՞ դառնում արդյոք ավելի երիտասարդ նրանից, ինչից որ նախկինում տարեց էր:

– Այո, ավելի երիտասարդ է դառնում:

– Իսկ եթե առավել երիտասարդ է դառնում, մի՞թե ուրիշ բաներն էլ իրենց հերթին չեն դառնում ավելի տարեց մեկից, քան նախկինում:

– Իհարկե:

– Ուրեմն այն, ինչը գոյանում է ավելի ուշ, ավելի տարեց է դառնում նրանից, ինչը գոյացել էր ավելի վաղ և առավել տարեց էր, մինչդեռ այն երբեք տարեց չէ, այլ դառնում է տարեց, որովհետև մշտապես միտված է առավել տարեցին, իսկ առաջինը միտված է առավել երիտասարդին: Եվ դարձյալ, առավել տարեցը նույն ձևով ավելի երիտասարդ է դառնում առավել երիտասարդից: Քանի որ երկուսն էլ, շարժվելով դեպի իրենց հակադիրը, դառնում են իրենք իրենց հակադիրը՝ առավել երիտասարդը դառնում է ավելի տարեց առավել տարեցից, իսկ առավել տարեցը՝ ավելի երիտասարդ առավել երիտասարդից: Մինչդեռ նրանք չեն կարող դառնալ այդպիսին, որովհետև դառնալու դեպքում այլևս չէին լինի կայացման մեջ, այլ արդեն այդպիսին կլինեին: Ուստի դրանք առավել տարեց և առավել երիտասարդ են դառնում միմյանց նկատմամբ: Մեկը ավելի երիտասարդ է դառնում ուրիշ բաներից, քանի որ պարզվեց, որ այն առավել տարեց է և ավելի վաղ է գոյացել, իսկ ուրիշ բաները ավելի տարեց են մեկից, որովհետև ավելի ուշ են գոյացել: Նույն հիմունքով նաև ուրիշ

e

155

b

բաներն են այդպես հարաբերվում մեկի հետ, քանզի պարզ-վեց, որ դրանք առավել տարեց են և ավելի վաղ են գոյացել:

– Երևում է, այդպես է:

– Արդ, եթե ոչ մի բան մյուսից ավելի տարեց կամ ավելի երիտասարդ չի դառնում և դրանք միմյանցից միշտ տարբեր-վում են հավասար թվով, ապա մեկը ավելի տարեց կամ ավե-լի երիտասարդ չի դառնում ուրիշ բաներից, և ոչ էլ ուրիշ բաները՝ մեկից: Բայց քանի որ անհրաժեշտ է, որ վաղ գո-յացածը միշտ տարբեր չափով տարբերվի ուշ գոյացածից, ինչպես նաև ուշ գոյացածը՝ վաղ գոյացածից, նաև անհրա-ժեշտ է, որ ուրիշ բաները ավելի տարեց ու երիտասարդ դառ-նան մեկից, իսկ մեկը՝ ուրիշ բաներից:

– Միանգամայն ճիշտ է:

– Ըստ այդմ մեկը դառնում է և կա ինքն իրենից և ուրիշ բաներից ավելի տարեց ու ավելի երիտասարդ, բայց միաժա-մանակ նաև չի դառնում և չի հանդիսանում ինքն իրենից և ուրիշ բաներից ավելի տարեց և ավելի երիտասարդ:

– Ճիշտ այդպես:

d – Իսկ քանի որ մեկը հաղորդակից է ժամանակին և դառ-նում է առավել տարեց և առավել երիտասարդ, մի՞թե անհրա-ժեշտ չէ, որ հաղորդակից լինի անցյալին, ապագային և ներ-կային, որքանով որ հաղորդակից է ժամանակին:

– Անհրաժեշտ է:

– Ուրեմն մեկը կար, կա և կլինի, ինչպես նաև կայացել է, կայանում է և կկայանա:

– Անկասկած:

– Ուրեմն գոյություն կունենա մի բան, որը կար, կա և կլինի մեկի համար և որը պատկանում է մեկին:

– Իհարկե:

– Եվ եթե մենք կարողացանք այսքան բան ասել դրա մա-սին, ապա կլինի նաև դրա իմացությունը, դրա մասին կար-ծիքը և դրա ընկալումը:

– Ճիշտ ես ասում:

– Այն ունի անուն և բառ, այնպես որ այն կարելի է անվանել, և դրա մասին կարելի է խոսել: Եվ այն ամենը, ինչ վերաբերում է ուրիշ բաներին, վերաբերում է նաև մեկին:

– Միանգամայն ճիշտ է:

– Խոսենք նաև երրորդ կետի մասին: Եթե մեկն այնպիսին է, ինչպիսին ներկայացրինք, մի՞թե անհրաժեշտ չէ, որ լինելով մեկ և բազում և չլինելով մեկ և բազում, ինչպես նաև հաղորդակից լինելով ժամանակին, այն որոշ ժամանակ հաղորդակից լինի կեցությանը, քանի որ գոյություն ունի, իսկ որոշ ժամանակ հաղորդակից չլինի կեցությանը, քանի որ գոյություն չունի:

– Անհրաժեշտ է:

– Իսկ երբ մեկը հաղորդակից է կեցությանը, կարո՞ղ է արդյոք հաղորդակից չլինել նրան, կամ երբ հաղորդակից չէ՞ հաղորդակից լինել:

– Ոչ, չի կարող:

– Ուրեմն տարբեր ժամանակ հաղորդակից է և հաղորդակից չէ: Միայն այս եղանակով դա կարող է լինել և չլինել հաղորդակից միևնույն բանին:

– Ճիշտ է:

– Բայց մի՞թե ժամանակ չէ նաև այն պահը, երբ մեկը ընդունում է գոյությունը, և այն պահը, երբ հրաժարվում է նրանից: Քանզի ինչպե՞ս կարող է մերթ ունենալ գոյություն, մերթ չունենալ, եթե մի պահի ձեռք չի բերում այն և ուրիշ պահի հրաժարվում նրանից:

– Ոչ մի կերպ:

– Իսկ մի՞թե գոյությունը ընդունելը չես համարում գոյացում:

– Իհարկե:

– Իսկ հրաժարումը գոյությունից մի՞թե կործանում չէ:

– Իհարկե:

– Եվ, ինչպես երևում է, մեկը ընդունելով գոյությունը և հրաժարվելով նրանից՝ գոյանում է և կործանվում:

e

156

- b** – Անհրաժեշտաբար:
– Իսկ լինելով մեկ և բազում, գոյանալով և կործանվելով, մի՞թե չի կործանվում որպես բազում, երբ գոյանում է որպես մեկ, և մի՞թե չի կործանվում որպես մեկ, երբ գոյանում է որպես բազում:
– Իհարկե:
– Իսկ քանի որ դառնում է ն՛ մեկ, ն՛ բազում, մի՞թե չպիտի բաժանվի և համադրվի:
– Այն էլ ինչպես:
– Եվ երբ դառնում է ոչ նման և նման, չպիտի՞ արդյոք նմանվի և տարնանանվի:
– Այո:
– Իսկ երբ դառնում է ավելի մեծ, ավելի փոքր կամ հավասար, չպիտի՞ արդյոք մեծանա, փոքրանա և հավասարվի:
- c** – Այդպես է:
– Իսկ երբ շարժվելիս կանգ է առնում կամ երբ դադարի մեջ լինելով սկսում է շարժվել, ինքը պիտի ոչ մի ժամանակի մեջ չլինի:
– Ինչպե՞ս:
– Նախապես լինելով դադարի մեջ, իսկ հետո շարժվելով, և նախապես շարժվելով, իսկ այնուհետև կանգ առնելով, այն չի կարողանա կրել դա առանց փոփոխության:
– Իհարկե:
– Քանզի չկա ժամանակ, որի ընթացքում մի բան կարող է միաժամանակ ն՛ չշարժվել, ն՛ չլինել դադարի մեջ¹⁶:
– Անկասկած:
– Բայց այն չի կարող փոփոխվել առանց փոփոխվելու:
– Թերևս ոչ:
– Այդ դեպքում ե՞րբ է այն փոփոխվում, չէ՞ որ լինելով շարժման, դադարի և ժամանակի մեջ՝ չի փոփոխվում:
– Այո, չի փոփոխվում:
- d** – Ուրեմն գոյություն ունի այդ տարօրինակ բանը, որի մեջ այն կգտնվի փոփոխության ժամանակ:

– Ի՞նչ է դա:

– Հանկարծակիությունը¹⁷: Քանզի հանկարծակիությունը կարծես նշանակում է մի բան, որից սկսած փոփոխությունը տեղի է ունենում այս կամ այն ուղղությամբ: Չէ՞ որ մեկը չի սկսում փոփոխվել, քանի դեռ դադարի մեջ է, ոչ էլ՝ քանի դեռ շարժման մեջ է. իր բնությամբ տարօրինակ այդ հանկարծակիությունը շարժման և դադարի մեջտեղում է և բոլորովին e ժամանակի մեջ չէ, մինչդեռ նրա ուղղությամբ և նրանից սկսած է փոփոխվում շարժվողը՝ անցնելով դադարին, իսկ դադարի մեջ գտնվողը՝ մտնելով շարժման մեջ:

– Երևում է, այդպես է:

– Եվ եթե մեկը դադարի մեջ է և շարժվում է, պիտի փոփոխվի այս կամ այն ուղղությամբ, քանզի միայն այդպերպ կարող է անել երկուսն էլ: Իսկ փոփոխվելով՝ փոփոխվում է հանկարծ, և երբ փոփոխվում է, ոչ մի ժամանակի մեջ չի կարող գտնվել և ըստ այդմ չի կարող ո՛չ շարժվել, ո՛չ էլ գտնվել դադարի մեջ:

– Ոչ, չի կարող:

– Բայց մի՞թե ուրիշ փոփոխությունների դեպքում էլ տեղի չունի նույնը. երբ որևէ բան գոյությունից անցնում է կործանման կամ չգոյությունից՝ գոյացման, հայտնվում է այդ երկուսի՝ դադարի և շարժման արանքում, այնպես որ ո՛չ գոյություն ունի, ո՛չ գոյանում է և ո՛չ էլ կործանվում: 157

– Թերևս:

– Նույն հիմունքով, երբ մեկից անցնում է բազումին և բազումից մեկին, ո՛չ մեկ է, ո՛չ էլ բազում, ո՛չ բաժանվում է, ո՛չ էլ համադրվում: Նույն կերպ, նմանից անցնելով ոչ նմանին և ոչ նմանից նմանին՝ այն ո՛չ նման է, ո՛չ էլ ոչ նման, ո՛չ նմանվում է, ո՛չ էլ տարնմանվում: Եվ անցնելով փոքրից մեծին ու հավասարին, և հակառակը, չի դառնում ո՛չ մեծ, ո՛չ փոքր, ո՛չ էլ հավասար, ո՛չ ավելանում է, ո՛չ պակասում, ո՛չ էլ հավասարվում: b

– Երևում է, ոչ:

– Չետևաբար մեկը, եթե գոյություն ունի, կրում է բոլոր այդ վիճակները:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ չքննե՞նք, թե ինչ են կրում ուրիշ բաները, եթե մեկը գոյություն ունի:

– Քննենք:

– Խոսենք այն մասին, թե ինչ պիտի կրեն ուրիշ բաները, եթե մեկը գոյություն ունի:

– Խոսենք:

– Քանի որ ուրիշ բաները մեկի հարաբերությամբ են ուրիշ, դրանք մեկ չեն, այլապես չէին լինի ուրիշ:

– ճիշտ է:

c – Ուրիշ բաները բոլորովին էլ զուրկ չեն մեկից, այլ ինչ-որ կերպ հաղորդակից են դրան:

– Ի՞նչ կերպ:

– Ուրիշ բաները տարբեր են մեկից նրանով, որ մասեր ունեն, քանզի մասեր չունենալու դեպքում դրանք մեկ կլինեին:

– ճիշտ է:

– Մենք ասում ենք, որ մասեր ունի այն, ինչն ամբողջ է:

– Այո, ասում ենք:

– Սակայն ամբողջը պիտի բաղկացած լինի բազումից, և մասերը կլինեն նրա մասերը, քանզի դրանցից յուրաքանչյուրը պիտի լինի ոչ թե բազումի, այլ ամբողջի մասը:

– Ինչպե՞ս:

d բազումի մեջ, ապա կլիներ նաև ինքն իր մասը, ինչն անհնար է, և ուրիշ բաներից յուրաքանչյուրի մասը, եթե բոլորի մասն է: Սակայն չլինելով մեկի մասը, կլինի ուրիշ բաների մասը, բացառությամբ այդ մեկի, և չի լինի յուրաքանչյուրի մասը: Իսկ չլինելով յուրաքանչյուրի մասը, չի լինի բազումի մեջ մտնող ոչ մեկի մասը: Բայց եթե բոլորի հարաբերությամբ ինչ-որ բան չէ, այն ոչինչ չի կարող լինել՝ ո՛չ մաս, ո՛չ ուրիշ ինչ-որ բան¹⁸:

– Ակներևաբար:

– Ուրեմն մասը ոչ թե բազումի կամ բոլորի մասն է, այլ ինչ-որ գաղափարի և ինչ-որ մեկի, որը մենք կկոչենք ամբողջ. e սա բոլորից վերածվել է ավարտուն մեկի, և մասը այդ ամբողջի մասն է:

– Միանգամայն ճիշտ է:

– Ուրեմն, եթե ուրիշ բաները ունեն մասեր, դրանք հաղորդակից են ամբողջին և մեկին:

– Իհարկե:

– Ուրեմն մեկից տարբեր ուրիշ բաները կլինեն ավարտուն ամբողջ, որն ունի մասեր:

– Անհրաժեշտաբար:

– Նույնը վերաբերում է նաև յուրաքանչյուր մասին, քանզի յուրաքանչյուրը հաղորդակից է մեկին: Չէ՞ որ, եթե դրանցից յուրաքանչյուրը մաս է, ապա լինել յուրաքանչյուր նշանակում է, որ այն մեկ է, առանձնացված է ուրիշ բաներից և գոյություն ունի ինքն ըստ ինքյան, քանի որ յուրաքանչյուր է: 158

– Ճիշտ է:

– Սակայն յուրաքանչյուրը հաղորդակից է մեկին որպես նրանից տարբեր ինչ-որ բան, քանզի հակառակ դեպքում հաղորդակից չէր լինի, այլ ինքը կլիներ մեկ: Բայց չէ՞ որ մեկից բացի ոչինչ չի կարող մեկ լինել:

– Ոչ, չի կարող:

– Մինչդեռ ամբողջը և մասը անհրաժեշտաբար հաղորդակից են մեկին: Չէ՞ որ մեկը կլինի ամբողջ, որի մասերը կլինեն մասեր, իսկ մասերից յուրաքանչյուրը կլինի մի մասն այն ամբողջի, որի մասն է: b

– Այդպես է:

– Բայց մի՞թե մեկին հաղորդակիցը չի լինի նրան հաղորդակից որպես մեկից տարբեր մի բան:

– Ինչպե՞ս չէ:

– Իսկ մեկից տարբերը կլինի բազում: Քանզի եթե մեկից տարբերը չլինի ո՛չ մեկ, ո՛չ էլ մեկից ավելին, կլինի ոչինչ:

– Իհարկե:

– Բայց քանի որ մեկին որպես մասի և մեկին որպես ամբողջի հաղորդակից եղողը ավելին է մեկից, մի՞թե անհրաժեշտ չէ, որ մեկին հաղորդակից դառնողը քանակապես լինի անսահման:

– Ինչպե՞ս:

c – Մտածենք այսպես. արդյո՞ք մեկին հաղորդակից լինելու ժամանակ այն մասնակից չի դառնում որպես ոչ մեկ և իբրև մեկին անհաղորդ ինչ-որ բան:

– Ակնհայտ է:

– Հետևաբար այն, ինչի մեջ չկա մեկ, կլինի բազմություն:

– Այո:

– Եվ ի՞նչ, չե՞նք կարող արդյոք մտովի առանձնացնել այդ բազմությունից նվազագույնը, և մի՞թե այդ նվազագույնը, քանի որ հաղորդակից չէ մեկին, անհրաժեշտաբար չի լինի բազմություն և ոչ մեկ:

– Անհրաժեշտաբար:

– Այսպես, գաղափարի ուրիշ բնությունն ինքն ըստ ինքյան շարունակաբար դիտարկելու դեպքում միշտ կտեսնենք այն քանակապես անսահման:

– Միանգամայն ճիշտ է:

d – Այնուհետև, եթե յուրաքանչյուր մաս դառնում է մաս, մասերը միմյանց և ամբողջի նկատմամբ արդեն ունեն սահմաններ: Ամբողջը նույնպես սահման ունի մասերի նկատմամբ:

– Անկասկած:

– Հետևաբար մեկից տարբեր բաները այնպիսին են, որ իրենց և մեկի ընդհանրացումից, ինչպես երևում է, գոյանում է նրանցից տարբեր ինչ-որ բան, որն էլ և սահմաններ է դնում դրանց միջև այն դեպքում, երբ ուրիշ բաների բնությունն ինքնին անսահման է:

– Ակնհայտորեն:

– Այսպիսով, մեկից տարբերները և՛ որպես ամբողջ, և՛ որպես մաս անսահման են, բայց և հաղորդակից են սահմանին:

– Իհարկե:

– Իսկ չե՞ն լինի արդյոք դրանք նման և ոչ նման միմյանց **e**
և իրենք իրենց:

– Ինչպե՞ս:

– Քանի որ ամբողջն իր բնությամբ անսահման է, պիտի
կրի միևնույն վիճակը:

– Իհարկե:

– Եվ քանի որ ամբողջը հաղորդակից է սահմանին, պիտի
կրի միևնույն վիճակը:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ քանի որ ուրիշ բաներին հատուկ է սահմանափա-
կությունն ու անսահմանությունը, այդ վիճակները հակադիր
են միմյանց¹⁹:

– Այո:

– Իսկ հակադիր բաները ամենից ոչ նման բաներն են: **159**

– Անշուշտ:

– Արդ, համաձայն յուրաքանչյուր վիճակի՝ դրանք նման են
իրենք իրենց և միմյանց, իսկ համաձայն երկու վիճակների
միասին՝ միանգամայն հակադիր են և ոչ նման:

– Թերևս:

– Ուրեմն ուրիշ բաները նման և ոչ նման կլինեն իրենք
իրենց և միմյանց:

– Այդպես է:

– Եվ մենք արդեն հեշտությամբ կգտնենք, որ մեկից տար-
բեր ուրիշ բաները նույնական և տարբեր են միմյանց նկատ-
մամբ, շարժվում են և դադարի մեջ են և կրում են բոլոր **b**
հակադիր վիճակները, քանի որ պարզվեց, որ նրանք կրում
են այդ վիճակները:

– Ճիշտ ես ասում:

– Իսկ չարժե՞ թողնել այս ամենը որպես ակնհայտ [խնդիր]
և մեկ անգամ էլ դիտարկել՝ մեկի գոյության դեպքում մեկից
տարբեր ուրիշ բաները կլինեն ոչ այսպիսի՞ն, թե՞ միայն այս-
պիսին:

ՊԼատոն

- Իհարկե արժե դիտարկել:
 - Դիտարկենք սկզբից. եթե մեկը գոյություն ունի, ի՞նչ պիտի կրեն մեկից տարբեր բաները:
 - Դիտարկենք:
 - Մեկը գոյություն չունի առանց ուրիշ բաների և ուրիշ բաները՝ առանց մեկի:
 - Եվ ի՞նչ:
 - Այն, որ դրանցից զատ չկա ուրիշ բան, որ տարբեր է մեկից և ուրիշ բաներից: Քանզի երբ ասվում է «մեկ և ուրիշ բաներ», ասվում է ամեն ինչ:
 - Այո, ամեն ինչ:
 - Ուրեմն դրանցից տարբեր չկա ոչինչ, որի մեջ կգտնվի ինքը մեկը և ուրիշ բաները:
 - Իհարկե ոչ:
 - Ուրեմն մեկը և ուրիշ բաները երբեք չեն գտնվում միևնույնի մեջ:
 - Երևում է, ոչ:
 - Հետևաբար առանձին են:
 - Այո:
 - Եվ մենք ասում ենք, որ իսկական մեկը չունի մասեր:
 - Ինչպե՞ս կարող է ունենալ:
 - Արդ, ո՛չ ամբողջ մեկը, ո՛չ էլ նրա մասերը չեն կարող գտնվել ուրիշ բաների մեջ, եթե մեկը առանձին է ուրիշ բաներից և չունի մասեր:
- d - Ինչպե՞ս չէ:
 - Այդ դեպքում ուրիշ բաները ոչ մի կերպ հաղորդակից չեն մեկին, եթե հաղորդակից չեն ո՛չ նրա մասերին, ո՛չ էլ ամբողջին:
 - Ըստ երևույթին՝ ոչ:
 - Հետևաբար ուրիշ բաները ոչ մի կերպ մեկ չեն և իրենց մեջ բնավ չունեն մեկ:
 - Իհարկե ոչ:
 - Ուրեմն ուրիշ բաները նաև բազում չեն, քանի որ

բազում լինելու դեպքում բազում բաներից յուրաքանչյուրը կլիներ ամբողջի մաս: Իրականում, սակայն, մեկից տարբեր ուրիշ բաները ո՛չ մեկ են, ո՛չ բազում, ո՛չ ամբողջ, ո՛չ էլ մաս, եթե հաղորդակից չեն մեկին:

– Գիշտ է:

– Այնպես որ իրենք ուրիշ բաները երկու կամ երեք չեն և չեն բովանդակում դրանք իրենց մեջ, եթե բոլորովին զուրկ են մեկից: e

– Այդպես է:

– Ուրեմն ուրիշ բաները ո՛չ իրենք են մման և ոչ մման, ո՛չ էլ իրենց մեջ ունեն մմանություն կամ ոչ մմանություն: Քանզի եթե ուրիշ բաները լինեին մման և ոչ մման կամ իրենց մեջ ունենային մմանություն և ոչ մմանություն, մեկից տարբեր ուրիշ բաները իրենց մեջ կունենային երկու հակադիր գաղափարներ:

– Ակներևաբար:

– Սակայն պարզվեց, որ անհնար է, որ երկուսին հաղորդակից լինի այն, ինչը հաղորդակից չէ մեկին:

– Անհնար է:

– Հետևաբար ուրիշ բաները ո՛չ մման են, ո՛չ էլ ոչ մման և ո՛չ էլ այդ երկուսը միասին, քանզի լինելով մման կամ ոչ մման՝ դրանք հաղորդակից կլինեին այս կամ այն գաղափարին, իսկ եթե հաղորդակից լինեին երկուսին էլ, ապա հաղորդակից կլինեին երկու հակադիր գաղափարների, իսկ դա, ինչպես պարզվեց, անհնար է: 160

– Ծշմարիտ է:

– Նշանակում է, ուրիշ բաները ո՛չ մույնն են, ո՛չ էլ տարբեր, ո՛չ շարժվում են, ո՛չ էլ դադարի մեջ են, ո՛չ գոյանում են, ո՛չ էլ կործանվում, ո՛չ ավելի մեծ են, ո՛չ ավելի փոքր և ո՛չ էլ հավասար են և չեն կրում ուրիշ այդ կարգի վիճակներ: Քանզի եթե ուրիշ բաները ենթակա լինեին այդպիսի վիճակներին, հաղորդակից կլինեին մեկին, երկուսին, երեքին, կենսին ու զույգին, մինչդեռ պարզվեց, որ դա b

անհնար է, որովհետև վերջիններս բոլորովին զուրկ են մեկից:

– Շատ ճիշտ է:

– Հետևաբար, եթե մեկը գոյություն ունի, ապա թե՛ իր և թե՛ ուրիշ բաների հարաբերությամբ վերջինս և՛ ամեն ինչ է, և՛ ոչինչ:

– Հրաշալի է ասված:

– Թող այդպես լինի: Իսկ պետք չէ՞ արդյոք քննել մեկի գոյությունից բխող հետևանքները:

– Պետք է:

– Իսկ ի՞նչ է նշանակում «եթե մեկը գոյություն չունի» ենթադրությունը: Մի՞թե այն տարբերվում է «եթե ոչ մեկը գոյություն չունի» ենթադրությունից:

– Այո, տարբերվում է:

c և «եթե ոչ մեկը գոյություն չունի» դրույթները միանգամայն հակադիր են:

– Միանգամայն հակադիր են:

– Իսկ եթե ոմն ասեր, իբր մեծը, փոքրը կամ ուրիշ ինչ-որ բան գոյություն չունի, մի՞թե ցույց չէր տա, որ խոսելով չգոյության մասին՝ յուրաքանչյուր [դեպքի] համար նկատի ունի տարբեր ինչ-որ բան:

– Իհարկե:

– Ուրեմն հիմա էլ, եթե ոմն ասի, որ մեկը գոյություն չունի, նա ցույց կտա, որ չգոյության մասին խոսելով՝ նկատի ունի ուրիշ բաներից տարբեր ինչ-որ բան, և մենք գիտենք, թե ինչ նկատի ունի:

– Գիտենք:

d և Ուրեմն ասելով «մեկ» և ավելացնելով դրան գոյություն կամ չգոյություն՝ նա առաջին հերթին նկատի ունի ճանաչելի ինչ-որ բան և, այնուհետև, ուրիշ բաներից տարբեր ինչ-որ բան: Քանզի այն, ինչի մասին ասվում է, թե գոյություն չունի, պակաս ճանաչելի չէ և ճանաչվում է որպես ուրիշ բաներից տարբեր: Այդպես չէ՞:

– Անհրաժեշտաբար այդպես է:

– Հետևաբար հենց սկզբից պետք է ասել, թե ինչ է մեկը, եթե այն գոյություն չունի: Նախ, ինչպես երևում է, մեկին պիտի հատուկ լինի այն, որ դրա իմացությունը գոյություն ունի, այլապես մենք չէինք հասկանա նրան, ով կասեր՝ «եթե մեկը գոյություն չունի»:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն նրանից պիտի տարբեր լինեն ուրիշ բաները, բանգի հակառակ դեպքում մեկի մասին չէր ասվի, թե այն տարբեր է ուրիշ բաներից:

– Իհարկե:

– Ուրեմն իմացություն լինելուց զատ մեկը նաև տարբերություն է: Քանզի երբ ոմն ասում է, թե մեկը տարբեր է ուրիշ բաներից, խոսում է ոչ թե ուրիշ բաների տարբերությունից, այլ մեկի տարբերությունից:

– Ակներևաբար:

– Այնուհետև, գոյություն չունեցող մեկը հաղորդակից է «դրան», «ինչ-որ բանին», «սրան», «սրան պատկանողին», «սրանց» և մյուս նմանատիպ բաներին: Քանզի եթե այն հաղորդակից չլիներ «ինչ-որ բանին» և մյուս նշված տեսակներին, չէր խոսվի ո՛չ մեկի, ո՛չ էլ մեկից տարբերի կամ մեկին պատկանողի մասին:

– Ճիշտ է:

– Հետևաբար գոյությունը մեկի համար չէ, եթե այն գոյություն չունի, մինչդեռ նրան ոչինչ չէր խանգարում հաղորդակից լինել բազումին, և դա անհրաժեշտ է, որովհետև գոյություն ունի այս մեկը, այլ ոչ ուրիշ բան: Բայց եթե ո՛չ մեկը, ո՛չ էլ «այս» գոյություն չունենա և խոսքը վերաբերի ուրիշ ինչ-որ բանի, մենք ոչինչ չպիտի արտասանենք, իսկ եթե ենթադրվում է, որ գոյություն չունի ոչ ուրիշը, այլ այս մեկը, ապա այն պիտի հաղորդակից լինի և՛ «սրան», և՛ ուրիշ շատ բաների:

– Իհարկե:

e

161

ՊԼատոն

– Հետևաբար այն նման չէ ուրիշ բաներին, որովհետև ուրիշ բաները, տարբեր լինելով մեկից, պիտի լինեն այլատեսակ:

– Այո:

– Իսկ մի՞թե այլատեսակը ուրիշը չէ:

– Ինչպե՞ս չէ:

– Եվ մի՞թե այլատեսակը ոչ նմանը չէ:

b – Ոչ նման է:

– Հետևաբար, եթե ուրիշ բաները նման չեն մեկին, պարզ է, որ ոչ նմանը ոչ նման կլինի ոչ նմանին:

– Պարզ է:

– Ուրեմն մեկն էլ պիտի ունենա ոչ նմանություն, որի շնորհիվ ուրիշ բաները նրան նման չեն:

– Թերևս:

– Իսկ եթե ոչ նմանություն ունի ուրիշ բաների նկատմամբ, մի՞թե չպիտի նմանություն ունենա ինքն իր նկատմամբ:

– Ինչպե՞ս:

– Եթե մեկը մեկի նմատմամբ ոչ նմանություն ունենար, ապա անհնար կլիներ խոսել մի բանի մասին, որը մեկ է, և մեր ենթադրությունը կլիներ ոչ թե մեկի, այլ մեկից տարբեր մի բանի վերաբերյալ:

– Իհարկե:

c – Բայց դա չպետք է այդպես լինի:

– Ոչ:

– Ուրեմն մեկը պիտի նմանություն ունենա ինքն իր նկատմամբ:

– Այո, պիտի:

– Ուրեմն նաև հավասար չէ ուրիշ բաներին, քանզի եթե հավասար լիներ, իր հավասարության շնորհիվ նման կլիներ նրանց: Սակայն երկուսն էլ անհնար է, եթե մեկը գոյություն չունի:

– Անհնար է:

– Իսկ քանի որ հավասար չէ ուրիշ բաներին, մի՞թե ան-

հրաժեշտ չէ, որ ուրիշ բաներն էլ հավասար չլինեն նրան:

– Անհրաժեշտ է:

– Իսկ այն, ինչ հավասար չէ, մի՞թե անհավասար չէ:

– Այո:

– Իսկ անհավասարը մի՞թե անհավասար չէ անհավասարության շնորհիվ²⁰:

– Ինչպե՞ս չէ:

– Ուրեմն մեկը հաղորդակից է նաև անհավասարությանը, որի շնորհիվ ուրիշ բաները նրան հավասար չեն:

– Հաղորդակից է:

– Բայց չէ՞ որ անհավասարությունն ունի մեծություն և **d** փոքրություն:

– Այո, ունի:

– Ուրեմն այդպիսի մեկն ունի մեծություն և փոքրություն:

– Կարծես թե:

– Սակայն մեծությունը և փոքրությունը միշտ հեռու են միմյանցից:

– Իհարկե:

– Հետևաբար դրանց արանքում միշտ ինչ-որ բան գոյություն ունի:

– Այո, ունի:

– Իսկ կարո՞ղ ես նշել ուրիշ ինչ-որ բան, բացի հավասարությունից:

– Ոչ, միայն դա:

– Հետևաբար այն, ինչն ունի մեծություն և փոքրություն, **e** ունի նաև հավասարություն, որը նրանց միջև է:

– Ակնհայտ է:

– Այնպես որ գոյություն չունեցող մեկը պիտի հաղորդակից լինի և՛ հավասարությանը, և՛ մեծությանը, և՛ փոքրությանը:

– Թերևս:

– Այն պիտի հաղորդակից լինի նաև կեցությանը:

– Այդ ինչպե՞ս:

– Պիտի լինի այնպիսին, ինչպիսին որ ներկայացրինք: Քանզի այդպիսին չլինելու դեպքում մեր ասածը՝ այն, որ մեկը գոյություն չունի, ճշմարիտ չէր լինի: Իսկ եթե դա ճշմարիտ է, ապա պարզ է, որ մենք խոսում ենք նրա մասին որպես չգոյի: Թե՞ այդպես չէ:

– Այդպես է:

162 – Իսկ եթե մենք ընդունում ենք, որ ասել ենք ճշմարտություն, պիտի անհրաժեշտաբար ընդունենք, որ խոսում ենք գոյություն ունեցողի մասին:

– Անհրաժեշտաբար:

– Արդ, ինչպես երևում է, մեկը չգո է, քանզի եթե այն չլինի չգո և գոյությանը պատկանողից ինչ-որ բան համծնի չգոյությանը, իսկույն կդառնա գոյություն ունեցող:

– Միանգամայն ճիշտ է:

– Չեստևաբար չգո մեկը, եթե ձգտում է չգո լինել, պիտի շղթայված լինի չգոյությանը նրանով, որ ինքը չգո է, ճիշտ այնպես, ինչպես գոյը հանում իր գոյության կատարելության պիտի շղթայված լինի գոյությանը նրանով, որ այն չգո չէ: Քանզի այդպիսի լավագույնս գոյություն կունենա գոյը, և չի

b գոյի չգոն: Գոյը, եթե ձգտում է կատարյալ լինել, հաղորդակից է գոյություն ունենալու գոյությանը և չգո լինելու չգոյությանը, որովհետև չգոն կատարյալ չգո լինելու համար հաղորդակից է գոյ լինելու չգոյությանը և չգո լինելու գոյությանը:

– Շատ ճիշտ է:

– Ուրեմն եթե գոյը հաղորդակից է չգոյությանը, իսկ չգոյությունը՝ գոյությանը, ապա մեկը նույնպես, քանի որ գոյություն չունի, պիտի հաղորդակից լինի գոյությանը չգոյություն ստանալու համար:

– Անհրաժեշտաբար:

– Եվ եթե մեկը գոյություն չունի, այն ակներևաբար հաղորդակից է գոյությանը:

– Ակներևաբար:

– Բայց նաև չգոյությանը, քանի որ գոյություն չունի:

- Ինչպե՞ս չէ:
- Իսկ կարո՞ղ է արդյոք որևէ վիճակ ունեցող իրը չունենալ այն, եթե դուրս չի գալիս այդ վիճակից:
- Չի կարող:
- Եվ ամեն բան, որ ունի և չունի այդ վիճակը, նշում է **c** փոփոխություն:
- Ինչպե՞ս չէ:
- Իսկ փոփոխությունը շարժում է: Այդպե՞ս ասենք:
- Այո, շարժում է:
- Եվ պարզվեց, որ մեկը ն՛ գոյում է, ն՛ չի գոյում:
- Այո:
- Հետևաբար պարզվում է, որ այն ն՛ ունի, ն՛ չունի այդ վիճակը:
- Թերևս:
- Ուրեմն չգո մեկը նաև շարժվում է, քանզի փոփոխություն է կրում՝ գոյությունից անցնելով չգոյության:
- Ըստ երևույթին:
- Բայց եթե վերջինս գոյի մեջ ոչ մի տեղ չի գտնվում, քանի որ գոյություն չունի, այն չի կարող մի տեղից մեկ այլ տեղ տեղափոխվել:
- Իհարկե:
- Նաև չի կարող շրջվել նույն տեղում, որովհետև չի **d** հպվում միևնույնին: Չէ՞ որ միևնույնը գոյություն ունի, իսկ չգո մեկը չի կարող գտնվել գոյություն ունեցողի մեջ:
- Դա անհնար է:
- Ուրեմն չգո մեկը չի կարող շրջվել մի բանի մեջ, որի մեջ չէ:
- Ոչ:
- Սակայն մեկը չի փոփոխվում նաև ինքն իր մեջ ո՛չ իբրև գոյ, ո՛չ իբրև չգո: Քանզի եթե այն փոփոխվեր ինքն իր մեջ, մենք կխոսեինք արդեն ոչ թե մեկի, այլ ուրիշ ինչ-որ բանի մասին:
- Ճիշտ է:

- e – Իսկ եթե չի փոփոխվում, չի շրջվում տեղում և չի տեղափոխվում, ուրիշ ինչպե՞ս կարող է շարժվել:
- Այո, ինչպե՞ս:
 - Անշարժը անհրաժեշտաբար պիտի գտնվի դադարի մեջ, և դադարի մեջ գտնվողը՝ կանգնած մնա:
 - Անհրաժեշտաբար:
 - Արդ, ինչպես երևում է, մեկը և՛ կանգնած է, և՛ դադարի մեջ է:
 - Թերևս:
 - Եվ եթե շարժվում է, նրան մեծապես անհրաժեշտ է փոփոխվել, քանզի որքանով որ մի բան շարժվում է, այլևս նույն վիճակում չէ, որում էր, այլ ուրիշի մեջ է:
- 163 – Այդպես է:
- Հետևաբար շարժվելով՝ մեկը փոփոխվում է:
 - Այո:
 - Իսկ ոչ մի կերպ չշարժվելու դեպքում այն բոլորովին չէր շարժվի:
 - Ոչ:
 - Հետևաբար, եթե չգո մեկը շարժվում է, այն փոփոխվում է, իսկ քանի որ չի շարժվում, չի փոփոխվում:
 - Իհարկե ոչ:
 - Հետևաբար չգո մեկը և՛ փոփոխվում է, և՛ չի փոփոխվում:
 - Ակներևաբար:
 - Իսկ մի՞թե փոփոխվողը չպիտի նախկինից տարբեր դառնա և կործանվի նախորդ վիճակի հարաբերությամբ, և մի՞թե չփոփոխվողը չի դառնում տարբեր ու չի կործանվում:
- b – Անհրաժեշտաբար:
- Ուրեմն նաև չգո մեկը փոփոխվելով կայանում և կործանվում է, իսկ չփոփոխվողը ո՛չ կայանում է, ո՛չ էլ կործանվում: Եվ այսպիսով, չգո մեկը կայանում և կործանվում է, ինչպես նաև ո՛չ կայանում է, ո՛չ էլ կործանվում:

- Անշուշտ:
- Այժմ կրկին վերադառնանք սկզբին և տեսնենք՝ արդյո՞ք այն նման է մեր այժմյան ասածներին, թե՞ տարբեր է դրանցից:
- Վերադառնանք:
- Արդ, եթե մեկը գոյություն չունի, ասե՞նք, թե ինչ է դրանից բխում: c
- Այո:
- Իսկ երբ մենք ասում ենք, որ գոյություն չունի, արդյո՞ք դա նշում է մեկ ուրիշ ինչ-որ բան, եթե ոչ գոյության բացակայություն նրա մոտ, ինչը մեր ասելով գոյություն չունի:
- Հենց դա է նշում:
- Մի՞թե ասելով, որ ինչ-որ բան գոյություն չունի, մենք նկատի ունենք, որ նա ինչ-որ կերպ գոյում է, իսկ մեկ այլ կերպ չի գոյում: Թե՞ «գոյություն չունի» արտահայտությունը պարզապես նշանակում է, որ չգոն ո՛չ այսպես, ո՛չ այնպես գոյություն չունի և հաղորդակից չէ գոյությանը:
- Դա ակնհայտ է:
- Ուրեմն չգոն չի կարող ո՛չ գոյել, ո՛չ էլ մեկ այլ կերպ հաղորդակից լինել գոյությանը: d
- Ոչ:
- Իսկ կայացումն ու կործանումը ոչ այլ ինչ են, եթե ոչ գոյությանը մասնակից դառնալը և գոյությունից զրկվելը համապատասխանաբար:
- Այո, ոչ այլ ինչ:
- Իսկ այն, ինչը բնավ հաղորդակից չէ գոյությանը, ո՛չ ստանում է գոյություն, ո՛չ էլ կործանվում է:
- Անկասկած:
- Իսկ քանի որ մեկը ոչ մի կերպ գոյություն չունի, այն չպիտի ո՛չ ստանա այն, ո՛չ կորցնի, ո՛չ էլ մասնակից դառնա դրան:
- Իհարկե:
- Հետևաբար, եթե չգո մեկը բոլորովին հաղորդակից չէ

գոյությանը, այն ո՛չ կործանվում է, ո՛չ էլ կայանում:

- e**
- Երևում է՝ ոչ:
 - Եվ ոչ էլ որևէ կերպ փոփոխվում է, քանզի փոփոխություն կրելու դեպքում կկայանար ու կկործանվեր:
 - Ճշմարիտ է:
 - Իսկ եթե չի փոփոխվում, անհրաժեշտաբար նաև չի շարժվում:
 - Անհրաժեշտաբար:
 - Եվ մենք չենք ասի, որ ոչ մի տեղ չգտնվողը կանգնած է: Չէ՞ որ կանգնածը պիտի մշտապես կանգնած լինի միևնույն տեղում:
 - Այո, միևնույն տեղում:
 - Այսպիսով, մենք կասենք, որ չգոն երբեք կանգնած չէ և երբեք չի շարժվում:
 - Իհարկե ոչ:
 - Այնուհետև, որ գոյից և ոչ մի բան նրան հատուկ չէ: Քանզի այդ դեպքում այն հաղորդակից կլիներ գոյությանը:
- 164**
- Ակնհայտ է:
 - Ուրեմն այն չունի ո՛չ մեծություն, ո՛չ փոքրություն, ո՛չ էլ հավասարություն:
 - Ոչ, չունի:
 - Չունի նաև նմանություն և տարբերություն ո՛չ ինքն իր, ո՛չ էլ ուրիշ բաների նկատմամբ:
 - Երևում է, չունի:
 - Եվ ինչ, կարո՞ղ են արդյոք ուրիշ բաները որևէ կերպ հարաբերվել նրան, եթե ոչինչ չպիտի հարաբերվի նրան:
 - Ոչ, չեն կարող:
 - Ուրեմն ուրիշ բաները ո՛չ նման են նրան, ո՛չ էլ ոչ նման, ո՛չ նույնական են, ո՛չ էլ տարբեր:
 - Անշուշտ:
- b**
- Իսկ կհարաբերվե՞ն արդյոք չգոյությանը «դրա», «դրան», «ինչ-որ բան», «սա», «սրա», «այլի», «այլին», «առաջ», «հետո», «հիմա», «իմացություն», «կարծիք», «զգայություն»,

«խոսք» և «անուն» կոչված բաները կամ գոյություն ունեցող ուրիշ բաներ:

– Ոչ, չեն հարաբերվի:

– Այսպիսով, չգո մեկը գուրկ է որևէ վիճակից:

– Այո, կարծես թե գուրկ է:

– Այժմ խոսենք այն մասին, թե ինչպիսին պիտի լինեն ուրիշ բաները, եթե մեկը գոյություն չունի:

– Խոսենք:

– Ուրիշ բաները պիտի լինեն ուրիշ, քանզի եթե չլինեին ուրիշ, մենք չէինք խոսի ուրիշ բաների մասին:

– Այդպես է:

– Իսկ եթե մենք խոսում ենք ուրիշ բաների մասին, ուրեմն դրանք տարբեր են: Մի՞թե նույնը չես կոչում «ուրիշ» և «տարբեր» բառերով:

– Իհարկե:

– Իսկ չե՞նք ասում արդյոք, որ տարբերը տարբեր է տարբերի նկատմամբ և ուրիշը ուրիշ է ուրիշի նկատմամբ:

– Այո:

– Չետևաբար ուրիշ բաները, եթե պիտի ուրիշ լինեն, պետք է ունենան մի բան, որի նկատմամբ ուրիշ կլինեն:

– Անհրաժեշտաբար:

– Ի՞նչ կլիներ դա: Չէ՞ որ ուրիշ բաները չեն կարող ուրիշ լինել մեկի նկատմամբ, եթե մեկը գոյություն չունի:

– Ոչ, չեն կարող:

– Ուրեմն դրանք ուրիշ են միմյանց նկատմամբ, քանզի իրենց միայն դա է մնում, այլապես ոչ մի բանի նկատմամբ ուրիշ չեն լինի:

– Ճիշտ է:

– Չետևաբար դրանցից յուրաքանչյուրը ուրիշ է մյուսի նկատմամբ որպես բազմություն: Դրանք չեն կարող տարբերվել միմյանցից մեկով, քանզի մեկ գոյություն չունի: Դրանց յուրաքանչյուր խմբավորում, ինչպես երևում է, քանակապես անսահման է: Եթե ոմն վերցնի ամենափոքր թվացողը, ապա

c

d

դա էլ, հակառակ քիչ առաջ մեկ և փոքրագույն թվալույն, ինչպես երագում՝ իսկույն կդառնա բազում և շատ ավելի մեծ այն մասերից, որ ստացվում են նրա բաժանումից:

– Շատ ճիշտ է:

– Լինելով այդպիսի խմբավորում՝ ուրիշ բաները ուրիշ են իրենք իրենց նկատմամբ, եթե մեկի չգոյության պայմաններում ուրիշ բաները գոյություն ունեն:

– Իհարկե:

– Ուրեմն գոյություն կունենան բազում խմբավորումներ, որոնցից յուրաքանչյուրը կթվա մեկ, սակայն չլինելով մեկ, որովհետև մեկ գոյություն չունի:

– Այդպես է:

e – Եվ կթվա, թե գոյություն ունի դրանց որոշակի թվաքանակ, քանզի դրանցից յուրաքանչյուրը մեկ է՝ լինելով բազում:

– Իհարկե:

– Դրանց մի մասը կթվա զույգ, մյուս մասը՝ կենտ, մի բան, որ կարծես ճիշտ չէ, եթե մեկը գոյություն չունի:

– Այո, ճիշտ չէ:

165 – Եվ ինչպես ասացինք, կթվա, թե նրանցում կա փոքրագույնը, սակայն այդ փոքրագույնը բազմաթիվ փոքրերից յուրաքանչյուրի համեմատ կթվա բազում և մեծագույն:

– Ինչպե՞ս չէ:

– Նաև յուրաքանչյուր խմբավորում հավասար կթվա բազում փոքրերին: Վերջինս կարող է թվալ մեծից փոքրի վերածվող այն դեպքում, եթե նախապես երևա մեջտեղում: Հենց դա էլ կստեղծի հավասարության պատրանք:

– Թերևս:

– Կթվա նաև, որ յուրաքանչյուր խմբավորում սահման ունի ուրիշ խմբավորման հարաբերությամբ, թեպետ ինքն իր նկատմամբ չունի ո՛չ սկիզբ, ո՛չ սահման, ո՛չ էլ մեջտեղ:

– Ինչպե՞ս:

b – Որովհետև եթե ոմն մտովի համարի որևէ բան այդպիսի խմբավորումների սկիզբ, վերջ կամ մեջտեղ, ապա սկզբից

առաջ միշտ կհայտնվի ուրիշ սկիզբ, վերջից հետո՝ ուրիշ վերջ, իսկ մեջտեղի մեջ՝ ուրիշ մեջտեղ, որն ավելի մեջտեղային և ավելի փոքր կլինի, որովհետև անհնար է մեկ գտնել նշված մասերում, եթե մեկը գոյություն չունի:

– Շատ ճիշտ է:

– Իսկ ողջ գոյը, որը ոմն նկատի է առնում, իմ կարծիքով պիտի բաժանվի և մասնատվի: Չէ՞ որ այն կարելի է նկատի առնել միայն որպես մեկից զուրկ բան:

– Իհարկե:

– Հեռվից թույլ տեսողության համար այն անհրաժեշտաբար կթվա մեկ, իսկ մոտիկից սուր մտքին յուրաքանչյուր մեկ կներկայանա որպես անսահման բազմություն, քանի որ զուրկ է մեկից, իսկ մեկը գոյություն չունի:

– Անհրաժեշտաբար:

– Այսպիսով, եթե մեկը գոյություն չունի, այլ գոյություն ունեն մեկից տարբեր բաներ, յուրաքանչյուր ուրիշ բան պիտի թվա և՛ անսահման, և՛ սահմաններ ունեցող, և՛ մեկ, և՛ բազում:

– Այո, պիտի թվա:

– Իսկ չի՞ թվա արդյոք նաև նման և ոչ նման:

– Ինչպե՞ս:

– Ասենք, նկարում պատկերված իրերը մեծ հեռավորության վրա կանգնածին կթվան նույնը և, հետևաբար, կթվան նման:

– Իհարկե:

– Իսկ եթե մոտենանք, դրանք կթվան բազում ու տարբեր և տարբեր տեսքի պատճառով կներկայանան տարբեր ու միմյանց ոչ նման:

– Այդպես է:

– Այդպես էլ նշված խմբավորումները պիտի անհրաժեշտաբար նման և ոչ նման թվան իրենք իրենց և միմյանց:

– Իհարկե:

– Ուրեմն կթվան նաև նույնական միմյանց և միմյանցից

տարբեր, միմյանց հպվող և միմյանցից անջատված, շարժման բոլոր տեսակներով շարժվող և բացարձակ դադարի մեջ գտնվող, գոյացող և կործանվող, ինչպես նաև դրանցից ոչ մեկը և միաժամանակ հենց այդպիսին, — մի բան, որ մենք կարող ենք հեշտությամբ հետևել, եթե մեկը գոյություն չունի,

e իսկ բազումն ունի:

– Շատ ճիշտ է:

– Մեկ անգամ էլ վերադառնանք սկզբին և ասենք, թե ինչ կլինեն մեկից տարբեր ուրիշ բաները, եթե մեկը գոյություն չունի:

– Ասենք:

– Արդ, ուրիշ բաները մեկ չեն լինի:

– Ինչպե՞ս չէ:

– Բայց չեն լինի նաև բազում, չէ՞ որ բազումի մեջ կլինի նաև մեկը: Իսկ եթե ուրիշ բաներից ոչ մեկը մեկ չէ, ապա դրանք ամբողջությամբ ոչինչ են, այնպես որ չեն կարող բազում լինել:

– Ճշմարիտ է:

– Իսկ եթե ուրիշ բաների մեջ չկա մեկ, ուրիշ բաները ո՛չ բազում են, ո՛չ էլ մեկ:

166 – Ոչ:

– Եվ չի թվում ո՛չ մեկ, ո՛չ էլ բազում:

– Ինչու՞:

– Որովհետև ուրիշ բաները ոչ մի տեղ հաղորդակից չեն ոչ մի չգոյի և չգոյից ոչինչ չի հարաբերվում որևէ ուրիշ բանի: Չէ՞ որ չգոն մասեր չունի:

– Ճշմարիտ է:

– Ուրեմն ուրիշ բաները ո՛չ կարծիք ունեն չգոյի մասին, ո՛չ էլ պատկերացում, և չգոն բնավ չի մտածվում ուրիշ բաների կողմից:

– Իհարկե ոչ:

– Հետևաբար եթե մեկը գոյություն չունի, ապա ուրիշ բաներից ոչ մեկի մասին չի կարելի կարծիք կազմել ո՛չ որպես

b

Պարմենիդես

մեկի, ո՛չ որպես բազումի, քանզի առանց մեկի անհնար է կարծիք կազմել բազումի մասին:

– Այո, անհնար է:

– Այսպիսով, եթե մեկը գոյություն չունի, ապա գոյություն չունեն նաև ուրիշ բաները, և դրանց մասին անհնար է կարծիք կազմել ո՛չ որպես մեկի, ո՛չ որպես բազումի:

– Երևում է՝ ոչ:

– Ուրեմն նաև անհնար է կարծիք կազմել դրանց մասին ո՛չ որպես նման բաների, ո՛չ էլ որպես ոչ նման բաների:

– Այո, անհնար է:

– Եվ չի կարելի համարել դրանք ո՛չ նույնական, ո՛չ էլ տարբեր, ո՛չ հպվող, ո՛չ էլ անջատ, և առհասարակ ոչ այնպիսին, ինչպիսին որ դրանք թվացին մեզ նախորդ դիտարկումներում: Ուրիշ բաները չեն կարող ո՛չ լինել, ո՛չ էլ թվալ այդպիսին, եթե մեկը գոյություն չունի:

– Ճշմարիտ է:

– Իսկ ծիշտ չի՞ լինի արդյոք մեկ բառով ասել, որ եթե մեկը գոյություն չունի, ոչինչ գոյություն չունի:

– Լիովին:

– Ուրեմն այդպես ասենք, և ավելացնենք, որ ինչպես երևում է, անկախ նրանից՝ գոյություն ունեն արդյոք մեկը և ուրիշ բաները, թե ոչ, իրենք իրենց և միմյանց հարաբերությամբ անկասկած կան և չկան, թվում են և չեն թվում:

– Միանգամայն ճշմարիտ է:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԵՏԵՏՈՍ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Մեզարացի փիլիսոփա և գիտնական Էվկլիդեսը հանդիպում է ոմն Տերփսիոնի: Սա առաջարկում է կարդալ Էվկլիդեսի գրի առած գրույցը իմացության մասին, որ տեղի է ունեցել Սոկրատեսի և Երիտասարդ Թետետտոսի միջև (142a–143c): Գրության սկզբում ներկայացվում է տեսարանը, երբ Սոկրատեսը երկրաչափ Թեոդորոսի միջնորդությամբ ծանոթանում է Թետետտոսի հետ և գրույցի է բռնվում իմացության մասին (143d–146b):

Իմացությունը սոսկ մասնավոր իմացություն չէ, ինչպես որևէ արհեստի դեպքում, այլ ինչպես մաթեմատիկայում, ուր ռացիոնալ և իռացիոնալ թվերը ենթադրում են ընդհանրապես թվի իմացություն, պահանջում է պարզել, թե ինչ է իմացությունը ամենաընդհանուր իմաստով (146c–148d): Սոկրատեսը ներկայացնում է մաստիկայի իր արվեստի սկզբունքները (148e–151d):

Ճանաչողության զգայական եղանակը քննադատության է ենթարկվում հարահոսության պատճառով, որի մեջ կորչում է ճանաչվող առարկայի հաստատունությունը: Գոյությունը պիտի առաջարկի հաստատուններ, որոնց վրա կարող է հիմնվել իմացությունը (151e–154b): Զգայականությունը հաստատուն ոչինչ ներկայացնել չի կարող, հետևաբար չի կարող դրվել ճանաչողության առարկաների համեմատության հիմքում (154e–155e): Այն, ինչը հաստատուն է թվում զգայական ճանաչողության մեջ (օրինակ՝ սպիտակը), ակտիվ և պասսիվ շարժման՝ ներգործման և կրավորության արդյունք է, հետևաբար արդյունք է կայացման: Կայացումը ճանաչողության հաստատուն դիտվել չի կարող. իրական կայացման և երազում տեսած պատկերների հարահոսության միջև ճանաչողության տեսանկյունից տարբերություն չկա: Այս ամենի հիմքում Յերակլիտոսի և Պրոտագորասի ուսմունքներն են (156a–160d):

Թեոդորոսը ղնում է հետևյալ հարցը. արդյո՞ք չի հանգեցնում Պրոտագորասի հայտնի սկզբունքը («մարդը բոլոր իրերի չափն է»)

վեճի և համընդհանուր ճշմարտության հնարավորության մերժման: Սուկրատեսը հերքում է զգայական ճանաչողության բացարձակությունը՝ ելնելով փաստարկից, ըստ որի զգայությունը չի կարող հիմնավորել ինքն իրեն, իսկ ճշմարտացիության որևէ ուրիշ չափանիշ չունի (160e–163):

Զգայական եղանակով ստացվող իմացությունը չի կարող հիշվել ու պահպանվել, հակառակ դեպքում Չերակլիտոսի բանաձևը ճշմարիտ կլիներ նաև իմացության համար, և մարդը մինևույն ժամանակ և՛ կունենար տվյալ իմացությունը, և՛ չէր ունենա (163c–165e): Իմացության հանգեցումը զգայականությանը թույլ չի տալիս վերացնել իմաստունի և ոչ իմաստունի, առողջի և հիվանդի տարբերությունը: Կատարյալ ճշմարիտ կարծիքներ չկան, կան առավել կամ պակաս չափով ճշմարիտ կամ կեղծ կարծիքներ (166a–167b):

Սակայն ամեն իմացության հարաբերականությունը ի վերջո հնարավոր է շնորհիվ այն բանի, որ կա աստվածային բացարձակը: Անգամ համատարած հարաբերականությունն քարոզող Պրոտագորասի հիմնական դրույթը հասցված է բացարձակ աստիճանի: Չարահոս զգայականությունը իմացության հիմք համարելու պարագայում մենք անկարող ենք նույնիսկ անվանել և ընկալել իրերը: Սակայն բացարձակ դադարի տեսությունը (էլեատներ) հասկանալի պատճառներով նույնպես չի կարող իմացության նախապայման դիտվել: Տեսողության և լսողության տարբերակումը հաստատվում է ոչ թե զգայականությամբ, այլ մտածողությամբ: Մի շարք կատեգորիաներ, ինչպես, ասենք, նմանությունը, տարբերությունը և այլն, ակներևաբար ունեն ոչ զգայական ծագում (169d–186d): Զգայականությունը չի բերում իմացություն, և մենք մշտապես դիմում ենք մտածողությանը, հետևաբար իմացությունը որոշ իմաստով ճիշտ կարծիքն է (187a):

Սակայն իմացությունը միշտ ճիշտ կարծիք չէ: Չնարավոր չէ արդեն հայտնին շփոթել մեկ ուրիշ հայտնի բանի հետ, հայտնին անհայտի կամ մի անհայտը մեկ ուրիշ անհայտի հետ, ուստի կեղծ կարծիք կարելի է կազմել հայտնին համարելով ոչ թե այն, ինչ սա կա, այլ մեկ ուրիշ բան: Չետևաբար հիմքում գոյության և չգոյության հարցն է (187b–188c):

Զգոյի մասին ամենար է կեղծ կարծիք կազմել: Կեղծ կարծիքն այն է, երբ մի բանը թվում է մյուսի փոխարեն: Սակայն մտածողության մեջ հակադրված երկու իրերը չեն կարող շփոթվել: Իմացությունը չի կարող որոշարկվել կարծիքի հասկացությամբ (188d–201c):

Ներկայացվում է խոսքի և իմացության համաբանությունը: Բառե-

րի նվազագույն միավորները՝ հնչյունները, ընդհատ են և այդուհանդերձ արտացոլում են այն ամբողջը՝ բառը, որի մասերն են: Եիշտ կարծիք բառի մասին կարելի է կազմել լոկ այն դեպքում, եթե դրա մեջ առկա է իսկական իմացություն, որը տվյալ պարագայում այդ բառի ամբողջի գաղափարն է, իսկ սա ինքնին ոչինչ չնշանակող հնչյունները իր հարաբերությամբ որոշակի կապի մեջ դնելով՝ առաջ է բերում իմաստալից ամբողջը (201d–208b): Իրի տարբերակիչ հատկանիշն իմանալը նշանակում է իմանալ հենց իրը: Չիմանալ իրը նշանակում է չիմանալ, թե ինչով է այն տարբերվում մյուս իրերից: Հետևաբար տարբերել իրը նշանակում է ոչ թե կարծիք ունենալ դրա մասին, այլ իմանալ (208c–210b):

Վերջում դարձյալ խոսվում է սոկրատյան մանտիկայի և այն մասին, որ նա պարտավոր է ներկայանալ դատարան և պատասխանել Սելետոսի ամբաստանագրին (210a–210d):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Theaetetus. Sophist (Loeb Classical Library, Volume VII, Harvard University Press) հին հունարեն / անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն (Theaetetus, նշվ. աշխ., with an English translation by Harold North Fowler), գերմաներեն (Platon, Theaetetus, Sämtliche Werke in drei Bänden, Band II, Darmstadt, 2004, Übersetzt von Friedrich Schleiermacher), ռուսերեն (Платон, Сочинения, том II, Москва, 1970, Теэтет, перевод Т. В. Васильевой):

¹ Խոսքն ամենայն հավանականությամբ Կորնթոսյան պատերազմի մասին է, երբ Ք.ա. 369 թ. Սպարտային դաշնակից աթենացիները զորք ուղարկեցին Իսթմոսի դեմ: – 7

² *Էրիներն* – տեղանք էլևսիսի մոտակայքում: – 8

³ *Կիրենե* – քաղաք Կիրենաիկեում (Հյուսիսային Աֆրիկա): Այստեղ են ծնվել մաթեմատիկոս Թեոդորոսը, փիլիսոփաներ Արիստիպպոսը, Աննիկերիսը, Կառնեադեսը, բանաստեղծ Կալլիմաքոսը, աշխարհագիր Էրատոսթենեսը: – 9

⁴ *Սուևիոնցի* – Սուևիոնը Ատտիկայի հարավային ծայրամասն է: Այնտեղ է գտնվում Աթենայի տաճարը: – 10

⁵ *Սոկրատես* – Թեետետոսի այս ընկերը հիշատակվում է նաև «Սոփեստուն» (218b) և «Պոլիտիկոսուն» (257d): Կարծիք կա, որ

հենց նա է հիշատակվում Արիստոտելի «Մետաֆիզիկայում» (VII, 11, 1036b, 25–28) – 15

⁶ *Քառակուսու կողմ* – տվյալ դեպքում իռացիոնալ թվով արտահայտվող կողմն է: Թեթետոսի բերած օրինակի իմաստն այն է, որ միայն ընդհանրապես քառակուսի ֆիզուրի առկայությամբ է հնարավոր մտածել քառակուսի և ուղղանկյուն ֆիզուրների առանձին գոյությունը: Նմանապես, միայն իմացության ընդհանուր հասկացությունն է թույլ տալիս մտածել առանձին իմացություններ: – 15

⁷ *Տատմոր՝ Փենարետեի որդին* – դիալեկտիկական իր արվեստը Սոկրատեսն անվանում էր *մաստիկե տեխնե*, այսինքն՝ տատմոր արվեստ, որն օգնում է ճշմարիտ արվեստի աշխարհ գալուն: – 17

⁸ *Արտեմիս* կույս դիցուհին ծննդաբերության Իլիթիա դիցուհու հետ միասին օգնել է կանանց ծննդաբերության ժամանակ: Դիցուհիները հաճախ նույնացվել են, տե՛ս Դերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի), Ե., 1986, էջ 233: – 18

⁹ *Արիստիդես՝ Լիսիմաքոսի որդի* – Արիստիդեսի (Ավագ Լիսիմաքոսի որդու) թռն է: Եղել է զորավար և քաղաքական գործիչ Պարսկական պատերազմների ժամանակ: «Լաքես» տրամախոսության մեջ (179a–180e) Լիսիմաքոս Կրտսերը Սոկրատեսի ներկայությամբ խորհրդակցում է Լաքեսի հետ իր որդու՝ Արիստիդեսի դաստիարակության մասին, որը նրա ասելով բոլորովին արժանի չէ ո՛չ իր պապին, ո՛չ հորը: – 20

¹⁰ *Պրոդիկոս* – տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը» ծանոթ. 8, Պլատոն. Երկեր չորս հատորով, հատոր I (թարգմ.՝ Ս. Ստեփանյանի), Ե., Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, 2006: – 21

¹¹ Պրոտագորասի ուսմունքը ելնում է այն պատկերացումից, որ իմացությունն իր հիմքում զգայական է և ըստ այդմ մերժում է այդ իմացության համընդհանուր օբյեկտիվ նշանակությունը: Զգայական աշխարհի հարահոս բնույթն ըստ նրա բացառում է ամեն համընդհանրություն և օբյեկտիվություն: – 22

¹² *Մարդն է բոլոր իրերի չափը* – իմացության հարաբերականության այս դրույթը իմացաբանության պլատոնյան քննադատության զլխավոր թիրախն է՝ «Կրատիլոսից» մինչև «Պետություն»: – 22

¹³ *Քարիսներ* – Ձևի և օվկիանոսի Եվրինոմեի դուստրերն են: Բարեհաճության դիցուհի Եվրինոմեից ժառանգել են իրենց բնավորության լուսավոր որակները: Համաձայն Դեսիոդոսի «Թեոգոնիայի» (907–911) երեք քույր են՝ Եվփրոսինե («Ցնծություն»), Ազլայա («Պայծառ») և Թալիա («Ծաղկող»): – 23

¹⁴ *Պարմենիդես* (թ.ա. 540–470) – էլեատների դպրոցի հիմնա-

դիրն է: Պահպանվել են հատվածներ «Բնության մասին» փիլիսոփայական պոեմից, որտեղ նա մերժում է շարժման, կայացման և փոփոխության օբյեկտիվ գոյությունը: Ելնում է գոյության՝ որպես անփոփոխ ու հավերժական Մեկի գաղափարից: Ավելի մանրամասն տե՛ս սույն հատորում ընդգրկված «Պարմենիդես» տրամախոսությունը:

Չերակիտոսը, Էմպեդոկլեսը և կատակերգու Էպիքարմոսը սովորեցնում էին, որ միասնական մատերիան բաղադրվում է հակադիր տարրերից: Տե՛ս նաև «Խնջույք», ծանոթ. 44, Պլատոն, նշվ. հրատ. հ. 1: Սոկրատեսը նշվածների թվին է դասում նաև Յոմերոսին, քանի որ «Իլիականի» հիշատակված հատվածում (XIV, 302) Չերան՝ երկիրը, հյուր է գնում իր ծնողների՝ Օվկիանոսի և Տեթիսի մոտ: Վերջիններս հանդիսանալով ջրի սիմվոլներ՝ խորհրդանշում են հավերժական հարահոսությունն ու հարափոխությունը: – 23

¹⁵ Յոմերոսի «Իլիականում» Ջևան ասում է, որ աստվածները չեն կարող նրան գահավեժ անել երկնքից, անգամ եթե բռնվեն երկրի և երկնքի միջև ձգվող ոսկե շղթայից («Իլիական», XVIII, 18–22): Ոսկե շղթան Սոկրատեսի շուրթերով մեկնաբանվում է որպես Արեգակ, քանի որ խորհրդանշում է Արեգակի մշտակայունությունը: – 25

¹⁶ Ակատի ունի Չիպպոլիտոսի խոսքը (Եվրիպիդես, «Չիպպոլիտոս»): «Լեզուս երդվում է, սիրտս՝ ոչ»: – 26

¹⁷ Պլատոնյան այս թեզը կիսում էր նաև Արիստոտելը: «Ջարմանքից են մարդիկ և՛ ներկայում, և՛ առաջին անգամ սկսել փիլիսոփայել...» (Metaphysica, I, 2, 982b, 11–20):

Անտիկ շրջանում հակադիր տեսակետ է ունեցել Դեմոկրիտեսը, որն առաջնությունը տալիս էր «չգարմանալուն»՝ ավտարկեային, այսինքն՝ ինքնատիրապետմանը: – 28

¹⁸ Ճանաչողության մեջ զգայությանը առաջնություն տվող փիլիսոփաների վերաբերյալ Պլատոնի մտորումները ավելի մանրամասն շարադրված են «Սոփիստում» (246a–c): – 28

¹⁹ Այս հատվածն ունի հետևյալ մեկնաբանությունը. օգնական կանայք հինգ օրական նորածնին գրկած՝ վազում են օջախի շուրջը, անուն են տալիս նրան, իսկ ընտանիքի ընկերները և բարեկամները ընծաներ են բերում նրան: – 36

²⁰ Չայտնի է, որ Պրոտագորասը հեղինակն է «Ճշմարտություն» վերնագրով փիլիսոփայական պոեմի, որը չի պահպանվել: – 37

²¹ *Կինոկետիպոս* – շան գլխով կապիկի տեսակ: – 37

²² Պրոտագորասի ասույթն ամբողջությամբ հնչել է այսպես. «Աստվածների մասին չեն կարող իմանալ ինչպես այն, որ գոյու-

թյուն ունեն, այնպես էլ այն, որ գոյություն չունեն, և կամ թե ինչպիսի տեսք ունեն: Շատ բան կա, որ խանգարում է իմանալ դա՝ [նրանց] աներևութությունը և մարդու կարծակեցությունը» (Die Fragmente der Vorsokratiker. Griechisch und deutsch v. Hermann Diels. 9, Aufl., herausg. von Walter Kranz, Bd. I-II, Berlin, 1959-1960, Fr. 4): - 39

²³ Պլատոնն ակնարկում է վիճաբան սոփեստներին, որոնց խնդիրը ոչ թե ճշմարտության բացահայտումն է, այլ զրուցակցի խոսքի մեջ հակասություններ որսալը: - 42

²⁴ *Կալլիաս* - տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 10, «Պլատոն, նշվ. հրատ. հ. I: - 42

²⁵ *Հիմաստիոն* - թիկնոց: - 43

²⁶ Պելտաստը (թեթևագեմ զինվոր) մետաֆոր է, որից Պլատոնն օգտվում է սոփեստներին բնորոշելու համար (մասնավորապես «Գորգիասում»): - 44

²⁷ *Սկիրոն* - ավազակ, որը ժայռից ծովն էր նետում ճամփորդների: Սպանվել է Թեսեսի ձեռքով: - 48

²⁸ *Անտեոս* - Գեայի և Պոսեյդոնի որդին, Լիբիացի հսկա, որը սպանում էր բոլոր օտարերկրացիներին և որին սպանեց Հերակլեսը. սա կարողացավ խեղդել նրան՝ պոկելով հողից և զրկելով ուժից, որ նրան տալիս էր մայրը: - 48

²⁹ Նկատի ունի «Ողիսականի» հետևյալ տողը.

«Սակայն հիմա իմ պալատում չարկամ մարդիկ են խոնվում»

(Հոմերոս, «Ողիսական», XVI, 122, թարգմ.՝ Ա. Գրքաշարյանի ե., 1957): - 51

³⁰ Նկատի ունի մահացածի ստվերի հայտնվելը, որ տարածված հնարք էր աթենական թատրոնում: - 52

³¹ *Ջրային ժամացույց* - կլեպսիդրա՝ ջրով լեցուն դույլ, որի անցքից դուրս հոսող ջրի քանակով որոշում էին ժամանակը: - 54

³² Պինդարոս, 292: - 56

³³ Դեպքը նկարագրել է Դիոգենես Լաերտցին (I, 34): Նայելով աստղերին՝ թալեսը չի նկատում ջրիորը և ընկնում է դրա մեջ: - 56

³⁴ Կիրթ և դաստիարակված մարդը պիտի աջ ուսին զգի թիկնոցը: Հմմտ. Արիստոփանեսի «Թռչունների» 1567-1573 տողերը, որտեղ Պոսեյդոնը բարբարոսների Տրիբուլլոս աստծուն պարսավում է թիկնոցը ծախ ուսին զցելու համար: - 58

³⁵ Պնդունների և փաստարկների ճշմարտացիությունը հարվածելով ստուգելու այս մետաֆորը Պլատոնը կիրառում է նաև «Փիլեբոսում» (55c): - 64

³⁶ Օվկիանոս և Տեթիս – տե՛ս ծանոթ. 14: – 65

³⁷ Պլատոնը ազատ մեջբերում է Պարմենիդեսի «Բնության մասին» պոեմի 38-րդ տողը (DK. 38): – 65

³⁸ *Մելիստոս* (Ք.ա. VI–V դ.) – էլեատների դպրոցի վերջին ներկայացուցիչը: Պահպանվել են հատվածներ նրա «Բնության և կեցության մասին» գրքից: Իր ուսուցիչների՝ Պարմենիդեսին և Ջենոնին հետևելով, մերժում է շարժման և փոփոխության օբյեկտիվ գոյությունը: – 65

³⁹ Տվյալ հատվածում «է» օժանդակ բայի մեջ պարմենիդյան անփոփոխ կեցության իմաստային երանգից խուսափելու համար Պլատոնը փոխարինում է այն «կայանալ» հարափոխություն նշանակող բայով: – 69

⁴⁰ Նկատի ունի Պրիամոսին ուղղված Չեղիմեի հետևյալ խոսքը.

«Ո՛հ, սիրելի՛ դու իմ կեսրայր, պատկառելի, բայց և ասե՛ղ»

(«Իլիական», թարգմ.՝ Գ. Գամբարձումյանի, Ե., 1955, էջ 80): – 70

⁴¹ Այն մասին, որ Սոկրատեսը երիտասարդ տարիքում եղել է Պարմենիդեսի աշակերտը, Պլատոնը գրում է նաև «Սոփեստում» (217c): Սակայն արդեն անտիկ հեղինակները կասկածի տակ են առել այդ հաղորդման ճշմարտացիությունը: – 70

⁴² Փայտե ձիու մեջ, որի օգնությամբ հույները գրավեցին Տրոյան, թաքնված էին զինվորներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր տետղությունը և լսողությունը, սակայն մյուսների հետ համդես էր գալիս հանուն մեկ միասնական գաղափարի: – 71

⁴³ *Մնեմոսինե* – հիշողություն անձնավորող դիցուհի, Ուրանոսի և Գեայի դուստրը, որը Ջևսից հղիանալով՝ ծնեց ինը մուսաներին: – 84

⁴⁴ Տվյալ հատվածում Պլատոնը «սիրտ» բառի համար կիրառում է հոմերոյան **κῆαρ** տարբերակը **καρδία** դասական ձևի փոխարեն՝ **κῆρος**-ի (մոմ) հետ դրա համահնչությունն ընդգծելու համար: – 88

⁴⁵ Գոմերոսի «Իլիականում» (I, 189 և հաջ.) կիրառելով «բրդոտ սիրտ» արտահայտությունը՝ նկատի ունի հերոսի մազածածկ կուրծքը:

«... *խորունկ խոցվեց Աբիլլեսը: Իր թավարծի*

Լանջքի ներքո սիրտն էր հուժկու ալեկոծվում երկմտանքից»

(թարգմ.՝ Գ. Գամբարձումյանի)

Սոկրատեսի խոսքում «բրդոտ սիրտը» կարծր, անընկալունակ հոգու մետաֆոր է: – 88

⁴⁶ Այս հատվածը մեկնաբանվում է այսպես. ուղեվարը, ծանծաղ գետն անցնելիս, այն հարցին, թե որքան խորն է գետը, պատասխանում է. «Ինքը ցույց կտա»: – 98

Մեկնություններ և ծանոթագրություններ

⁴⁷ Հեսիոդոսի նշված ասույթը «Աշխատանք և օրեր» պոեմից է (տող 456): – 108

⁴⁸ Մխլիաստն ասում է, որ մյուսիացիներից վերջինը ամենաաննշանն է: – 112

⁴⁹ Սոկրատեսը պիտի ներկայանար արքունտին, որը քննում էր մեղադրական հայցերը: Մելետոսի և նրա ամբաստանագրի մասին տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», Պլատոն, նշվ. աշխ. հ. I, նաև ծանոթ. 2: – 114

ՍՈՓԵՍ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Հանդիպում են Թեոդորոսը Կիրենեից, ոմն էլեացի օտարական, Թենտետոսը և Սոկրատեսը: Ջրույցի նպատակը սոփեստին, քաղաքական գործչին ու փիլիսոփային սահմանելն է: Ներկաները համաձայնում են, որ հարկավոր է սկսել սոփեստից (216a–218b):

Նախ սոփեստը սահմանվում է որպես ձկնորս կամ որսորդ, որն օգտվելով համոզելու արվեստից՝ որսում է հարուստ երիտասարդներին: Որսորդությունը ձեռքբերման արվեստ է, և ոչ արարման: Բացի այդ, այստեղ գործ ունենք ոչ թե փոխանակման, այլ ենթարկման հետ, թեպետ ի տարբերություն ձկնորսի՝ սոփեստը գործում է ոչ թե բռնի, այլ համոզելով: Սոփեստության էությունը ոչ թե առաքինությունն է և նրա փնտրտուքը, այլ դրամական շահը (218c–223b):

Սոփեստը վաճառում է առաքինությանը վերաբերող իմացությունը: Ընդ որում վաճառում է ինչպես սեփական, այնպես էլ ուրիշների իմացությունը (223c–231d): Դրամական շահը սոփեստին դարձնում է վիճաբանության վարպետ: Սոփեստն ազատում է երիտասարդների հոգին կարծիքներից, սակայն լցնում է իսկական իմացության ուրվականներով (225a–236c):

Վերոհիշյալ սահմանները մնում են արտաքին, քանի դեռ չի հաստատվել գլխավորը, այն, որ սոփեստը ոչ թե սովորական ստախոս է, այլ նա, ով նախապես չի տարբերում իրարից ճշմարիտն ու կեղծը, գոյությունն ու չգոյությունը և, հետևաբար, ոչ մի իմացության սահմանման մեջ հետևողական ու կայուն լինել չի կարող: Սոփեստին մերկացնելու համար անհրաժեշտ է հստակ տարբերակել գոյությունն ու չգոյությունը: Նման դիալեկտիկայի հնարավորությունը վիճարկում է Պարմենիդեսի հայտնի թեզը, թե չզոն գոյություն չունի (239c–242a):

Եթե Պարմենիդեսի *մեկը* նույնական է գոյությանը, ապա ինչու՞

ենք օգտվում երկու կատեգորիաներից: Եթե դա ամբողջ է, ուրեմն կարող է կիսվել կամ բաժանվել մասերի, ինչի արդյունքում մեկը բացարձակ չի կարող լինել (242b–245a): Դադարը չի կարող սպառիչ բնորոշում լինել մեկի համար, ինչպես ցանկանում էին Պարմենիդեսի հետևորդները, քանի որ գոյությունը, որի հետ այն նույնացվում էր, ներառում է իր մեջ ինչպես դադարը, այնպես էլ շարժումը (246a–250c):

Ամհնար է գաղափարների հաղորդակցության թե՛ լրիվ բացակայությունը, թե՛ համատարած հաղորդակցությունը: Առաջին դեպքում գոյությունը զուրկ կլիներ դադարից և շարժումից, երկրորդ դեպքում դադարը կվերափոխվեր շարժման, իսկ շարժումը՝ դադարի (251a–252d): Դադարն ու շարժումը հաղորդակցվում են գոյությանը, սակայն չեն հաղորդակցվում միմյանց: Գոյության հետ դրանց հաղորդակցության համար անհրաժեշտ են նույնությունը և տարբերությունը: Այսպես, հարաբերվելով գոյությանը, դադարն ու շարժումը որոշակիորեն նույնանում են դրա հետ, բայց միաժամանակ նաև տարբերվում դրանից: Եվ ուրեմն բոլոր այս հինգ կատեգորիաները՝ գոյությունը, դադարը, շարժումը, նույնությունը և տարբերությունը, միմյանց նկատմամբ նույնության և տարբերության հարաբերության մեջ են (251a–257b): Պարմենիդեսի ուսմունքը չգոյի չգոյության մասին կեղծ է (258c–259d):

Կարծիքները, խոսքը և քննախոսությունը նույնպես պիտի դիտվեն գոյության և չգոյության դիալեկտիկայի տեսանկյունից: Խոսքը պիտի լինի կա՛մ կեղծ, կա՛մ ճշմարիտ, որքանով որ նկատի ունի որոշակի առարկա (259c–264b):

Սոփեստները մոլորության մեջ են, երբ ասում են, թե կեղծ ոչինչ գոյություն չունի: Ըստ այդմ, նրանց արվեստը բացառապես ձեռքբերման արվեստ չէ, նաև արարող արվեստ է, որն օգտվում է նմանակումից: Իսկ քանի որ ստեղծագործությունը կա՛ն աստվածային է, կա՛ն մարդկային, սոփեստը, որպես մարդկային արվեստի կրող, ստեղծում է նմանակումներ, որոնք կարող են համապատասխանել իրականությանը, իսկ կարող են նաև չհամապատասխանել:

Սոփեստը նմանակողն է, որը զուրկ է նմանակման օբյեկտի իմացությունից, հետևաբար ծնում է տեսիլներ և միտումնավոր խճճում գրուցակցին հակասությունների մեջ (264c–268d):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Theaetetus. Sophist (Loeb Classical Library, Volume VII, Harvard University Press) հին հունարեն / անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն (Sophist, նշվ. աշխ., with an English translation by Harold North Fowler), գերմաներեն (Platon, Der Sophist, Sämtliche Werke in drei Bänden, Band II, Darmstadt, 2004, Übersetzt von Friedrich Schleiermacher և Platon, Der Sophist, Griechisch-Deutsch, Hamburg, 1985, Übersetzt von Otto Apelt, Neu bearbeitet und herausgegeben von Reiner Wiehl), ռուսերեն (Платон, Сочинения, том II, Москва, 1970, Софист, перевод С. А. Ананьина):

¹ Նկատի ունի պայմանավորվածությունը, որ հաստատվում է «Թեետետոսի» վերջում: Այստեղ շեշտվում է երկու տրամախոսությունների բովանդակության ներքին կապը: Ի տարբերություն «Թեետետոսի», զրուցակիցներին միանում է մի օտարական էլեայից: Սրա մասին ոչինչ հայտնի չէ: Անանուն օտարականի առաջնային դերը զրույցի ընթացքում և Սոկրատեսի լռությունը պատահական չեն: Հավանաբար ի դեմս օտարականի Պլատոնն ուզում է տեսնել ինքն իրեն և այդպես ընդգծել սոկրատյան փիլիսոփայությունից իր որոշակի հեռացումը: – 117

² Նկատի ունի «Ողիսականի» այն հատվածը, որտեղ Պենելոպեի փեսացուներից մեկը դիմում է Ողիսսին վիրավորած մեկ ուրիշ փեսացուին.

«Ո՛վ Անտինոս, այդ լավ չեղավ, որ խփեցիր մուրացկանին.

Միզուցե նա մեկը լինի երկնաբնակ աստվածներից,

Որովհետև աստվածները, օտարներին նմանվելով,

Այլափոխվում ու շրջում են քաղաքներում և գյուղերում,

Եվ տեսնում, թե ո՛վ մարդկանցից անօրեն է և անարդար»:

(«Ողիսական», XVII 484–489, թարգմ.՝ Ս. Գրքաշարյանի): – 117

³ Քաղաքից քաղաք շրջող և ամբոխի տգիտության պայմաններում ուսյալներ հորջորջվող սոփեստների մասին Պլատոնը հիշատակում է նաև «Տիմոնում» (19e–20b): – 117

⁴ Այս երեք կերպարները՝ սոփեստը, քաղաքական գործիչը և փիլիսոփան, ասես փիլիսոփայական եռագրության առանցքային դեմքերն են: Առաջին երկուսը ներկայացված են «Սոփեստ» և «Պոլիտիկոս» դիալոգներում: Երրորդի համար դժվար է որևէ հստակ տրամախոսություն առանձնացնել. թերևս մյուսներից առավել այդ

պահանջին կարող է բավարարել «Պարմենիդեսը»: – 117

⁵ Այս երիտասարդ Սոկրատեսը, որը լուռ ներկա է «Թենետտոսում», «Պոլիտիկոսում» իր վրա է վերցնում պատասխանողի դերը և փոխարինում հոգնած Թենետտոսին: Տե՛ս նաև «Թենետտոս», ծանոթ. 5: – 119

⁶ Ձկնորսի և սոփեստի միջև, ինչպես կերևա հետագայում, կա մեծ նմանություն: Երկուն էլ խայծի (ստի) օգնության են դիմում իրենց ավարը որսալու համար: Ուշագրավ է աննշանից ու հայտնիից (ծկնորս) անցումը դեպի նշանավորը և անհայտը (սոփեստ) դրանց միջև էական համաբանություն նշելու միջոցով: – 120

⁷ Սոփեստ բնորոշումը ի սկզբանե չի ունեցել բացասական երանգ: Այդպես են կոչվել բանաստեղծներն ու երաժիշտները, նաև յոթ իմաստունները: – 125

⁸ Սոփեստի տվյալ բնորոշումն ընծեռում է նրա էության քննության որոշակի դիտակետ, բայց ոչ սպառիչ սահմանում: – 128

⁹ Հմմտ. «Ֆեդոն» (66c), որտեղ պատերազմների ընդհանուր պատճառ է դիտվում ընչաքաղցությունը: – 131

¹⁰ Բացառված չէ, որ այս տեղում աններդաշնակության իմաստով օգտագործելով **στῆσις** բառը՝ Պլատոնը մտածում է նաև դրա մյուս իմաստի մասին՝ դադարի: Հենց դադարի հասկացությունը ավելի ուշ կկազմի գոյի մեկնաբանության հիմնարար կոնցեպտը: – 136

¹¹ Արդարադատությունը (**Δίκη**) այստեղ հիշատակվում է նույն համատեքստում, ինչ Պարմենիդեսի պոեմում: Արդարադատությունը և բարիքը այն փորձաքարն են, որով ճշտվում են բոլոր արվեստները և հետևաբար՝ նաև սոփեստի արվեստը: – 137

¹² *Մեծ արքա* – տե՛ս «Սոկրատեսի պաշտպանականը», ծանոթ. 38, Պլատոն, նշվ. հրատ. հ. I: – 140

¹³ Մեկնաբան Ռայներ Վիլը գտնում է, որ իրերի խաբուսիկ արտաքին նմանությունների դեմ Պլատոնի այս զգուշացումը կարող է դիտվել որպես դիալեկտիկական պաշտպանող նրա ամենադիպուկ թեզերից մեկը: Տե՛ս Platon, *Der Sophist*, Griechisch-Deutsch, übersetzt von Otto Apelt, Neu bearbeitet und herausgegeben von Reiner Wiehl, Hamburg, 1985, S. 178: – 141

¹⁴ Ասացվածքը հավանաբար շրջանառության մեջ էր Պալեստրայում մրցող ըմբիշների մոտ: – 141

¹⁵ Դիոգենես Լաերտցին (IX 55) նշում է, որ Պրոտագորասը գրել է «Ըմբշամարտի մասին» պոեմ: – 143

¹⁶ Նմանակման (**μίμησις**) արվեստը Պլատոնի համար ունի դիալեկտիկական ֆունկցիա: Մի կողմից՝ դա յուրաքանչյուր արվեստին հատուկ նմանակումն է բացարձակ նախատիպին, իսկ մյուս կողմից՝

փիլիսոփայական դիսկուրսի հաղորդակցությունը (μέθεξις) բացարձակ ճշմարտությանը: Համաձայն Արիստոտելի, Պլատոնի μέθεξις-ը սոսկ անունը փոխած μίμησις-ն է: – 146

¹⁷ «Մենքսենոս» (240b) և «Օրենքներ» (698d) տրամախոսություններում Պլատոնը պատմում է, թե ինչպես Դատիսը Դարեհի հրամանով գերեվարեց բոլոր էրիթրեացիներին: Պարսից զորքի զինվորները ձեռք ձեռքի տալով շրջապատեցին էրիթրեան և հետզհետե սեղմում էին օղակը, մինչև որ էրիթրեացիները «չհայտնվեցին նրանց ձեռքերում»: Տե՛ս նաև Հերոդոտոս, Պատմություն (III 149, VI 31): – 147

¹⁸ Պարմենիդյան դրույթի քննությունը և հերքումը նպատակ ունեն կանխելու սոփեստների կողմից դրա վկայակոչումը: – 150

¹⁹ Պարմենիդես, «Բնության մասին» (DK, B 7 D): – 150

²⁰ Բազմազուլիս սոփեստ – ակնարկվում է միջական Հիդրան, որին հաղթեց Հերակլեսը: Տե՛ս նաև «Եվթիդեմոս» (297c) տրամախոսությունը: – 155

²¹ Գոյի եռակիությունը պնդող մտածողների թվում Պլատոնը, ըստ ամենայնի, նկատի ունի Փերեկիդեսին, որը ուսուցանում էր կեցության հիմնական երեք սկզբունքների մասին՝ Չևսի (կյանք), Քրոնոսի (ժամանակ) և Քթոնի (հող): – 159

²² Բսենոփանես (թ.ա. 540–475) – էլեական դպրոցի հիմնադիրն է: Գրել է պոեմներ քաղաքական, բարոյագիտական և բնափիլիսոփայական թեմաներով: Քննադատում էր Հոմերոսի մարդակերպ աստվածների պատկերացումը և առաջ էր քաշում միակ աստվածության գաղափարը: – 159

²³ Հոնիական և սիկիլիական մուսաներ – նկատի ունի Հերակլիտոսին Եփեսոսից և Էմպեդոկլեսին Ակրագասից (Ագրիգենտումից): – 159

²⁴ Պարմենիդես, «Բնության մասին» (DK, 28 B 8): – 163

²⁵ Հետազոտողները տարբեր տեսակետներ ունեն այն հարցի վերաբերյալ, թե որ փիլիսոփայական տեսությունները նկատի ունի Պլատոնը: Առաջին խմբում հիշատակվում են մատերիալիստական տեսությունները. Պաուլ Նատորպը և Էդուարդ Ցելլերը պնդում են, թե Պլատոնն ակնարկում է Անտիսթենեսին: Շլայերմախերի համոզմամբ՝ առաջին խմբում են ատոմիստները և Արիստիպպոսը: Թեոդոր Գոմպերցը նշում է միայն ատոմիստներին: Երկրորդ խմբում ակներևաբար պյութագորյան և էլեական փիլիսոփաներն են: – 165

²⁶ Պլատոնը գաղափարների տեսության այս ջատագովներից է համարում մեգարացիներին և բոլոր նրանց, ովքեր որպես ճշմարտության չափանիշ ընդունում են լոգոսը: – 165

²⁷ Զգայական ճանաչողության առաջնության ջատագովները համեմատվում են *սպարտերի* հետ, որոնք աշխարհ են գալիս Կադմոսի ցանած վիշապի ատամներից: *Ավտոթրոնները* (ինքնուրույնաբար հողից ծնվածները) աթենացիներն են, որոնց առաջին արքա Կեկրոպը ծնվել էր հողից և կիսով չափ օձի մարմին ուներ: — 167

²⁸ Նկատի ունի մեգարացիներին՝ հատկապես Անտիսթենեսին: Սրանք ելնում էին դատողության տեսությունից, որը ճշմարիտ էր ճանաչում բացառապես նույնաբանությունները: — 174

²⁹ Եվրիկլես որովայնախոսը, որի երկրորդ ծայրը Սոկրատեսի ներքին ծայրի ծաղրապատկերն էր: Եթե Սոկրատեսի դեպքում ներքին ծայրը վճռորոշ պահերին օգնում էր գտնել ճշմարիտ և առաքինի որոշում, Եվրիկլեսի երկրորդ ծայրը գուշակում էր չարը: — 176

³⁰ Նույնը և ուրիշը որպես սեռեր մնացյալ բոլոր սեռերի միացման և բաժանման հիմունքներն են: — 178

³¹ Որ չգոյությունը գոյության հակադրությունն չէ, բխում է արդեն այն դերի տրամաբանությունից, որը վերապահված է *ուրիշին*: Ուրիշի և գոյության փոխհարաբերությունը կանխորոշում է նաև չգոյության և գոյության փոխհարաբերությունը: — 184

³² Եթե հաստատվում է, որ չգոյությունը և գոյությունը հակադրություններ չեն, հարց է առաջանում, թե որոնք են դրանց հակադիր համարելու մոլորության պատճառները: Օտարականի համար մոլորության հիմքում սոփեստների ստախոսության արվեստն է: Գեղեցիկին հակադիրը (ասենք, եթե դա գեղեցիկի չգոյությունն է դիտվում) անանունն չէ և ուրեմն թույլ է տալիս խոսել իր մասին, մի բան, որն, ըստ Պարմենիդեսի, ամենուր է չգոյության պարագայում (այն անարտահայտելի է): Սոփեստական չգոյությունը սահմանվում է անանունության և անորոշության պայմաններում, այսինքն՝ շրջանցելով գոյության սեռերը, որոնց հարաբերությամբ այն (որպես ուրիշ) պիտի որոշարկվեր: — 186

³³ Պարմենիդես, «Բնության մասին» (DK, B7 7): — 187

³⁴ *Ձատորոշել ամենը ամենից* — վարվելակերպ, որը հատուկ է սոփեստներին և մեգարացիներին: — 189

³⁵ Կարող է թվալ, թե *ՏՃՃ*-ին և *ԼճԳՃ*-ին չգոյության կապված լինելը բավարար չափով ապացուցվել է հետևյալ դրույթներով. 1. յուրաքանչյուր սեռ հաղորդակից է չգոյությանը (որպես ուրիշի) և 2. խոսքն ինքը սեռերից մեկն է: Սակայն այդկերպ խոսքի կապը չգոյության հետ չի ներկայացված իր հնարավորության ասպեկտից: — 190

³⁶ *Անուն* — *ὄνομα* և բայ — *πῆμα*: Ըստ Պլատոնի՝ այս երկուսի առկայությամբ և բաղադրությամբ է հնարավոր խոսքը: Քերականու-

Սոփեստ

թյան հունական ավանդույթը մինչև Դիոնիսոս Թրակացի ներառյալ ելնում է նախադասության՝ որպես այդ երկու համազոր անհրաժեշտ տարրերի կապակցության պատկերացումից: – 192

³⁷ Զմնտ. «Պարմենիդես» (141d–142a): – 193

³⁸ Հետևողականորեն համաբանություն է հաստատվում գոյության և խոսքի միջև: – 193

³⁹ Զմնտ. «Թետետոս» (190c): – 196

⁴⁰ Այստեղ դիտարկվում է սոփեստական *ἀντιλογική τέχνη*-ն, որի սահմանումը վերջնականորեն կորոշարկի սոփեստի էությունը: – 197

⁴¹ Դեմիուրգոս աստծո մասին տե՛ս «Տիմեոս» (29d–30b): – 199

⁴² Երկայնքով բաժանելու մասին խոսվում է նաև «Ֆեդրոսում» (266a): Այս հատվածում ստեղծագործական արվեստները բաժանվում են մարդկային և աստվածային արվեստների: Հետագա բաժանումը կատարվում է խորությամբ (Պլատոնի համար՝ երկայնքով), այսինքն՝ ընդհանուրից շարժվելով դեպի մասնավորը: – 199

⁴³ Սոփեստական չիմացությունը բացահայտվում է աստվածային և մարդկային գործունեության տարբերակման ֆոնի վրա: Այն, ինչը սոփեստներն իմացություն են համարում, չի ճանաչում իր սահմանները և հետևաբար անհնար է դարձնում ինքնաքննադատությունը և մնում է սոսկ հակաճառություն հանուն հակաճառության: – 203

⁴⁴ Սոփեստի այս վերջնական բնորոշումը մեկ անգամ էլ ցույց է տալիս հրատապությունը ճանաչողական սկզբունքների դիալեկտիկական գիտության, առանց որի սոփեստ հասկացության նույնիսկ ճշմարիտ սահմանումը բաց է պահում քննախոսության դռները սոփեստության առաջ: – 204

ՊԱՐՄԵՆԻԴԵՍ

ՍԵՎՆՈՒԹՅՈՒՆ

Ոմն Կեփալոս Կլազոմենեից պատմում է էլեացիներ Պարմենիդեսի, Ջենոնի և պատամի Սոկրատեսի միջև տեղի ունեցած զրույցը: Կեփալոսը վերարտադրում է զրույցը Անտիփոնի խոսքերից, իսկ սա անծամբ է ներկա եղել զրույցին (126a–127d):

Եթե բոլոր իրերը լինեին բազում, դրանցից յուրաքանչյուրը մնան կլիներ մյուսին և միաժամանակ նրանից տարբեր: Հետևաբար հակասությունից խուսափելու համար հարկ է ընդունել, որ ամեն բան մեկ է: Այդպես է խորհրդածում Ջենոնը (127e–128e): Սոկրատեսը հարց է դնում ինքն ըստ ինքյան գաղափարների մասին՝ մանուկյան և ոչ մանուկյան, որոնց հաղորդակից լինելով էլ բազումը կարող է պահպանել իրեն: Ավելին, իրենք գաղափարները բազում են (129a–131a):

Չնայած, որ գաղափարը տարբեր իրերի հետ իր հաղորդակցության մեջ որոշակիորեն բեկվում է, այն մնում է անբաժան: Իրը գաղափարի հետ մանուկյան մեջ է ամբողջապես, առանց միջնորդող որևէ բանի (131b–135b):

Ոչ մի գաղափար գոյություն չունի մեկուսի, քանի որ այն ճանաչելի է և ճանաչելի է մյուս գաղափարների հետ համեմատության և փոխհարաբերության մեջ (133b–135b):

Ձրուցակիցները համաձայնում են քննել մեկի և բազումի դիալեկտիկան, ընդ որում դրանցից յուրաքանչյուրն ինչպես իր, այնպես էլ մյուսի հարաբերությամբ: Նախ բացարձակ և հարաբերական իմաստով առաջադրվում է մեկը: Մի դեպքում նրանից բացի ոչինչ գոյություն չունի և առաջին հերթին՝ իրենից տարբերը, որի հետ հնարավոր կլիներ համեմատել այն: Բայց այդ պարագայում մեկը անորոշարկելի և անսահմանելի է (137c–142b): Հարաբերական առաջադրման դեպքում մեկը նույնական է ինքն իր հետ և տարբեր է ուրիշից: Դրանք որպես ընդհանուր ունեն միշտ իրենց բաժանող

սահմանը, որի մեջ նրանք միաժամանակ տարբերվում և նույնանում են (142b–157b): Ուրիշ բաների առնչությամբ մեկի բացարձակ և հարաբերական առաջադրումն ունի հետևյալ նշանակությունը. հարաբերական առաջադրման դեպքում հասկանալի է, որ ուրիշ բաները գոյություն ունեն և բացահայտում են մեկից տարբեր որակներ (157b–159b):

Մեկի բացարձակ առաջադրման դեպքում ուրիշ բաները չգո են ծանաչվում: Բացի այդ, բուն տարբերությունը մեկից մերժվում է (159b–160b):

Այնուհետև մեկի առաջադրման փոխարեն քննվում է դրա բացասումը: Հարաբերական բացասման դեպքում պահպանված է ենթադրվում նրանից տարբեր ինչ-որ բան: Ըստ այդմ, որոշակի ինքնություն է վերագրվում գոյություն չունեցող մեկին: Հարաբերական ժխտման դեպքում մեկը պահպանում է բոլոր ուրիշ, իրենից տարբեր (բազում) բաները (160b–163b): Բացասման բացարձակ եղանակը ժխտում է գոյությունը և դրա բոլոր հնարավոր որակները, այնպես որ մեկի մեջ ժխտվում է ոչ միայն նրա ինքնությունը, այլև որակները, որ կարող են ունենալ մեկից տարբեր ուրիշ բաները (163b–164b): Մեկի բացասումը ուրիշ բաների առնչությամբ ունի այն հետևանքը, որ հարաբերական բացասման մեջ միանգամայն հստակ ենթադրվում են ուրիշ բաները: Բացարձակ բացասումը այս իմաստով չի տարածվում մեկի հետ ուրիշ բաների ունեցած տարբերությունների վրա (164b–165e): Հակառակ պատկերն է, երբ մեկը ժխտվում է բացարձակորեն: Ուրիշ բաները զրկվում են գոյության հնարավորությունից, քանի որ մերժվում է ոչ միայն մեկը ինքն իր հարաբերությամբ, այլև մեկը որպես ուրիշ բաների գոյության որոշակի հիմք (165e–166c):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Cratylus. Parmenides. Greater Hippias. Lesser Hippias (Loeb Classical Library, Volume IV, Harvard University Press) հին հունարեն /անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն (Parmenides, նշվ. աշխ., with an English translation by Harold North Fowler), գերմաներեն (Platon, Parmenides, Sämtliche Werke in drei Bänden, Band II, Darmstadt, 2004, Übersetzt von Franz Susemihl), ռուսերեն (Платон, Сочинения, том II, Москва, 1970, Парменид, перевод Н. Н. Томасова):

Մեկնություններ և ծանոթագրություններ

¹ Կլազոմենե – հունիական քաղաք Փոքր Ասիայում, Անաքսագորասի հայրենիքը: Կլազոմենցի Կեփալոսին պետք չէ շփոթել «Պետություն» տրամախոսության մասնակից Լիսոսի որդի Կեփալոսի հետ: – 207

² Այդ գրույցը տեղի է ունեցել հավանաբար Ք.ա. 449 թ.: – 207

³ Մելիտե – դեմոս Աթենքում: – 208

⁴ Համաթենական խաղեր – Աթենա դիցուիու պատվին կազմակերպվող տոնակատարություններ, որ տեղի էին ունենում Աթենքում չորս տարին մեկ: – 208

⁵ Կերամիկոս – Աթենքի արվարձան: – 208

⁶ Արիստոտել – չշփոթել Ստագիրացու հետ: «Պարմենիդեսում» (127d) նշվում է, որ նա հետագայում դարձել է Աթենքի երեսուն տիրաններից մեկը այն բանից հետո, երբ Ք.ա. 404-ին տեղի ունեցավ օլիգարխների հեղաշրջումը: Հավանաբար հենց նրան նկատի ունի Քսենոփոնը իր «Հունական պատմության» մեջ, կոչելով «աթենական արքայալ», որին Լիսսանդրոսը ուղարկեց Լակեդեմոն իր անունից բանակցություններ վարելու (II 2, 18): Դիոգենես Լաերտցին, ըստ ամենայնի, հենց նրան է հիշատակում որպես «պետական գործերով զբաղվող» այր, որը «պերճախոս դատական ճառերի» հեղինակ էր (V, 35): – 208

⁷ Լակոնական լակոտները բարձր են գնահատվել հին Հունաստանում: Այդ մասին է վկայում Պետրոնիոսը իր «Սատիրիկոնում» (Գլուխ 40): – 209

⁸ Այստեղ Պլատոնը ուղղակիորեն առաջադրում է գաղափարների իր տեսության առաջնային դրույթը՝ գաղափարների ինքնին (*αὐτὸ καὶ αὐτὸ*) գոյությունը: – 210

⁹ Գաղափարի ինքն իրենից առանձնացված լինելու մասին գրել է նաև Արիստոտելը («Մետաֆիզիկա», VIII 14, 1039 a 33–b 2): – 213

¹⁰ Պարմենիդեսը առանձնացնում է էության իմացությունը զգայական իրերի իմացությունից: Սակայն «Պետության» մեջ Պլատոնը տարբերակելով ինքն ըստ ինքյան իմացությունը իրերի իմացությունից՝ այդուհանդերձ միավորում է դրանք, քանի որ իմացությունը նաև «ինքն ըստ ինքյան» զուրկ չէ առանձին հատկություններից և վերաբերում է առանձին իրերին: – 218

¹¹ Իրիկոս (Ք.ա. VI դ.) – հույն քնարերգու, երգչախմբային երգերի հեղինակ: Բանաստեղծությունը, որ նկատի ունի Պլատոնը, ներառված է էդմոնդսի կազմած հունական քնարերգության ժողովածուում (*Lyra graeca*, II 2): – 223

¹² Մեկի (Ξν) և այլի (τα δλλα) դիալեկտիկական հասկանալու հա-

մար հարկ է նկատի առնել, որ Պլատոնը տարբերում է մեկի մի քանի տեսակ: Առաջինը բոլորովին չի ընդունում որևէ բազմակիություն. սա գոյությունից անդին է: Երկրորդ տեսակը միավորում է բազունը. Պլատոնը կոչում է այն **Ξν ὄν** (մեկ գոյություն): Երրորդը զուտ մեկի թվային որոշարկմանն է վերաբերում: Իր «Էնեադներում» (V, 1, 8) Պլուտինոսը շարադրել է մեկի այս տեսակների պլատոնյան տեսությունը: Պլուտինոսի հայերեն թարգմանությանը կցված մեկնություններում և ծանոթագրություններում թարգմանիչ և հետազոտող Ա. Ստեփանյանը գրում է, որ պլուտինյան մեկը չի բխում պլատոնյան համապատասխան կատեգորիայից իբրև դրական արժեքանությանը և դիալեկտիկայով հաստատվող բացարձակ և վերացական արարիչ մեծություն: Այն նաև ժխտողական վալենտականությանը և դիալեկտիկայով հաստատվող բացարձակ մեծություն է (տե՛ս Պլուտինոս, «Էնեադներ», Սարգիս Խաչենց, Երևան, 1999, էջ 120, ծանոթ. 11): Այստեղ հարկ է նկատել, որ պլատոնյան և պլուտինյան մեկի ընդհանուր դիալեկտիկական արմատը թույլ չի տալիս վալենտականության այլընտրանք ներմուծել դրա մեջ: Եթե անգամ Պլուտինոսը հարստացրել ու մոդիֆիկացրել է պլատոնյան մեկը, ապա ոչ վալենտականության («դրական կամ բացասական», ինչպես գրում է Ա. Ստեփանյանը) առումով: — 224

¹³ Թվի և գոյության բազումի փոխհարաբերությանն առնչվող Պլատոնի այս դրույթը դժվար մեկնաբանելի է: Գաղափարները որպես իդեալական թվեր վեր են զգայական աշխարհի «թվայնացումը» ապահովող մաթեմատիկական թվերից, քանի որ գոյը բխում է մեկի և անորոշ երկակիության (= բազմակիության) սկզբունքներից: Պլուտինոսն այս առնչությամբ ուղղակիորեն ասում է. «Թիվը նախագո չէ» (Պլուտինոս, նշվ. հրատ., էջ 9): — 238

¹⁴ «Տիմեոսում» (52a-c) Պլատոնը խոսում է տարածության (**χώρα**) մասին, որը ներառում է իր մեջ ողջ մատերիան: Սա զգայական ճանապարհով ներշնչում է մեզ այն կեղծ պատկերացումը, իբր ողջ գոյը պիտի գտնվի տարածության մեջ: Սակայն Պլատոնի ողջ ուսմունքի միջով կարմիր թելով անցնում է թեզը, ըստ որի գոյության իրական սկզբունքները՝ գաղափարները, չեն կարող տեղավորվել տարածության մեջ կամ տարածության մեջ որևէ կոնկրետ տեղ զբաղեցնել: — 253

¹⁵ Ներկայի պլատոնյան հասկացությունը համադրում է գոյությունը (**ὄν**) և կայացումը (**το γίνεσθαι**): Նմանատիպ կարծիք է հայտնում ներկայի (**νόν**) մասին Արիստոտելը իր «Ֆիզիկայում» (IV 10-11, 217b 29-219a 26): Ավելին, ըստ Արիստոտելի, հենց ներկան է հնարավորություն տալիս գոյություն ունեցող համարել ժամանակը,

Մեկնություններ և ծանոթագրություններ

քանի որ հանդիսանում է միակ չափումը, որի մեջ «այլությունը» չի կլանում նրան: Ներկան ուրիշ ներկայի մեջ չի վերանում: — 257

¹⁶ Ակներևաբար այստեղ ակնարկվում է Ձեռնոն էլեացու ապորիաներից մեկը՝ «Նետը»: Արձակված նետը թռիչքի ճանապարհին անցնում է տարածական բազում կետերով: Սակայն յուրաքանչյուր կետում գտնվելով դադարի մեջ՝ այն չի կարող շարժվել. դադարի և շարժման փոխբացասումը հանգեցնում է պարադոքսի: — 264

¹⁷ Հանկարծակիության (εξαιφνης) հասկացությունը համարժեք է ներկայի (որպես հիմայի) (νόν) հասկացությանը, քանի որ այն գոյության և կայացման սահմանագծի վրա է: — 265

¹⁸ Հմմտ. «Սոփեստ» (245a-e): — 266

¹⁹ Սահմանի և անսահմանի դիալեկտիկան քննվում է «Ֆիլեբոսում»: — 269

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- Ադիմանտոս 207
Ամփիտրիոն 57
Անտեոս 48
Անտիփոն 207, 208, 223
Արիստիդես 20
Արիստոտել 208, 221, 224
Արտեմիս 18
- Գլավկոն 207
- Եվրիպիդես 26
- Զենոն 117, 207–209, 211, 212, 221–223
- Էմպեդոկլես 23
Էպիքարոնոս 23
Էվկլիդես 9
Էվրիկլես 176
Էվփրոնիոս 10
- Թալես 56
Թավմաս 28
Թեետետոս 7, 8, 10, 11, 13–15, 17, 21, 24, 26, 27, 29, 30, 32, 36, 38, 40, 42, 43, 48, 64, 69–71, 73, 75, 76, 78, 80, 82, 85, 86, 89, 91, 96–98, 101, 103, 105, 106, 109–112, 114, 119, 120, 123–125, 128, 131, 134, 138, 140, 146, 149, 154, 157, 160–162, 167, 169–171, 174, 175, 178, 187, 194, 199, 202
Թեոդորոս 8, 9, 11–17, 28, 36–39, 42, 43, 47, 48, 50, 54–56, 58, 59, 63–66, 69, 70, 73, 77, 85, 110, 112, 114, 117, 118
Թեսևս 48

ԱՆՎԱՆԱԾԱՆԿ

Իբիկոս 223

Իրիս 28

Լիսիմաքոս 20

Կալլիաս 42

Կեփալոս 207

Հեսիոդոս 108

Հերակլես 48, 57

Հերակլիտոս 23, 36, 64

Հիպպոնիկոս 42

Հոմերոս 24, 25, 36, 51, 70, 88, 117

Մելետոս 114

Մելիսսոս 65

Մեննոսիմե 84

Պարմենիդես 23, 65, 70, 117, 118, 150, 158, 159, 163, 187,
207–210, 212–224

Պինդարոս 56

Պիրիլամպոս 207

Պյութոդորոս 207, 208, 212, 223

Պրոդիկոս 21

Պրոտագորաս 22, 23, 26, 28, 35–38, 42, 44, 47, 49–53, 62–64,
70, 143

Սկիրոն 48

Սոկրատես 8–15, 17, 21, 23–27, 29–31, 33, 34, 36–41, 44,
46–48, 50–52, 55, 56, 58–61, 63, 64, 66, 68, 70, 71, 73,
75, 77, 78, 82, 83, 85–87, 89, 91, 95–99, 101, 102, 106,
108, 109, 117–119, 207–210, 212–223

Սոկրատես (Թենտետոսի ընկերը) 15, 119

Տեթիս 23, 65

Տերփսիոն 7, 8

Փենարետես 17

Քսենոփանես 159

Օվկիանոս 23, 65

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՏԵՏՏՈՍ	5
ՍՈՓԵՍՏ	115
ՊԱՐՄԵՆԻԴԵՍ	205
ՄԵԿՆՈՒՅՈՒՆՆԵՐ և ԺԱՆՈՔԱԳՐՈՒՅՈՒՆՆԵՐ	287
ԱՆՎԱՆԱԾԿԱՆԿ	309

Պլատոն

Պ 678 **Երկեր չորս հատորով, Հատոր II** / Յին հուն. թարգմ. և ծանոթագր.՝
Ս. Ստեփանյան. – Եր.: Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 2009. – 312 էջ

‘ԻՍԱՑՈՒԹՅՈՒՆ’ ԳՐԱԴԱՐԱՆԸ ներկայացնում է հույն փիլիսոփա Պլատոնի (Ք.ա. 428/7–348/7) երկերի երկրորդ հատորը, որում տեղ են գտել փիլիսոփայի հասուն շրջանի երեք տրամախոսություն՝ «Թենետոս», «Սուփեստ» և «Պարմենիդես»: Եթե «Ֆեդոն» և «Խնջույք» տրամախոսություններում (հ. I) Պլատոնի խնդիրն էր տալ գաղափարների տեսության ընդհանուր ուղվագիծը, այս երկերում նա քննում է գաղափարների իմացաբանական արժեքը և դրանց դիալեկտիկան:

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

Հրատ. խմբագիր՝ *Արա Խաչիկողյան*
Էջադրում՝ *Անժելա Մանուկյան*

Սարգիս Խաչենց հրատարակչություն ՍՊԸ

0010 Երևան, Արամի փ. 1, Ազգային պատկերասրահ
հեռ./ֆաքս. (37410) 56-36-61, e-mail: sargiskhachents@gmail.com

ՓՐԻՆԹԻՆՖՈ ՀՅ ՍՊԸ

0043 Երևան, Շարուրի 37/1
հեռ. (37410) 46-53-80, ֆաքս. (37410) 46-53-84
e-mail: info@printinfo.am
www.printinfo.am